3

9(3)
Ն-46

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նահատակութեան սրբոց Վարդանանց, և Ղևոնդեանց Քահանայից.

Արարեալ Տեառն Եղիշէի գերահռչակ Վարդապետի և սրբոյ Եպիսկոպոսի Ամատունեաց, և աշակերտի երանելի Թարգմանչացն մերոց Տեառն Սահակայ և Մեսրոպայ:

## Ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն Էջմիածնի Տեառն Եփրեմ աստուածընտիր Կաթուղիկոսի Ամենայն Հայոց:

Եւ ի Պատրիարգութեան սրբոյ աթոռոյն Երուսաղէմի Տեառն Գաբրիէլի շնորհափայլ արքեպիսկոպոսի.

Հրամանաւ և արդեամբ Կոստանդնուպոլսոյ Պատրիարգ Տեառն Պօղոսի արքեպիսկոպոսի Ադրիանուպոլսեցւոյ.

## Տպեալ

Ի Կոստանդնուպօլիս.

Ի տպարանի նորոյ Ենիչէցւոյ առ Աստուածածնի.

Աշխատասիրութեամբ. Տ. Անդրէաս Վարդապետի Նարինեան Ակնեցւոյ:

1823. ՌՄՀԲ.



Ա՛է հաւատայ Մինն երկնաւորին .
Յովսէփ Աւշակ Պէտրոս Յովէց ։

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մի՛ յառաւել օգտակար և ընտիր մատենից խոստովանելի՛ է արդարև զառաջիկայս պատմագրութիւն, արարեալ սրբոյն Եղիշէի մեծախօս վարդապետի և Ամատունեաց եպիսկոպոսի. որ էր 'ի Թուոց երևելի աշակերտաց սրբոց Թարգմանչաց, և գործակից և վաստակակից նոցին 'ի Թարգմանութեան. ատենադպիր և ազգական մեծին Վարդանայ Մամիկոնէի, և ականատես և հաւատարիմ վկայ իրացն եղելոց։ Որ և ըստ վայելուչ շարադրութեան՝ և ծաղկազարդ ոճոյն, և ըստ այլ ևս կարևոր և գեղեցիկ հանգամանաց, գրեթէ իբրև զարեգակն լուսապայծառ ցոլանայ 'ի մէջ այլոց բազմապատիկ պատմագրութեանց նախնեաց մերոց, և ոչ սակաւ նպաստամատոյց լինի ուսումնասէր մանկանց դպրոցաց՝ զարգանալ 'ի յօրինուածս գեղապանծ շարադրութեան։

Այս մատեան պատմական՝ թէպէտև ըստ արտաքին տեսութեան ընթացից բանին երևի լինել պատմագրութիւն. բայց իրօք և արդեամբ՝ է քարոզ կենդանի ճշմարտութեան հաւատոյ, և հանդիսարան ամենայն առաքինագործ բարեմասնութեանց։ Որ ոչ միայն գիտնական վարդապետութիւն յանդիման առնէ մտաց զլսողին, որպէս բարոյական գրոց է սովորութիւն. այլև օրինակօք սքանչելի վարուց քաջ նահատակացն՝ շարժէ զկամս ամենեցուն 'ի բարիս, ըստ նմանութեան պաշտօնէից աւետարանին։

БИБЛИОТЕКА

Զպատիր ձեռնարկութիւս մոգական մոլորութ̄ե հակառակ որ 'ի ք̃ս հաւատոյն, իբրեւ մտավարժ իմաստասէր բուական բանիւք եղծանէ. և զանվրէպ ճշմարտութ̄ին քրիստոնէական ուղղ կրօնից՝ իբրեւ քաջ ա̄ծաբան զօրաւոր փաստիւք հաստատէ.

Զմանկունս որբոց եկեղեցւոյ յապարխի կենցաղոյս՝ իբրեւ իմաստուն զօրավար զինու հաւատոց ամրացուցանէ. և առ ա̄ծ ապաւինութ̄բ զյաղթութ̄են առնուլ մրցանակ՝ իբրեւ հոգեվարժ ուսուցիչ զմիտսն վառէ.

Զհանդէս քաջարութ̄ե մեհաղանցն գնդի, և անդուլնելի ապիրատութ̄ի վատարանցն գրոհի, ոչ այնքան առաջի առնէ 'ի ծանօթութ̄ի մեզ՝ քան եթէ 'ի խրատ և յուղղութ̄ի վարուց. բարեխօս իմն զգուշութ̄ հեռի 'ի վատթարացն կարօղ գործոց, բերել յանձին զնմանութ̄ի դիւցազանցն բարելաւութեան.

Նկարագրութ̄ նահատակութ̄ե ոք եպսցն և պատուական երիցանց՝ քաջալերէ զհոգևոր հովիւս կամակար նուիրել զանձինս 'ի պաշտպանութ̄ի հօտին.

Յիշատակօք մահուհաւի վաստակոց երանելի նախարարացն և ա̄ծասէր իշխանաց՝ խրախուսէ զիշխանաւորս ջանացող լինել վ̄ս հայրենի աշխ̃ին՝ և ուղղ եկեղեցեացն պայծառութ̄ե.

Մշտարարութ̄ ճնաշխարհիկ քաղաքավարութ̄ե մեծազգի տիկնանց և օրիորդաց՝ յորդորէ զազգն կանանց երկրորդ գրել զ̄ստ վայելս փափկութ̄ե աշխարհիս առ երկնաւոր մեծութ̄բն.

Ի մի բան ասացից. իբրեւ պատուամաւոր ա̄ծեղէն բանիւն՝ զա̄մ հասակ յա̄մ վիճակէ հրահանգէ և շարժէ՝ կեալ ազնուական անձանց համարիլ զա̄ծամերձ անմահութ̄ին, քան զառօրեայ կենացս վայելչութիւն.

Սորոյ և ոմանք 'ի բարեպաշտից մերազնեայ բանասիրաց փափագող եղեալ այսմ ցանկալի գանձու՝ կամեցան սեղանաւորել 'ի հոգևս կարօտելոց · բայց արդիւնք նորացն ոչ ըստ արժանւոյն 'ի դէպ ելանէին :

Զի ըստ ժամանակին ունելով առ ձեռն պատրաստ զմի միայն գաղափար աղաւաղ և սխալ , բարեմիտ ոմն երկիւղածութբ՝ զի մի՛ գուցէ հնութբ ժամանակի և այն իսպառ անհետ լինիցի , և որք միանգամ ցանկան վայելել՝ անճաշակք 'ի քաղցրութենէ նր մնասցեն , տպագրեցին զայն 'ի կոստանդնուպօլիս · յամի տն 1764 :

Յորում տեսանիք բազմադիմի վրիպակք · է ուրեք՝ զի իմաստ բանիցն գլխովին ընդ հակառակն է շրջեալ · և է՝ զի պակասութբ կամ այլայլութեամբ բառից անիմանալի գործեալ · վս և ընթերցանելեացն ոգիք ոչ ոպ արժանն է քաղցրանային · և ոչ յարգ և վաստակ բարեացապարտ մատենագրին երևէին : Զայս տմ զոր ասացաք՝ և առաւել քան զայն՝ կարէ տեսանել ընթերցասէրն 'ի բաղդատելն զսա ընդ հնոյն :

Իսկ զի տեսանելով մեր՝ թէ նաև աղաւաղ տպեալքն որ 'ի յօրէ սակաւագիւտ եղեալ են և ծանրագին , և փափագողք և խնդրողք բազումք · շարժեալ 'ի սիրոյ ազգիս հրաման տուաք նորոգ տպագրութբ 'ի տիպ արձանացուցանել՝ ըստ ընտրելագոյն և անսխալ գաղափարին , զոր հաւատարիմ գրչութբ ընդօրինակեալ էր 'ի հայաստան՝ բարեյիշատակ Գէորգ դպիրն պալատական · որ և ունէր յիշատակարան՝ օրինակ զայս :

„Գրեցաւ պատմական մատեանս սբյն եղիշայի,
„'ի մեծն հայաստան , 'ի թուականին հայոց ռմը,
„գրչութբ գէորգայ ուրուին անարժանի կա-

,,տանդնուպօլսեցւոց . և այն՝ յօրինակէ իմեքէ
,,հնազանդէ, որ էր գրեալ յԱրարատեան ծի
,,'ի Թուականութե հայոց ռճզ . յաւուրս հայրա-
,,պետութե Տ՟ն Ներսէսի, եղբօր գրիգորի-
,,սի, որ նստէր 'ի կլայն հռովմկլայն։

Ապա սիրոյն քո յորդորեմ զանձինս զձեզ, ըն-
թեռնուլ զսա, մի՛ միայն իբրև պատմութիւն իրացն
եղելոց, այլ և իբրև վարդապետ և քարոզ ած-
պաշտութե . որ բանիւ և գործով ուսուցանէ
պինդ ունել զսէրն այ և ընկերին . յայտ արա-
րեալ զբազմօգուտ շահաստանութիւն՝ զոր 'ի միա-
բանութէ նախարարաց և իշխանաց վայելեաց
ազգս ողջոյն . և զանհնարին վնասն և եղկութին՝
զոր յանմիաբանութէ նոցին կրեաց համօրէն
ազ մեր։ Ուստի զի յարացուցի նախնեացն մե-
րոց խրատ զգուշաւոր յանձին ընկալեալ յետ-
նոցս, միաբան սիրով և խաղաղութ վարեսցուք
ընդ միմեանս ճիս յայսմիկ . որով և երկնային
անվրդով խաղաղութեանն գտցուք ժառան-
գաւոր։

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]



վարդան՝ խորէն, արտակ՝ տաճատ, և հմյեկ·
վահան՝ արսէն, և գարեգին՝ քաջ նահատա՛կ։

## Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի, և Հայոց պատերազմի, և վկայիցն ընդ Յովսեփայ սրբոյ, ՚ի դասուն երիցանց Հայաստանեայց։

Զբանն մեզ պատուիրեցեր, արարի ով քաջ, վասն Հայոց պատերազմին զոր հրամայեցեր. յորում բազումք առաքինացան քան թէ սակաւք. ահա նշանագրեցի յայսմ յեօթն յեղանակի։ Առաջինն՝ զժամանակն։ Երկրորդ՝ զիրացն պատահումն յիշխանէն արևելից։ Երրորդ՝ զմիաբանութիւն ուխտի եկեղեցւոյ։ Չորրորդ՝ զերկպառակութիւն ոմանց բաժանելոց ՚ի նմին ուխտէ։ Հինգերորդ՝ զյարձակումն արևելից։ Վեցերորդ՝ զընդդիմանալն Հայոց պատերազմաւ։ Եօթներորդ՝ զերկարումն նոցին խռովութեան։ Յայսմ յեօթն գլուխս կարգադրեալ և եդեալ ծայրալիր պատարմամբ զսկիզբն, և զմիջոց, և զկատարումն։ Զի հանապազորդ ընթեռնուցուս՝ լսելով զառաքինեացն զքաջութիւն, և զյետս կացելոցն զվատթարութիւն. ոչ յանձին կարօտութիւն քո երկրաւոր, առ տգիտութեան լսման. այլ այցելութիւն երկնաւոր տնտեսութեան, որ մատակարարէ յառաջգիտութեամբ զհատուց

ատուցմունս երկոցունց կողմանցն, որ երևելեօքս զաներևոյթսն գուշակէ: Այլ դու ո՛վ մեծդ 'ի գիտութե այ՝ ասէ ի՞նչ արդեօք՝ հրամայեցի՞ս, քան թէ հրամայեցես: Լուսագունայն՝ ո՞վ երևի ինձ և քեզ, և այնոցիկ որք դեգերեցին յիմաստասիրութե, երկնաւոր սիրոյ է նշանակս այս և ոչ երկրաւոր փառասիրութե. ո՞վ և ասացին իսկ ումանք 'ի քաջ պատմագրացն՝ զուգաւորուի է մայր բարեաց, և անզուգուի՝ ծնող չարեաց: Որպէս և մեր իսկ հայեցեալ 'ի մր սէր քոյդ հրամանիդ, ոչինչ դանդաղեալ վեհերեցաք հաջելով 'ի մեր տգիտութիս. քանզի բազում ինչ է սրբութի սաստար լինել անօսրութե. ո՞վ աղօթք՝ տքնութե. և սէր մր՝ միաբան օգնից:

Զոր և մեր ըր հրամանին քում ընկալեալ՝ յօժարութբ ձեռնարկեցաք զայն ինչ, որ է միխիթարութի սիրելեաց, և յոյս յուսացելոց, և քաջալերութի քաջաց՝ բռնութբ յարձակեալ 'ի վր մահու, առաջոյ տեսանելով զզօրագլուխն յաղթութե, որ ոչ ումեք ումհար լիցի թշնամութբ, այլ ամեցուն ուսուցանէ զիւր զանպարտելի զօրութին. ահա ո՛ ոք որ կամեսցի՝ ընդունի իբրև զնահատակ առաքինի: Եւ քանզի բազմադիմի է նահատակուէդ անուն. և նա բազմադիմի չորրհս բաշխէ ամեցուն. զոր և մեծ իսկ քան զամ՝ սէր մր յանձնենք միայն գիտեմք. այս պարզուի զմերնոցն բերէ զնմանութի. զոր և մեր 'ի քեզ տեսեալ, մոռացաք զմեր բնութի:

Եւ ահա վերաբերեմք ըր քեզ ձօնելով, իբրև 'ի բարձրաթռիչս եղեալ՝ զամ փառաւոր մրկածին օդովք անցանիցեմք. և փոքր 'ի շատէ ծծելով յանապական վերին օդոյն, առնուցումք գի-

տու

տուն ՚ի փրկութիւն անձանց մերոց՝ և ՚ի փառս ա-
մենայաղթ եկեղեցւոյ։ Աստի և բազում ոք
պաշտօնէայք՝ զուարթութբ կատարեցին զպաշտ
վիճակին իւրեանց ՚ի փառս հաւատոյ բոլորե-
ցուն. ուր ըն նմին ոք երրորդութին ցնծացեալ
բերկրի յանտրտմական կեւրում կեցութեն։

Արդ՝ որովհետև ընկալաք զհրաման պատուի-
րանին յաննախանձ քոյոց բարուց ընտրեցդ,
սկսցուք ուստի արժան է սկսանել. թէպէտ և ոչ
յօժարիցեմք զթշուառութի ազգիս մերոյ ողբալ.
Հա ոչ ըր կամաց՝ արտօսրաթոր ողբովք ձառա-
գրեմք զբազում հարուածս. յորում պատահե-
ցաք և մեք իսկ՝ ականատես լինելով։

## ԳԼ. Ա.

## Առաջին՝ շփոթմանցն։

Յանգէ ՚ի բառնալ ազգին արշակունեաց՝
տէրեցին Նխս հայոց ազգն սասանոյ պարսկի, որ
վարէր զիւր իշխանութին օրինօք մոգուց. և բա-
զում անգամ մարտնչէր ըն այնոսիկ՝ որ ոչ ըն նոյին
օրինօք մտանէին։ Սկիզբն արարեալ յամացն
Արշակայ արքային որդւոյն տիրանայ, թոռորդւոյն
տրդատայ, և կոչէր մինչ յամն վեցերորդ Ար
տաշիսի արքային հայոց՝ որդւոյ վռամշապհոյ. և
իբրև զնա մերժեաց ՚ի թագաւորութենէն, ՚ի նախա
րարս հայոց անկանէր թագաւորութին։ Զի թէ-
պէտ և զանձն յարքունիս պարսկաց երթայր,
սակայն այրուձին հայոց բովանդակ ՚ի ձեռն նա-
խարարացն առաջնորդէր ՚ի պատերազմին. վն և
ծնապաշտութին բարձրագլուխ կամակարութբ
երևելի լինէր յծին հայոց։

Ի սկզբան տէրութեն շապհոյ արքային ար-
քայի, մինչև յամս երկրորդ յազկերտի արքային
արքայի որդւոյ վռամայ, զոր եդիտ սասանայ

իւր գործակից , և զնմ մթերեալ Թոյնան Թա-փեաց 'ի բաց , և ելից զնա իբրև զպատկանդա-րան դեղեալ նետիւք , և սկսաւ եղջիւր ածել անօրէնութե , և գոռոզանայր , և գոռալով հողմն հանէր ընդ չորս կողմանս երկրի , և Թշնամի և հակառակորդ երևեցուցանէր զհաւատացեալսն 'ի քս , և նեղէր տագնապէր անխաղաղասէր կենօք :

Քանզի յոյժ ախորժելի էր նմա խռովութի արեան հեղումն , վասն այսորիկ յանձն իւր տա-րաբերէր Թէ յո Թափեսցէ զդառնութին Թիւ-նաւոր , և կամ ուր բացատեսցէ զբազմութի նետիցն։ Այլ առ յոյժ յիմարութեն իբրև զպա-ղան կատաղի , յարձակեցաւ 'ի վր աշխարհին յունաց , և եհար մինչև 'ի քաղաքն Մծբին։ Այլ զբազում քաղաքս հռոմոց՝ աւերեաց ասպատակաւ . և զնմ եկեղեցիս երկրին հրձիգ արար . կուտեաց զա-ւար և զգերի , և ահաբեկ արար զնմ զօրս աշխարհին։

Իսկ երանելին Թէոդոս կայսր , քանզի էր խաղաղասէր 'ի քս , ոչ կամեցաւ ընդ առաջ նր ելանել պատերազմաւ , այլ՝ այր մի Անատոլ ա-նուն , որ էր նր սպարապետ արևելից , առա-քեաց առ նա բազում գանձիւք . և այլք պար-սիկք՝ որք փախուցեալ էին վս քրիստոնէութե , և կային 'ի քաղաքին կայսեր , կալաւ և ետ 'ի ձեռս նր . և զնմ զոր ինչ ասաց՝ 'ի ժամանակին կատարեաց ըս կամաց նր , և արգել զնա 'ի բա-զում բարկութէն , և դարձաւ անդրէն 'ի քա-ղաքն իւր տիզբոն։

Այլ իբրև տեսանէր անօրէն իշխանն Թէ ոչ յաջողեցաւ չարութի նր , սկսաւ այլ ևս խոր-հուրդ յաւելուլ , որպ զի 'ի հուր բորբոքեալ՝

յ

յաւելու բազում նեղութս փայտին։ Քանզի ուս-
տի սակաւ մի կասկածէր, անտի աներկիւղ հաս-
տատէր. վ՟ այնորիկ դրդուեցոյց զբազումս ՚ի
մ՟ր ուխտէն քրիստոնէից։ Ո՛ր զոր բանիւք
սպառնալեօք. և էր՝ զոր կապանօք և տանջանօք.
էր՝ զոր չարաչար մահուամբ վախճանէր. յա-
փշտակութի առնէր ընչից և արարոց, և մեծա-
անարգանօք տանջէր զամենն։ Եւ իբրև ետես
եթէ վայրավատնեալ ցրուէին ՚ի բազում կող-
մանս, ՚ի խորհուրդ կոչեաց զպաշտօնեայս ձախա
կողմանն՝ որք կապեալք էին ՚ի կռապաշտութեն
անլուծանելի հանգուցիւք, վառեալք և ջե-
ռեալք իբրև զհնոց՝ առ ՚ի յայրել զուխտ մ՟ր
եկեղեցւոյ։

Քանզի էին իսկ այնպիսիքն՝ բնակեալ ՚ի
կեանս իւրեանց իբրև թէ ՚ի թանձրամած խա-
ւարի. և ոգիքն արգելեալք ՚ի մարմինսն իբրև
զկենդանի ՚ի գերեզմանի. յորս ամենեւին չծագէ
նշոյլ մ՟ր լուսոյն ք՟ի։ Նաև արջք օրհասականք՝
ընդ վախճանել շնչոցն, հզօրագոյնք կռուէին. յո-
րոց և իմաստունքն տեղի տուեալ փախչէին ՚ի
նոցանէ։ Այսպիսի իմն եկեալ հասեալ էր վախ-
ճան տէրութեն, եթէ հարկանէին՝ չհոգան. և
եթէ հարկանէին՝ չիմանան. իբրև ոչ գտանէի ար-
տաքին թշնամի, ընդ անձինս իւրեանց մարտ ե-
դեալ կռուէին։ ՚Ի դէպ իսկ ելանէ բան մար-
գարէին ՚ի վ՟ր նց, այր ասէ առ քաղցի իւ-
րում շրջեսցի, և կերիցէ զկէս անձին իւրոյ։
Սմին նման և տ՟րն ինքնին ասէ, ա՟մ տուն և
թագաւորու՟թ որ յանձն իւր բաժանեսցի, ոչ
կարէ կալ հաստատուն։

Արդ՝ զի՞ կոծիս. զի՞ մրցիս. զի՞ այրիս. զի՞


բոր

բորբոքիս. զի՞ չշիջանիս. զի՞ կոչես 'ի խորհուրդ զայնոսիկ՝ որոց զոգիս ձեր 'ի ձեռն հանեալ է զանապականն յապականութի, և զապականելի մարմինդ գեհենաքարշ արարեալ իբրև զազիր մեռելոտի 'ի բաց ընկեցեալ:

Ապաքէն զայդ կամիս զի ծածկեսցի խորհուրդ անմաքրութեանդ, տեսջի՛ր յորժամ յայտնեսցի, ապա գիտասցես զելս կատարածի դորա:

Ասեն մոգքն՝ արքայ քաջ, ածքն ետուն քեզ զտէրութիւնդ զայդ և զյաղթութիւնդ. և ոչինչ կարօտին նոքա մարմնաւոր մեծութե. բայց եթէ 'ի մի օրէնս դարձուցանես զամ ազգս և ազինս՝ որ են 'ի տէրութե քում, յայնժամ և ածն յանաց հնազանդեալ եղիցի է օրինօք քովք: Արդ զմի բան զմեր փաղփաղուկի կատարեա՛ դու արքայ, զոր գումարեա՛, և գունդ կազմեա՛, խաղացնա՛ դու յերկիրն քուշանաց, և զամ ազգս հաւաքեա՛, և անցո՛ ընդ պահ դուռն 'ի ներքս. և դու անուէն արքայ արա՛ քեզ բնակութի:

Յորժամ արգելուս և փակես զամն 'ի հեռաւորութենէն, կատարին խորհուրդք կամաց քոց. և ո՛չ երբեք մեզ և դենիս մերում, տիրեսցես դու և երկրին քուշանաց. և յոյնք իսկ ո՛չ եղանեն ընդ քո իշխանութի. բայց միայն զաղանդ քրիստոնէիցն բարձ 'ի միջոյ:

Եւ հաճոյ թուեցաւ խորհուրդն թագաւորին և մեծամեծացն՝ որ էին 'ի նմին բանի: Հրովարտակս գրէր, պնդով դեսպանս արձակէր յամ տեղիս տէրութե իւրոյ:

Եւ այս է պատճէն հրովարտակին:

Ես ամ ազգս տէրութե իմոյ՝ արեաց և անարեաց՝ բազմասցի ձեզ ողջոյն մարդասիրութե

մե

մերոյ. դուք ողջ լերուք, և մեք մեզէն ողջ եմք դիցն օգնականութ։ Առանց զձեզ ինչ աշխատելոյ՝ խաղացուք գնացուք ՚ի յերկիրն յունաց. և առանց գործոց պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուաճեցուք զնոյն երկիրն ՚ի ծառայութի մեզ. դուք բարի զմտաւ ածէք, և անսպառ լերուք յուրախութե։ Բայց զայս բան կատարեցէք վաղվաղակի զոր ասեմս. մեք ՚ի մտի եդաք անվրէպ խորհրդովք խաղալ գնալ յայն արևելից՝ աստուածոցն օգնականութ դարձուցանել ՚ի մեզ զտէրութիւն քուշանաց. դուք իբրև զհրովարտակս զայս տեսանիցէք, անխափան վաղվաղակի այրուձի գումարեցէք առաջոյ քան զիս, և յանդիման լինիցիք ինձ յապար շհրի։

Ըստ այսմ պատճենի հրովարտակի՝ եհաս և ՚ի հայոց աշն, ՚ի վրաց և յաղուանից, ՚ի լփնաց և ՚ի ծոփեաց, և ՚ի կորդուաց և յաղձնեաց. և յայլ բազում տեղիս հեռաւորս, որոց ոչ էին օրէնք զայն ճանապարհ երթալ յառաջ ժամանակաւ։

Գունդս կազմէր ՚ի հայոց մեծաց և զազատորդի, և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ։ Ըստ նմին օրինակի ՚ի վրաց և յաղուանից, և յայնէն լփնաց, և որ այլ ևս ՚ի կողմանց կողմանց հարաւոյ, մերձ ՚ի սահմանս տաճկաստանի, և ՚ի հոռոմոց աշխարհն. և ՚ի կորդուաց, ՚ի դասն, և ՚ի ծոփէ, և յարզնարազուն. որք էին մերձն հաւատացեալք և մկրտեալք ՚ի մի կաթողիկէ և առաքելական եկեղեցի։ Եւ անմեղութ ոչ գիտացեալ զերկդիմի միտս թագաւորին, խաղացին գնացին յիւրաքանչիւր աշխարհաց լրջմտութ և տիրասէր խորհրդովք կատարել զպարտս զինուորութեն։

Աներկեայ հաւատովք բարձին ևս ընդ իւ-

րեանս

րեանս զածային սր կտակարանին՝ բազում պաշ-
տօնէիւք եւ բազմագոյն քահանայիւք. բայց հրա-
մանն տուեալ նծի, ոչ իբրեւ յակնկալութի կե-
նաց, այլ իբրեւ ՚ի վճարումն վախճանի, յանձն
առնելով միմեանց զոգի եւ զմարմին։

Զի թէպէտ եւ խորհուրդ Թագաւորին
չէր յայտնեալ նց, սակայն կարծիք ՚ի միտ էին
ամենեցուն. մանաւանդ իբրեւ բեկեալ տեսա-
նէին զզօրութին յունաց առաջի նր, յոյժ հա-
րեալ խոցեցան ՚ի խորհուրդս իւրեանց։

Բայց քանզի պատուիրանապահք էին սր
կտակարանացն այ, հանապազ յիշէին զպատուի-
րեալն ՚ի Պօղոսէ, թէ ծառայք հպատակ լե-
րուք տերանց ձերոց մարմնաւորաց. մի՛ սուտա-
կապաշտք եւ առ աչս աչառելով, այլ սրտի մտօք
ծառայեցէք իբրեւ այ, եւ մի՛ իբրեւ մարդկան. զի
՚ի տեառնէ է հատուցումն արդար վաստակոց
ձերոց։

Իսկ այսու ամի բարեմտութբ յուղարկեալք
յաշխարհէ, եւ յանձն եղեալք սր հոգւոյն, յան-
դիման լինէին փութով կատարել զհրամանն զա-
մենայն՝ ապարեալ ըստ կամաց նր։ Յոյժ ուրախ
լինէր Թագաւորն իբրեւ այն թէ՝ կատարեցան
կամք կարծեաց նր. եւ ահա առնէր ընդ նս զայն
ինչ՝ զոր պաշտօնեայք ամբարշտութե նր խրա-
տեցին զնա։

Նա իբրեւ ետես Թագաւորն զնմ կազմու-
թիւն եւ զբազմութի գնդին բարբարոսաց՝ որք
սրտի մտօք եկեալ էին ՚ի վաստակ արքունի, ա-
ռաւելապէս եւս ուրախ լինէր առաջի մեծա-
մեծացն եւ ամ բազմութե զօրաց իւրոց։ Ի վե-
րին երեսս թաքուցանէր զկամս մտաց իւրոց,

եւ

և ակամայ տատասապէս պարգևէր զնա։

Խաղաց գնաց միանգամայն ՚ի վր տէրութե հոնաց ազգին, զոր քուշանս անուանեն. և զերկեամ մի կռուեալ՝ ոչինչ կարաց ազդել նոցա։

Նա յարձակեաց զմարզիկան յիւրաքանչիւր տեղիս. և զայլս ՚ի նոյն տեղիս փոխանակ առ իւր կոչեաց նովին պատրաստութբ։ Եւ այսպէս ամ յամէ սովորութի կարգեաց. և իւր անդէն քաղաք բնակութե շինեաց. սկսեալ ՚ի չորրորդ ամէ տէրութե իւրոյ, մինչև յամն մետասաներորդ թագաւորութեանն։

Եւ իբրև ետես թէ հաստատուն կացին հռոմք յուխտին իւրեանց՝ զոր եդին ընդ նմա, և դադարեցին հայել ի ուրեք ելանել ընդ պահակն Ճորայ, և յամ կողմանց խաղաղութբ բնակեաց աշխարհս նր, և ՚ի նեղ եւս արկ զթագաւորն հոնաց. քանզի աւերեաց զբազում գաւառս նր, և յաղթեցաւ տէրութի նր. աւետարս առաքեաց ընդ ամ աշխարհս ազին իւրոյ, ցլուք սպիտակօք՝ և գիսաւոր նոխազօք՝ առատացոյց զոհս կրակին. և խիտ առ խիտ թանձրացոյց անդադար լրութբ զպաշտօնն պղծութե իւրոյ. պարգևօք և պատուօք մեծարեաց զբազումս ՚ի մոգուց, և զբազմագոյնս ՚ի մոգպետաց. և հրաման ետ եւս յափշտակել զամ ինչս քրիստոնէից և զստացուածս՝ որք էին ՚ի մէջ պարսկաց աշխարհին։

Եւ այսպէս հպարտացաւ բարձրացաւ ՚ի միտս իւր, ՚ի վեր քան զմարդկային բնութի անդր վազեալ ընթանայր. ոչ միայն յերս մարմնական պատերազմացն, այլ՝ մեծ ումն զինքն կարծէր քան զբնութի հայրենի կարգին. վն այնորիկ կեղծա-

ւո

ւորութե Թագաւորացանէր զինքն ըստ կարծեացն, և ոչ երևէր խնամոտաց՝ յանմահից իմն կարգէ գնէր զինքն.

Եւ յոյժ էր ցասուցեալ ընդ անունն քնի յորժամ լսէր թէ տանջեցաւ խաչեցաւ մեռաւ և թաղեցաւ. Եւ երբեմն այսպէս օր ըստ օրէ 'ի սոյն միտս ցնորեալ դանդաչէր, մի ոմն ման կագոյն 'ի Նախարարացն Հայոց՝ ընդդէմ բանս եդ և ասէ, մինչ քաջ՝ դու ուստի՛ գիտես այդպիսի բանս խօսել զանուանէ. Եւ պատաս խանի Թագաւորն և ասէ, իմ իսկ առաջի ընթերցան զգիրս մոլորութե ձերոյ.

Եւ պատասխանի անդէն պատասխանեալն և ա սէ, ընդէ՞ր մինչ ցայդ վայր միայն ետուր ըն թեռնուլ. այլ յառաջ ևս մատո զկատարածսն, և լսես անդ զսքանչելութիւն, և զյայտնութիւն ա ռաքելոց, զվերացումն յերկինս, զնստելն ընդ աջմէ հօր, զխոստումն երկրորդ գալստեանն, զհրաշակերտ յարութիւն առնելով բազմաց, զհամառօտ հատուցմունսն արդար դատաստանին.

Երբեմն լուեալ զայս Թագաւորն, 'ի խոր խո ցեալ վէր 'ի վերոյ ծիծաղեցաւ և ասէ, այդ մ խաբէութի է. Եւ պատասխանի զինուորն քնի և ասէ, եթէ հաւատարիմք են քեզ մարմ նաւոր չարչարանքն, հաւատարմագոյն ևս լիցի քեզ երկրորդ գալուստն նո.

Եւ զայս լսելով Թագաւորին՝ բորբոքեցաւ երբեմն զհուր հնոցին 'ի բարեկամն, մինչև իւրքն իսկ անդէն դեռևս երբեմն զքաղդէացիսն այ րեցեալ լինէին. Յայնժամ զբոլոր բարկու թիւն սրտմտութեն եհեղ յայրն երանելի, որում անուն էր Գարեգին. Եւ նա հրաման կա պեալ

պեալ ոտիւք և կապեալ ձեռօք զերկեամ մի տուեալ 'ի չարչարանս . և հանեալ 'ի բաց զտէրութիւն 'ի նմանէ , ընկալաւ զվճիռ մահու . և քնի փառք՝ յաւիտեանս յաւիտենից :

## ԳԼ. Բ.

### Նշխարք՝ չերազն դատաստանաց [illegible] [illegible].

Որոց ոգիքն թողացեալ են յերկնաւոր առաքինութենէն , յոյժ ընդ աչիւք անկեալ է բնութիւն մարմնոյ . յամ հողմոյ շարժի , և յամ բանէ խռովի , յամ իրաց դողայ , երաշզագէտ է այնպիսին 'ի կեանս իւրում , և յանդիւտ կորուստն յուղարկի 'ի մահուանն իւրում :

Որպէս և ասաց ոմն 'ի հնումն , մահ ոչ իմացեալ՝ մահ է , մահ իմացեալ՝ անմահութիւն է . որ զմահ ոչ գիտէ , երկնչի 'ի նմանէ . իսկ որ գիտէ զմահ , ոչ երկնչի 'ի մահուանէ :

Նա այս ամ չարիք մտանեն 'ի միտս մարդկան յանուսումնութենէ : Այր՝ զրկի 'ի ճառագայթից արեգական . և տգիտութիւն զրկէ 'ի կատարեալ կենացն : Լաւ է կոյր աչօք , քան կոյր մտօք . որչափ մեծ է ոգի քան զմարմին , այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոյ : Եթէ ոք առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ՝ և մտօք աղքատագոյն , ողորմելի է քան զաղքատն . որպէս և տեսանեմք իսկ ոչ միայն 'ի չափաւոր մարդիկ , այլև որ մեծն է քան զամ . Թագաւոր՝ եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր

իւր , ո՛չ կարէ ՚ի վիճակին իւրում վայելուչ գոլ։

Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս , ո՛րչափ ես առաւել առ հոգեւորն։ Բոլոր մարդոյն՝ հոգին է կենդանութիւն · իսկ մարմնոյ և հոգւոյ՝ միտքն են կառավար · և ո՛չ առ մի մարդ , այսպէս և առ բոլոր ազգս։

Թագաւորն ո՛չ միայն զիւր տացէ պարտիս , այլև որոց եղեն պատճառք ՚ի կորուստ։ Բայց մեք թէպէտև չունիմք իշխանութիւն բամբասել զիշխանս , և ո՛չ գոլողք կարեմք լինել այնմիկ որ ա՟ծամարտն լինին · այլ զանցս իւրոցն պատմեմ , որ յիւրմէ ընդ տր՟ եկեղեցիան անց , և ո՛չ դանդաղիմ · ո՛չ բամբասանէր մտօք , այլ՝ ճշմարտութեամբ զելս իւրոցն առելով ո՛չ լուեցից · ո՛չ ՚ի կարծ ընդոստուցեալ , և ո՛չ ՚ի լուր զարթուցեալ · այլ ես ինքնին անձամբ անդէն ՚ի տեղւոջն պատահեցի , և տեսի և լուայ զձայն բարբառոյն յանդգնաբար խօսելոյ , իբրև զհողմն սաստիկ կի բաղխեսցէ զծով մեծ , այնպէս շարժէր և տատանէր զամենայն բազմութիւն զօրաց իւրոց , և հանդէս առնէր ամենայն ուսմանց , և ընդդաճէր զմոգութիւն և զքօդէութիւն , և զամենայն ուսմունս աշխարհին իւրոյ։

Արկանէր ՚ի ներքս և զքրիստոնէութիւնն կեղծաւորութեամբ , և առնէր զայրացեալ մտօք՝ հարցէք քննեցէք տեսէք , թո՛ղ որ լաւն է՝ ընտրեալ կալցո՛ւք · և փութայր որ ինչ ՚ի մտին էր՝ զի վաղվաղակի կատարեսցէ ։ Իսկ ՚ի կողմանց կողմանց քրիստոնեայքն որ ՚ի զօրուն , իմացան զհուրն որ ՚ի ծածուկ վառեալ բորբոքէր , և կամէր հրդեհել զեկեղեցիս և զդաշտս առ հասարակ ։

Մեռնուլն և նոքա անծախական հրոյն , և սատանայապէս պատրաստեցան առ ՚ի փորձութիւն գաղտնի մեքենայիցն ։ Սկսան այնուհետև բարձր բարբառով՝ սաղմոսիւք և երգովք հոգևորօք և մեծապայծառ վարդապետութբ յայտ յանդիման մեծի բանակին զպաշտօնն ցուցանէին աներկիւղ և առանց զանգիտելոյ ։

Ս՛ոք և երթայր առ նս , ուսուցանէին կամակար . և ոէր յաջողէր նց՝ նշանօք և արուեստիւք . քանզի բազում հիւանդք ընդունէին ըզ բժշկութի ՚ի հեթանոսական զօրուէն , ։ Իսկ անօրէն իշխանն իբրև գիտաց եթէ յայտնեցաւ խորամանկութի խորհրդոյն , և պատրաստեալ հուրն՝ մինչև ուրուք ՚ի նա փչեալ՝ վառումն նր յայտնի իմացաւ երկիւղածացն նց , սկսաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիոս չարութեան իւրոյ , և անբժշկական վէրս՝ յոգիս և ՚ի մարմինս տեսանէր ։

Մերթ շանթէր գալարէր իբրև զօձ թիւնաւոր . մերթ պարզէր գոչէր իբրև զառիւծ զայրացեալ . գելոյր և տապալէր երկդիմի մտօք . և զխորհուրդս կամացն կատարել կամէր ։ Քանզի ձեռն արկանել և ունել ոչ կարէր . վս զի ոչ էին համագունդ ՚ի միում վայրի առ նմա ։

Սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրսերս յաւագաց , և զանարգս ՚ի պատուականաց , և զոգէտս ՚ի գիտնոց , և զանարիս ՚ի քաջ արանց ։ Եւ զի մի մի թուեմ , այլ զոմ անարժանս յառաջ մատուցանէր , և զանարժանաւորս յետս տանէր . մինչև զհայր և զորդի քակէր ՚ի միմեանց ։ Թէպէտև ընդ ամ ազգս առնէր զանկարգութիւնս զայս , բայց առաւել ընդ հայոց ազին մարտնչէր .

քանզի տեսանէր զնոսա ջերմագոյն յանձպաշտութիւնն։ Ո՛րք էին յազգէ նախարարացն հայոց, և անմեղութեամբ ունէին զքարոզութիւն առաքելոց և մարգարէից․ պատրէր զնոսա ՚ի նոցանէ ոսկով և արծաթով, և զբազումս այլ ևս առատ պարգևօք։ Իսկ զոմանս՝ ագարակօք և մեծամեծ գեղիւք․ և զոմանս՝ պատուով և իշխանութեամբ մեծամեծիւք․ և այլ ևս մնոտի յոյս ոգւոց՝ առաջի դնէր։

Նա այսպէս հրապուրէր և յորդորէր հանապազ, եթէ միայն ասէ՝ զօրէնս մոգութեան յանձին կալջիք, և զձեր մոլորութիւն որով մաք դարձուսջիք ՚ի ճշմարտութիւն երևելի մերոյ դիցաղնական օրինացս, ՚ի մեծութիւն և յաւագութիւնս հասուցից զձեզ հաւասար իմոյ սիրելի նախարարացս․ առաւել ևս զանցուցից։

Նա այսպէս կեղծաւորութեամբ խոնարհեցուցանէր զինքն առ նոսա՝ խօսելով ընդ նոսա ՚ի պատճառս սիրոյ, զի խորամանկութեամբ որսալ մարթասցէ զնոսա, ըստ առաջին խորհրդական խրատտուացն։ Նա զայս առնէր սկսեալ ՚ի չորրորդ ամէն մինչև ՚ի մետասան ամն իւրոյ տէրութեան։

Նա իբրև ետես եթէ ոչի՛նչ յաջողեցաւ ծածուկ հնարագիտութիւն, այլ՝ ընդդէմքն յոլովագոյն գործէին․ քանզի տեսանէր զքրիստոնէութիւնն՝ որ օր քան զօր յորդորեալ տարածանէր ընդ ամենայն կողմանս հեռաւոր ձմեռներն՝ ընդ որ ինքն անցանէր․ սկսաւ հաչել և մռնչել և հառաչելով յոգւոց հանել։ Յայտնեաց ակամայ զծածկեալ խորհուրդսն, եւ հրաման բարձր բարբառով և ասէ, ամենայն ազգ և լեզու որ են ընդ իշխանութեամբ իմով, դադարեսցեն յիւրա-

քան

քանզի էր մոլար օրինացն․ և միայնոյ եկեսցեն յեր-կրպագութ̃ի արեգական, զոհս մատուցանելով և ա͞ծ անուանելով և սպաս ունելով կրակի․ և ՚ի վ͞ր այր ա͞մի՛ և զմոգութ̃ե օրէնս կատարե-լով, զի մի՛ ինչ պակաս առնիցեն։

Զայս առնելով քարոզ կարդայր ՚ի մեծ կարաւանին, և պատուէր սաստիւ դնէր ՚ի վ͞ր ա͞մցուն, և դեսպան ստիպաւ արձակէր ընդ ա͞մ աշ͞խս հեռաւորս․ զնոյն պատուէր հրամանի առ ա͞մն արձակէր։

Արդ ՚ի սկզբան երկոտասան ամի թագաւո-րութեան իւրոյ՝ գունդ կազմէր անհամար բազ-մութ̃բ, յարձակեալ հասանէր յերկիրն խոա-ղկան։ Զայս տեսեալ թագաւորին Քուշա-նաց, ո՛չ հանդուրժէր ելանել ընդ առաջ նորա պատերազմաւ․ այլ և խոյս տուեալ ՚ի կողմանս ամուր անապատին, թագաւորն ապրէր հան-դերձ ա͞մ զօրօքն իւրովք։

Իսկ սա՝ ասպատակ արձակէր գաւառաց՝ տե-ղեաց՝ վայրաց․ առնոյր զաւարս բերդս և ըղ քաղաքս, կուտէր զգերի զաւ և զաւար, և զաւարն հասուցանէր ածէր յերկիր տէրութ̃ե իւրոյ։ Նա անդ այնուհետեւ յընդունայն ե-ղեալ ՚ի նոյն խորհուրդս՝ հաստատէր ՚ի կարծիս մոլորութեն՝ ասելով ցպաշտօնեայս անբարշտու-թեանն, զի՛նչ հատուցուք մեք ա͞ծոցն փոխա-րէնս այս մեծի յաղթութեան, որ ո՛չ ոք կա-րաց ելանել ընդդէմ մեր պատերազմաւ։

Յայնմ ժամանակի առ հասարակ մոգք և քօ-դեայք բարձրին զձայնս իւրեանց և ասեն, ա͞ծքն որ ետուն քեզ զտէրութիւնդ զայդ և զյաղթու-թիւնդ ՚ի վ͞ր թշնամեաց քոց, ոչի՛նչ են կա-

րօտ

բոռ խնդրել 'ի քէն յերևելի պատուականացս, այլ զի բարձցես զամ ումեմն մոլորութեան մարդկանն. և 'ի մի դարձուսցես զօրէնս զրադէշական պատուիրանին։ Հաճոյ թուէր բանն առաջի թագաւորին՝ և ամ մեծամեծացն. մանաւանդ որ էին առաջակայք օրինացն, խորհուրդ 'ի մէջ առեալ՝ յաղթէր խրատուն։

Մինդէն 'ի ներքոյ պահ դրանն արգելուլ ըզբազմութի այրուձիոյն հայոց, զվրաց և զաղուանից և զամենեցուն՝ որ էին հաւատացեալ 'ի տր աւետարանն քի. Եւ սաստիկ հրաման 'ի վր դռնապանացն առնէին, եթէ որ յարևելս առ մեզ գայցէ՝ թողցեն. իսկ յարևելից յարևմուտս, անանց լիցի ճանապարհ։

Եւ իբրև արգել փակեաց զնս յամուր յանել գառագիղն, և իրաւի ասացի անել և ամուր, քանզի չէր անդ տեղի փախստի և թաքստի, վասն զի շուրջանակի թշնամիք են բնակեալ. յայնմ ժամանակի ձեռն արկանէր 'ի նս, և մեծաւ չարչարանօք և պէս պէս տանջանօք վատթարէր զբազումս 'ի նոցանէ. և ստիպէր ուրանալ զճշմարիտն ած, և խոստովանել զերևելի տարերքս։

Իսկ զօրականքն առ հասարակ գեղեցիկ խորհրդովք՝ քաջապէս զօրութբ՝ միաբան աղաղակէին և ասէին, վկայեն մեզ երկինք և երկիր, որ ոչ երբէք հեղգացեալ եմք յորքունի վաստակ, և ոչ խառնեալ վատութի ը արութի քաջութե. 'ի զուր և անողորմ են հարուածս 'ի վր մեր։

Եւ բազմանայր գոչումն աղաղակի նց, մինչև ինքնին թագաւորն ականատես լինէր իրացն

յանդիմանութե՟, և անդէն փաղփաղակի երդ-
մամբ հաստատէր և ասէր, ոչ Թողացուցից զձեզ
մինչև կատարեսջիք զա՟մ կամս հրամանաց իմոց։

Եւ ահա իշխանութի՟ առեալ չարասէր սպա-
սաւորացն, զի զչորս զինուորս ՚ի բուն յաւ-
գացն մատուսցեն ՚ի փորձութի՟ տանջանացն։

Եւ զառաջեաւ դատեալ բազում հարուա-
ծովք, նովին կապանօք անցուցին ՚ի տեղիս ար-
գելանին։ Իսկ այլոցն՝ խաբէութե՟ առ ժամա-
նակ մի Թուլութի՟ արարեալ, և զա՟մ [illegible]
պատճառս արկանէր զկապելովքն. և զայս առ-
նէր սատանայական խրատուն։ Եւ յետ երկո-
տասան աւուր հրաման տայր ընԹրիս գործել
առատութե՟՝ աւելի քան զայլ աւուրցն սովո-
րութիւն, և կոչէր զբազումս ՚ի զինուորական
քրիստոնէիցն։ Եւ ՚ի ժամ գահոյն պատրաստու-
Թեան՝ զիւրաքանչիւր տեղիս շնորհէր նց ՚ի բազ-
մականին. և սիրով և խոնարհութե՟ խօսէր ը՟ նս՟
ըստ առաջնում կարգին, զի Թերևս հաւանեսցին
ուտել զմիս զոհեալ, զոր ոչ երբէք օրէն էր ու-
տել։ Եւ իբրև ոչ կային յանձին ամենեքին,
ոչինչ կարի ստիպեաց. այլ հրամայեաց մատու-
ցանել նց զսովորական կերակուրն։

Եւ անտի ՚ի դուրս ելեալ ՚ի սրահն արքու-
նի, արգելին զոմանս ՚ի նոցանէ՝ ձեռս յետս
կապելով և զխոնճանոցն կնքելով, զգուշու-
Թեամբ պահելով։ Էր՝ որ զերկու աւուրս. և
էր՝ որ զերեք աւուրս. և բազում այլ ևս՝ յա-
նարժան հարուածս չարչարէին զնս՟. զոր և ոչ
ընդ գրով իսկ արժանի համարեցաք արկանել։

Եւ զոմանս ՚ի նոցանէ հեռացուցին և քար-
շեցին, և յազնուական պատուոյն դարձեցուցա-
նէ

նէին անարգեալ. և գունդս գունդս դարձեալ գումարէին 'ի նոցանէ յերկիր հեռաւոր յամուրս անապատին 'ի մարտ պատերազմի թշնամեաց արքայի. և բազմաց անդէն իսկ հասանէր վախճան մահու սրով: Նոյն զանձն զկարգեալ թոշակն նուաղեցուցանէին, և քաղցի և ծարաւով տառապեցուցանէին զնս. և ձմերոցի տեղի՝ զգժնեայ վայրսն հրամայէին նց. և անարգս և վատթարս յաչս ամենցուն զնոսա ցուցանէին: Իսկ նոքա առ սէրն քսի՝ յոյժ խընդութբ ընդունէին զամ չարչարանս վն մեծի յուսոյն որ 'ի քս. որ առ յապայ պատրաստեալ կայ պատուիրանապահ համբերողացն: Որչափ զչարութի և զանարգութի բազմացուցանէր, նոքա ևս քան զևս զօրանային 'ի սէրն քսի. մանաւանդ զի բազումք 'ի նոցանէ զգիրս սբս ուսեալ էին 'ի մանկութէ. զանձինս մխիթարէին, և զընկերս քաջալերէին, և իբր աշտանակ լուսոյ՝ զպաշտօնն առնէին 'ի բազմացուցանելն. վյ և բազումք 'ի հեթանոսաց՝ որոց հեշտ և ցանկալի ձայնքն թուէին, քաջալերէին զնս և առնէին բանս մխիթարութե, իբրև թէ լաւ կցէ մարդոյ մահուչափ ձգնել, քան յայդպիսի օրինաց ուրանալ: Բայց սակայն՝ թէպէտև նոքա յոյժ զուարթութբ խնդային ըստ ներքին մարդոյն, արտաքին տեսիլն կարի՛ ողորմելի էր յօտարութենէն: Ընկղմի պատուհասն զինուորութիս հասանէր 'ի չարաչարք անարգութի. և հայրենի ազատութին չարաչար կայր 'ի ծառայութի մարդախողող բռնաւորին, որ և ըստ հեթանոսաց օրէնսն անցանէր արեանհեղութբ, որ և ամենևին չկարծէր թէ գուցէ այլ ումի վրէժ

վրէժխնդրութիւն երկնից։ Նաև ոչ զերկրաւոր վաստակս ուրուք յիշէր. և որ մեծն է քան զամ բոլոր մարմնաւոր կարգի. քանզի գոյին ոմանք 'ի նախարարացն՝ որոց զեղեալս նր սնուցեալ էր մայրենի կաթամբն իւրեանց, առաւել ևս քան զամենն զնս դատէր.

Եւ յայսր ամի վերայ՝ այլ ևս չարութի խռբամանկեաց. զմի ոմն 'ի հաւատարիմ ծառայից իւրոց 'ի գործ առաքէր յերկիրն Հայոց, որում անուն էր Դենշապուհ։ Որ եկեալ հասեալ հրամանաւ արքունի՝ զողջոյն բերեալ զմեծ թագաւորին, և խաղաղասէր կեղծաւորութբ աշխարհագիր առնել ամ երկրին Հայոց 'ի թողութիւն հարկաց՝ և 'ի թեթևութի ծառայութեան այրուձիոյն։ Մինչդեռ 'ի վերին երեսս զայս կեղծաւորէր. այլ 'ի ներքոյ՝ խորհուրդքն չարագոյն ցուցանէին։ Առաջին՝ զազատութի եկեղեցւոյն արկանէր 'ի ծառայութի։ Երկրորդ՝ միայնակեացք որ բնակեալ էին 'ի վանորայս, ը նոքին աշխարհագրով արկ։ Երրորդ՝ զհարկ տէին առաւել ծանրացոյց։ Չորրորդ՝ բանսարկութբ զնախարարսն արկ ընդ միմեանս, և յամ տան առնէր խռովութի։ Եւ զայս ամ առնէր՝ թերևս զմիաբանութիւնն քակեսցէ, և զուխտն եկեղեցւոյն ցրուեսցէ, և զմիայնակեացս փախուսցէ, և զշինականսն վատնեսցէ. և առ յոյժ աղքատութեանն՝ ակամայ դիմեսցեն յօրէնս մոգուցն։ Հինգերորդն՝ ևս չարագոյն, քանզի որ հազարապետ աշխարհին էր, այր հայր վերակացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից, գրգռեալ յարոյց պամբաստանութի 'ի վր նր, և հանեալ զնա 'ի գործոյն, փոխանակ նր՝ պարսիկ ած

ած յծն․ և միւս ես մոգպետ՝ դատաւոր աշ-
խարհին․ զի զեկեղեցւոյն փառս աղաւաղես-
ցեն։ Բայց սակայն՝ թէպէտև ամ գործքս դժ-
նեայ էին, չև էր ուրուք ձեռնարկեալ յեկե-
ղեցին յայտնի, վն այնորիկ և ոչ ոք ընդդիմա-
ցաւ նմա, թէպէտև էր ծանրութի հարկացն։

Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր
դահեկանի չափ․ կրկնէին և առնուին։ Այնպէս
և եպիսկոպոսացն և երիցանցն գնէին․ ոչ միայն
շինաց, այլ և աւերակաց։ ՚Նա բնաւ և ով խոկ
կարէ պատմել վն ծանրութե մաքսից և սակից
բաժից և հարկաց, լերանց և դաշտաց և մայ-
րեաց։ Ո՛չ ըստ արքունի արժանաւորութեանն
առնուին, այլ հինաբար յափշտակէին․ մինչև
ինքեանք մեծապէս զարմանային, թէ ուստի այս
ամ գանձ ելանէ, զի մ̑որդ չէն կայցէ աշխարհն։
Ի բրև տեսին թէ այսու ամի̂ չկարացան ձանձ
րացուցանել, յայնժամ յայտնապէս հրամանն ե-
տուն մոգացն և մոգպետացն՝ նամակ մի գրել
ըստ ձախողակի դենին իւրեանց։

### Այս էր պատճէն նամակին այս։

Միհր ներսեհ վզուրկ ՚ի հարմաստայ երան
և տաներան, հայոց մեծաց ողջոյն։ Դուք գի-
տասջիք, ամ մարդ որ բնակեալ է ՚ի ներքոյ
երկնի՝ և ոչ ունի զօրէնս մազդեզանց, նա խուլ
է և կոյր և դիւաց խարամանւոյ խաբեալ։
Քանզի մինչչև էին երկինք և երկիր, զրուան
մեծ ածն յաշտ առնէր զհազար ամ, և ասէր՝
թերևս լինիցի իմ որդի մի որմիզդ անուն նր,
որ արասցէ զերկինս և զերկիր։ Նա յղացաւ



եր

երկու յորովայնի, մի յաշտ առնելով, և միւսն
թերևս ասելով։ Իբրև գիտաց եթէ երկու են
յորովայնին, ասէ՝ որ վաղ եկեսցէ, նմա տաց
զթագաւորութիւն։ Իսկ որ ՚ի թերահաւատու-
թենէն յղացեալ էր, պատառեաց զորովայնն և
ել արտաքս։ Եւ ասէ ցնա զրուանն, ո՞վ ես
դու. ասէ՝ որդին քո որմիզդ։ Ասէ ցնա զրուանն,
իմ որդին լուսաւոր է և անուշահոտ. դու խա-
ւարային ես և չարասէր։ Եւ իբրև կարի՝ դառ-
նապէս ելաց, ետ ցնա զթագաւորութիւն զհազար ամ։
Իբրև ծնաւ միւս որդին, անուանեաց զա-
նուն ն՟ր որմիզդ. և եհան զթագաւորութիւնն
յարհմնէն, և ետ ցորմիզդ, և ասէ ցնա, ցայ-
ժմ ես քեզ յաշտ արարի, դու արա առ ինձ։
Եւ որմիզդ արար զերկինս և զերկիր։ Իսկ արհ-
մնն ընդդէմ չար գործեաց։
Եւ այսպէս բաժանեցին արարածք. հրեշ-
տակք որմզդի են, և դեւք արհմնոյ։ Եւ ա՟մ
բարիք որ ՚ի յերկնից և այսր լինին, որմզդի
են. և ա՟մ վնասք որ անտի և այսր գործին՝
զայն արհմն արար։ Այնպէս և որ ինչ յերկրիս
բարի է, զայն որմիզդ արար. և որ չէ բարի,
զայն արհմն արար։ Որպէս զմարդ որմիզդ ա-
րար, և զախտս և զհիւանդութիւնս և զմահ
արհմն արար։ Եւ ա՟մ թշուառութիւնք և
պատահարք որ լինին, և պատերազմունք դառ-
նութեան՝ չարի մասինն արարածք են։ Իսկ յա-
ջողութիւնք և տէրութիւնք և փառք և պատիւ և
առողջութիւնք մարմնոց, գեղեցկութիւնք դիմաց և
ճարտարութիւնք խօսից և երկայնակեցութիւնք ամաց,
այդ ՚ի բարւոյն առնուն զգոյացութիւն. և ա՟մ
որ ոչ այդպէս է, ՚ի նա չարին արարած խառնեալ է։

Նոյն ա̃մ մարդիկ մոլորեալ են, որ ասեն եթէ զմահ ա̃ծ արար, եւ չար եւ բարի 'ի նմանէ լինի· մանաւանդ ո̃ղ քրիստոնեայքն ասեն թէ ա̃ծ նախանձոտ է, եւ վ̃ս թուղ մի 'ի ծառոյ ուտելոյ, ա̃ծ զմահ արար, եւ զմարդն արկ այնու զպատուհասին։ Ո՞ յայդպիսի նախանձ եւ ո՛չ մարդ առ մարդ ունի, թո՛ղ թէ ա̃ծ առ մարդիկ։ Ո՞ է որ զայս ասէ, նա խուլ է եւ կոյր, եւ դիւաց խաբանանաց խաբեալ։

Դարձեալ միւս եւս այլ մոլորութի ասեն. ա̃ծ՝ որ զերկինս եւ զերկիր արար, եկն 'ի կնոջէ ումեմնէ ծնաւ, որում անուն էր մարիամ, եւ առն անուն յովսէփ. եւ զհետ այդպիսի մարդոյ մոլորեալ են բազումք։ Եթէ աշխարհն հաւանոց առ յոյժ յիմարութեան ողորմաբար մոլորեալ են, եւ զերծեալ 'ի կատարեալ դենէս, յանձանց պարմայեն զխառն խրեանց, դուք եւս ընդէ՞ր զհետ նո̃ց մոլորութեան ցնորիք։ Նա՛ եւ վ՞ր օրէնք ո̃րս ձեր ունի, զնոյն եւ դուք կալարո՛ւք. մանաւանդ զի՛ եւ առաջի ո̃ց համարս ունիմք տալ վ̃ս ձեր։

Ո՞չ հաւատայք առաջնորդաց ձերոց, զոր նածարեցիք անուանեք, քանզի յոյժ են խաբեբայք. զոր բանիւք ուսուցանեն, գործովք ո՛չ առնուն յանձն։ Ո՞րս ուտել ասեն՝ ո՛չ է մեղք, եւ ինքեանք ուտել ո՛չ կամին։ Կին առնել արժան է, բայց ինքեանք եւ հայել 'ի նա ո՛չ կամին։ Կարասի ասեն որ ժողովէ, յոյժ մեղք են. բայց զաղքատութի առաւել գովեն։ Ո՛րգեն զթշուառութի, եւ պարսաւեն զյաջողուածս։ Ծաղր առնեն զանուն բաղդի, եւ զփառաւորութի յոյժ այպանեն։ Ախորժեն զանշքութիւն հանդերձից, եւ յորդեն զանարգս քան զպատուականս։ Գովեն զմահ եւ պարսաւեն ըզկեանս

կեանս: Անարգեն զծնունդս մարդոյ, եւ յար-
գեն զանարգութիւն: Եթէ լուէք դոցա, եւ՚ի կա-
նայս ոչ մերձենան. Զի փախչան փորձութենէ
հասանել: Այլ եւ ոչ կամեցայ զբ̃մ ըստ մասանց
ը̃ գրով արկանել՝ զոր խօսին դոքա: Որ չարա-
գոյն եւս քան զոր գրեցաք. զա̃ծ ՚ի խաչ ե-
լեալ ՚ի մարդկանէ՝ քարոզեն, եւ զնոյն՝ մե-
ռեալ եւ թաղեալ եւ ապա յարուցեալ եւ վե-
րացեալ յերկինս: Ո՞չ ահա́ ձեզէն իսկ արժան
էր անդրէն պատասխանի առնել վ̃ս այդպիսի
անարժան ուսմանց: Դեւք՝ որ չարք են, ո՛չ
ըմբռնին եւ տանջին ՚ի մարդկանէ, թո՛ղ թէ ա̃ծ
արարիչ ա̃մ արարածոց. զոր ձեզ ամօթ է ասել
եւ մեզ կարի՛ անհաւատալի բանք: Արդ՝ եր-
կու իրք կան առաջի ձեր. կամ արարէ՛ք բան առ
բան նամակին պատասխանի, կամ արի՛ք եկա՛յք
՚ի դուռն յանդիմա́ն լերուք մեծի հրապարակիս:

Անուանք եպիսկոպոսացն՝ որք ժողովեցան յայրարատ
գաւառին:

Յովսէփ եպիսկոպոս այրարատայ: Սահակ
եպիսկոպոս տարօնոյ: Մելիտէ եպիսկոպոս մա-
նազկերտոյ: Եղնիկ եպիսկոպոս բագրեւանդայ:
Սուրմակ եպիսկոպոս բզնունեաց: Տաճատ եպ̃ս
տայոց: Թաթիկ եպիսկոպոս բասենոյ: Քասու
եպիսկոպոս տուրուբերանոյ. Երեմիա եպիսկո-
պոս մարդաստանի: Եփաղ եպ̃ս մարդաղոյ:
Անանիա եպիսկոպոս սիւնեաց: Մուշէ եպիս-
կոպոս արծրունեաց: Սահակ եպիսկոպոս ռշտու-
նեաց: Բասիլ եպիսկոպոս մոկաց: Գադ եպիս-
կոպոս վանանդայ: Եղիշէ եպիսկոպոս ամատու-
նեաց

նեաց։ Նողոսոր եպիսկոպոս անձեռացեաց։ Նորբե-
մնա եպիսկոպոս ապաւհանեաց։

Այս ամ եպսք եւ բազում եւս քոր եպսք եւ պատուական երիցունք ՚ի տեղեաց տեղեաց հանդերձ որք ուխտին եկեղեցւոյ՝ միաբանք եւ միահաւանք միահամուռ ժողովեալք ՚ի Թագաւորանիստ տեղին ՚ի յԱրտաշատ, հաւանութբ մեծամեծ նախարարացն եւ ամ բազմութե աշխարհին՝ արարին նամակին պատասխանի։

* Յովսէփ եպս հանդերձ ամ միաբանելովքս ՚ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս՝ միհրներսեհի մեծի հազարապետի արեաց եւ անարեաց, բազում խաղաղասէր մօք բազմացի ողջոյն առ քեզ, եւ ամ մեծամեծաց սեպհականաց արեաց։

՚Ի նախնեաց ունիմք սովորութի ածատուր պատգամօքն՝ աղօթս առնել ՚ի վերայ կենաց թագաւորին, եւ անձանձրոյթ խնդրել յայ վն երկայն ժամանակաց դորա, զի խաղաղութբ վարեսցէ զտիեզերական իշխանութին՝ զոր աւանդեալ է նմա յայ։ զի ՚ի դորա յերկար խաղաղութեն եւ մեր առողջութբ եւ ածպաշտութբ վարեսցուք զկեանս մեր։ Առ նամակին՝ որ քո ՚ի մեր աշխարհս տուեալ էր յառաջ ժամանակաց, մի ոմն ՚ի մոգպետաց՝ որ կատարելագոյն էր ՚ի դենին ձերում, եւ դուք առաւել քան զբնութի մարդկան ՚ի վեր համարեալ էիք զնա, հաւատաց նա յած կենդանի յարարիչ երկնի եւ երկրի։ եւ բան առ բան ելոյծ եւ իմացոյց ձեզ զօրէնս ձեր։ եւ իբրեւ ոչ կարացէք բանիւ զդէմ նր ունել, մեռաւ քարկոծել յորմզդէ արքայէ։

Ապա եթէ հաստատուն համարեսցիս զմեր բանս լսել, ՚ի բազում տեղիս այդրէն յաշխար

խորհրդ ձեռամբ գտանին գիրք նոր , ընթեր-
ցի՛ր՝ և անոր ուղեկանաս ։ Այլ վ՜ օրինացս
մերոց ոչինչ աներևոյթ են , և ոչ յանկեան ու-
րեք աշխարհիս քարոզին , այլ համատարած ը̅
ա̅մ երկիր , ը̅ ծով և ը̅ ցամաք և ը̅ կղզիս · ոչ միայն
յարևմուտս , այլև յարևելս և՚ի հիւսիսի և՚ի
հարաւ , և՚ի միջոցս լի հօծեալ ։ Եւ ոչ է ՚ի
մարդ ապստամբ · եթէ վերակացուաւ տարածեա-
ցի ընդ աշխարհ , այլ ինքն յինքեան ունի ըզ
հաստատութին ։ Ոչ առ այլովք փաստարօքն վեհ
երևի , այլ ՚ի վերուստ յերկնուստ ունի զան-
սուտ օրէնադրութին ։ Ոչ միջնորդաւ , զի մի
է ա̅ծ , և չիք այլ ոք բաց ՚ի նմանէ · ոչ երի-
ցագոյն և ոչ կրտսերագոյն ։ Ոչ սկիզբն առեալ
յումեքէ լինել ա̅ծ , այլ ինքն ինքեամբ մշտըն
ջենաւոր ։ Ոչ ՚ի տեղւոջ ուրեք , այլ ինքն ին-
քեան տեղի ։ Եւ ոչ ՚ի ժամանակի իմիք , այլ
ժամանակք ՚ի նմանէ գոյացան ։ Ոչ միայն քան
զերկինս երիցագոյն , այլև քան զկարծիս մտաց
մարդկան և հրեշտակաց ։ Ոչ ձեռաց ՚ի տե-
սիլ տարրեղէն , և ոչ անկանի ընդ տեսլեամբ
ական ։ Եւ ոչ միայն ՚ի ձեռաց չըմնի , այլև ոչ
ը̅ միտս ուրուք հարկանի · ոչ միայն ը̅ մարմնա-
կանաց , այլև ընդ անմարմնին հրեշտակաց ։ Բայց
եթէ ինքն կամի , իւրոց արժանաւորացն իմա-
նի · այլև ոչ աչաց տեսանի և մտաց , ոչ երկրա-
ւորաց , այլ՝ որ յոծն են հաւատացեալ Ածմար-
դոյն , և անուն նորա՝ արարիչ երկնի և երկրի ։

Իսկ յառաջ քան զերկինս և զերկիր · ա̅ծ
ինքնագոյ է , նոյնպէս և ինքնանուն է , ինքնա-
ժամանակ է ։ Իսկ զարարածս՝ յորժամ կամե-
ցաւ , սկիզբն արար լինել · ոչ յընչէ , այլ յոչնչէ ·
զի

զի ինչ նա միայն է, և այլքս ա̃մ ՚ի նմանէ ըն-չացաւ։ Ոչ եթէ յետոյ իմացաւ և արար, այլ մինչև էին արարեալ, ՚ի կանուխ գիտութե̃ն իւրում տեսանէր զարարածս։ Որպէս և այժմ՝ մինչև մարդոյն գործեալ բարի ինչ կամ չար, ա̃յ յայտնի է անդործք մարդոյն. սոյնպէս և յայնժամ մինչև էր արարեալ՝ ոչ խառն ՚ի խուռն ճանաչէր զանեղսն, այլ կարգեալ և յար մարեալ կային առաջի նր̃ իւրաքանչիւր մասանց տեսակքն իսկ. մարդկան և հրեշտակաց տե-սակքն և որ ՚ի տեսակսն լինելոց էին։ Նաև քան-զի արարող զօրութի̃ է, ոչ կարէր խափանել զն̃ր բարութի̃ն՝ մեր չարութիւս. որպէս և եղև իսկ։ Նաև ունիմք դատաւոր՝ զայն արարիչ։

Ձեռք՝ որ զերկինս և զերկիր հաստատեցին, նոյնք և զտախտակս քարեղէնս փորագրեցին և ետուն մեզ դպրութիւս, որ ունի զօրէնսդրու-թիւնս խաղաղականս և փրկականս. զի գիտաս-ցուք զմի ա̃ծ արարիչ երևելեաց և աներևու-թից. ոչ այլ և այլ՝ իբրև թէ ոմն բարի և ոմն չար, այլ մի և նոյն համակ բարի. Բայց եթէ թուիցի քեզ՝ չար ինչ գոլ յարարածս ա̃յ, առ համարձակ. զի թերևս ուսցիս զճշմարիտ բարին։

Զդևս չար ասացեր. գոն և դևք բա-րի, զոր և դուք և մեք՝ հրեշտակս անուանեմք։ Թէ կամին, և դևք բարի լինին. եթէ կա-մին, և հրեշտակք չար լինին։ Նմն և ՚ի մարդ-կան երևի. և առաւել ՚ի միոյ հօր որդիս. է՝ որ հնազանդ և հպատակ է հօրն. և է՝ որ չարա-գոյն քան զաստանայ։ Նաև ինքն մարդն ա-ռանձինն յերկուս բաժանեալ տեսանի. եր-բեմն չար և երբեմն բարի. և որ բարին էր,

նոյն

նոյն և չարացաւ· դէպ եղև՝ զի դարձեալ անդ-րէն 'ի բարի շրջեցաւ, և բնութիւն մի է։

Բայց այն՝ զոր ասեսն թէ վ՟ թզոյ միոյ մահ արար ած· վատթարագոյն է պատառ մի մագաղաթ քան զթուղ· ապա եթէ բան թա-գաւորին նկարի 'ի նմա, ով պատուէ զնա, մինչ պատուհաս ընդունի։ Իսկ արդ՝ չար ար-ժա՟ն էր ասել թագաւորին, քա՟· ես ոչ ասեմ· այլ խրատ 'ի գործ արկեալ՝ զայլս ու-սուցանեմ։ Յայնժամ էր ած նախանձոտ, թէ չէր պատուիրեալ չուտել 'ի ծառոյ անտի· ապա թէ յառաջագոյն զգուշացոյց, զընական գութն սիրոյն իւրոյ յայտնեաց նմա։ Իսկ մարդն ար-համարհելով, ընկալաւ զպատիժ մահուն։

Բայց զոր ասացեր թէ ած 'ի կնոջէ ծնաւ, յայդմ չէր քեզ արժան խորշել և փախչել· զի արհմն և որմիզդ 'ի հօրէ ծնան և ոչ 'ի մօրէ· որում թէ քաջ միտ դնես, և ոչ դու յանձն առնուս։ Եւ միւս ևս այլ ծաղրագոյն քան զայդ· մինչ ած 'ի կնոջէ ծնանի, եթէ ոք ը̄ իւրում ծնողին անկցի։

Այլ տակաւին մի թէ 'ի բաց թողացուցա-նէիր զկրօնս ուրութե՟դ, և ընկերաբար գա-յիր 'ի պայքար, գիտեմ զի իբրև այլովք ամե-յոյժ իմաստուն ես, և վ՟ ծննդեան տեառն մերոյ 'ի սբ կուսէն՝ ոչ աւելորդութի համա-րէիր· այլ՝ առաւել քան զարարչութիւն յոչնչէ զաշխարհս, մեծագոյն փրկութի զվերջինն ի-մանայիր· ազատութի մարդոյն 'ի յանցաւորուէ դնէիր· և բարերարութեն ած՝ զազատութիւն 'ի ծառայութէ։

Քանզի յորժամ լսես թէ յոչնչէ արար ած

զաշ

զաշխարհս, բանիւ ծնունդ խմաջերի զարարածս.

Իսկ քանզի ած՝ որ զայս մեծամարմին աշխարհս առանց չարչարանաց ծնաւ, ապաքէն որպէս զհայր՝ գութ ունի ընդ սմա. զի որպէս ինքն անապական է, և առանց ապականութե ծնաւ. Իսկ սա կամօք գործեալ ապականեցաւ. և անձամբ ևս ոչ կարէր կանգնել և կալ յոտից վերայ, վս զի էր ՚ի հողոյ. և անձամբ անձին արարեալ, անդրէն ՚ի նոյն բնութի դարձաւ. Իսր ոչ եթէ յօտար զօրութէ չար ինչ ուրուք ընկալաւ զպատիժ պատուհասին. այլ ՚ի յիւրմէ հեղգութէն չլսել բարերարին պատուիրանի, խրատեցաւ ծառայական մահն մահուամբն՝ զոր կրեաց ցանձն իւր.

Իսկ՝ եթէ զմահ՝ չար ոծն արար, զի՞նչ է գոյացութի մահու. երևի ՚ի միջի և ոչի՞նչ. բայց զի զբարույն այն զարարածն խանգարեաց. թէ այդպէս է, նմա և բարի իսկ ոչ մարթի ասել, այլ կիսագործ ապականացու. և որոյ այն արարածքն եղծանելիք են, նմա և անեղծ ած չմարթի ասել. ո՞ն անդր, թողէք զյիմարութե բաղբաջմունս. միոյ տի երկու դեհպետք ոչ լինին. և ոչ մի արարածոյ երկու ածք. Իսւ եթէ ժողովեցին և լիցին երկու թագաւորք միոյ տի, աշխարհն աւերի և թագաւորութիքն եղծանին.

Աշխարհ նիւթեղէն է. և նիւթքս որիշ որիշ են և հակառակք ընդդէմ միմեանց. Մի է արարիչ հակառակորդացս, որ ածէ զսոսա ՚ի լինելութի հաւանութբ. Որպէս մալեալ կակղէ զջերմութի հրոյ՝ օդոյն հաւանութբ, և զպարտուսն բրտութե օդոյն՝ հրոյն եռանդմամբ. այնպէս և զմնդամանոյ փոշխացեալ հողոյ՝

ջրոյն խոնաւութիւն զանգանէ։ Իսկ զ՚ի վայր ծորելէ բնութիւն ջրոյն՝ սալայատակ տրամացեալ հողոյն կափմամբ։

Զի եթէ միաբանէին տարերքս, գուցէ ոք 'ի կարծամտաց և ա՟ծ անապական զոսա կործէր. և թողեալ զարարիչն՝ արարածոցս երկրպագութի մատուցանէր։ Այլ ա՟ծ այնորիկ որ առար զն՟ս, զգուշացաւ յառաջագոյն. զի հայեցեալ մարդիկ 'ի յանդիմանութի ապականացու տարերցս, միայն անապական զկառավարն ա՟յ իմասցին. զմի՝ և ոչ զերկուս, և զնոյն՝ արարիչ չորեքին նիւթոց, յորմէ ա՟մէնս ծննդագործին հրամանաւ արարողին իւրեանց. և շրջագայութիւն չորիւք յեղանակօք կատարելագործեն զտարեւոր սպասաւորութիւն, և չորեքեանն հային 'ի կամս ականարկելոյ արարչին իւրեանց. և յանզգայութե լծեալ են 'ի գործս հարկաւորութիւն, չյափշտակելով զկարգ պատուոյն 'ի միմեանց։ Եւ ահա պարզաբար ասացեալ դիւրատար լուսաւորութեամբ յականջս ամենեցուն։

Զի այն որ հուրն է, գոյացութիւն և զօրութիւն խառնեալ է յերկս եւս մասունս. իբրև գտանի ջերմութիւն յոլովագոյնս 'ի քարինս և յերկաթս, և սակաւագոյն յոդ և 'ի ջուր. և ինքեանք առանձինն երբէք ոչ երևին։ Իսկ ջրոյն բնութիւն գոյ առանձինն, գոյ և 'ի խառնուածսն, և երից եւս մասանցն յոլովագոյն 'ի հողաբոյսս, և սակաւագոյն յոդ և 'ի հուր։ Իսկ օդն թափանցանց է ընդ ջուրն և ընդ հուրն, և 'ի ձեռն ջրոյն ընդ կերակուրս աճեցականս։

Եւ այնպէս խառնեալ են տարերք՝ և գոյացեալք իբրև զմի մարմին, և ոչ կորուսեալ

զիւ-

զիւրաքանչիւր բնութիւն. և ոչ երբեք զկայ ա-
ռեալ են հակառակութք, հայելով 'ի միա-
խառնն, որ՝ զխառնուածս յարմարեալ կազմէ
առ 'ի բնակութի ամ կենդանեացս, և առ 'ի
տևողութի յարակայութե բնաւ աշխարհիս.
Իսկ եթէ առ անբան աշխարհս՝ այսպէս հոգ-
տանի ած, ո՞րչափ ևս առաւել առ բանաւոր
աշխարհ՝ մարդս: Ո՜ որ և ոմն 'ի ձեռոց քոց ի-
մաստնոցն ասաց, եթէ միրհն ոծ մայրածին
է 'ի մարդկանէ և թագաւոր և ոծոցն զաւակ
է և համհայր դքաջ եօթներորդացն ոծոցն:

Եթէ հաւատալ արժան է առասպելաբանու-
թեանդ՝ զոր և դուք գործով իսկ կատարեալ
ցուցանէք 'ի դենիդ ձերում, մեք ոչ ևս ա-
ռասպելացդ հաւատամք. այլ՝ աշակերտ եմք մե-
ծի մարգարէին մովսիսի, ընդ որում ած խօ-
սեցաւ 'ի մորենւոջն 'ի սինեա, և դէմ յանդի-
ման օրէնս գրեաց և ետ ցնա, և ծանոյց զնիւ-
թեղէն աշխարհս իբրև զարարածս, և զիւր
աննիւթ էութիւն՝ արարիչ նիւթոցս յոչնչէ. և
զերկիրս երկրաւորօքս, և զերկինս երկնաւորօքն
ծանոյց մեզ, զի գործք ձեռաց իւրոց են. բնա
կիչք երկնի՝ հրեշտակք, և բնակիչք երկրի մար-
դիկ. բանաւոր՝ մարդ և հրեշտակք միայն. և 'ի վեր
քան զերկինս և զերկիր՝ ած: Իսկ ամ արարածք
կատարեն զհրամանս պատուիրանի նր, ոչ երբեք
անցանեն ընդ եդեալ սահմանս իւրեանց. և հր-
րեշտակք (և մարդիկ) ազատ թողեալ 'ի կամս ան
ձանց իւրեանց, քանզի մտաւորք են: Եթէ կայ
ցեն 'ի հրամանի նր. անմահք են և որդիք այ. և
զբոլոր արարածս տուեալ է 'ի ծառայութի. զեր
կիրս՝ մարդկան, և զերկինս՝ հրեշտակաց:

Ապա

Ապա եթէ ստունզանեսցեն և անցցեն զպատուի-
րանս նր̃, և զընդդէմս այ̃ գործիցեն, յիւ-
րաքանչիւր պատուոյ զանարգանս ընկալցին · զի
երևեսցի տէրութ̃ին անբամբաս, և յանցա-
ւորքն յանցանաց՝ ամօթալից ։

Իսկ եթէ դու տգիտութ̃ե վրիպեալ ես,
ես որ հաստատունս գիտեմ, ոչ կարեմ գալ
զկնի քո մոլորութ̃եդ · եթէ աշակերտիմ քո
անուսումնութ̃եդ, երկոքեանս յանգիւտ կո-
րուստ մատնիմք · և թերևս ես չարագոյն քան
զքեզ ։ Քանզի վկայ ունիմ զինքնասաց ձայնն
այ̃, որ ասէ՝ ծառայ որ ոչ գիտէ զկամս տեառն
իւրոյ և արժանի գանի ինչ գործէ, ըմպել ըմ-
պէ գան, այլ սակաւագոյն · իսկ որ տեղեկա-
գոյն է կամաց Թագաւորին և յանցանէ ինչ ա-
ռաջի նորա, առանց բարեխօսի բազմապատիկ
տանջի ։ Արդ՝ աղաչեմ զքեզ և զանձն որ ընդ
քո իշխանութ̃ե են, մի դու ընդ իս բազմա-
պատիկ տանջիր, և ոչ ես ընդ քեզ սակաւա-
գոյն։ Այլ ես և դու և ամ̃ բազմութիդ հան-
դերձ արի Թագաւորաւդ՝ այնպէս աշակերտես-
ցուք ած̃ային գրոց՝ զի 'ի տանջանաց ապրես-
ցուք · և զդժոխոցն արհամարհեսցուք · և յան-
շէջ հրոյն զերծցուք · և զարքայութ̃ին ժառան-
գեսցուք · և անցաւոր կենօքս՝ զանանց մեծու-
թիւնն անվախճան ունիցիմք ։

Բայց յորմէ դուդ զարհուրեալ ես, դիւ-
րահաւան լեր և փաղփաղակի աշակերտիս ճշմար-
տութ̃են ։ Այն 'ի հրեշտակաց յանմահ գնդէն
ստամբակեալ և 'ի բաց գնացեալ յերկնից՝ 'ի
մեր աշխարհս եկեալ՝ պատիր բանիւք և սուտ
խոստամամբք զանլինելի զայսն առաջի դնէր

իբ

իբրև տղայ մանկան՝ անփորձ և անկիրթ նորա֊
թեք մարդոյն, 'ի վեր հայեցուցանելով զմիտս
նր, ուտելով 'ի պտղոյ ծառոյն, յոր հաւրն
հրամայեաց չերթալ, զի լիցի ած։ Իսկ նր մո֊
ռացեալ զպատուիրանն այ, խաբեալ զկնի մո֊
լար խաբէութեն, կորոյս զանմահութե ըզ
փառսն զոր ունէր, և չեհաս երազայոյս կար֊
ծեացն։ Այլ մերժեալ 'ի կենաց տեղւոյն՝ ար
տաքս անկաւ յապականելի աշխարհս, յորում և
դուք այժմ բնակեալ էք. և ցնորեալ մոլորիք
զկնի նորին խրատու, ոչ ևս ուտելով 'ի պատ֊
ուիրեալ ծառոյն, այլ զարարածս ած ասելով,
և անխօս տարերցս երկրպագանելով, և անո֊
րոշայն դիւաց՝ կերակուր մատուցանելով. և
յարարչէն բոլորեցունց 'ի բաց մերժելով. որ
ոչ յագի չար խրատուն, այլ կամի՝ զի քան
զինքն չարագոյնս արասցէ։ Վասնզի դեք ոչ զոք
բռնաբար վարեն 'ի կորուստ, այլ զմեղսն քաղց֊
րացուցանեն 'ի կամս մարդոյն, և ողոքանօք որ֊
սան զանուսմունս 'ի խաբէութի. որպէս և
բազում մարդիկ զընկերս իւրեանց 'ի գողութի
և յաւազակութի։ Իբրև ոչ եթէ բռնի ինչ
վարելով, այլ պատիր խաբէութբ տան գոր֊
ծել անբաւ չարիս. զոմանս 'ի կախարդութի, և
զոմանս 'ի պոռնկութի, և զոմանս բազումս յայլ
աղտեղութի. և արդար դատաւորք վրէժ առնուն
մահուչափ։ Իբրև ոչ եթէ բարի այ դատա֊
ւորքն իցեն արարածք, և չարի՝ չարագործքն,
զի բազում այն է՝ որ 'ի բարի մարդկանէ չարք
լինին, և յետոյ 'ի չարագունից անտի՝ կատա֊
րելագոյնք լինին բարիք. և սոյն դատաւորք
որ դատին զչարագործս, ոչ եթէ չարք անուա֊
նին

նին և չարչարինք , այլ յոյժ բարիք և բարե-
գործք · և բնութիւն մի է և ոչ երկու , իսկ 'ի միո-
ջէ անուն՝ գործք երկու երևին · ոմանց սատա-
կիչ , և ոմանց պարգևիչ : Նա եթէ 'ի մարդիկ
այս պատուհասի , 'ի ձեռն Թագաւորական վճռակին
խրատու՝ խնամ տանել իւրում իշխանութեան ,
ո՛րչափ ես տուեալ այս՝ բոլոր աշխարհս , որ ընդ
ամենեցուն կեանս կամի , և ոչ մահ : Իսկ ուր բազ-
մացաւ յանցաւորութիւն , տանջեաց զամենն մահ-
ուամբ · իսկ ուր եղև ունկնդրութիւն հնազան-
դութեան , շնորհեաց պարգևս անմահութեան :

Այն է Ճշմարիտ Աստուած՝ բոլորեցունց արարիչ ,
զոր դու աներասանակ արձակ բերանով անահ
աներկիւղ համարձակութեամբ հայհոյես · թողեալ
զՅս Քս զերկնական անուանն՝ փոխթուրակայ որդի
անուանես · և մարդ մոլորեցուցիչ կարծես · և
զերկնաւոր փրկութիւն աղաւաղես և անարգես
'ի կորուստ անձին և բոլոր աշխարհիս , զոր տա-
լոց և հատուցանելոց ես զանանցական վրէժս
տանջանաց յանշէջ հուր գեհենին յանսպառ
տանջանսն՝ հանդերձ ամ գործակցօք քովք , ա-
ռաջնովքն միջնովք և վերջնովք : Այլ մեք այ-
պէս գիտեմք զԱծ , և 'ի սոյն հաւատամք յաներկ
բայս :

Ած՝ որ արար զաշխարհս , նոյն եկն և ծնաւ
'ի սբ կուսէն մարիամայ , յառաջագոյն տեսլով
մարգարէիցն , առանց և ոչ մի իրիք պատճառաց
մարմնաւոր կարգի : Որպէս յոչնչէ արար զայս
մեծամարմին աշխարհս , սոյնպէս առանց իրիք
մարմնական միջնորդի առ զմարմին յանխորձ կու-
սէն Ճշմարտիւ , և ոչ առ ստուերագիր երևմամբ ·
էր Ած Ճշմարիտ , և եղև մարդ Ճշմարիտ · ոչ 'ի
և

լինելն մարդ՝ կորոյս զա͞ծութիւն, և ոչ ՚ի կալ մնալ ա͞ծ՝ ապականեաց զմարդկութիւն. այլ նոյն և մի:

Արդ քանզի ոչ կարեմք տեսանել զանտեսանելին, և մերձենալ յանմերձենալին, եկն եմուտ ընդ մերով մարդկութեամբս. զի և մեք մտցուք ընդ նորա ա͞ծութեամբն: Ոչ ի՛նչ անարգութի͞ համարեցաւ զգենուլ զիւր արարած մարմինս. այլ մեծարեաց իբրև ա͞ծաստեղծ զիւր գործ: Ո՛չ առ սակաւ սակաւ շնորհեաց ինչ սմա զանմահութե͞ պատուի͞ն իբրև զանմարմին հրեշտակաց. այլ միանգամայն զբոլոր բնութի͞՝ մարմնով և շնչով և հոգւով զգեցաւ և միաւորեաց ընդ ա͞ծութեան միութի͞, և ոչ երկուութիւն: Նա այսուհետև մի գիտեմք զա͞ծութիւն. որ յառաջ քան զաշխարհս, նոյն և այսօր:

Արդ յս͞ քս͞ որ յիւր մարմինն փրկեաց զբոլոր աշխարհս, սա եկն ինքնին կամաւ ՚ի մահ. որպէս ինքն ա͞ծութիւն գիտէ՝ թանձրացաւ յանարատ կուսէն. ծնաւ և պատեցաւ ՚ի խանձարուրս և եդաւ ՚ի մսուր. շարժեաց ած զմոգսն յարևելից յերկրպագութի͞. սնաւ կաթամբ իբրև զտղայ. և աճեաց և մեծացաւ ամս երեսուն, ՚ի ձ͞ռ Յովհաննէ ամլորդւոյն մկրտեցաւ ՚ի յորդանան գետ. արար նշանս և արուեստս մեծամեծս ՚ի մէջ հրէիցն. մատնեցաւ քահանայից. դատեցաւ ՚ի պիղատոսէ պոնտացւոյ. խաչեցաւ. մեռաւ. թաղեցաւ. յարեաւ յաւուր երրորդի. երևեցաւ երկոտասան աշակերտացն, և այլոց բազմաց աւելի ևս քան զհինգ հարիւրոց, շրջելով ընդ նո͞ աւուրս քառասուն. և վերացաւ ՚ի լեռնէն ձիթենեաց յերկինս՝

կենս՝ յանդիման իւրոց աշակերտացն . եւ նըս-տաւ 'ի հայրենի աթոռն . խոստացաւ գալ երկ-րորդ անգամ ահաւոր զօրութբ յարուցանել զմեռեալս , նորոգել զբոլոր աշխարհս , առնել դատաստան արդար 'ի մէջ արդարոց և մեղաւո-րաց , տալ պարգևս արժանաւորաց , և հատու-ցանել պատիժս չարագործաց՝ որ այսր ա̃մ բա-րութեց ոչ հաւատան :

Այսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախ-տել . ոչ հրեշտակք և ոչ մարդիկ , ոչ սուր , ոչ հուր , ոչ ջուր , ոչ ա̃մ զի՞նչ և են պատանք տան-ջանք : Ամենայն ինչք և ստացուածք մեր 'ի ձեռս քո , և մարմինք մեր առաջի քո կան , արա ըստ կամաց քոց զի՞նչ և կամիս : Եթէ սովին հաւա-տովք թողուս , ոչ 'ի յերկրի այլ տէր փոխանա-կեմք ընդ քեզ . և ոչ 'ի յերկինս այլ ա̃ծ փոխա-նակեմք ընդ յ̃ի ք̃ի , որ չիք այլ ա̃ծ բաց 'ի նմանէ : Արդ եթէ յետ այսր մեծի վկայութե՝ այլ ինչ հարցանես՝ ահաւասիկ կամք , զբոլոր մար-մինս մեր տամք 'ի ձեռս քո . փաղփաղակի արա զի՞նչ և կամիս . 'ի քէն տանջանք և 'ի մէնջ յանձ-նառութիք . սուր քո և պարանոց մեր : Չեմք ինչ լաւ մեք քան զառաջինսն՝ որ յայսր վկայ-ութեան վերայ եդին զինչս և զստացուածս և զմարմինս իւրեանց :

Զի եթէ անմահ իսկ էաք , և մարթ էր մեռանել մեզ վ̃ս սիրոյն ք̃ի . քանզի նա ան-մահ էր , և այնչափ սիրեաց զմեզ , մինչև զմահ յանձն էառ , զի մեք ն̃ր մահուամբն յաւիտե-նական մահուանէն ապրեսցուք : Եւ եթէ նա յիւր անմահութին ոչ խնայեաց , մեք զի կա-մօք եղաք մահկանացուք , կամօք մեռցուք վ̃ս սի-

պիտոյ նոր, զի կամիք յանձն առցէ զմեղ մեր անմաքրութիւն. Մ՚եռացուք իբրեւ զմանչկանացուս, զի ընկալցի զմեր մահն իբրեւ զպանմանչեց. Ա՛յլ դու յես այսր ամէն այլ բանիւք զմեզ մի՛ հարցանէր. զի ո՛չ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաստատ մերոյ՝ եթէ պատրեցիք իբրեւ զոզջս, այլ անլուծանելի ևեթ ընդ այդ. որում չէ հնար քակել և՛ի բաց ելանել. ո՛չ այժմ և ո՛չ առ յապայ և ո՛չ յաւիտեանս և ո՛չ յաւիտեանս յաւիտենից.

Ի սմին մեծի հաւանութեան՝ ամ բազմութիւն միաբանեաց ՚ի մեծամեծաց մինչև ցփոքունս. անսասան երդմամբ եդին վկայութի՛ կենօք և մահու ՚ի նմին կալ հաստատուն:

Նա իբրեւ եհաս համակն յարքունիս և ընթերցաւ ՚ի մեծի խորհրդեանն յանդիման ամ բազմութե կարաւանին, բազում այնոքիկ էին, որ իբրեւ լսէին, գովէին զպատասխանիսն: Ո՛չէ պէտ և երկնչէին յահէ տէրութեան, սակայն ՚ի ծածուկ առ միմեանս զնոյն վկայութիս գովութեանց տային. առաւել քան ընդ ճարտարաբանութիւն՝ և ընդ համարձակութի աներկեղութեանն զարմանային: Նա բազումք ահաբեկեալ սկսան զրահել պնդապէս, և զնոյն շշնջիւն լըսէին յամ շրթանց:

Իսկ չարաչէր մոգպետն հանդերձ մեծ հազարապետաւն չնչեաց չարախօսութի, և բորբոքեաց զթագաւորն իբրեւ զհուր անշիջանելի: Նա սկսաւ կրճտել զատամունս իբրեւ զօրհատական վիրաւոր. և յայտ յանդիման ձայն արձակեաց առ մեծ հրապարակն և ասէ, գիտեմ ես զչարութի բազմութե մարդկանս, որ թերահա-

ւսա են ՚ի մերոց օրինացս, և զհնի կախարդու-
թեան մոլորեալ են անդարձութբ. և խմեղեալ
է ՚ի մտի, եթէ՝ ոչ թողացուցից ՚ի մեծամե-
ծաց հարուածոցն, մինչև ակամայ ՚ի բաց կաց-
ցեն յայնպիսի վրիպակ օրինաց. և եթէ կարի՛
ոք ՚ի մերձաւորաց իցէ, զնոյն անցս և ընդ նա
անցուցից։

Յայնժամ ծերն դառնացեալ՝ բանս ՚ի ներքս
ընկէց և ասէ ցթագաւորն, առ ինչ է քո այդ
մեծ տրտմութիւդ. զի եթէ կայսրն ոչ եղանէ ը̅
քո հրաման, և հոնք կան քեզ ՚ի ծառայութե,
ո՞ր մարդ է յերկրի՝ եթէ կարող է ընդդէմ
դառնալ քում հրամանիդ. տիրաբար հրամա՛ն
տուր ՚ի ներքս, և զո՞մ որ ինչ ասես՝ վաղվաղա-
կի կատարի։

Եւ թագաւորն անդէն ՚ի ներքս կոչեցեալ
զդպրապետն՝ հրամայէ գրել հրովարտակ ոչ ը̅
սովորութեն, այլ՝ բանս զայրագինս իբրև առ
ատելիս և անպիտանս, չյիշելով ամենևին զմե-
ծամեծ վաստակս տիրասէր մարդկան. այլ՝ միայն
կոչելոյ հրաման տայր յականէ յանուանէ՝ զորս
զորս ինքն ճանաչէր. որոց անուանք են այսոքիկ։
՚Ի տոհմէն սիւնեաց վասակ անուն։ ՚Ի տոհմէն
արծրունեաց ներշապուհ անուն։ ՚Ի տոհմէն
ռշտունեաց տատիկ անուն։ ՚Ի տոհմէն խոր-
խոռունեաց գադեշոյ անուն։ ՚Ի տոհմէն մա-
միկոնէից վարդան անուն։ ՚Ի տոհմէն մոկաց
արտակ անուն։ ՚Ի տոհմէն ապահունեաց մա-
նէճ անուն։ ՚Ի տոհմէն ամատունեաց վահան
անուն։ ՚Ի տոհմէն վահեւունեաց գիւտ անուն։
՚Ի տոհմէն անձաւացեաց շմաւոն անուն։

Զայս նախարարքս յականէ յանուանէ կո-

չեցին 'ի դուռն արքունի. և կային առ նմա խոկ էին ամենեն 'ի կարասանին. և այլք 'ի կողմանց Հիւսիսոյ 'ի Հոնաց պահակին Թողեալ էր զը-մանա 'ի նախարարացն ամենեն յաշխարհին Հայոց.

Արդ՝ Թէպէտ ոչ համարձակ 'ի մէջ վայրի գիտեցաւ ամէն, սակայն յառաջագոյն գիտացեալ զխորհուրդ չարաբարոյ բռնաւո-րին, և զհետ առեալ խոյս զմերձաւոր 'ի մէջ վայրի առ մեծամեծս համարձէին. Իսկ 'ի ձեռն ազգին Ցոլակելոց էջեր նամին ախտիւ հաստատեալ, խաղաղին գնացին յանդորրանչիւր տեղւոց 'ի դուռն արքունի.

Իսկ յայժ փութային վա՛ն եղբարց և որդւոց և սիրելի գայեկամանուոյ ընտանեաց՝ որ չարա-չար կային 'ի մեծի նեղութեան. Այլ և նոքա զանձինս 'ի մահ մատնեցին ոչինչ զանգիտելով իբրև զանարի վտանգիս. այլ յայժ քաջութբ պնդեցին զանձինս, զի Թերևս կարասցեն փրկել զնո՛ 'ի մեծամեծ հարուածոցն.

Իսկ իբրև հասին 'ի դուռն արքունի, և 'ի մեծի չարաթու զառնին յանդիման լինէին Թա գաւորին. Բայց Թէպէտև տեսանէին զեղ-բարս իւրեանց 'ի մեծ վիշտս տառապանաց՝ որ վա՛ն անուանն քի Ճգնեալք էին պնդապէս, ոչինչ տրտում և տխուր զերեսս ցուցանէին հրապարակին. և որչափ նոքա զուարթագին ե-րևէին ամենեցուն, առաւել զարմանային չարա-ւորքն.

Իսկ զի օրէնք էին յառաջ ժամանակաւ. յոր ժամ 'ի Հայոց աշխարհի 'ի դուռն երթայր 'ի ձեռն պատուաւոր զօրավարի ուրուք, այր է առաջ յղեր և հարցանէր զողջոյն և խաղաղու-

Թեան

թեան աշխարհին հայոց. և երկիցս և երիցս անգամ զնոյն առնէր. և զհանդէս գնդին տեսանէր ինքնին. և յառաջ քան զ՚ի գործ պատերազմին հասանել, զգալն իսկ առ նա՝ մեծ շնորհակալութիւն համարէր, և առաջի թագաւորացն և ամենայն մեծամեծացն՝ գովութիւն մատուցանէր, և յիշէր զնախնեացն վաստակս, և զառն առն քաջութիւն պատմէր նոցա. Իսկ այն օր և մի ինչ ամենևին յայնմանէ ոչ յիշեաց, այլ իբրև զչարադև մի ոչ դադարէր յուզել և շարժել զբուք ձմերայնոյ. որպէս և նմանեալ իսկ էր ծովածուփ ալեկոծ խռովութեանց. ոչ դուզնաքեայ վէր ՚ի վերոյ, այլ՝ անդստին յանդնդոց բարձրանայր փրփրեալ կուտակեալ վիշապաձայն որոտալով, գալանաբար գոչելով առ հասարակ գողացուցանէր զափեզերական զիւր իշխանութիւնն, որպէս զի փլեալ տարածանիցի համատարած ամենայն ՚ի վերայ լերանց և խորոց ձորոց, ապականել միանգամայն և զլայնութիւն դաշտացն վայելչութեան. Ոռնչելով բարբառ արձակեաց և ասէ, երդուեալ իմ յարեգակն ՚ի մեծն աստուած, որ ճառագայթիւքն իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս, և ջերմութեամբ կենդանածնէ զամենայն գոյացեալս, եթէ վաղիւ ընդ առաւօտս ընդ երևումն սքանչելոյն՝ ընդ իս զիւրաքանչիւր ծունր նմա ոչ կրկնեսջիք խոստովանելով զնա աստուած, ոչինչ թողացուցից ձեզ զամենայն նեղութիւնս չարչարանաց ՚ի վերայ ածելով, մինչ ակամայ կատարիցէք զկամս հրամանաց իմոց.

Իսկ հաւատացեալքն հաստատեալք ՚ի Քրիստոս, ոչ ՚ի սասանամանեաց ձմերայնոյն հողմոցին, և ոչ ՚ի տապոյ խորշակին ջեռնուին, և ոչ յահա-

գին

դին ձայնէն սարսէին, և ո՛չ 'ի սպառնալեաց տան ջանացն զանգիտէին ․ այլ 'ի վեր հայեցեալք՝ զզօրութիւն քրի յօգնութի եկեալ տեսանէին․ և պսակարթագին դիմօք և համեստ բանիւք յուսալ մատուցեալ տային պատասխանի թագաւորին ։

Խնդրեմք 'ի քէն ա՛րքայ քաջ , ու՛նկնդիր սակաւ մի բանից մերոց , և քաղցրութե լու՛ր զոր ասելոցս եմք ։ Քանզի յիշեցուցանեմք քեզ զժամանակն շապհոյ արքայից արքայի , որ էր հայր հաւոյ քո յազկերտի ․ և ետ նմա ած զերկիրն հայոց 'ի ծառայութի ։ Սովին օրինօք որով և մեք վարիմք այժմ, և հարքն մեր և հաւք հարանց մերոց կացին նմա 'ի ծառայութե վաստակս , և սիրով կատարէին զամ հրամանս բանի նորա , և բազում անգամ 'ի նմանէ մեծապատիւ լինէին ։

Նա յայնց ժամանակաց մինչև 'ի քո հայրենի աթոռդ՝ և մեք զնոյն ծառայութի ծառայեցաք ․ բայց թերևս քեզ լաւագոյն քան զառաջնոցն ։ Յայս ասելով ցուցանէին զքաջուի արութեյ լաւագոյն քան զառաջնոցն ըստ զէնւորական կարգին։ Նաև պնոից և զաւկից և որ այլ ևս են հարկք աշխարհին, բազմագոյն քան առ հարբն նր երթայր յարքունիս։ Նաև 'ի տր եկեղեցւոյն՝ որ էր ազատ 'ի քն ըստ կարգի նախնեացն մերոց 'ի սկզբանէ, և դու ընդ հարկաւ եդիր ․ և մեք առ սէր քոյոյ տէրութեդ՝ ոչի՛նչ ընդդիմացաք ։ Բայց՝ վն էր յաւելեալ իցէ ցասումս այս ամ 'ի վր մեր ․ ասա դու մեզ զպատճառ ծածուն՝ եթէ օրէնք մեր իցեն պատճառ՝ անվաստակ լինելոյ առաջի քո ։

Նաև

Իսկ չարաղեն լի՛ ա՟մ նենգութե՟բ՝ զերեսս
'ի միւս կողմն դարձուցեալ ասէ , մինչ համա֊
րիմ ընդունել 'ի գանձ արքունի զհարկ աշխար֊
հին ձերոյ , և անօգուտ զքաջութի՟ արութե՟
ձերոյ · քանզի աղխտաբար մոլորեալ էք 'ի մեր
ճշմարիտ օրինացս · զա՟ծս անարգէք , և զկրակ
սպանանէք , և զջուրս պղծէք , և զմեռեալս 'ի
հող թաղեալ՝ զերկիր ապականէք · և քրտիկար
չառնելով ոյժ տայք խարամանւոյն · և որ մեծն
է քան զա՟մ՝ հանապազ 'ի կանայս ոչ մերձենա֊
լով , մեծապէս լինի դիւացն խնդութի · չխրա֊
տելով ձեր և չպահելով զա՟մ կարգս մոգաց ։
Տեսանեմ զձեզ իբրև զխաշինս ցրուեալս և
վայրավատնեալս յանապատի · և յոյժ զ՛ղջ է
միտաց իմոց՝ եթէ դուցէ ա՟ծքն բարկացեալ վ՟ն
ձեր 'ի մեծ վրէժս առնուցուն ։ Արդ դուք
թէ կամիք կեալ և կեցուցանել զանձինս ձեր ,
և մեծարանօք անդրէն յուղարկել , զոր ասացի
վաղիւն վաղվաղակի կատարեցէք ։

Յայնժամ երանելի նախարարքն՝ առ հասա֊
րակ զձայնս իւրեանց բարձին և ասեն յան֊
դիման ամենեցուն · մի՛ դու ա՛րքայ և մի՛ դու
զայդ բանդ այլ առ մեզ ասեր · քանզի ոչ է ե֊
կեղեցի շինուած մարդկան · և ոչ աւուրք ա֊
րեգական · որ դուդ այլ ընդ այլոյ կարծես
թէ նա ա՟ծ է · ոչ միայն զի ա՟ծ չէ , այլև ոչ
կենդանի ։ Իսկ եկեղեցիք ոչ են պարգևք թա֊
գաւորաց և արուեստք ճարտարութե՟ց · և ոչ դիւտք
իմաստնոց և աւար քաջութե՟ զինուորաց · և ոչ
պատիր խաբէութի դիւաց · նաև բնաւ իսկ ա֊
մենևին զինչ և ասասցես յերկրաւորացս կամ 'ի
վեհից կամ 'ի վատթարաց , բնաւ ուրուք 'ի

նո

նոցանէ յեկեղեցի ոչ գայցի։ Ա՛յլ՝ շնորհք են մե֊
ծին ա̃յ · ոչ միում ումեք 'ի մարդկանէ տուեալ,
այլ՝ ամենայն բանաւոր ազգաց՝ որք վիճա֊
կեալք են 'ի բնակութի̃ 'ի ներքոյ արեգական։
Հիմունք նր̃ եղեալ են 'ի վ̃ր հաստատուն վիմի։
ոչ ներքինք շարժել կարեն, և ոչ վերինք դղըր֊
դեցուցանեն։ Այլ զոր երկինք և երկիր ոչ դո֊
ղացուցանէ, մի՛ ոք 'ի մարդկանէ խորհեսցի
յաղթել նմա։ Հապա, որով օրինակաւ զի՞նչ
կամիս առնել՝ կատարեա՛ · պատրաստ եմք ամե֊
նեքեան առ ա̃մ մեքենայս հարուածոց տանջա֊
նաց՝ զոր սպառնացար · ոչ միայն 'ի չարչարել,
այլև 'ի մեռանել · և եթէ դարձեալ զնոյն բան
հարցանես 'ի միոջէ միոջէ, լուիցես առաւել
քան զնոյն պատասխանի։

Յայնժամ դառնացեալ Թագաւորն քան ըղ֊
դեղի · փլուզանէր անդէն 'ի փորի զծով կամա֊
ւոր մաղձոյն իւրոյ · և ընդ քիթն և ընդ բե֊
րանն առհասարակ գոլորշի ջերմախառն ելանէր,
իբրև 'ի տաստիկ հնոցէ ծուխ թանձրացեալ։
Այլ առ չհանդուրժել սրտին՝ կոտորէր զզօրու֊
թիւն մարմնոյն, և ծակոտէր զբազմամթեր ա֊
ման խորհրդոյն։ Ցրուէր և վարանէր զա̃մ խոր֊
հուս̃ նենգութե̃ · և զոր ոչ երբեք կամէր իւ֊
րոց սիրելեացն յայտնել, ակամայ առաջի ծա֊
ռայիցն քո̃ի մերկանայր՝ և դնէր զա̃մ կարգաւ.
երեքկնէր և չորեքկնէր զանսուտ երդումն յա
րեգակն, և ասէր այսպէս · ոչ կարէք աւերել
դուք զանխաբ ամուրս իմ, և ոչ որում ցան֊
կացեալդ էք՝ վաղվաղակի տամ գտանել ձեզ ·
այլ՝ զա̃մն զձեզ և որ 'ի գնդիս են՝ չարաչար կա֊
պանօք 'ի սագաստան տամ անցուցանել ընդ ան֊
ձա

Ճանապարհ տեղիս . ուր և բազումք ՚ի ձէնջ ՚ի խորշակէն սաստկեցին յերթալն , և մնացեալքն անկցին ՚ի բերդս անուրս և ՚ի բանտարգելս անելս։ Այլ ՚ի ձեր աշխարհն առաքեցից զօրս անթիւս հանդերձ բազում փղօք , և զկին և զորդիս ՚ի խուժադուժ խաղացուցանել . և զեկեղեցիսն և զոր անուանէք վկայարանս՝ քակեցից քանդեցից և յապականութի դարձուցից ։ Այլ եթէ ոք ընդդէմ դարձեալ գտցի , կոխան եղեալ գազանաց՝ անողորմ մեռցի։ Այլ ես զամ ասացեալս արարից և կատարեցից առ մնացորդս աշխարհիս։

Այլ փաղփաղուկի հրամայեաց հանել զպատուական նախարարսն՝ մեծաւ անարգանօք յերեսաց իւրոց , և զգուշութբ հրաման տուեալ դահճապետին , առանց կապանաց յիւրաքանչիւր վանս պահել ։ Այլ ինքն զառածեալ՝ անդրէն դառնայր անմխիթար տրտմութբ՝ յօթևանս ագանէր ։

Իսկ հաստատեալքն Ճշմարտութբ ՚ի քս՝ ոչինչ թերահաւատէին յառաջին խրատու սր վարդապետացն իւրեանց . այլ տակաւին խնդրէր էին հնարիցն , թէ ոպ զանձինս և զսիրելիս հանցեն ՚ի մեծ նեղութենէն։ Այլ բազում անգամ ջանային , և մեծամեծացն՝ որ օգնական էին նց ՚ի դրանն արքունի , խոստանին մեծամեծս առաջի դնէին նց՝ առ ՚ի յոյս կարասւոյ , և ոչ սակաւ զանձս առ ժամայն ծախէին ՚ի նս ։

Այլ իբրև յամ կողմանց եկն փակեցաւ անել արգելանն նց , յայնժամ զխորհուրդն աբրահամու ՚ի մէջ առեալ աղաւաղակէին և ասէին ՚ի միտս իւրեանց։ Մնեցաւ մեր նուիրեալ զեղբարս և զորդիս

և

և զա՟մ սիրելիս ը՟ կապանօք իբրև զխաշակ 'ի վ՟ր ս՟րբ սեղանոյն, ընկալ տէր զբանաւոր պատարագս մեր. և մի' տար զեկեղեցի քո յայսն կատակմանց անօրէն իշխանիս այսորիկ։

Մի ո՟մն ներքինի 'ի խորհրդակցացն արքայի, 'ի ծածուկ ունէր զանքակ սէրն քս՟ի. քանզի մկրտեալ իսկ էր յաւազանն կենդանի, և մեծապէս հոգ տանէր հնարից կենաց վշտացելոցն, և իբրև ստուգեաց Ճշմարտիւ՝ եթէ զոր սպառնացաւ թագաւորն զա՟մ չարիսն, կամի անցուցանել ը՟ աշխարհն հայոց, թէպէտև ո՟չ ամ՟ցուն, այլ՝ սակաւուց 'ի նոցանէ. խրատ ետ և ուսոյց ելս հնարից, զի անգամ մի 'ի նեղութ՟է զանձինս ապրեցուսցեն։ Եւ մինչդեռ գունդ կազմէին որ զնոսա շկօթակ արասցեն յանդարձ օտարութ՟ի, ո՟պ և բազում նախարարս 'ի Վրաց աշխարհէն տարաբին, 'ի նմին ժամանակի գուժկան հասանէր 'ի կողմանցն քուշանաց, թէ գունդ հասաւ 'ի թշնամեացն՝ որ ելին աւերել զբազում գաւառս արքունի. և այս լինէր մեծ օգնութ՟ի ն՟ց յերկնից։

Եւ անօրէնն Ճեպեալ տագնապէր զայրուձին յառաջ արձակել. և ինքն փութով առէպ ընդ հետ երթայր. և 'ի խոր խոցեալ՝ զխորհուրդն ցրուէր զառաջին հաստատուն երդմունսն։ Իսկ երկիւղածացն տ՟ն զայս տեսեալ, մեծաւ յուսով աղօթս առնէին և ասէին միաբան. դու տէր ամ՟ի, որ գիտես զծածուկս սրտից մարդկան, և յայտնի են առաջի քո ա՟մ աներևոյթք խորհրդոց. և ոչ ինչ խնդրեմք վկայութ՟ի յերևելեացս, ո՟պ զի և զանգործս մեր տեսանեն աչք քո. Արդ՝ առաջի քո հեղումք ըղ

 խոյն

խնդրուածս. ընկա՛լ տէր զծածուկ աղօթս մեր,
և կատարեա՛ զմեզ ՚ի հաճոյս պատուիրանաց քոց,
զի ամաչեսցէ չարն, որ խորամանեալ մարտնչի
ընդ մեզ իշխանութեամբ անօրէնիս: Շարժեա՛ տէր
զկամակոր խորհուրդս նենգաւորին, և խափա-
նեա՛ զկամս ամբարշտութեան. և դարձո՛ զմեզ
խաղաղական խորհրդով անդրէն ՚ի մեր եկեղե-
ցին, զի մի՛ յանկարծակի յափշտակեալ աւե-
րեսցի չարաչար ՚ի թշնամեաց: Եւ անձամբ իւ-
րեանց զայս ուխտ եդեալ անքակութեամբ ընդ Աստուծոյ,
հաստատուն կային ըստ առաջին խորհրդոյն.
պատգամ ՚ի ներքս յղէին զնոյն՝ խրատուէին
իւրեանց. Իբրու թէ կատարեսցին կամք անօ-
րէնութեան նորա:

Զայն իբրև լուաւ, յո՛յժ ցնծացեալ բերկ-
րեցաւ Թագաւորն, կարծեցեալ զդիւն հա-
սանել նմա յօգնութիւն շրջել և աւերել ըզ
հաստատուն խորհուրդս ծառայիցն Աստուծոյ: Եւ
աճա՛ մատուցանէին երկրպագութիւն արեգական՝
պատուել զնա զոհիւք և ամենայն օրինօք մոգու-
թեանն: Եւ զայս ո՛չ կարաց իմանալ ցնորեալն,
թէ անատուէր լոյս արեգականն արդարութեան՝
տպաւէր և մաշէր զխաւար խորհուրդս նորա,
և եղծեալ ապականէր զամենայն խեղաթիւր կամս
նորա:

Եւ կուրացեալ ՚ի ճշմարիտ յայտնութենէն, ո՛չ
իմացեալ զպատրանս խաբէութեան՝ որով վրի-
պեացն, հեղձոյր առաջի նոցա զպարգևս երկրա-
ւորս. և վերստին զպատիւ և զգահս ամենե-
ցուն նորոգէր. յառաջ մատուցանելով ե-
րեւելի առնել ընդ ամենայն տիեզերական իշխանու-
թիւնն. և անբաւ առատութեամբ ազարակս և ա-

ւանս միում միում նը յարքունատուստ շնորհէր. և սիրելիս և բարեկամս կարդայր զնս. և առ հպարտ յանդգնութն մտացն կամակորութն՝ կարծէր թէ՝ փոխանակեսցի ճշմարտութիւն ը ստութն:

Նա զայս արարեալ՝ բազում այրուձի զումարէր ընդ նս. և՛ի մոգուց ոչ սակաւ՝ աւելի քան զեօթն հարիւր վարդապետս յղէր ը նս. և զմեծ ոմն իշխան՝ մոգպետ կացուցանէր ՚ի վը նս: Խոնարհէր և աղաչէր պատուիրելով, եթէ մինչ ես ՚ի պատերազմէս դարձեալ գայցեմ խաղաղութբ, ձեր արարեալ և կատարեալ իցէք զամ ը կամաց իմոց: Նա այսպէս շքով և պատուով առաքնորդէր նս զերկայնութիւն ճանապարհին անդրէն յերկիրն հայոց: Նա ինքն աւետիսս խնդալիս առաքէր յատրուշանս բազումս: Գրէր և ցուցանէր մոգաց և մոգպետաց և ամ մեծամեծ կողմանց կողմանց աշխարհաց, որպ դիւց օգնականութբ զգործ քաջութն իմոյ յառաջ մատուցեալ:

Իսկ խոհերականքն այնուհետև յարուցեալք յեւրաքանչիւր խաւարային դարանացն, իղձք լինէին փութապէս զհրամանն կատարել. ձայն արարեալ յաշխարհս հեռաւորս՝ միանգամայն խաղալ գնալ յերկիրն արևմտից: Նա մինչչև հասեալ էին յաշխարհն մեծ հայոց, փայտս ընկենուին և վիճակս արկանէին, եթէ որ լեզու՝ որում դասու հասցէ յաշակերտութն. զի առ հասարակ հրաման առեալ էր յարքունուստ, որպ հայոց աշխարհին, նոյնպէս վրաց և աղուանից և լփնաց, աղձնեաց և կորդուաց և ծոփաց և առաստան, և որ այլ ևս ուրեք ուրեք

՚ի

՚ի ծածուկ յիշխանութենէ պարսից ունէին ըզ-քրիստոնէութի. Նաեւ անզգայ յարձակմամբ յա-ւարի առնուլ փութային զգանձս սրբ. եկեղե-ցեացն. եւ այնուհետեւ մեծեանց պատահէին իբրեւ զդեւս՝ եւ լինէր գունդ զօրաց բազ-մաց. Նաեւ չարաւէրն սատանայ իբրեւ զօրավար ՚ի մէջ նց երեւէր. եւ անդադար յորդորելով զնոսա ձեռպեալ փութացուցանէր. կէտ եդեալ զժամանակն՝ զամիսն վեցերորդ. տագնապէին եւ ստիպէին արքունի հրամանաւ մինչեւ ՚ի նաւա-սարդէ ՚ի նաւասարդ.

Նաեւ, յոմն աւուրս՝ որ եղեն ընդ իշխա-նութբ թագաւորին մեծի, բարձցին կարգք եկեղեցւոյ. փակեցին եւ կնքեցին դրունք սրբ. տաճարաց. գրով համարեցին նուիրեալ սպասքն յարքունիս. Լռեցեն ձայնք սաղմո-սաց. եւ դադարեցեն ընթերցուածք անսուտ մարգարէիցն. Քահանայք մի՛ իշխեցեն ՚ի տունս իւրեանց ուսուցանել զժողովուրդս. Նաեւ հաւատացեալք ՚ի քս արք եւ կանայք՝ որ բնակեալ էին յիւրաքանչիւր մենարանս, փա-խեցեն զհանդերձս իւրեանց ըստ աշխարհա-կան կարգաց. Պարծեալ եւ կանայք նախարա-րացն՝ կալցին զուսումն վարդապետութե մո-գաց. Ուստերք եւ դստերք ազատաց եւ շինա-կանաց՝ կրթեցին ՚ի հրահանգս նոցին մոգացն. Կարճեցին եւ արգելցին օրէնք սրբ. ամուսնու-թեան, զոր ունէին ՚ի նախնեացն ըստ կարգի քրիստոնէութեն. Այլ փոխանակ միոյ կնոջ բազում կանայս առացեն, զի աճեցեալ բազ-մասցին ազգդ հայոց. Դստերք հարց լինիցին, եւ քորք եղբարց. եւ մարք մի՛ ելցեն յորդւոց.

այլ

այլ և թուռունք ելցեն յանկողինս հաւուց ։ Պատրուճակք անշաշուք մի՛ մեռցին ․ եթէ յօ-դեաց և եթէ յայծեաց , եթէ յարջառոց և եթէ ՚ի հաւուց և եթէ ՚ի խոզից ։ Հայրք ա-ռանց փոքամի մի՛ զանկցին ։ Ծնի՛ք և քակորք ՚ի կրակ մի՛ այրեսցին ։ Ձեռք առանց քումիզի մի՛ լուասցին ։ Շնջրիք և աղուէսք և նապա-տակք մի՛ մեռցին ։ Օձք և մողէզք՝ գորտք և մրջմունք՝ և որ այլ ևս խառնափնդոր բազ-մածնիք են , մի՛ կայցեն ․ այլ՝ թո՛ւով և հա-մարով ՚ի մէջ բերցեն ըստ արքունի չափոյն ։ Եւ որ այլ ևս ինչ սպասք իցեն կամ զոհից կամ սպանդից ըստ տօնական կարգին , տարևոր թուականին , և ըստ կարգաճաթին մոխրաչափ կար-գին ։ Զայս ամ զոր ասացաք , առ ժամա-նակ մի մինչև ՚ի գլուխ տարւոյն կատարես-ցեն ամենեքեան ․ և զայլն ամ առ յապայ պա-րաստեսցեն ։

Իսկ զայս ամ հրաման պատուիրանաց ա-ռեալ մոգաց և մոգպետաց , զոհի՛ և զգիշեր փութային համանել յաշխարհն հայոց ․ և առ յոյժ խնդութէն՝ ոչ երբեք յագէին երկայ-նութե ճանապարհին ։

## ԳԼ․ Գ․ ։

### Երրորդ՝ վս միաբանութե ուխտի սբ եկեղեցւոյ ։

Թէպէտև՝ ոչ իցեմք բաւական ասել զամ չարիսն՝ որ անցին անդրէն ՚ի կարաւանին ընդ-գունդն հայոց , սակայն և ոչ լռել կամիմք

ծածկելով զվիշտս նեղութեան . այլ ասասցուք փոքր 'ի շատէ, զի ձայնակի՛ց լիցուք այնոցիկ՝ որք դառնապէս զմեզ ողբային . զի և դու իբրև լուիցես, ոչ սակաւ արտասուս հեղուս 'ի վերայ ազգիս թշուառութե :

Զի աչս անդէն 'ի մեծ բանակին պարսից՝ ազգաց յազգաց որք էին հաւատացեալ 'ի սբ աւետարանն քի, իբրև տեսին զչար յանձնառութիւն հայոց, յոյժ հարան 'ի միտս իւրեանց . և կործանեցան անկան 'ի վր դիմաց իւրեանց : Բազումք 'ի նոցանէ թախծեալ 'ի սուգ ծանրութե, յարեալք յոգիս և դառնացեալ յարտասուս, եկին յանդիմանեցին զնախարարսն . և յոյժ դսրովեցին զուխտ քահանայութեանն :

Զզուէին զանձն և ասէին, զի՞ առնիցէք զսբ կտակարանդ . և յո՞ տանիցէք զպաշտս տէրունեան սեղանոյն : Մոռանայցէ՞ք արդեօք զհոգևոր օրհնութիւնդ . և կամ լուեալ դադարեցէ՞ք 'ի մարգարէական ձայնիցդ : Կափուցէ՞ք զաչս յընթերցուածոց . և խցէ՞ք զականջս 'ի լսելոյ : Մի՛ թէ զմոռացդ անմոռացութի ո՞չ յիշեցէք . զի՞նչ առնիցէք զպատուիրեալն 'ի տեառնէ, որ ուրացցի զիս առաջի մարդկան, յուրաստ եղէց և ես զնմանէ առաջի հօր իմոյ յերկինս և հրեշտակաց նրց :

Վարդապե՛տք էիք առաքելական քարոզութեանն . արդ աշակերտք լինիցիք մոլար խաբէութեան : Ուսուցի՛չք էիք ճշմարտութեան . արդ ուսանի՞ք զպատիր խաբէութիւն մոգուց : Քարո՛զք էիք արարչական զօրութեան . արդ զտարերս ածս խոստովանիք : Յանդիմանի՛չք էիք

էիք սառութեն · որք և քան զսառն սրտագոյնք լինիցիք ։ ՚Ի հուր և ՚ի հողմ էիք մկրտեալ · որք ՚ի մոխիր և յաճիւն թաւալիցիք ։ Կենդանական մարմնոյն՝ և անմահական արեամբն էիք սնեալ · որք ՚ի ձեռնձերս զոհից և ՚ի շարաւս աղտեղիս մրձոտիցիք ։ Տաճար էիք հոգւոյն սրբոյ · որք զոհարան դիւաց լինիցիք ։ Լուսազգեստք էիք ՚ի մանկութենէ · որք մերկացեալ ՚ի փառաց դիւաբար՝ արեգական երկրպագանիցէք ։ Որդիք և ժառանգք էիք արքայութեան · որք անձամբ զանձինս արարէք ժառանգք գեհենի ։

Նոցա էր սպառնացեալ զհուրն անշէջ · ընդէ՞ր դուք ընդ նոսա այրեցեալ տոչորեցայք ։ Նոցա էր պատրաստեալ որդն անմահ · իսկ որք դուք պատրաստեցէ՞ք զանձինս ձեր նմա կերակուր ։ Խաւարն արտաքին թանձրացեալ պահի նոցա · դուք լուսազգեստքդ ընդէ՞ր յղարկեցայք ընդ նոսա ՚ի նոյն խաւարն ։ Նոքա ՚ի վաղնջուց իսկ էին կուրացեալք · զհետ կուրացն և դուք կուրացա՞յք ։ Նոցա էր փորեալ զխորխորատն, դուք ընդէ՞ր լցէք յառաջագոյն ։ Ե՞րբ ուսանիցիք զբազմաթիւ անուանս աստուածոց նոցա , այն՝ որ չէիք ուրեք ՚ի մէջի և ոչ մի ։ Թեթեւացեալք ՚ի ծանր բեռանց , անձամբ անձին առէ՞ք ըզ բեռն ծանրութեան ։ Ազատեալքդ ՚ի ծառայութենէ , չարաչար մտէ՞ք յանազատելի ծառայութիւն ։ Եթէ գիտէիք դուք և երևէր ձեզ յայտնի , սուգ առին երկինք ՚ի վերայ ձեր · և թախծեցաւ երկիր ՚ի ներքոյ ոտից ձերոց ։ Հրեշտակք ՚ի վերուստ են ձեզ բարկացեալ · և յերկրէս՝ մարտիրոսքն են ձեզ ցասուցեալ ։

Որո[illegible]

Ողորմիմ ողորմիմ սիրելեաց ձերոց . և բազում անգամ ողորմիմ անձանց ձերոց ։ Զի եթէ մարդոյ փրկեալ էր զձեզ 'ի ծառայութ՟է, և դուք անձամբ զանձինս այլում 'ի ծառայութիւն արկանէիք , 'ի մեծ բարկութ՟ի բրդէիք զառաջին տէրն ձեր ։ Իսկ արդ զի՞նչ առնիցէք զա՟ծասաց հրամանն , ես եմ ա՟ծ , և չի՛ք այլ դ՟ք բաց յինէն . և ոչ զկնի իմ այլ դ՟ք լիցի . ա՟ծ նախանձոտ եմ ես . հատուցանեմ զմեղս հարց յորդիս , մինչև յեօթն դարս ։ Իսկ եթէ որդիքն արդարք՝ վ՟ս հարցն մեղաց ընդունին զպատուհասն , յորժամ ի՛նքեանք իսկ որդիքն մեղիցեն , ո՛չ ահա միանգամայն զանձանցն և զհարցն՝ տացեն 'ի միասին ։

Դուք էիք մեր ամուր ապաստանք . յորժամ աստի վտանգ հասանէր մեզ , առ ձեզ յանդորր ելանէաք . արդ մեծ ամուրդ այդ՝ հիմն 'ի վեր տապալեցաւ ։ Դուք էիք մեր պարծանք առ թշնամիսն ճշմարտութ՟ե . արդ դուք եղեաք մեզ նախատինք առ նոյն թշնամիսն ։ Այժմ վ՟ս ձերոյ ճշմարիտ հաւատոցն՝ և'ի մեզ փոքր 'ի շատէ խնայէին . արդ 'ի պատճառս ձեր՝ և զմեզ անողորմ դատին ։ Ո՛չ միայն զանձանց դատաստան տալոց էք առաջի ահեղ ատենին ա՟յ , այլ և զբազմաց ա՟նձցուն՝ որ 'ի ձեր պատճառս զն՟ս ևս չարչարեսցեն ։

Զայս և առաւել քան զայն՝ խօսեցան ը՟ մեծամեծ աւագանւոյն , և յաւելին ցաւս 'ի ցաւոց վ՟ր ։ Յայտնել և ցուցանել նշ՟ զխորհուրդն ոչ կարէին . լռել և չառնել պատասխանի անհնար էր ։ Հեղձամղձուկ եղեալ մեծապէս՝ յարտասուս հարկանէին ։ Ընդ նմին

դառ

դառնացեալ լսօղք և տեսօղք , յանմխիթար սուգ լինէին ա̃մէքն ։

Յայնմ ժամանակի քահանայք՝ որ էին ան֊գէն 'ի զօրուն , առ 'ի չժուժել սրտիցն բարկութ̃ե՝ քակեալ որոշեցան 'ի նախարարացն և յա̃մ բազմութ̃էն ․ և զմի ոմն դեսպան ձիով փութապէս առաքեցին յաշխարհն հայոց ․ գուժ 'ի բերան առեալ , և զօձիս պատառեալ ․ հասեալ 'ի ժողովս եպիսկոպոսացն , մեծապէս յարտասուս հարեալ կայր , և պատմէր զա̃մ անցս չարչարանացն , այլ ոչ յայտնէր ն̃ց զծածկութ̃ի խորհրդոյն ։

Յայնմ ժամանակի սփռեցան եպիսկոպոսքն յիւրաքանչիւր իշխանութ̃իս , և առաքեցին ըզ֊քոր եպիսկոպոսունսն 'ի գեօղս և յագարակս , և 'ի բազում ամուրս լեռնային գաւառացն ․ գըր֊դեցին ժողովեցին զբազմութ̃ի արանց և կանանց , շինականաց և ազատաց , զքահանայից և զմիայնակեցաց , խրատեցին պնդեցին և արարին զա̃մն զինուորս ք̃ի ։ Եւ առաջին բան խորհրդեան՝ այս հաստատեցաւ ։

Ձեռն եղբօր հարազատի 'ի մերձաւոր իւր լիցի , որ անցեալ է ըստ ուխտ պատուիրանին ա̃յ ։ Մի՛ խնայեսցէ հայր յորդի ․ և մի՛ ակն առնուցու որդի հօր պատուոյ ։ Կին՝ կռուեսցի՛ ընդ առն ամուսնոյ իւրոյ ․ և ծառայ՝ դարձցի՛ ընդդէմ տեառն իւրոյ ։ Օրէնք ա̃ծայինք կացցեն թագաւոր 'ի վ̃ր ա̃մի , և 'ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս դատապարտութ̃ե ։ Եւ իբրև այս այսպէս հաստատեցաւ և կազմեցաւ , երևեցան ա̃մէքն զինեալք և սաղաւարտեալք ․ սուր ընդ մէջ և



վա

վահան 'ի ձեռին . ո՛չ միայն արանց քաջաց, այլև կանանց առնականաց :

Իսկ դունդքն հայոց՝ ամենայն օգնականօքն հանդերձ և ամենայն մոգացն բազմութեամբ՝ յամսեանն չորրորդի եկին հասին 'ի յաշխարհն հայոց . 'ի գիւղաքաղաք մի մեծ՝ որում անուն էր անգղ: Բանակեցան բոլորեցան զետեղեցան և յամենայն կողմանց անդր ժողովեցան, և եղեն անթիւ բազմութիւն :

Եւ եղև յետ աւուրց քսան և հնգից, մոգպետն ինքնին մոգօքն հանդերձ հասանէր մեծաւ զօրութեամբ՝ քակել զդրունս եկեղեցւոյն յաւուր միաշաբաթուն . զխորհ առնուլ կամէր զառաջարկութեան գործոյն : Իսկ տէրն Ղևոնդ երէց՝ միաբանութեամբ առաջին խորհրդոյն՝ բազում ուխտիւ 'ի տեղւոջն անդր դիպեցաւ . Թէպէտև ո՛չ էր տեղեկագոյն մտացն ամենայն նախարարացն, և ո՛չ ուժոյ մոգպետին զօրութեան : Ո՛չ եկաց մնաց ամենայն եպիսկոպոսացն . և ո՛չ առ սակաւիկ համբերել անօրէն իշխանին թողացուցանէր . այլ բազում ամբոխիւ աղաղակ զօրացն և մոգացն հասուցանէր : Քանզի վիրգս 'ի ձեռս առեալ՝ զկառափունս մոգացն և զմոգպետին ջարդէին, և փախստական յիւրաքանչիւր վանս արկանէին, և ինքեանք զպաշտօնն բարձրացուցեալ յեկեղեցւոջն՝ զտէրունի կանոնն կատարէին, մինչև 'ի նոյն միաշաբաթի անդադար լինելոյ :

Եւ յայս տագնապ խռովութեան՝ յամենայն կողմանց յաշխարհէն հայոց՝ բազմութիւն արանց և կանանց 'ի տեղւոջն հասանէին : Եւ անդ էր տեսանել զմեծ աղէտս տարակուսին : Ամենք



զգե

զփերարտուար արձակելով յաչաց իւրև յաղբե-
րականց հոսէին . և այլքն բարձրաձիչ աղա-
ղակաւ՝ իբրու այն թէ զերկինս դողացուցա-
նէին. Իսկ կէսքն խիզախելով և ՚ի զէնսն ըն-
թանալով՝ զմահ քան զկեանս ընտրէին. Իսկ
ոմանք ՚ի սրբ. ուխտէ եկեղեցւոյն՝ զաւետարանն
՚ի ձեռն առեալ՝ աղօթիւք առ ած կարդային.
և այլք ըղձային զպատառումն երկրին, զի ան-
ձանց լիցի գերեզման.

Եւ այսպէս շատ տագնապի ՚ի վր մոգպե-
տին հաստացանէին. Բազում անգամ աղաչէր
ըզգնոյկանն իւր, զի ՚ի մահուանէ կարասցեն
զնա ապրեցուցանել, և անդէն յարքունիս
ողջանդամ հաստացանել. Այլ վասն գործոյն՝
յոր եկեալն էր, ստիպէր զնա և ասէր, թող
գրեմ և ցուցանեմ մեծ թագաւորին, զի ՚ի
բաց թողցէ զպայքարն իւրոց ապստամբութի.

Զի եթէ ինքեանք իսկ ոտքն եկեսցեն
մեզ յօգնութի, չէ հնար օրինաց մոգութե ՚ի
հայս առնուլ զհաստատութի. որպ զփորձ առ
միաբանութե ուխտի եկեղեցւոյն. Զի թէ
և էին զօրք աշխարհիս մոգ, ոչինչ խնայէին ՚ի
նոս աստակմանք, ոչ միայն զարտաքինս, այլև
զեղբարս և զորդիս և յամ մերձաւորս իւ-
րեանց, նաև ոչ յանձինս իւրեանց. Արդ՝
որ ոչ ՚ի կապանաց զանգիտեն, և ոչ ՚ի տանջա-
նաց երկնչին, և ոչ ՚ի ստացուածոց պատկա-
ռեն. և որ յետին չար է քան զամ չարիս,
զմահ քան զկեանս ընտրեն.

Ո՞ է որ կարէ դոցա դիմակաց լինել.
Լուեալ իսկ էր իմ ՚ի նախնեացն մերոց, եթէ
յառաջին շապհոյ արքայից արքայի, իւրև

ամ

սկսաւ ուսումնդ այդ աճել և բազմանալ և լը-
նուլ զամ երկիրն պարսից՝ և ևս անդր յա-
րևելս անցանել, իսկ որ վարդապետք էին օ-
րինացն մերոց, յորդորեցին զթագաւորն՝ զի
մի՛ բնաւ ամենևին բարձցին օրէնք մոգութե
յաշխարհէն․ եւ հրաման սաստիկ, զի լռեալ
դադարեսցէ քրիստոնէութի․ Եւ որչափ նա
կարծելով արգելուլ կամեցաւ, ևս քան զևս
աճեցին և բազմացան և հասին մինչև յաշ-
խարհն քուշանաց, և անտի ՚ի հարաւակողմ՝
մինչև ՚ի հնդիկս տարածեցաւ․ Եւ այսպէս
աներկիւղ և համարձակք էին յաշխարհէն պար-
սից, մինչև յամ քաղաքս աշխարհին՝ եկեղե-
ցիս մեծամեծս շինեցին, որ զանցանէր պայ-
ծառութեամբ զթագաւորական արքունեօքն․
Շինէին և վկայարանս իմն անուանեալ՝ և
զնոյն զարդ եկեղեցեացն զարդարէին, և
յամենայն տեղիս անապատս՝ միայնանոցս շի-
նէին․ Որև ոչ՛ինչ երևէր օգնականութիւն
ուսմանք, յայտնի աճելով աճէին և բազմանա-
լով բազմանային, և մարմնաւոր մեծութբք մե-
ծանային․

Զպատճառս հարստութեն՝ մեք ինչ ոչ գի-
տեմք․ բայց այսչափ ինչ ճշգրտիւ իմանամք․
զի տիեզերք ամ զկնի ուսմանց նց գնացին․
Եւ թէպէտև արկ ՚ի նս թագաւորն զձեռս իւր
խստութբ՝ և զբազումս կալաւ ՚ի նոցանէ և
չարչարեաց, և զևս բազումս մահուամբ սա-
տակեաց․ դառնացաւ և ձանձրացաւ յանձն իւր
թագաւորն, և զնս ոչ կարաց նուազեցուցա-
նել ՚ի բազմութէն․

Դարձեալ թէպէտև փակեաց և կնքեաց

դռունս եկեղեցեաց ընդ ամ աշխարհն պարսից · նոքա զամ տուն եկեղեցի արարին , և յամ տեղւոջ զիւրեանց օրէնքն կատարէին , և զանձինս իւրաքանչիւր՝ վկայարանս համարէին · և լաւագոյն զշինուածս մարմնեղէնս քան զհոգեղէնս հաշուէին : Սուրք սպանողացն բթեցան , և նոցա պարանոցքն ոչ ձանձրացան : Աւարառուք ստացուածոց նոցա աշխատեցան · և աւարն օր քան զօր աճեցեալ բազմանայր : Սրտմտեալ էր Թագաւորն , և յոյժ դառնացեալ դահիճք բարկութեն · իսկ նոցա արթունք և զուարթունք և խնդալից ընդունէին զամ հարուածս տանջանացն , և սիրով տանէին զամ յափշտակութիւն ընչից իւրեանց :

Իբրև ետես Թագաւորն՝ թէ գրոհ տուեալ դիմեցին 'ի մահ՝ իբրև խաշինք մբք յաղն երկնաւոր · արգել և կարճեաց զնս 'ի չարչարանացն , և հրաման ետ մոգաց և մոգպետաց , զի մի՛ ամենևին ոք խռովեսցէ զնս · այլ հաստատեալ կացցեն աներկիւղութբ յիւրաքանչիւր ուսմունս , մոգն և զանդիկն , հրէայն և քրիստոնեայն , և որ այլ բազում կեշտք են 'ի կողմանս կողմանս աշխարհին պարսից :

Եւ ապա առ երկիրն զխաղաղութի հաստատութե , և լռեալ դադարեցին ամ խռովութեանցն յուզմունք : Քանզի ընդ մերոյ աշխարհին շարժման՝ և արևմուտք ևս մեծապէս շարժեցան , և ամ տաճկաստան ընդ նմ խռովեցաւ :

Զայն ահա 'ի լսելոյ գիտեմք · բայց այս՝ զոր ես ինձէն աչօք տեսի , թուի ինձ թէ մեծագոյն ևս լինի քան զառաջինն : Արդ դու՝

որ

որ մարզպանդ ես աշխարհիս , պարտ էր քեզ փոյթ անձին ունել՝ գրել և ցուցանել յարքունիս զմիաբանութի բանութեա , թէ որպէս աներկեղութբ առ ոչի՛նչ համարեցան զհրամանս արքունի ։

Եթէ չէր մեր աճապարեալ և՚ի փախուստ դարձեալ , միում ՚ի մէնջ ոչ տային ապրել ։ Այլ եթէ անզէն մարդիկդ այդպէս բռնացան, եթէ յանկարծ զզինուորսն ես ընդ ինքեանս միաբանեսցեն , ո՞ կարէ կալ առաջի դոցա յանդուգն յարձակմանն ։

Այս աՀա անտեղեակ էի անքակ ուխտի եկեղեցւոյդ ՚ի միմեանց ։ զի այլ է՝ զոր լուէ մարդ, և այլ է՝ զոր տեսանէ հաստատուն իւրովք աչօք ։ դու՝ որ ՚ի մանկութէ յայդմ օրէնս սնեալ էիր և ճշմարտեալ գիտէիր զպնդութի մարդկանդ , եթէ առանց բազում արեան հեղլոյ՝ դոքա մեզ ոչ տան ձեռն արկանել յեկեղեցիսդ , ընդէ՞ր զայդ ամ հաւաստեաւ չասացեր յանդիման Թագաւորին ։

Քանզի ամ նախարարացն աւագ՝ դու էիր, և զբոլոր աշխարհս քեզ տուեալ էր և յանձն արարեալ մարզպանութբ , ընդէ՞ր ոչ մեծապէս հոգ տարար յանձն քո ։ Զի յայլ ժամս իմաստուն էիր , և ես գիտէի ։ զայս գործ ոչ իմաստուն գործեցեր ։ ապա թէ ոչ՝ յայտ է թէ և դու ՚ի նոյ բանի ես , և քո խորհրդովդ անցուցին նոքա զայս անցս ընդ իս և ընդ զօրս ։

Արդ՝ եթէ այդ այդպէս է , և քեզ կամք չեն ունել զմտդութիդ , մի՛ ինչ պատկառեր դու երկիւղիւ՛ յարքայէ ։ Այս գրեմ և ցուցանեմ ՚ի դուռն մովպետան մովպետի և դերան

դեր

գերձապետի և մեծ հազարապետին, զի ած֊
ցեն զորքայն 'ի հաւանութ՟ի · ո՟պ զի 'ի բա՛ց
թողացուսցէ ըստ առաջին հրամանին, և'ի կամս
մարդկան ապաստան արասցէ, զի առ սակաւ սա֊
կաւ ընտելեսցին ընդ օրէնս մոգութե՟ս · զի որք
կալցին սիրով, երևեսցին կատարել զհրամանն
արքունի ։ Քանզի մեր ձեռն է յաշխարհս,
գուցէ յորժամ վնաս ինչ առնիցեն, և ին֊
քեանք ցրուեալք փախիցեն յօտարութիւն ։
Յորժամ աշխարհս թափուր լինի 'ի մարդկա֊
նէս, յայնժամ քեզ իսկ գլխովին մեծապէս
վնաս հասանէ յարքունուստ ։

Նա պատասխանի մարզպանն մոգպետին և
ասէ · ամ՟ բանք խրատուդ՝ զոր դու ասացեր,
ճշմարիտ են · բայց զառաջինն՝ զոր չիմացաք,
տեսե՞ր և մեծապէս զղջացաք այժմ ։ Բայց արդ՝
դու զոր ասեմս բարիոք թուեսցի քեզ · սա֊
կաւ ինկ մի երկայնամիտ լեր և զխորհուրդս քո
արգել 'ի բազմաց · բայց արանց՝ որոց ես ա֊
սեմ, նոցա յայտնեա, մինչև ես ինձէն ժողովե֊
ցից զօր 'ի թիկունս ածելոյ, և զուխտ եկե֊
ղեցւոյդ թերևս կարացից երկփեղկել ։ Նա
եթէ զայդ այսպէս արարից, գիտեմ ապա թէ
և զհրամանն արքունի կարող եմ կատարել ։ Նա
անդէն հրոս հանեալ 'ի սփռեալ աշխարհն,
զիւր գունդն ստուարացոյց 'ի թիկունս օգնա֊
կանութե՟ մոգաց և մոգպետին ։

Նա ապա սկսաւ ասել, ո՛չ է դու առ ան֊
գամ մի հրովարտակ 'ի դրանէ արքունի տուր մե՟
պրուձիոյն՝ որ 'ի յաղուանան է տասն հազար,
զի 'ի ձմերոց 'ի հայս եկեսցեն · և յորժամ զնո՟
'ի ձեռին ունիցիմք, չիք ոք՝ որ եղծանել կարէ

զհրամանն արքունի ։ Պատասխանի ետ մող-պետն և ասէ ցմարզպանն ․ այդ խորհուրդ գործեալ իմոց բանիցս ընդդէմ է ․ քանզի յորժամ մեք բռնութբ կռուիմք ընդ աշխարհիս , աշխարհս 'ի բաց քանդի և մեք 'ի պատուհասէ չապրիմք ․ անձանց մնաս , և արքունի մեծապէս զեան ։

Նա ոչի՛նչ կամեցաւ ամենևին ունկնդրել նմա մարզպանն ․ զի սրտի մտօք կալեալ էր ըզ-պարսկական օրէնսն ։ Սկսաւ այնուհետև պաշարել զամենս կարասեաւ , և զամենս զորկ բանիւք ․ և զռամիկսն ամ ահեղ բանիւք սպառնացեալ՝ սրտաթափ առնէր ։ Ջանապազորդ առատացուցանէր զունծիկս տաճարին ․ և յերկարէր զնուագս ուրախութե՝ մաշելով զերկայնութի գիշերացն յերգս արբեցութեան և 'ի կաքաւս լկտութեան ։ Քաղցրացուցանէր ոմանց զկարգս երաժշտական և զերգս հեթանոսականս ․ մեծապէս գովութիս մատուցանէր օրինաց թագաւորին ։ Բերեալ էր և յարքունուստ բազմութի կարասւոյ , և միում միում կաշառ գաղտ խթէր՝ 'ի պատճառս պատուի և պարգևաց ․ և բազում նենգութբ զանմեղ մարդիկ պատրէր և յինքն արկանէր ։

Իսկ՝ զայս ամ իբրև տեսին որ եպիսկոպոսքն , ևս քաջ դրդեալ յորդորեցան 'ի նոյն միաբանութի ․ և հնարագէտ իմաստութեամբ ընդ երկուս բաժանեցին զբանակն ։ Մանաւանդ՝ իբրև յորժամ հաստատեալ գիտացին 'ի միտս իւրեանց՝ եթէ անօրէն իշխանն սիւնեաց վասակ զօրհասական զվէրսն յոգին ընկալեալ էր , խորշեցան մերժեցան և 'ի բաց փախեան 'ի

նը

նմանէ ։ Խորհուրդ արարեալ ՚ի գիշերի միում ա̃մ ուխտին բազմութե̃, կոչեցին և զպարապետ զօրուն ՚ի խորհուրդն, հարցին և քննեցին և ՚ի վ̃ր հասին մտացն անշարժութե̃ · որոյ ոչ ևս առ սակաւ մի թերացեալ էր ՚ի սիրոյն քրի̃ ։ Միաբան աղօթս արարեալ ՚ի վ̃ր նր̃, վերստին ընկալան զնա յառաքինութի̃, և նուիրսացան զերդումն ՚ի նոյն միաբանութի̃, որք ոչ էին քակեալ յառաջին միաբանութենէն ։

Նոքին և ժողովեցան գունդ զօրաց բազմաց · և ևս առաւել հեռագոյն զատեան ՚ի մոգացն և ՚ի մոգպետէն և յանօրինէն Վասակայ ։ Իսկ նա այնչափ յիմարեցոյց ափշեցոյց զմիտս մոգպետին, մինչև ոչ ևս նմա իմանալ զելս իրացն ։ Սկսաւ այնուհետև մոգս բաշխել ՚ի տունս նախարարացն, և մեծամեծ ռոճիկս կարգել · զոհել պատրուճակս · և բռնաբար կընքաւոր մարդկանն յաղածոյ միս տալ ուտել, և երկրպագանել արեգական ։ Իբրև սկսաւ բազմանալ ընդ ա̃մ աշխարհն այնպիսի պղծագործ խառնակութի̃, յանդգնեցան և կանայք փշտիպանացն՝ յաւուրն կիւրակէի անցուցանել զճրագունս եկեղեցեացն, և պատառել զհանդերձս հաւատաւոր կանանց ։

Զայս գուժկան իբրև տեսին միաբանեալ ո̃ք եպիսկոպոսքն, զաւետարանն ՚ի ձեռն առեալ՝ հասին և անկան առանց ուրուք հարցանելոյ ՚ի վանս սպարապետին, ուր ժողովեալ էին զօրքն հայոց ։ Համբարձին զձայնս իւրեանց և ասեն, աղաչեմք զձեզ զա̃մն ո̃ք աւետարանաւս, եթէ ձերով խորհրդով գործեն զայն անօրէնութի̃ և զչարիս մարզպանն և մոգպետն, նախ զմեր

պարանոցս հատէք, և ապա յեկեղեցւոյն ձեռնարկեցէք: Ապա եթէ առանց ձեր կամաց նոքա զայն չարիսն գործեցին, այսօր իսկ խնդրեսցի վրէժ այդ ՚ի նոցանէ:

Իսկ որ էին ՚ի ներքս ՚ի վանս սպարապետին, յառն կացին ա̃մքն, համբարձին զձայնս իւրեանց առ ա̃ծ և ասեն. դու տէր սրտագէտ ա̃մցուն, ո՞չ ինչ պիտոյ է քեզ վկայութի̃ ՚ի մարդկանէ. եթէ խորհրդեալ իցեմք ՚ի քէն սրտի՛ և մտօք, զայն դու ինքնին քաջ գիտես, այսօր իսկ դու ինքնին դատեա՛ զմեզ ըստ մեղաց մերոց. ապա եթէ հաստատուն կամք յուխտի ա̃յ աւետարանիս. դու տէր լե՛ր մեզ օգնական այսօր, և տո՛ւր զթշնամիսն ճշմարտութե̃ ՚ի ձեռս մեր, զի արասցուք ընդ նո̃ա ըստ կամաց մերոց:

Զայս իբրև ասացին, ա̃մքն զգլուխս ըզգետնի հարկանէին. և ողջունեցան յաւետարանէն և յեպիսկոպոսացն: Իսկ մի ոմն ՚ի նախարարացն՝ որ անդ դիպեցաւ, էր ՚ի նո̃ա խորհրդի, և ո՛չ միաբանեաց ընդ նո̃ա ՚ի մեծի վկայութեանն, և անդէն առ ժամայն քարկոծեցաւ ՚ի նոցունց. և ահ մեծ անկաւ ՚ի վերայ ամենեցուն:

Յայնժամ ա̃մքն ՚ի նախանձ բարկութեան բրդեցան, մինչև ա̃մ տեսողացն երիկամունք դողային. որք առ ոչ ինչ համարեցան զպարգևան արքունի, և առ ոտն հարկանէին զհրամանս ահագինս: Ընթացան փաղփաղուկ ՚ի զէնս իւրեանց, վառեցան կազմեցան զգիշերն ա̃մ, և ընդ ծագել արեգականն զգունդն յերիս մասունս բաժանել՝ ՚ի բանակն արկանէին: Գունդն առաջին՝ յարևելից կուսէ. և գունդն երկրորդ՝

յարեւմտից կուսէ. եւ գունդն երրորդ՝ ՚ի հիւ-
սիսոյ կողմանէ. շուրջանակի ՚ի մէջ առեալ փա-
կեցին զբազմութիւն բանակին, զբազումս կոտո-
րեցին, եւ զեւս բազմագոյնս կապեցին զերեւելի
մարդիկն՝ եւ արկին ՚ի բերդս ամուրս ընդ ի-
րեանց իշխանութ՟բ: Եւ զառ եւ զապուր եւ
զաւար բանակին ՚ի մի վայր ժողովեալ պահէին
իբրեւ արքունի հրամանաւ:

Իսկ մարզպանն ձերբակալ արարեալ, եւ նա
միաբանէր ընդ ն՟ցա երդմամբ՝ հաստատուն կալ
յուխտին. եւ զղջանայր զառաջին քակտումն ՚ի
նոցանէ. անկանէր ապաշխարութ՟բ յոտս եպիս-
կոպոսացն, եւ աղաչէր խաղապատելով զի մի՛ մեր-
ժեալ ընկեսցի առ ՚ի նոցանէ: Արկանէր եւ ե-
րեքկնէր զսուտ երդումն առաջի բազմութեանն ՚ի
ս՟բ աւետարանն: Գրէր եւ կնքէր զերդումն,
եւ կապէր ՚ի ս՟բ աւետարանէն. եւ աղաչէր զի ա՟յ
վրէժխնդրութիւնն յայտնեսցի, եւ մի՛ նոքա մարդ-
կաբար սատակեսցեն զնա:

Իսկ նոքա թէպէտեւ հաստատուն գիտէին
զնենգաւոր կեղծաւորութիւն ն՟ր, եթէ խաբեա-
թեամբ դառնայ անդրէն ՚ի հին սովորութիւն,
ոչի՛նչ փոյթ առնէին ձեռնարկել ՚ի նա վ՟ս ա-
ռաջին յանցանացն. այլ՝ ս՟բ աւետարանին թո-
ղուին զվրէժխնդրութիւն: Իսկ որք եկեալ
էին յաւարի առնուլ զս՟բ գանձս եկեղեցւոյն,
ակամայ զանձինս եւ զաւարն իւրեանց ետին ա-
ռաջի ս՟բ եպիսկոպոսացն եւ ա՟մ զօրացն. եւ եղ-
ծաւ ապականեցաւ հրաման թագաւորին յա-
ջողեալ զօրութ՟բն ա՟յ:

Աղաղակէին եւ ասէին գոհանալով արք եւ
կանայք եւ ա՟մ ռամիկ բազմութիւնն. պատրաստ

եմք

եմք 'ի հալածանս և 'ի մահ և յա՟մ նեղութիւս վ՟ս ք՟ի եկեղեցեացն, զոր աւանդեցին հարքն մեր առաջինք՝ զօրութբ՟ գալստեան տեառն մերոյ յ՟սի ք՟սի, որով վերստին ծնաք 'ի մի յոյս հաւատոյ՝ մկրտութբ՟ 'ի ք՟ս յ՟ս, ըստ նմին նմանութե՟ կամիմք չարչարանօք և արեամբ նորոգել զանձինս մեր։ Քանզի հայր մեր զս՟բ աւետարանն գիտեմք. և մայր զառաքելական կաթողիկէ եկեղեցի։ Մի՛ ոք չար անջրպետ 'ի մէջ անկեալ, զմեզ քակեսցէ 'ի սմանէ։

Ո՛չ այնուհետև երևէր տէր առաւել քան զծառայ. և ո՛չ ազատ փափկացեալ քան զպեղջուկ վշտացեալ. և ո՛չ ոք քան զոք նուաղեալ յարիութե՟։ Մի՛ սիրտ յօժարութե՟ էր ամենեցուն. արանց և կանանց, ծերոց և տղայոց, ա՟մ միաբանելոցն 'ի ք՟ս։ Քանզի առ հասարակ զմի զինուորութի՟ զինուորեցան. և զմի զրահ զգեցան զհաւատոյ պատուիրանին ք՟սի. և միով գօտեաւ ճշմարտութե՟ն պնդեցին զմէջս արք և կանայք։

Ընկեցեալ կայր այնուհետև ոսկի, և ո՛չ ոք առնոյր իւր առանձինն արծաթ՝ և արհամարհեալ առանց ագահութե՟, անարգեալ պատուական հանդերձք առ 'ի զարդս մեծարանաց։ Նաև իւրաքանչիւր ումեք ստացուածք՝ ոչի՛նչ համարէին յաղագս ստացողաց իւրեանց։ Տեսանէին զանձինս իւրեանց իբրև մեռեալ դիակունս, և զիւրաքանչիւր գերեզման իւրեանց փորէին, և կեանք իւրեանց 'ի մահ համարեալ էին, և մահք իւրեանց՝ անշուշտ կեանք։

Բայց այս բարբառ ստէպ ստէպ ընթանայր քաջութբ՟. միայն մնացուք՝ զանուն և զհոգիս

և

և եթ ժառանգեսցուք․ զի կենդանի լիցէ ՚ի մեզ քո․ որում դիւրին է միւսանգամ նորոգել զմեզ ՚ի հողոյ, զմեզ և զամենայն զյառաջագոյն ննջեցեալսն․ և հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւր։

Զայս և առաւել քան զայն խօսելով և մխիթարելով զանձինս և զմիմեանս, դարձեալ միւսանգամ զինուորքն պատրաստէին զզէնս իւրեանց․ և աղօթականքն անդադար լինէին յաղօթս իւրեանց․ և պահողքն ձգնէին ՚ի պահս իւրեանց։ Իսկ ձայնք պաշտօնէից ՚ի տաճարէ և ՚ի գիշերի անհատ էին ՚ի սուրբ սաղմոսն։ Ընթերցուածք աստուածային կտակարանացն ոչ երբէք առնուին դադարումն յամենայն ժամ։ Այնպէս և մեկնիչք՝ ՚ի մխիթարութիւն երկնաւոր վարդապետութեանն։

Յայնմ ժամանակի դարձեալ յարձակէին ՚ի վերայ բերդին և աւանաց, զոր առեալ էին պարսիկք ՚ի տեղւս տեղւս յանկոց աշխարհին, տապալէին քանդէին զբնակութիւնս նց։ Առաջին զմեծն Արտաշատ համդերձ աւանօքն իւրովք․ և առնուին զանմատոյց ամուրսն՝ զԳառնի և ըզքաղաք զԱնի, և զարտագերսն և զաւանսն իւր, զերկայնորդան, զարփնին և զաւանսն իւր, ըզբարձրաբերդն, զխորանիսան, զծխանիսան, զանկասկածելի ոստանն, ընդ նմին և զաւանսն իւր, զգամէալն, զկապոյտ, զորսան, զարխանեալն, զխանձավանն՝ ընդ նմին և զաւանսն իւր, զվաշակաշան։

Զամենեսին զտաս իւրաքանչիւր գեւղիւք և ագարակօք, զօրօք և զօրագլխօք․ ՚ի նմին ամի առեալ տապալեցին, և ՚ի գերութիւն վարեցին

ցին զօրս և զկանայս ընչիւք և տապաստածովք, հանդերձ պատուական գանձիւք և նոցին սպասիւք ։ Տապալեին քանդեին զշինուածս նոցա · այրեին կիզուին զտունս պաշտաման կրակին · և որբեին զպղծութի կռապաշտութեն · և առնուին ևս զկահ և զկազմած ատրուշանացն, բերեին և դնեին 'ի սբ եկեղեցւոյն · և 'ի ձեռն սբ քահանայիցն նուիրեին 'ի սպաս տէրունական սեղանոյն ։

Նա փոխանակ մոլոր պաշտամանցն՝ զոր տապալեին յամ տեղիս հեթանոսացն, զփրկական խաչն քի կանգնեին · և զամենասբ սեղանն ուղեին, և զկենդանարար խորհուրդն կատարեին սրբութբ · պաշտօնեայս և քահանայս 'ի տեղւոջն կացուցանեին՝ յուսով հաստատեալ · և խնդայր երկիրն առ հասարակ ։

Նա մինչեւ յայսմ մեծի առաքինութե կատարեալ գործեին զգործ նահատակութե, երևէր նմա 'ի վր ամցուն ածային շնորհք · քանզի առանց հրամանի զօրացն հայոց՝ յարևելից կողմանէ աշխարհին յարձակեցան ամենք յատրպատական աշխարհ, 'ի տեղիս տեղիս բազում մնաս արարին, առնլով և աւերելով և քանդելով զբազում ատրուշանս ։ Իսկ որ 'ի մեծ ամուրն անկանեին, խաչանշան արարեալ՝ 'ի վր զօրուն յարձակեին · և երկու մեծամեծ բերդից պարիսպքն առանց ուրուք մերձենալոյ՝ անկեալ կործանեցան · մինչև ամ բնակչաց երկրին զահի հարեալ 'ի մեծ նշանէն, ինքեանք ինքեանց ձեռօք զկրակատունսն այրեին · ուրանալով զօրէնս մոգութեն, խոստովանեին 'ի սբ աւետարանն ։ Նա այս մեծամեծ զօրութիք և յաղթու-

թիւնք

թշնամիք կատարէին 'ի ձեռն զօրականին ․ քանզի ուր ոչ էր ակնկալութի՟, եթէ զանուանն ա՟յ ոք յիշեցէ՝ արհաւիրք մեծ անկանէին 'ի վ՟ր ն՟ց, և ա՟մ մարդ պատմէր ընկերի իւրում զտեսիլս նորա և զարմանալիս ։

Այնպէս և աստեղք յերկնից երևէին յոյժ լուսաւորք պայծառացեալ ․ զոր ոչ ունէին յառաջ 'ի բնութեանն ։ Եւ ամենայն տոհմք աշխարհին՝ իբրև զարս պատերազմողս խնդալէին ։

Եւ աճ յետ աւուրց բազմաց՝ եկն եհաս հազարապետն աղուանից ը՟ք եպիսկոպոսաւ աշխարհին ․ մեծաւ տագնապաւ փութացուցանէր զզօրսն և ասէր, գունդն պարսից՝ որ էր 'ի կողմանս աշխարհին հոնաց, դարձաւ այսրէն, եկն եմուտ յաշխարհս մեր ․ և բազում են այլ այրուձի՝ որ 'ի դրանն է՝ եկն ։ Եւ թող զերկոսեան, այլ երեք հարիւր մոգ վարդապետ ածեալ են ընդ իւրեանս ։ Պատուակեցին զաշխարհն, և զոմանս ոմանս յինքեանս արկին, և կամին յեկեղեցիսն ձեռնարկանել ։

Եւ հրամանաւ թագաւորին ստիպեն զմեզ և ասեն, եթէ կամօք յանձն առնուք զօրէնս, պարգևս և պատիւս գտանէք 'ի նմանէ, և թողութի՟ հարկացն արքունի լինի ձեզ ․ ապա թէ կամօք զայդ չառնէք, հրաման ունիմք 'ի դեւղս և'ի քաղաքս շինել ատրուշանս ․ և զկաթողիկան զկրակն 'ի ներքս դնել, և կացուցանել մոգս և մոգպետս օրէնսդիր ա՟մ աշխարհիս ։ Եւ եթէ ստամբակեալ ոք ընդդէմ դարձցի, ինքն մահու պատուհաս ընդունի, և կին և որդիք այնպիսւոյն անաշխարհիկ եղեալ յարքունիս երթիցեն ։

Իսկ գունդն Հայոց իբրեւ լուաւ զայս դժդառնութե՟, ոչ՛ինչ թուլացեալ լքան 'ի քաջութե՟ն · այլ՝ դարձեալ համագունդ ժողով լինէր ա՟մ աշխարհին վ՟ս գուժաբեր հրեշտակացն՝ որ հասին առ ն՟ս : Այլ միաբան քաջալերս տուեալ՝ արձակեցին զն՟ս · զի առ ժամանակ մի զն՟ս պատիր խաբէութ՟բ կալցին · զի խափանեսցին 'ի չար կամացն չձեռնարկել 'ի ս՟բ ուխտ եկեղեցւոյն · եւ ինքեանք զօրութ՟բն ա՟յ խորհուրդ 'ի մէջ առեալ՝ հնարիւք զելս իրացն խնդրէին :

Յայնմ ժամանակի զմի ոմն 'ի մեծ նախարարացն 'ի տոհմէն գնունեաց Ատոմ՝ առաքէին ձեպով յերկիրն արեւմտից ցուցանել զայս ա՟մ խորհուրդ զչարիմաց թագաւորին արեւելից · միանգամայն պատմել եւ զիւրեանց քաջութի արութեցն , զոր գործովք կատարեցին առ ոտն հարկանելով զահեղ հրամանն , եւ զմեծապէս սատակումն 'ի վ՟ր մոգուց հասուցանել : Խնդրել 'ի նմանէ օգնականութի ստուգութե · եւ եթէ նա իսկ կամեսցի , նմա միանալ 'ի ծառայութիւն :

Այս է պատճէն հրովարտակին , զոր գրեցին առ Թէոդոս երանելի կայսր :

Յովսէփ եպիսկոպոս բազում եպիսկոպոսակցօք իմովք եւ ա՟մ զօրօք Հայոց · Վասակ մարզպան եւ Ներշապուհ Ռմբոսեան , հանդերձ սպարապետաւս եւ ա՟մ մեծամեծ նախարարօք՝ առ մեծանուն Թէոդոս կայսր , բազմասցի ողջոյն մեր առ քեզ եւ ա՟մ զօրաց քոց :

Որ

Որ խաղաղասէր մարդասիրութբ ձերով տիրէք ծովու և ցամաքի. և չէք ոք յերկրաւորացս՝ որ ձերում անարգել տէրութեդ ընդդէմ դառնայցէ. ով և մեք իսկ ունիմք զանուաս յիշատակարանս զառաջինն նախնեացն ձերոց. ունելով զեւրոպէ՝ անցին և տիրեցին և ասիացւոց կողմանցն՝ 'ի սահմանացն սերաց մինչև 'ի կողմանս գադիրոնի. և ոչ ոք գտաւ ստամբակեալ և ելեալ ընդ ձեռն նոցա : Նաև յայնչափ մեծի իշխանութե՝ դաստակերտ մեծ և սիրելի զհայոց աշխարհս անուանէին :

Այլ և նախնին մեր տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, որ 'ի տղայութե հասակին փախուցեալ 'ի հայրասպան մարդախողխող հօրեղբարց իւրոց, ապրեալ մնաւ 'ի յերկրիդ յունաց. և 'ի ձէնջ թագաւորեալ տիրէր հայրենի աշխարհիս :

Այնպէս և զհաւատսն որ 'ի քս՝ ընկալեալ 'ի սրբ. եպիսկոպոսէն հռոմայ՝ լուսաւորեաց զխաւարային կողմանս հիւսիսոյ. զոր և այժմ կամին կորզել հանել 'ի մէնջ խաւարասէր որդիքն արևելից : Նաև մեր 'ի ձեր քաջութիւնդ արութեամբ խիզախեալ, էր ինչ որ ընդդէմ դարձաք նց հրամանացն. և բազում այն է՝ որ արդ առաջոյ պատրաստեալ եմք : Ընտրեցաք զմահ ճծպաշտութբ, քան զկեանս ուրացութեամբ : Նաև եթէ դուք ևս 'ի ձեռն առնէք զմեզ, ահա կրկին կենաց հանդիպեցաք, և մահու և ոչ միանգամ : Նաև եթէ սակաւիկ մի հեզգայք, դուցէ և այլոց աշխարհաց բազմաց հասանիցէ տալ բաղց տալ :

Նաև իւրև յանդիմանն եղեն մեծի թագա‿

ւորին, և ընթերցան զգիրս պաղատանաց աշխարհին հայոց, և զմխիթարականս նախնեաց իւրոց, բազում մատեանք ՚ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն ուխտ հաստատութեամբ ՚ի ներքս գտանէին։

Այլ մինչդեռ երանելին Ղևոնդոս հարցանէր զամ՟ զմինկըլիտոսիկոսքն՝ և հնարս իրացն կամէր գտանել խաղաղութե՟. և հոգ տանէր մեծաւ յօժարութե՟, զի մի՛ եկեղեցիք արևելից յափշտակեսցին յանօրէն հեթանոսաց. ՚ի նմին ժամանակի անդէն վաղվաղակի հասանէր վախճան կատարածի կենաց նր՟, և կարի չար խափանումն լինէր գործոյն օգնականութե՟։ Այլ Թագաւորէր փոխանակ նր՟ Մարկիանոս կայսր. և ՚ի ձեռն վատթար արանց խրատուաց ծառայից իւրոց՝ անատօղայ որ սպարապետն էր, և եփղարիոս ասորի. երկոքեանն անարգք և ՚ի վատթար արանց միանգամայն և անմիտք։

՚Ի սոցա բանս եղեալ Թագաւորին, ո՛չ կամէր անսալ միաբանել ուխտին հայոց. որ ամ՟ ուժով իւրեանց ընդդէմ կացեալ էին չարութե՟ հեթանոսացն։ Մանաւանդ այս՝ լաւ համարէր զուխտ հեթանոսացն պահել վ՟ մարմնական խաղաղութե՟, քան պատերազմակից լինել ուխտին քրիստոնէութե՟։

Վասն այնորիկ փութացաւ արձակեաց դեսպան առ Թագաւորն պարսից զնոյն եփղարիոսն, և եմուտ ընդ նմա յուխտ հաստատութեան՝ ձեռնթափ լինել ՚ի զօրացն հայոց՝ զօրու և զինու և ամ՟ օգնականութե՟։

Այլ իբրև այս այսպէս հաստատեցաւ, և հատաւ օգնականութի՟ յուսոյ նց՟ ՚ի մարդկանէ.

դարձեալ մեր եպիսկոպոսքն քաջալերել սկսան զանձինս և զզօրսն նմա ։ Թէպէտև հայէին յիւրեանց սակաւութիւն՝ և յերկուց թագաւորաց միաբանութիւն, ոչի՛նչ վատասրտեալ դողային ․ այլ ըստ առաջին ուխտին խիզախէին և աճէին, պատրաստ եմք 'ի սպանանել և 'ի մեռանել ․ դիւրին է այ սակաւուք զբազմաց գործ գործել, և անարգօք զմեծամեծ իրս կատարել ։

Թէպէտև ոչ ունէին թագաւոր առաջնորդ, և ոչ արտաքուստ օգնական զօրս յօտարաց ․ սակայն անձանց առաքինութբ և մեր վարդապետացն մխիթարութբ՝ համագունդ նմա նախարարքն զօրօքն իւրեանց յիւրաքանչիւր տանէ 'ի մի վայր գային հասանէին փաղփաղկի, բազում և այլ այրուձի՝ որ յարքունի տանէ անուն էր ։ Եւ զամ զօրսն յերիս գունդս բաժանէին ։ Զգունդն առաջին՝ տային ցՆերշապուհ Ռմբոսեան, և գումարէին զնա պահապան աշխարհի՝ մերձ 'ի սահմանս ատրպատական աշխարհին ։ Զգունդն երկրորդ՝ տային 'ի ձեռն վարդանայ զօրավարին Հայոց՝ անցանել ընդ սահմանն վրաց 'ի վր մարզպանին ձորոյ, որ էկեալ էր աւերել զեկեղեցիս աղուանից ։ Իսկ զգունդն երրորդ՝ տային 'ի ձեռն վասակայ իշխանին սիւնեաց ․ որ ոչ 'ի բաց կացեալ էր յուխտէն հեթանոսաց ըստ ներքին խորհրդոց իւրոց, ընտրեաց և առ ընդ իւր զայրս՝ որոց գիտէր զթուլութիւն հաւատոց նց ։ Զիշխանն բագրատունեաց զօրօքն իւրովք ․ զիշխանն խորխոռունեաց զօրօքն իւրովք ․ զիշխանն ապահունեաց զօրօքն իւրովք ․ զիշխանն վահեւունեաց զօրօքն իւ-

իւրովք. զիշխանն պալունեաց զօրօքն իւրովք. զիշխանն գաբեղենից զօրօքն իւրովք. զիշխանն ուրծայ զօրօքն իւրովք. և զայլ բազում զօրս յարքունի տանէ։

Եւ արկ կնիքն և զսեպուհս ոմանս յայլմէ տոհմէ, և խորամանկ խաբէութբ դարանամուտ լինէր 'ի յամուրս իւրոյ աշխարհին 'ի պատճառս կեղծաւորութե, եթէ ընդ ճապուկ անդր անցանէ 'ի վր գնդին պարսից՝ հալածականս առնել յաշխարհէն աղուանից։ Իսկ նա յամրածածուկ հաւալոցէն ճեպով դեսպանս առաքէր առ գունդն պարսից և ասէր, թէ ահաւասիկ քակեցի զմիաբանութի ուխտիս հայոց, և ընդ երիս կողմանս զգունդն քայքայեալ բաժանեցի։ Զգունդն առաջին հեռացուցի 'ի կողմանս հերայ և զարեւանդայ. և զգունդն երկրորդ ընդ իմով ձեռամբ է, որոց ոչ ի՛նչ վնաս տամ առնել զօրացն արքունի։ Եւ զայլ ամ՝ որ այր կռուոյ գտանէր յաշխարհիս, ցանեալ ցրուեցի ընդ ամ միջոցս աշխարհիս։ Բայց զգունդն երրորդ՝ արարի ընդ վարդանայ յաղուանս, սակաւաձեռն և ոչ բազմաւ։ Եկ՛ համարձակ ընդ առաջ նր, և մի՛ ինչ զանգիտէր ամենեւին տալ պատերազմ. գիտեմ զի 'ի պարտութիւն մատնիցի առաջի քոյոյ մեծի զօրութեդ։

Զայս գրեաց և եցոյց մարզպանին սեբուխտայ։ Իսկ նա իբրև լուաւ զայս ամ քաջալերս 'ի վասակայ, և ստուգեալ գիտաց 'ի միտս իւր, եթէ սակաւաձեռն գնդաւ գայ սպարապետն հայոց 'ի վր նր, ոչ եկաց մնաց 'ի սահմանս ճորայ. այլ կուտեաց զամ բազմութի զօրու իւրոյ, և փութանակի անցանէր ընդ մեծ գետն

կուր

կար անուն, և պատահէր նմա մերձ 'ի սահմանս վրաց հանդէպ խաղխաղ քաղաքի՝ որ ձմերոց էր թագաւորութե արքունից· անցանէր բովանդակ ընդ զօրօքն իւրովք ռազմ արարեալ՝ զբոլոր մեծութի դաշտին 'ի ներքս փակէր՝ զինեալ և վառեալ ընդ պատրաստութբ 'ի մարտ պատերազմի ընդդէմ գնդին վարդանայ։

Իսկ քաջն Վարդան և ընդ զօրքն որ ընդ նմա էին, իբրև տեսին զբազմութի պատրաստութե գնդին հեթանոսաց, հայեցան և յիւրեանց սակաւութին· թէպէտև կարի նուազ էին քան զնս, ոչի՛նչ զանգիտեցին առ 'ի յոյժ բազմութէն· այլ առ հասարակ միաբան համբարձին յերկինս զձայնս իւրեանց, աղաղակէին և ասէին։

Դատեա՛ տէ՛ր զայնոսիկ որ դատին զմեզ, և մարտի՛ր ընդ այնոսիկ որ մարտնչին ընդ մեզ։ Զինու և ասպարաւ քով օգնեա՛ մեզ։ Շարժեա՛ և դողացո՛ զգունդագունդ բազմութիւն անօրինացս։ Ցրուեա՛ զչար միաբանութիւն թշնամեացս քոց առաջի քոյոյ փրկական մեծի նշանիս· և տո՛ւր 'ի ձեռն սակաւուցս զքաջութիւն յաղթութե 'ի վր անհնարին բազմութեանս։ Մի՛ 'ի պարծանս մնոտի փառաւորութե անօգուտ վաստակոց ինչ աղաչեմք· և ո՛չ յագահութի ընչաւորութե զանցաւոր մեծութի կապտելոյ· այլ՝ զի ծանիցեն և գիտասցեն ամենքն այնոքիկ՝ որ ո՛չ հնազանդին նոր աւետարանին քարոզութե, թէ դո՛ւ ես տէր կենաց և մահու· և 'ի քո՛ ձեռս է յաղթութի և պարտութիւն· և մեք պատրաստ եմք 'ի մեռանել վասն քո սիրոյդ, և եթէ սպանանել ևս հասցէ զնս,

եղէ

եղիցուք վրէժխնդիր ճշմարտութեան ։

Նա զայս տեսեալ՝ խումբ արարեալ յարձակեցին 'ի վ̄ր ն̄ց, և զաջ թեւն բեկեալ՝ զձախակողմամբն արկանէին. և որոյ ճարակ զնմանն տային. ընդ երեսս դաշտին փախստականս առնէին, մինչև յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիւքն լերանս գետոյ ։

Որ ընդդէմ դարձեալ թագաւորազանց ումանց քաղաքական արքայի, ընկեցին 'ի ձիոյ զոմն 'ի նախարարացն հայոց 'ի գնդէն Դիմաքսենից զՄուշն և սպանին. և զԳաղրիկն անդր վիրաւորեցին ։

Յայնմ տեղւոջ գետակն 'ի վէր ամբառնայր Արշաւիրն Արշարունի՝ գոչէր առիւծաբար և յարձակէր վարազանման՝ հարկանէր և սատակէր զվուրկն քաջ՝ զեղբայր թագաւորին լինաց, և զբազում համհարզս նորին ընդ նմին սատակէր. և այնպէս ամ̄քն առ հասարակ այր զախոյեան իւր յերկիր կործանէր ։

Նա առ յոյժ յանդուգն յարձակմանն՝ յոլովագոյն այն էր՝ զոր գետամոյնս առնէին, քան զանկեալսն սրով 'ի ցամաքի ։ Նա 'ի բազմութ̄է դիականցն անկելոց յատակ ջուրք գետոյն յարեան դառնային ։ Նա ոչ գտանէր ոք ամենեւին 'ի նոցանէ ապրեալ և թագուցեալ յանտառախիտս մայրից դաշտացն. բայց մի ոմն 'ի զօրականէ թշնամեացն՝ զինու հանդերձ ելեալ 'ի յուս երիվարին՝ անցանէր ընդ մեծ գետն, մազապուր պրծեալ 'ի պատերազմէն դոյժ արկանէր 'ի մնացեալ բուն բանակն՝ որք փախստական անկան 'ի մեծ շահաստանն ։

Յայնմ ժամանակի զօրքն հայոց՝ կատարելով

ըղ

զմեծ գործ պատերազմին , դիակապուտ դառնային · ժողովէին զբազում աւար բանակին , և կողոպտէին զընկեալ դիակունսն , և կուտէին բազում արծաթ և ոսկի , զէնս և զզարդս զանկելոցն զարի արանց և զքաջ երիվարացն ։

Պարծեալ յորձակէին ոչ սակաւ քաջութբ 'ի վր բերդից և քաղաքաց , զոր ունէին պարսիկք յաշխարհին աղուանից · հզօրապէս մարտընչելով այրէին զամուրս արդելանաց նց · և զերամս երամս մոգուցն՝ զորս պատրաստական ածեալ առ 'ի յաշխարհին գայթակղութի · ուր և գտանէին յամուրս ամուրս մայրեացն , որոց ճարակ տուեալ՝ գէշ դնէին թռչնոց երկնից և գազանաց երկրի ։ Այրէին զտեղիսն յամ պղծագործ զոհիցն , և փրկեալ ազատէին զեկեղեցիսն յանհնարին նեղութէն ։

Նաև բազումք 'ի նախարարացն աղուանից և յամ շինականացն՝ որք վս անուանն այ ցրուեալ և փախուցեալ էին յամուրս լերանցն կովկասայ , իբրև տեսանէին զյաջողութիւն գործոյն՝ զոր կատարէր ած 'ի ձեռն գնդին հայոց , գային և ժողովէին և նոքա և խառնէին 'ի զօրս նց , և միաբան հաւասարեալ կցորդ լինէին գործոյ նահատակութե նց ։ Խաղային գնային այնուհետև 'ի վր պահակին հոնաց , զոր ունէին բռնութբ պարսիկք · առնուին քանդէին զպահակն , և կոտորէին զզօրսն որ բնակեալ էին 'ի նմա · և զդուռնն տային 'ի ձեռն վահանայ , որ էր յազգէ թագաւորացն աղուանից ։

Նաև յայր ամ քաջութե վր՝ ոչ ոք անկեալ վիրաւորեցաւ ամենևին 'ի նոցանէ · բայց 'ի միոյ երանելւոյ , որ կատարեցաւ նահատակու-

թեամբ

թեամբ 'ի մեծ պատերազմին. և անդէն 'ի նմին տեղւոջ՝ զայրն որում զդուռնն յանձն արարին, զնոյն դեսպան արձակեցին յաշխարհն հոնաց, և'ի բազում յայլ ազգս բարբարոսաց, որ էին համագործք հոնաց աշխարհին. բանս դնել ընդ նոսա և ուխտ հաստատել՝ անքակութեամբ ունել զմիաբանութիւն։

Իսկ նոքա երբև զայն ամենայն լուան, փութապէս վաղվաղակի հասանէին 'ի տեղին, և ականատես լինէին ամենայն յաջողութեան գործոյն. Ոչ'ինչ յապաղեցին երդմամբ յուխտ մտանել ըստ կարգի իւրեանց օրինացն. յանձն առնուին և զերդումն քրիստոնէից՝ պահել ընդ նոսա հաստատութեամբ զմիաբանութիւն։

Իսկ երբև զայս կատարեցին, և արարին իւրեանց մեծապէս հաստատութիւն. և դեռ անդէն 'ի տեղւոջն զետեղեալ էին խաղաղութեամբ, զուժկան հասանէր յերկրէն հայոց՝ զճակատ հարեալ և զօձիս պատառեալ վասն ապստամբին վասակայ՝ յետս կացեալ յուխտէ քրիստոնէութեանն. և աւերեալ զբազում տեղիս հայոց աշխարհին. մանաւանդ պճմերոցն արքունի, ուր կայանք զօրացն էին։ Զգառնին, և զերամանս, զդաստակերտն մեծ, զվարդանաշատն, զփառախոտն, և զսարդէօսն, զձողակերտ աւան, և ըզբերդն արմաւիր, և զամուրն ուշական, զարուճն, և զաշնակն, զկոտայն աւան, և զամենայն ոստնն արագածու, և զնահանգն արտաշատու, և զարտաշատն ինքնին գլխովին, և զամենայն գեւղս և զաւանս որ շուրջ զնովաւ էին, առեալ աւերեալ և հրձիգ արարեալ. և զամենեցուն ձեր զընտանիս փախուցեալ մերժեալ յիւրաքանչիւր բնակութենէ.

ձեռ

Ձեռնարկեալ և 'ի մեր եկեղեցին, տարեալ և զսպաս մեր սեղանոյն · գերի վարեալ զծառայսն քահանայիցն, և զնոսին կապեալ և եդեալ 'ի բանտի, և ինքն սփռեալ տարածեալ ասպատակաւ աւերէր զեկեղեցին մեր · Այս գունդն որ էր 'ի կողմանս Ատրպատականի, ոչ ժամանեաց ձեռն տալ 'ի միջոց աշխարհին ·

Այս զօրքն որ անդէն մնացեալ էին, խոյս տուեալ յանտառսն, մերժեցան յեզր աշխարհին, և դեռ պահեն ընդ ձեռամբ զաւառս միաբանութեան սիրոյն քում · Բայց այնք որ ընդ նմա էին, են ոմանք՝ որ փախեան յիւրաքանչիւր տեղիս · և բազումք այն են՝ որ զհետ նորա ամբարշտութեան մոլորեցան · Զայս լուեալ՝ չու արարին 'ի տեղւոջէ անտի գնացեալ անդէն յաշխարհն Հայոց · մեծաւ տխրով և բազում աւարաւ և անչափ մեծութբ՝ անսպառ ուրախութբ երգս 'ի բերան առեալ ամէին ձայնիւ, խոստովան եղերուք տեառն՝ զի բարի է, զի յաւիտեան է ողորմութի նորա · Որ եհար զազգս բազումս՝ և սպան զիշխանս մեծամեծս՝ զի բարի է, զի յաւիտեան է ողորմութի նր · և զայս սաղմոս երգելով մինչև 'ի վախճանն կատարեալ աղօթիւք, փառաւորութի սր Երրորդութեանն մատուցանէին · Ընդ յանձանձէր ածէր զօրավարն զկոյս և զմնաց զօրականեն՝ առաջապահօք վերջապահօք կողմնապահօք ողջ և առողջ հասուցեալ յաւուրս երեսուն, մերձ 'ի սահմանս հայրենի աշխարհին ·

Ընդ եղև ուրացեալն վասակայ և իշխանացն որ ընդ նմա էին, քաջութի նահատակութեան գնդին Ս. Վարդանայ՝ յաշխարհէն աղուանից · եւս և

միաբանութիւնն հնոց ։ Մինչև յանդիման եղեալ էին միմեանց, զգիշեր մի օգնական գըտեալ նը, փախուցեալ անկանէր յամուրս լեռաց աշխարհին ․ և այնպէս տագնապաւ մերժեցաւ ։ Զգերի աւարն զոր առեալ էր յայրարատ գաւառէ, ակամայ և զիւրն ևս 'ի վերայ եթող և փախեաւ ։

Այսքանզի ժամանակն ևս ձմերայնոյ հասեալ էր, և զառձիկս թշնամեաց գնդին հատեալ էր, ոչ կարէր միով տեղեաւ համագունդ զզօրսն գումարել ․ այլ սփռեալ տարածանէր ընդ գաւառս գաւառս աշխարհին առ 'ի հանգիստ ձմերոցին ։ Պատուէր հրամանի տայր պատրաստական լինել կազմութը՝ առ ժամանակ գարնանայնոյն, և սակաւս 'ի գնդէն յաւագ նախարարացն՝ գործակից առ իւր թողոյր ։

Բռնանայր 'ի վր՝ ունելով զթագաւորանիստ տեղին ․ և գունդս գունդս արձակէր յաշխարհն սփռնեաց ․ առնոյր և աւերէր զբազում գաւառս ։ Այս այնպէս 'ի նեղ արկանէր զնա և զամ զօրսն որ ընդ նմայն էին, վի զէշս և զձիս մեռելոտիս առ սովոյն վտանգի անխտիր ուտէին ․ և բազում հարուածս հասուցանէր 'ի վր ուրացելոյն վասակայ, մինչև ժողով ոյ եպիսկոպոսացն և ամ ուխտ քահանայութեանն՝ գառնապէս արտասուս խնդրեցանէին 'ի վր հառաչոր վշտացելոցն ․ որ բոկ և հետի վարէին զնոս և զկանայս փափկասունս ․ և բազում տղայք զքարի հարեալ ընկեցեալ յանգս ճանապարհաց ։

Որբև այս ամ աղաղութի լինէր երկնեղածացն ոյ, ամ եպիսկոպոսք և երիցունք՝ պատուէր հրամանի տուեալ աշխարհին, զողջոյն ումին քաղցի՝ պահօք և աղօթիւք առնել մեծապէս

պէս խնդրուածս առ նմ . և զոմն պատերազ-
մացն յաջողութե՛ խառնել 'ի նր ումն յայտ-
նութե՛ն քնի , զի անխափան կացցէ մեծ մի-
շտակարանս այս ընդ նծ այլն անանց ամնին .

Նաւ զայն զայս նմ այցելութիս այ՝ որ 'ի վր
Հայոց աշխարհին մեծապէս երևեցաւ , գրեցին
նր եպիսկոպոսքն և ետուն տանել յաշխարհն
յունաց 'ի մեծ քաղաքն՝ առ նր ուխտ եկեղե-
ցւոյն , զի և նոքա աղօթս առնելով խնդրես-
ցեն յայ , զի ողջ և սկաւքս , 'ի նմին և կատա-
րեսցուք . Նաւ զնն յառաջին կայսերացն պար-
կաց լուծեալ և ածեալ զառաջեաւ նախարա-
րացն , խօսէին ընդ նմա և ցուցանէին զնմ
մխատն որ եղև . կամ աշխարհացն աւերել . և
կամ զօրացն արքունի հարկանել . և կամ որ այլ
իրք առաջոյ լինելոց էին .

Նաւ իբրև զայս նմ բովանդակ ցուցանէին
նմա , միաբան լինէր ամբաստան զերկոցունց
կողմանցն . զառաքինեացն և զհետս կացելոցն ,
ողջ զօր և տարապարտուց նեղեաց զնս 'ի Հայ-
րենի օրինացն յետս կալ . Նաւ զխաբէութիւն
ապստամբն վասակայ , թէ որդ Հայոց բանիւ խա-
բեաց զթագաւորն յանձն առնուլ զմոգութիւն .
իբրև չէր ուրուք ընդ նմա բանս եդեալ , նա
յանձնէ սուտակապաս լինէր . Նաւ իբրև լուաւ
զայս նմ խմացուցին նմա , արձակեցին զնա
Հրեշտակութբ յաղերսաբանութիւնս 'ի Հնարս
Հայթայթանաց , թերևս կարասցեն 'ի մեծ նե-
ղութէն զողանալ զեղբարս իւրեանց .

Այլ առ նա՝ անօրէնն վասակայ գուժկանքն
յառաջագոյն հասեալ էին պատմելով զաղէտս
տարակուսանացն՝ զոր անցուցեալ էին ընդ զօրան

ար

արքունի . և ամենայն ամբաստանութիւն 'ի մէջ ուխտ եկեղեցւոյն՝ կրթեալ էր . քանզի այն իսկ կամք էին սաստ անօրէնին , եթէ զմիաբանութի եպիսկոպոսացն քակել կարասցէ 'ի նախարարացն . Նա զայն ոչ էր տեղեկացեալ նոր տակաւին , եթէ ոգի և մարմին բաժանիցին առ ժամանակ մի՝ գոյ տեւանել 'ի բնութիւս . այլ որ սիրով միայն յուխտ մտեալ է , այսմ անհնար է լինել .

Արդ՝ երթեալ այրն 'ի տեղի ձմերոցին , պատմեաց զայս ամենայն յականջս թագաւորին . շարժեալ դողացոյց՝ և յամենայն զօրութենէ պակասեալ գտաւ . մանաւանդ զի յորմելից պատերազմէն կոր 'ի կոր՝ և ոչ բարձրագլուխ էր դարձեալ . Իբրև ստուգեալ հաստատեաց 'ի վերջին հրեշ տակէն՝ որ եհաս առ նա , զամենայն վնաս իւրոյ գործոյն զխորհրդակցօքն արկանէր , և անդէն շիջանէր 'ի բազմաց բորբոքմանէն . Քանզի խցան բերանք չար խրատատուացն , որ անդադար յորդորէին զնա 'ի գործ դառնութեան . Խոնարհեցաւ 'ի բարձր հպարտութենէն , և ըզվայրենացեալ սիրտն դարձոյց 'ի մարդկային բընութիւն . Հայեցաւ և ետես զինքն լի տկարութեամբ . Գիտաց եթէ զամենայն զոր ինչ կամի առնել , ոչ կարէ կատարել . վասն այսորիկ և դադարեաց 'ի յանդուգն յարձակմանէն , և լռեցոյց զմոլեգնաբար գոչումն .

Նա որ մեծաբարբառ ձայնիւ որոտայր , և ես ահագին հրամանօքն զհեռաւորս և զմերձաւորս առ հասարակ դողացուցանէր , սկսաւ քաղցր և աղերս բանիւք խօսել ընդ ամենեսին և ասել , զի՞նչ վնաս գործեալ է իմ , և կամ զո՞ր յանցանս յանցուցեալ է իմ , կամ առ ազգս , կամ առ լե-

զուս

զուս, և կամ առ անձն իւրաքանչիւր։ Ո՛չ ահա բազում ուսմունք են յաշխարհիս արեւաց, և իւրաքանչիւր պաշտամունք յայտնի են։ Ո՞ նեղեաց պնդեաց դարձուցանել 'ի մի օրէնս մոլութե̃։ Մանաւանդ վր̃ օրինաց քրիստոնէութե̃, ո̃պ հաստատուն և ճշմարիտ կացեալ յիւրեանց դենին, նոյնպէս և առ մեզ՝ լաւագոյն քան զայլ կեշտան նոցա երևեալ են։ Եւ բեծ իսկ ո՛չ ոք կարէ գտանել ընտրեալ օրինաց նց̃. այլ զոյգ և հաւասար համարիմ դենիս մաղդեզանց. ո̃պ և յարգեալ իսկ էին նոցա առ նախնեօքն մերովք, զոր և ես ինձէն իսկ յիշեմ առ հարբն իմով՝ որ նստէր 'ի մեծ գահիս յայսմ։

Յորժամ սկսաւ ընդունել և քննել զա̃մ ուսմունս, և հաստատութե̃ 'ի վր̃ եհաս. առաւել վեհ գտանէր զօրէնս քրիստոնէից քան զա̃մցուն. վր̃ այնորիկ մեծարեալք և պատուեալք շրջէին 'ի դրան արքունի, և առատաձեռն պարգևօք երահք լինէին 'ի նմանէ. և համարձակութե̃ շրջէին ընդ ա̃մ երկիր։ Նաև որ գլխաւորքն էին քրիստոնէից, զոր եպիսկոպոսքն անուանեն, ընծայից և պատարագաց արժանի առնէր զնո̃. և իբրև հաւատարիմ ոստիկանս՝ յանձն առնէր նց̃ զհեռաւոր մարզն. և ո՛չ երբէք սխալ լինէր մեծամեծ իրացն արքունի։ Եւ դուք զմի զայն ո՛չ երբէք մերժեցէք, այլ հանապազօր ձանձրացուցէք զլսելիս իմ խօսելով զնոցանէ զա̃մ չարութի։ Տեսանէ՞ք, զի ետուք ինձ գործել՝ զոր ինչ ո՛չ կամէի. և եղէն ինձ մեծամեծ վնասք 'ի սահմանս 'ի մէջ երկուց անհաշտ թշնամեացն։

Եւ

Եւ մեք դեռ 'ի հեռաւոր ճանապարհի , և ո՛չ մի ինչ գործ պատերազմի 'ի գլուխ երթեալ· և դուք աստէն յիմում տանս յարուցէք 'ի վ՟ր իմ պատերազմ , որոյ չարագոյն ևս լինելոց է կատարած իւր քան զարտաքին թշնամեացն ։

Զայս ամ՟ և առաւել քան զայս խօսէր ընդ ամ՟ աւագանին · և զնոսա յանցանացն արկանէր զմոգպետաւն և զմոգօքն ։ Եւ ամ՟ փշուրիքն և պատուականն նախարարքն՝ որ նստէին յատենին՝ և ունէին դնէին յեղյեղուկ լեզուի նո՟ , ամաչե-ցեալ կորանային և ընդ երկիր պշնուին , և զգլուխս 'ի վեր ո՛չ կարէին ամբառնալ ։

Բայց սակաւք 'ի նոցանէ՝ զմիտս հաճելով ասէին , այո՛ քա՛ջ և մեծ արքայ , այդ այդպէս է զոր ասացերդ , բայց և արդ կարես զամե-նայն ուղղութ՟ վճարել · չէ՛ք այն ոք , որ ըստ քո կամս արտաքս կարէ ելանել , զի տուեալ է քեզ յա՟ծոցն ։ Զամ՟ զոր կամիս՝ կարես առ-նել · մի՛ նեղեալ տագնապիր յանձն քո՝ և հար-կանէր զմիտս մեր ամ՟ցուն · թերևս և դիւրին ևս իցեն հնարք իրացդ կատարածի ։ Երկայնա-մի՛տ լեր , և համբերութ՟ անդրէն դողացո՛ զքրիստոնէութ՟ մարդկանդ , և դոքօք զստամ-բակս ածես 'ի հաւանութ՟ ։

Հաճո՛յ թուեցաւ բանն առաջի թագաւո-րին · և անդէն փաղփաղուկ կոչէր զառաջեա-յամ՟ ազգացն՝ որ 'ի զօրուն էին և ունէին ըզ քրիստոնէութ՟ին , և բռնաբար արգելեալ էր զնո՟ , զի մի՛ ոք իշխան լիցի յանդիման պաշտել զա՟ծ ։ Քանզի և որք ընդդիմացան , չարչարեաց և արգել 'ի նոցանէ զյայտնի պաշտօնն · և ոմանց ոմանց ակամայ ետ երկրպագանել արեգական , և նըս-

տայց

տայց 'ի սուգ տրտմութե՟ զա՟մ զօրականն ։ Իսկ այն որ հրամայեր՝ անդէն համարձակութբ՟ ըստ առաջին կարգին հաստատուն կալ յօրէնս քրիստոնէութեան ։

Իսկ որ յանցաւորքն էին, ոչ կամէին փողփողակի առանց մեծի ապաշխարութե՟՝ գալ և խառնիլ 'ի կարգ քրիստոնէութե՟ ։ Հրամայեր Թագաւորն զի ըանի կոչեցին և տարցին յեկեղեցին իւրեանց ։ Նա երիցանցն համարձակեր, ա՟պ զիա՛րդ և գիտիցեն ըստ կարգին իւրեանց՝ արասցեն ։ և զհատեալ ուձխկան կարգեր անդրէն իւրաքանչիւր ։ և զարգելեալ բաղմականսն 'ի նոցանէ՝ 'ի տեղի հրամայեր մատուցանել ։ և հանապազորդ յարքունիս մտանել՝ ոչ արգելույր զնո՟ ։ և զա՟մ որ զիարդ ինչ և կարգք էին յառաջագոյն՝ անդրէն յօրինէր ։ խոնարհեր և խօսէր ընդ նո՟ սիրով ըստ առաջին սովորութեանն ։

Նա իբրև զայս ա՟մ արար և կատարեաց յանդիման նց՟, թողութե՟ հրովարտակ առաքէր ը՟ ա՟մ երկիր իշխանութե՟ տէրութե՟ իւրոյ վասն քրիստոնէից ։ եթէ 'ի կապանս ոք կայցէ, յարքունի հրամանէ արձակեալ լիցի ։ և եթէ ինչք ուրուք յափշտակեալ իցեն, դարձցին անդրէն ։ Այնպէս երկիրք՝ եթէ հայրենիք՝ եթէ պարգևականք՝ եթէ քաղաքգինք, և հանեալ ուրուք իցէ, շնորհեցաք զի դարձցին ։

Նա իբրև այսմ ա՟մի զնո՟ տեղեակս առնէր, խնդրեր և 'ի նոցանէ վկայութի՟ հաւատարմութեամբ յերկիրն հայոց ։ Նա երդմամբ յուխտ մտանէր առաջի նց՟ հաստատութբ՟ ա՟մ մեծամեծաց իւրոց, եթէ ոչ յիշեցից ամենևին զքէն

վրի

վրիժուցն խնդրելոյ ։ Որպէս ունէիք յառաջ ճշմարտութե՟ զօրէնս ձեր, առաւել պատուհետև կալարուք ․ բայց միայն 'ի ծառայութենս մերմէ մի՛ ելանիք ։

Զայս ամ՟ գրեր և ցուցանէր յերկրին Հայոց՝ և 'ի բազում յայլ աշխարհս, որ ունէին զօրէնս քրիստոնէութե՟ ։ Այլ ինքն գաղտ խո֊ րամանկեալ, փութապէս դեսպանս արձակէր առ մարկիանոս կայսր ։

Այլ իբրև ստուգեալ ճշմարտեաց՝ եթէ հա֊ ստեք 'ի բաց կացին ձեռնտու լինել քրիստոնէու֊ թեանն՝ ոչ զօրու օգնականութեամբ և ոչ այլ իրօք, դարձեալ անդրէն 'ի նոյն կարծիս մո֊ լորութե՟ շրջեցաւ ․ և զյաջողութի՟ իւրացն՝ 'ի ձեռն իւրոց պաշտօնէիցն համարէր ․ և այնպէս ածէր զմտաւ, եթէ ըստ առաջին կարծեացն կատարեսցէն զամ՟ ։

Իսկ Հայք թէպէտև ընկալան զգիրն խա֊ բեբայ ողոքանաց թագաւորին ․ որ 'ի վերոյ ու֊ նէր զաւետիս կենաց, և 'ի ներքոյ զդառնութի՟ մահու՝ զարմացեալ ընդ թերի խորհուրդսն՝ ա֊ սէին ցմիմեանս ։ Բանի՞ լիրբ է խորամանկ չարութի՟ նր՟ ․ զի երկիցս և երիցս զփորձ ա֊ ռեալ կշտամբեցաւ, և ոչ ամաչէ ․ նաև տե֊ ղեակ եղեալ մերոյ անքակ միաբանութե՟ս, տա֊ կաւին լրբի և լինի ․ զհետ մտեալ՝ կամի զմեզ լքուցանել ։

Իսկ մեք մի՛ հաւատասցուք անհաստատ հրա֊ մանի նր՟ ․ զի զո՞ր բարեգործութի՟ տեսաք առ ամ՟ եկեղեցիս՝ որ են յաշխարհին պարսից ։ Զի որ ինքն իւր չար է, այլում բարի ոչ կարէ լի֊ նել ․ և որ ինքն ընդ խաւար գնայ, այլում ոչ

առաջ

առաջնորդէ ճշմարտութեան լուսով ։ Որպէս զի չէք յանխրատութենէ ապականութիւն և 'ի սուտ-թենէ ճշմարտութիւն, այնպէս և ոչ 'ի խաւա-ւէր մնայ անեկալութիւն խաղաղութեան ։

Նա մեք ապրեսցուք զօրութեամբ նորա և հաստա-տեսցուք հաւատովն 'ի յոյսն քո, որ եկն և էառ 'ի նմին կուսէն մարմին ըստ մերոյ բնութեան, և միացեալ անքակտանելի աստուածութեամբն, ընկալաւ զչարչարանս մեղաց մերոց 'ի մարմինն իւր ։ և նովին մարմնովն խաչեցաւ և թաղեցաւ և յա-րուցեալ երևեցաւ բազմաց, և վերացաւ յան-դիման աշակերտացն առ հայր իւր, և նստաւ ընդ աջմէ զօրութեան, զնոյն հաւատամք աստ-ուած ճշմարիտ ։ և նմին ամէն ունիմք փառք հօր և զօրութեան գալ յարուցանել զամենայն ննջեցեալս, և նորոգել զհնութիւն արարածոց ։ առնել հատու-ցումն յանխնելից 'ի մէջ արդարոց և մեղաւո-րաց ։

Արդ՝ ոչ պատրիմք իբրև զտղայս ։ և ոչ մո-լորիմք իբրև զանուսեալս ։ և ոչ խաբիմք իբրև զոգեւսս ։ այլ պատրաստ եմք ամենայն փորձութեանց ։ Այլ աղաչեմք զաստուած և անդադար խնդրեմք 'ի բազում ողորմութենէ նորա, զի յորում սկսաք, 'ի նմին և կատարեսցուք քաջութեամբ և ոչ վատու-թեամբ ։ Քանզի արդ արևելք և արևմուտք զխոստացեալն զձեզ աստուածամարտ լինել, և զմեզ զուր ապաւինել 'ի վերայ ամենայն վտանգից մերոց ։

Վկայ են մեզ երկինք երկնաւորօքն, և երկիր երկրաւորօքս, եթէ չեմք ինչ մեղու-ցեալ և ոչ 'ի միտս մեր անգամ ։ և 'ի վերայ պար-գևաց և բարիս առնելոյ մեզ, զճշմարիտ կեանս մեր կամին 'ի մէնջ հանել ։ որում չէք հնար և

պղ մի՛ լիցի ։ Իսկ արդ մի՛ հաւատացուք ա-
նորժան բերանոյ նր ։ որ ասիցէր չարաչար յու-
րացութի , և այսօր առանց մի ինչ բարիս գոր-
ծելոյ՝ լիցի նա քարոզիչ աւետեաց , և որ հայ-
հոյէրն զՔն , և ուրացուցանէր 'ի նմանէ զնմ
հաւատացելոյս , այսօր ակամայ խոստովանու-
թեամն ոչ կարեմք վարվարանելի յանձն առնուլ ։

Այլ որ երդնուլն 'ի սնոտի պաշտամունս իւր
մոլորութեն՝ անցուցանել զնմ չարչարանս ընդ
նր պաշտօնեայս եկեղեցւոյ , արդ եկեալ գո-
վանալով զոհութի մատուցանէ , և կամի զնմ չա-
րութին 'ի մեզ հեղուլ ։ Մե՛ք այդմ հաւատամք ,
և ոչ զատա հրաման յանձն առնումք ։

Իսկ նա իբրև ետես եթէ ոչ կարաց քա-
կել զհաստատութի միաբանելոցն , յայնժամ
քակեաց յիւքենէ զծերն լի դառնութե , յորում
հանդուցեալ էր սատանայ զօրութբ իւրով , և
բազում անձինս գործեալ էր նովաւ · որոյ կերու-
կուր կամօք իւրոց էր 'ի մանկութէ՝ անարատ
մարմինք սրբոց , և ընկերեր անյագութե նորին՝
արիւն անմեղաց ։

Յաւելոյր ևս 'ի վն նր չարութեն՝ և զխոր
մահարեր հրամանն ։ Պաւնդոս գաւնդոս յնմ
աշխարհացն գումարէր ընդ նմա · և բազում
երամակս փղաց յղէր ընդ նմա ։ Հանեալ մերձ
'ի սահմանս հայոց , մտանէր 'ի քաղաքն փայտա-
կարան · և զզօրսն ամենայն սփռէր տարածանէր
շուրջ զքաղաքաւն՝ առ 'ի զգուշութի պատրաս-
տութեան իւրոյ չարահնար խորհրդոցն ։ Այլ
յամուր որջն մտեալ հին վիշապն չարաթոյն՝
բազում կեղծաւորութբ զխնքն թագուցանե-
լով յանէրկիւղութե · հեռաւորացն ահաբեկն


ձայ

ձայնիւ սաստէր , և 'ի մերձաւորսն սողելով իբրև զօձ փչէր։

Այս էր իշխան և հրամանատար ամենայն տէրութեանն պարսից , որում անուն էր Միհրներսեհ . և չէր ոք ամենևին որ իշխէր ըստ ձեռն նորա ելանել . ոչ միայն մեծամեծք և փոքունք , այլ և ինքն իսկ թագաւորն հրամանի բերանոյ նորա անսայր . որոյ և զձախող իրացն իսկ բուռն նորա հարեալ էր ։

## ԳԼ. Դ.

### Չորրորդ՝ վասն երկպառակութեան իշխանին ախոյեանց և ընկերաց նորա ։

Մինչև ցայս վայր՝ ոչինչ կամէի զանգիտել և պատմել զհարուածս աշխի մերոյ . որ յարտաքին թշնամեաց ճշմարտութեան՝ չարաչար յարեան 'ի վերայ մեր։ Որք սակաւագոյնք հարին զմեզ , և յոլովագոյնք հարեալ գտան 'ի մէնջ ։ Քանզի դեռևս միաբանք և հաւասարք էաք . Թէպէտև ոմանք 'ի ծածուկ ունէին զերկմտութիւն նենգութեան , սակայն յարտաքնոցն՝ ահաւոր երևէր միաբանութիւն . որ և յերկուս և յերիս տեղիս ոչ կարացին կալ առաջի ։

Արդ՝ յայսմ հետէ և անդր՝ ուր պղծեալ անկանի երկպառակութիւն 'ի ներքս ընդ քակել միաբանութեան՝ և երկնաւոր առաքինութիւն հեռանայ , և անձնիշխանիր լինելով՝ յոյժ բազմանայ լալումն ողբոյ ։ Քանզի հատեալ անկեալ անդամքն՝ որ յառաջագոյն նորուն ոչ մարմնոյն էին , դառնայ մարդ-

մարդ յարատաւս առաջի մերձակայ դիտականն. Ես առաւել ընու դատանութբ 'ի վր այնորիկ՝ որ յոգի և 'ի մարմին առ հասարակ դիտկնանոյ: Նաւ եթէ 'ի վր մոյ անձին այսպէս, որչափ ես առաւել 'ի վր ողջոյն ազգի մոյ: Ն. մ յայամ տեղամ ոչ միայն 'ի վերայ մոյ ազգի է ողբումն մեր, այլև 'ի վերայ ազգաց և աշխարհաց. զոր ես յառաջ մատուցեալ աստցից ըստ կարգի, Թէպէտև ոչ խնդութե մոք. ահա ծառազրեմ զբազումս՝ որք կորեան մանք առ 'ի ճշմարիտ կենացն իւրեանց, և պատճառք եղեն բազմաց կորստեան. մանց երևելեացն միայն, և այլոց երևելեաց և աներևութից: Նաւ այն ես չար է քան զամ. դառնն զոր բացին կորստեան, այլ միայն է կարողութի փակել զնա. այլ ըստ մարդկան հնարս ահս անցանէ:

Ն. մ անօրէն միրներանէ՞ քանզի յառաջագոյն առաւգեալ դիտէր զամբարշտութն վատակայ, և յայնմ ժամանակի ես յղէր և կոչէր առ ինքն. այլ և նր իսկ յառաջագոյն զատեալ և հաստեալ էր 'ի միաբանութեն հայոց: Նոկն և յանդիմանն եղև, և առուդէր նմա զիւր հաւատարմութն, և զհայոց անխրա ապատամբութն: Յաւել և պատմեաց ես առաւելաբանութբ զոր ինչ ոչ էր գործեալ հայոց. և կամէր ընտանեբար ը միտ մտանել անօրինին:

Բայց նա՝ թէպէտև 'ի ներքոյ յոյժ դըժրոյէր զնա, այլ արտաքին դիմօք մեծարեաց զնա, և եդ առաջի նորա զմեծամեծ պարգևս երկրաւորս, և խոստացաւ նմա իշխանութիւն աւելի քան զոր ունէրն. և հայեցոյց զնա 'ի կարծիս մտաց, որ 'ի վեր է քան զիւր տէրութիւնն

թիւնն

թիւնն. Իբրու թէ տայր նմա հասանել մինչև
'ի Թագաւորական վիճակն. բայց միայն իրացն
հնարս խնդրեացէ, թէ ո՛րպ քակտեսցի միաբա֊
նութիւն ուխտին հայոց, և կամք Թագաւորին
կատարեսցի յաշխարհին հայոց։

Այլ իբրև յանձն էառ զամ ինչ երթալ զկնի
կամաց նր, զխաչ և ծերն դաւանեցեալ՝ եթէ
թմբրեալ և ցնորեալ և քակտեալ է 'ի հաստա֊
տութե միաբանելոցն, յոյժ մխիթարեցաւ 'ի
միտս իւր ուրացեալն. և ած զմտաւ եթէ զամն
այսպէս կարասցէ առնել յանդգնեալ կորուսան։
Այս իւրոյ հնարագիտութեան տայր զխմատու֊
թիւնն։ Այլ այնմ ո՛չ էր տեղեակ՝ եթէ նորա
իւրովի զատեալ և որոշեալ է զանձն իւր 'ի սբ
եկեղեցւոյն, հեռացեալ և օտարացեալ 'ի սի֊
րոյն քի։

Քանզի մտացօնք եղեն նմա զալուսան որ֊
դւոյն այ, և ո՛չ յիշեաց զքաղցրութի սբ աւե֊
տարանին. ո՛չ 'ի սպառնալեացն զանգիտեաց, և
ո՛չ յաւետեացն մխիթարեցաւ։ Մոռացաւ զաւա֊
զանն՝ որ ծնաւ զնա. և ո՛չ յիշեաց զընկալուչ
սբ հոգին՝ որ լուսաւորեաց զնա։ Մոռացեաց
զմարմինն պատուական՝ որով սնեցաւ. և
զարեանն կենդանի՝ որով քաւե֊
ցաւ 'ի մեղաց։ Մերժեաց զգիր որդեգրու֊
թեանն, և իւրովք ձեռօք խորտակեաց զհաւա֊
տարուն կնիք մատանւոյն։ Այլ 'ի թուոյ երա֊
նելեացն, և ապստամբեցոյց ընդ իւր զբազումս։
Զեռան արկ կամակորութե, և եմուտ յորդե֊
գրութի դիցապաշտութե։ Այլև առան չարի,
և ելից զնա սատանայ ամ խորամանկութեամբ։
Դի ձեռն էառ իբրև զխահան, և տգաւ զնա

իւ

իբրև զրահս, եղև իբրև զինուոր կատարեալ կամաց նր․ և մարտեաւ հնարիւք ընդ իմաստունս, և յայժ խորամանկութե ընդ գիտունս, յայտնի՝ ընդ անմեղս, և՚ի ծածուկ՝ ընդ խորհրդականս։ Ձեռն էարկ և եհան զբազումս ՚ի գնդէն քի, և խառնեաց ՚ի գունդս դիւաց։ Եւ յայլ բազում տեղիս գողաբար սողացաւ և եմուտ ՚ի մէջ ամրացելոցն, և խրամատեաց յափշտակեաց էառ և եհան յայտնութե զբազումս յաղատաց, և զբազմագոյնս ՚ի շինականաց, և զայլս ոմանս յանուանեալ քահանայից։ Որոց անուանքն են այս՝ գործակցաց նր։

Աշխանն ռշտունեաց՝ արտակ անուն։ Աշխանն խորխոռունեաց՝ գադիշոյ անուն։ Աշխանն վահևունեաց՝ գիւտ անուն։ Աշխանն ամատունեաց՝ մանաճիհր անուն։ Աշխանն բագրատունեաց՝ տիրան անուն։ Աշխանն ապահունեաց՝ մանէճ անուն։ Աշխանն գաբեղինաց՝ արտէն անուն։ Աշխանն ակէոյ՝ ընձիւղ անուն։ Աշխանն ուրծայ՝ ներսեհ անուն։ Աշխանն միւս ևս պալունեաց՝ վարազշապուհ անուն։ Սեպուհ մի ամատունեաց՝ մանէն անուն։ Բազում և այլ ազատ մարդիկ՝ զոր ստանիկս անուանէին՝ յորջունի տանէ, և զխուր աշխարհն բովանդակ ապստամբեցոյց յուրացութի․ ոչ միայն ըստ աշխարհական կարգին, այլև զբազումս ՚ի նր ուխտէ եկեղեցւոյն։ Մանաւանդ սուտ երիցամբքն որով գործէր զչարիսն։ Երէց մի զանգակ անուն, երէց մի պետրոս անուն, սարկաւագ մի սահակ անուն, սարկաւագ մի մուշէ անուն, զորս յղէր առ անմեղ մարդիկ, խաբէր և պատրէր նր աւետարանաւն․ Երդուին և ասէին՝ եթէ

եթէ 'ի թագաւորէն շնորհեսցի ամենեցուն քրիստոնէութ՟ի։ Եւ այսպէս խորամանկ խաբէութ՟բ հանէին զբազումս 'ի ս՟բ միաբանութենէն, ածէին և խառնէին 'ի գունդս ուրացողացն։ Եւ ժողովեաց զա՟մ զպայթակղեալս, և արար գունդ զօրաց բազմաց։ Գրեաց և եցոյց մեծ հազարապետին զբազումս 'ի նոցանէ յականէ անուանէ. և զիւր քաջու՟ի արիութեն՝ մեծապէս պարծելով, ո՟պ աշակերտեացն 'ի մոլար խաբէութին, և բաժանեալս և երկցեղս երևեցոյց զզօրսն հայոց։ Եւ իբրև այս ա՟մ չարիք յաջողեցաւ նմա, քակեաց և զմիաբանութի աշխարհին վրաց 'ի հայոց. և աղուանիցն ո՟չ ետ յառաջ խաղալ. և զաշխարհն աղձնեաց՝ ըստ նմին իսկ օրինակի յետս կալաւ։ Գրեաց և հրովարտակս և յղեաց յաշխարհն յունաց, ցուցանելով նշ՟ այլ ըստ այլ ստութ՟բ՝ առ այլ մի, որոյ անուն վասակ մամիկոնեան. որ կայր 'ի ծառայութե յունաց։ Եւ 'ի թշուառութե ժամանակին՝ այրն այն սպարապետ էր ստորին հայոց, և հաւատարիմ էր զօրացն հոռոմոց 'ի սահմանին պարսից. և արտաքոյ էր օրինացն ա՟յ գործովք իւրովք։ Եղբայր այս վասակ զայն վասակ՝ իւր գործակից 'ի մեծամեծ չարիսն, զոր միաբանեցին երկոքին։

Գրէր և ցուցանէր հանապազ, իբրու թէ ա՟մ հայք պնդի իւր միաբանեսցան. և զնոյն գիր մեծաւ զգուշութ՟բ ներքին վասակն տայր տանել 'ի թագաւորանիստ քաղաքն կայսեր. մինչև զս՟բ եպիսկոպոսացն զմիտսն ուծացոյց 'ի նոցանէ. և զա՟մ զօրսն յունաց՝ յերկբայս արար 'ի ս՟բ ուխտէն։ Մանաւանդ զի 'ի ձեռն սուտ

քա

քահանայիցն պատուէր, իբրև ճշմարիտ մարդոլք աւետարան հանդերձ խաչիւ տայր տօնել, և զա̃մ իւր սատանայական խորհուրդն նոքօք ծածկէր ։

Դնէր զինքն յա̃ծպաշտութե̃ կարգի, և զա̃մ կողմն ուրացելոցն ինքն հաստատէր՝ առաւել քան զզօրն հայոց . երդնոյր և հաւատարմացուցանէր, և զա̃մ հրամանս թագաւորութեանն յարքունուստ ցուցանէր ։ Եւին էին և կամք յունաց աշխարհին լինել զա̃մն մխորժելով, այլ ՚ի ձեռն նո̃ր առաւել ևս ՚ի նոյն յեղելով տապալեցան ։ Այնպէս առնէր և ը̃ ա̃մ կողմն աշխարհին ամրականացն . ՚ի տմորիս, և ՚ի կորդրիսն, յարձախ, յաղուանս, ՚ի վիրս, և յաշխարհն եգերեաց ։ Յղէր և պնդէր՝ զի և ապնջականութե̃ զոք արժանի մի՛ արասցեն ։

Եւ ըստ մեծութե̃ չարութե̃ նո̃՝ առաւել ևս ժամանակն եբեր նմա զյաջողութի̃ իրացն . զի ամենևին արտաքուստ օգնական ոք ո՛չ գտաւ գնդին հայոց, բայց յայնց հոնաց՝ որոց բանս եդեալ էր ։ Սակայն և վս̃ նց̃ կուտեաց այրուձի բազում արեաց . արգել և փակեաց ըզդրունս ելից նց̃ ։ Քանզի ո՛չ տայր ամենևին դադար թագաւորին պարսից, այլ յղէր և կոչէր զունդս բազումս ՚ի պահակն ճորայ . և զվրաց աշխարհն բովանդակ անդր գումարէր ։

Զզօրս լփնաց և ճղբաց և զվատն, զգուննս, և զդղաւորն, զխարսախարանն, զհեճմատակն, և զփոխան, և զփիւքունն, և զա̃մ զզօրսն, և զթաւախսարանն՝ զլեռնայինն և դաշտայինն, և զա̃մ ամրակողմն լերանց ։ Եւր՝ զոր կարասեաւ և մեծամեծ պարգևօք՝ առատաձեռն բաշխելով

լով զգանձն. և էր՝ զոր հրամանաւ Թագաւորին սաստիկ տագնապէր ։

Զայս ամ իբրև արար և կատարեաց ըստ կամաց Թագաւորին, որ ըստ օրէ գրէր և ցուցանէր մեծ հազարապետին պարսից. որ զօղեալ և Թագուցեալ էր 'ի քաղաքին փայտակարան ։

Համարձակեցաւ ապա այնուհետև և նա ցուցանել զինքն բազում ազգաց ։ Էր՝ որոց ահ արկանէր. և էր՝ որոց սիրով պարգևս բաշխէր ։ Կոչէր առ ինքն զվասակ՝ և որ ընդ նմայն էին իշխանքն ամենեքեան, բազում պարգևս յարքունուստ շնորհէր նց և զօրացն, որ 'ի նոցա բանի էին ։ Տանէր զառաջեաւ և զօրացեալ երիցունսն. ցուցանէր և հաստատէր և յայտ առնէր, եթէ նոքօք որասացայց զնս քակտեալ 'ի միաբանութենէ քրիստոնէութեն ։

Իսկ հազարապետն իբրև զայն լսէր. յոյժ շնորհակալ լինէր նմա և երիցանցն, և յոյս առաջի դնէր նց, եթէ լիցի մեր յաղթութին, զայլոց քահանայիցն զկեանսն դոցա շնորհեցից. և զմեծ վաստակս դոցա՝ ցուցից Թագաւորին ։

Նա այսպէս շարժեաց շփոթեաց զաշխարհն հայոց, մինչև զբազում եղբարս հարազատս քակեաց 'ի միմեանց ։ Նա ոչ եթող միայն զհայր և զորդի. և 'ի մէջ խաղաղութե արար խռովութիւն բազում ։ Նա անդէն իսկ յիւրում աշխարհին՝ երկու եղբօրորդիք էին նր 'ի տէր ուխտին առաքինութե. գրեաց և եցոյց վասն նց յարքունիս, և ետ իշխանութի 'ի վր կենաց նց. մերժեաց և եհան զնս յաշխարհէն, զի մի՛ դարձցին անդրէն. Հալածեաց և փա-



խոյց

խոյզ զամ զմիայնակեացսն յաշխարհէն, որ հայ-հայէին զանդարձ անուարշութի նր։

Արար և կատարեաց զամ զչարիսն ընդդէմ ճշմարտութեան։ Եւ զոր ինչ ոչ գիտէին անօրէն հեթանոսքն, նա իմացուցանէր վասն ուխտին քրիստոնէութե, թէ որպիսի հնարիւք կարասցէ բառնալ յաշխարհէն հայոց։ Զայս ամ չարիս իբրև եւես միհներսեհ, տեսեալ քան յանձն իւր 'ի նա էր յուսացեալ։ Հարցանէր և ըն-տուգէր եթէ քանի՞ այր կայ 'ի հայոց աշխար-հին 'ի գնդին վարդանայ ընդ ամ բազմութին։ Եւ իբրև լուաւ 'ի նմանէ՝ եթէ աւելի քան զվաթսուն հազար են, խնդրէր և տեղեկա-գոյն վս իւրաքանչիւր անձին քաջութե, և կամ քանի՞ այնոքիկ իցեն՝ որ սպառազէնք ի-ցեն. և կամ քանի՞ այնոքիկ իցեն՝ որ մերկ տանց զինու աղեղնաւորքն իցեն։ Նոյնպէս և վս վահանաւոր հետևակացն։

Եւ իբրև ստուգեաց զթիւ համարոյ բազ-մութեան, տեսեալ և փութացաւ ուսանել. եթէ քանի՞ իցեն պարագլուխք քաջ նահատա-կացն, զի երկու ընդ միոյ պատրաստեսցէ առ մի մի 'ի նոցանէ. թող զայլն ամ։ Այլ և դրօշից անգամ իւրաքանչիւր տեղեկանայր 'ի նմանէ։

Եւ եթէ քանի՞ գունդք զօրքն բաժանես-ցին. և ո՞ ոք 'ի նոցանէ սաղարք լինիցին. և ո՞ր զօրագլուխ յորմէ կողմանէ 'ի ռազմ մտա-նիցէ. և զի՞նչ անուանք իւրաքանչիւր համ հազարացն իցեն, և քանի՞ փողահարք 'ի մէջ գնդին ձայնիցեն։ Պակի՞ն գործ իցեն արդեօք, թէ արձակ բանակիցեն։ Ճակատ առ ճակատ, եթէ համագունդ ընդ միմեանս դրդեսցեն։

Ո՞ որ 'ի նոցանէ յերկրպագս կայցէ . և կամ ո՞ որ զանձն 'ի մահ դնելով գուն գործիցէ ։

Այլ երբև զայս ա̃մ տեղեկացաւ 'ի նմանէ, կոչէր զամենայն զօրագլուխսն , պատուէր հրամանի տայր ա̃մցուն յանդիման նմա , զի խրատու նո̃ր լուիցեն ա̃մքն ։ Այլ զա̃մ զօրսն զօրագլխօքն հանդերձ յանձն առնէր առն միում յաւագացն , որում անուն էր մուշկաննիւսալաւուրտ ։

Այլ ինքն խաղայր գնայր յերկիրն արևելից . և յանդիման եղեալ մեծի թագաւորին՝ պատմէր զա̃մ անցս իրացն՝ և զիւր հնարաւոր իմաստութիւնն՝ և զվտանգս խաբեբայ հայթայթանս պատրանացն , ո̃պ զառաջինն զիւր ամբարշտութիւնն կամեցաւ ծածկել . այն զի քակեաց երկպառակութեաց զգունդն հայոց ։ Երբև լուաւ զայս ամենայն թագաւորն 'ի բերանոյ մեծ հազարապետին , դառնացաւ յանձն իւր և ասէ անուանս երդմամբ , եթէ ապրեսցի անօրէնն այն 'ի մեծ պատերազմէն , մեծաւ անարգանօք տամ ընկել նմա զբաժակ դառնութե̃ մահու ։

## ԳԼ . Ա .

### Հինգերորդ՝ յորդորական յորդորելոց ։

Մեծ է սէրն ա̃յ քան զա̃մ մեծութիւնս երկրաւորս . և այնպէս աներկիւղս առնէ զմարդիկ երբև զանմարմինն զօրս հրեշտակաց , ո̃պ և անդստին 'ի սկզբանէ է տեսանել ։

'Ի բազում տեղիս մարդիկ՝ որ սիրովն ա̃յ

բազում անգամ իբրև զինու վառեալք էին, ոչի՛նչ խնայեցին զանգիտելով իբրև զանարի վատասիրտս, կամ 'ի մահ անձանց, կամ 'ի յափշտակութի ընչից, կամ 'ի խողխողումն սիրելեաց, կամ 'ի գերութիւն ընտանեաց, կամ ելանել 'ի հայրենի երկրէն և անկանել 'ի լռութ-կութի օտարութե, առ ոչի՛նչ համարեցան զայս ամ անցս չարչարանաց. այլ միայն միաբանեալ ընդ այ, զի 'ի նմանէ միայն մի՛ գերեսցին, և քան զամ երևելի մեծութիւ՛ զնա բաւական համարեցան ընտրել 'ի միտս իւրեանց. և զուրացութե մեծութի չար համարեցան. և զմահն որ վս այ, անանց կենդանութի. և ծառայել յերկրի՛ ազատութի կենաց իւրեանց. և ընկենուլ զանձինս յօտարութի՛ ընտանի այ գիտացին. ուր և յայսմ ժամանակի տեսաք աչօք մերովք, զի զնոյն նահատակութի նահատակեցաւ և աշխարհս հայոց:

Քանզի իբրև ետես մեծն Վարդան զերկպառակութի իւրոյ աշխարհին, ոչի՛նչ թերահաւատեաց ոկարութե. թէպէտև յուզեալ գիտաց զբազում այլոց ևս երկմտութիւն, որ դեռևս ընդ նմա միաբանք էին:

Քաջալերեցաւ յանձն իւր, և քաջալերեաց և զզօրս իւր. քանզի ինքն իսկ դեռ բանացեալ ունէր զթագաւորանիստ տեղին միաբանութեամբ նախարարացն՝ որ ոչ քակեցան 'ի տր ուխտէն, հրաման տուեալ ամ զօրացն ժողովեալ յարտաքուստ քաղաք: Փոխանակ յետս կացելոցն՝ որ ելին զհետ իշխանին սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս 'ի տեղիս նց մատուցանէր. և զիւրաքանչիւր զօրս

տան

տան նց, զի դեռևս ինքն ունէր զնմ աշխարհն։

Այլ ամենեքեան փութով 'ի տեղի պատերազմին եկեալ հասանէին՝ իւրաքանչիւր զօրօք և ամ պատրաստութբ. նոքա և որ բունքն հաստատուն կացեալ էին 'ի տեղւոջն։ Ներշապուհ արծրունի։ և Խորէն խորխոռունի։ Այլ ինքն սպարապետն։ և Արտակ պալունի։ և Վահան ամատունի։ և Գիւտն վահեւունեաց։ և Թաթուլ դիմաքսեան։ և Արշաւիր արշարունի։ և Շմաւոն անձաւացի։ և Տաճատ գնթունի։ և Ատոմ գնունի։ և Խոսրով գաբեղեան։ և Վարէն սահառունի։ և Հմայեակ դիմաքսեան։ և Գաղրիկ դիմաքսեան։ և Ներսէհ քաջբերունի։ և Փարսման մանդակունի։ և Արսէն ընծայինն։ և Ամուկ ողկունի։ և Վրէն տաշրացի։ և Ապրամ արծրունեաց։ և Շախոռապետն արքունի։ և Խուրս սրուանձտեայ։ և Բողեանքն։ և Ակէացիքն։ և Տրպատունիքն։ և զօրքն Ռշտունեաց. և ամ գործակալքն արքունի։

Իւրաքանչիւր զօրու հանդերձ՝ սոքա ամքն համագունդ հասանէին 'ի գործ պատերազմի 'ի դաշտն աւարայր։ Այլ լինէր հանդէս համարուն վաթսուն և վեց հազար այր՝ ընդ հեծեալ և ընդ հետևակ։

Այլքն ընդ նմ և նրն Յովսէփ և Ղևոնդ երէց, բազում և այլ քահանայք, և ևս բազմագոյն պաշտօնեայք։ Քանզի ոչինչ զանգիտեցին և նոքա գալ ընդ նմ 'ի գործ պատերազմին. զի ոչ եթէ մարմնական համարէին ըզկռիւն, այլ՝ հոգևոր առաքինութե. ցանկացին մահակից լինել քաջ նահատակացն։ Սպա-

սպա

տպարապէտն խօսել միաբանութի՛ւն նախարարացն ընդ զօրսն և առէ, բազում պատերազմունս մղեալ է իմ, և ձեր ընդ իս․ է ուրեք՝ զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք՝ զի նոքա մեզ յաղթեցին․ և բազում այն է՝ ուր յաղթօղ գտեալ եմք և ոչ յաղթեալք․ և միանգամայն այն ամ՝ մարմնոյ պարծանք էին․ քանզի հրամանաւ անցաւոր թագաւորի մարտընչէաք․ Եւ որ փախչէր, վատանուն յաշխարհի երևէր, և անողորմ մահ ՚ի նմանէ գտանէր․

Իսկ որ քաջութի՛ւ յառաջ մատչէր՝ քաջանուն ազգի ժառանգէր․ և պարգևս մեծամեծս յանցաւոր և ՚ի մահկանացու թագաւորէն ընդունէր․ Եւ մեք իսկ աւասիկ յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէր և սպիս բազումս․ և բազում այն՝ քաջութե իցէ, որոյ առեալ է պարգևս մեծամեծս․ անարգ և անօգուտ զքաջութիւնս համարիմ, և առ ոչինչ զպարգևսն բազումս․ որ զի խափանելոց են ամէն․

Իսկ արդ՝ եթէ վասն մահկանացու հրամանատուին զայս արիութիւնս կատարեաք, որչափ ևս առաւել վասն անմահ թագաւորին մերոյ, որ տէր է կենդանեաց և մեռելոց․ և դատելոց է զամ մարդ ըստ գործոց իւրոց․

Ապաքէն եթէ կարի շատ յառաջ մատուցեալ ծերացայց, սակայն ելանելոց եմք ՚ի մարմնոյ աստի, զի մնացուք առ ած կենդանին՝ որ ոչ ևս ելանիցեմք ՚ի նմանէ․ Արդ աղաչեմք զձեզ քաջ նիզակիցք իմ, մանաւանդ զի բազումք ՚ի ձէնջ լաւագոյն են քան զիս արութի՝ և զահու ՚ի վեր ըստ հայրենի պատուոյն․ բայց յորժամ ձերով կամօք և յօժարութի՝ առաջնորդ

և

և զօրաւոր ձեզ կացուցէք , հեշտ և բաղձալի թուեսցի բանքս իմ 'ի լսելիս մեծամեծաց և փոքունց ։

Մ՚ի՛ երկուցեալ զանգիտեսջիք 'ի բազմութենէ հեթանոսացն . և մի՛ յահագին սոցա ահն մահկանացուի զթիկունս դարձուսջիք ։ Զի եթէ տացէ տէր յաղթութի 'ի ձեռս մեր, սատակեսջիք զզօրութի նոցա , զի բարձրասցի կողմն ճշմարտութե ։ Իսկ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց որ մահուամբ պատերազմիս , ընկալջիք խնդութեամբ սրտի՛ . բայց միայն 'յարութի քաջութեան՝ վատութի մի՛ խառնեսջիք ։

Մանաւանդ զի անմոռաց է ինձ յիշելով զիմ և զոմանց 'ի ձէնջ 'ի ժամանակի՝ զի զանօրէն իշխանն խաբեցաք և պատրեցաք իբրև զմանուկ մի տղայ անպիտան . իբրու այն թէ՝ 'ի վերին երեսս զկամս նորա ամբարշտութեն կատարեցաք , բայց 'ի ծածուկ խորհուրդս մեր՝ տէր ինքնին վկայէ մեզ , թէ ոչ անքակ կացեալ եմք 'ի նմանէ ։ Զոր և դուք ինքնին իսկ գիտէք . վասն սիրելեացն մերոց՝ որ 'ի մեծ նեղութեանն էին , հնարս խնդրեաք յանդորր հանել . զի նոքօք հանդերձ մարտ եդեալ կռուիցեմք ընդ անօրէն իշխանին՝ վասն հայրենի օրինացն ։

Իսկ իբրև նչ ոչինչ կարացաք օգնել , անհնար լիցի այս՝ եթէ վասն մարմնաւոր սիրոյ զանձ ընդ մարդոյ փոխանակեմք . Իսկ արդ յերկուս և յերիս կախեա՛լ՝ տէրն ինքնին մեծաւ զօրութեամբ օգնեաց մեզ . ոչ զանուն քաջութե ժառանգեցաք . զզօրսն արքունի չարաչար հարաք

րոք . և զմոգսն անողորմ սատակեցաք . և զպղծու-
թիւն կռապաշտութեն ՚ի տեղեաց տեղեաց սըր-
բեցաք . զանօրէն հրաման Թագաւորին եղծաք
ապականեցաք . զխռովութի ծովուն ցածուցաք .
լեառնացեալ ալիքն դաշտացան . բարձրադէզ
փրփուրն պայթեաց , գազանացեալ սրտմտու-
թիւնն դադարեաց .

Որ ՚ի վր ամպոց որոտայր , նկուն եղեալ
գտաւ ՚ի ներքոյ քան զամօրական բնութիւնն
ընդ մեզ խօսելով . Որ բանիւ հրամանաւ կա-
մէր զմեզ կորուսանել , և կատարել զչարութին
՚ի վր սբ եկեղեցւոյ . արդ աղեղամբ և նի-
զակաւ և սրով կռուի . Որ երբեմն զհանդերձ
կարծէր մեզ ունել [illegible] , արդ
երբեմն զգայն ՚ի մարմնոյ չկարէ շնչել . Թէպէս և
ոչ այլ կարացէ մինչև ՚ի կատարած . Քանզի
հիմունք նր հաստատութե եդեալ են ՚ի վերայ
վիմին անշարժութե , ոչ ՚ի վր երկրի՝ այլ ՚ի վեր
յերկինս . ուր ոչ անձրևք իջանեն , և ոչ հողմք
շնչեն , և ոչ հեղեղք յարուցանեն .

Այս մեք թէպէտև մարմնով յերկրի եմք ,
այլ հաւատովք յերկինս եմք շինեալ , ուր ոչ ոք
կարէ հասանել յանձեռագործ շինուածն քո .
Հաստատուն կացէք յանշուշտ զօրագլուխն մեր ,
որ ոչ երբէք մոռացի զգործ նահատակութեաս .
Ո՛վ քաջք՝ մեզ այս մեծապէս է՝ զոր կատա-
րեաց ած ՚ի ձեռն մերոյ բնութեաս , յորում և
զօրութիւնն այ մեծապէս երևի . Զի եթէ
զայլս կատարելով ՚ի վր ածային օրինացն պար-
ծանս անձանց ժառանգեցաք , և զքաջ անուն
ազգատոհմին մերոյ թողուք եկեղեցւոյ , և վար-
ձուց [illegible] ՚ի տեառնէ է՝ որ պահի ե-
րա

րաքանչիւր ումեք 'ի ձէնջ ըստ յօժարութեան սրտին և ըստ առաջարկութե՟ գործոց , որչափ ևս առաւել եթէ մեք մեռանիմք 'ի վ՟ր մեծի վկայութե՟ ա՟ն մերոյ յ՟ի ք՟ի · որում և երկնաւորք են ցանկացեալ եթէ գոյր հնար · և այս պարգևք ո՛չ ամենեցուն է՛ անկ , այլ որոց պատրաստի 'ի բարերար տեառնէն ։

Եւ մեզ այս ո՛չ եթէ յարդար գործոց ինչ պատահեաց , այլ յաննախանձ պարգևատուէն ։ Որպէս և ասէ իսկ 'ի ս՟բ կտակարանին · ուր առաւել եղեն մեղքն , անդէն առաւելան շնորհքն ա՟յ · և մեզ կարծ՛ քաջ 'ի դէպ ելանէ հրաման պատասխանւոյս այսորիկ ։ Որպէս առաւելապէս երևեցաք մարդկան ամբարշտեալք , նոյնին առաւելապէս երևեսցուք արդարացեալք՝ մարդկան և հրեշտակաց և հօրն ա՟մցուն ։ Զի ո՛ր օր լուեա՛ն ապաքէն զմէնջ մարդիկ 'ի գործ ամբարշտութեն , արտասուք բազում հեղան 'ի ս՟բ եկեղեցւոջն · և ևս բազմադոյն 'ի մէջ սիրելեաց մերոց ։

Նաև ընկերք մեր՝ որով սրտմտեալ սպանային մեզ · և մահ դատնութ՟ե 'ի վ՟ր կամէին հաստուցանել , և ծառայքն մեր սարտուցեալ փախչէին 'ի մէնջ ։ Եւ հեռաւորաց՝ որոց լուեալ էր զանուանն քրիստոնէութե՟ մերոյ , և քանզի ո՛չ էին տեղեակ խորհրդոցն մերոց , ողբ 'ի բերան առեալ անդադար աշխարէին զմեզ · և անգիտութ՟ե հայհոյութիս բազումս խօսէին զմէնջ ։ Եւ որ մեծն է քան զա՟մ սասացից · ո՛չ միայն մարդիկ յերկրի , այլև հրեշտակք յերկինս զերեսս իւրեանց դարձուցին 'ի մէնջ , զի մի՛ տեսուր դիմօք հայեսցին 'ի մեզ ·

Նաւ արդ եկն եհաս ժամանակ՝ զի զամենայն զկեղծ անունդ 'ի մէնջ 'ի բաց բարձցուք ։ Յայնժամ թախծեալ սգաւորք՝ իբրև յոգի և 'ի մարմին էաք տրտմեալք . և այսօր զարթուցեալք զուարթացեալք յերկնաւանն՝ առ հասարակ եմք ողջացեալ . քանզի և զբարերար տէրն ընդ մեզ տեսանեմք յառաջնորդութիւն ։ Չէ՛ մեզ մարդ զօրավար , այլ զօրագլուխն ա̃մ մարտիրոսաց ։

Երկիւղ՝ թերահաւատութեան է նշանակ . զթերահաւատութի̃ն մեք 'ի մէնջ վաղ մերժեցաք , ընդ նմին և երկիւղ փախիցէ 'ի մտաց և՝ 'ի խորհրդոց մերոց ։

Զայս ամենայն առաքինի զօրավարն խօսեցաւ ընդ ա̃մ բազմութե̃ն . դարձեալ և զմի մի 'ի նոցանէ 'ի ծածուկ քաջալերէր և սրտապնդէր . և զա̃մ պակասութի աղքատութե̃ն՝ որոյ ոչի՛նչ գոյր զօրականին , յանձնէ և յընկերացն մատուցանէր ։ Որոյ զէն ո՛չ գոյր , զէն պատրաստէր . և որում հանդերձ պիտոյ էր , հանդերձ զգեցուցանէր . և որում երիվար , երիվար տայր . և առատ առձեռօք ուրախ առնէր զա̃մն . և զուարթադէմն զինքն ցուցանէր ամենեցուն ։

Նա ըստ պատերազմական կարգին՝ զքաջաց արանց զյիշատակարանս հանապազ երկրորդէր առաջի նց . զի և ինքն իսկ տեղեակ էր 'ի մանկութենէ իւրմէ ս̃բ կտակարանաց ։ Զոր և 'ի ձեռն առեալ զքաջ նկարագիրն մակաբայեցւոց՝ ընթեռնոյր 'ի լսելիս ա̃մցուն . և յորդառատ բանիւք գիտէր զելս իրացն իմացուցանել նց , թէ ո̃րպ մարտուցեալ կռուեցան

'ի

՚ի վերայ ամենայն օրինացն ընդդէմ Թագաւորին անախորժելի ։

Զի թէպէտ և ՚ի նմին կատարեցան մահուամբ, սակայն անուն քաջութե եկաց մնաց մինչև ցայսօր ժամանակի · ոչ միայն յերկրի, այլև անմահաց յերկինս ։

Նաև զայն ևս յուշ առնէր զօրականացն, թէ ոմն ազգատոհմին մատաթեայ քակտեալ բաժանեցան ՚ի միաբանութէ նր · դարձան ՚ի հրամանն Թագաւորին, շինեցին մեհեանս, մատուցին զոհս պղծութեան, խոտորեցան յոյժ, և ընկալան զպատիժ պատուհասի մահուան ՚ի նոր միաբանելոցն ։ Իսկ մատաթի և որ ընդ նմայն էին, ոչինչ թուլացեալ լքան · այլ ևս առաւելապէս պնդեցան և ձեռնամուխ եղեն ՚ի գործ պատերազմի բազում ժամանակս ։ Զայս ասէր և անդէն ՚ի դաշտին զտեղի առեալ զզօրսն զետեղէր · և յամ կողմանց տակաւ զայրուձին գումարէր ։

Իսկ յետ բազում աւուրց՝ զօրագլուխն պարսից խաղայր գայր ամ հեթանոսական բազմութեամբն, եկեալ հասանէր յաշխարհն հայոց ՚ի հերև զարևանդ գաւառ ։ Անդէն ՚ի գաւառին զտեղի առեալ՝ և բանակս բոլորեալ՝ փոս հատանէր · պատնէշս կանգնէր, շերտաւորս փակէր, ամրացուցանէր իբրև զքաղաք մի ամուր ամ պատրաստութբ · գունդս բազումս հատանէր ՚ի զօրաց նր, ասպատակս արձակէր, յաւարի առնուլ կամէր զգաւառս բազումս ։

Զայն իբրև լուան զօրքն հայոց, սեպուհ մի յազգէն ամատունեաց Սանձար անուն՝ ընտրեցին յամենայն զօրականէն լի իմաստութեամբ

թեամբ և քաղցրութեամբ. Նոյն ընդ առաջ նոցա երկու հազարօք, հար սատակեաց զբազմութիւն գնդին, և զմնացեալս 'ի նոցանէ՝ անդրէն 'ի բանակն փախստական արկանէր. և ինքն ողջանդամ այրէն դառնայր. Եւ լինէր տօն ուրախութե յաւուրն մեծի զօրացն հայոց.

Պարծեալ միւսանգամ ուրացեալն վասակ անդրէն 'ի հնարս հայթայթանաց մտանէր ըստ առաջին կեղծաւորութեն իւրոյ. Շրջեցաւ 'ի ձեռն սուտ երիցանցն՝ զոր յառաջագոյն ասացաք. Նոքօք հրամանաւ արքունի պատգամաւորութի խօսէր, և երդմամբ հաստատէր շնորհել զըմբոստանէութին անդրէն.

Եւ զայս արարեալ 'ի բազում աւուրս՝ ոչ կարաց զմիաբանութին քակել. մանաւանդ զի սբ ուխտ եկեղեցւոյն ոչ էր հեռացեալ 'ի զօրականացն. Որպէս և երանելի երէցն Ղևոնդ՝ հրաման առեալ 'ի սբ ընկերակցացն՝ 'ի մեծէն Յովսէփայ և յամ մեծամեծացն և 'ի քահանայիցն և 'ի զօրագլխացն, եբաց զբերան իւր և ասէ բարձր բարբառով առաջի հրեշտակացն պարսից.

Յիշեցէք ամենեքեան զհարսն ձեր զառաջինս, որք յառաջագոյն քան զծագումն որդւոյն այ՝ յիւրաքանչիւր ժամանակի. Քանզի իբրև մերժեաց և ընկէց զմեզ չարն յամայն տեղւոյն, գտաք մեք անկեալս ընդ անօրինին դատաստանօք ըստ մեղացն յանցաւորութե. Որ 'ի կամս ազատութեան մերոյ գործեցաք զանարժանս, և զպարգևական զօրութին շարժեցաք 'ի վր մեր 'ի ցասումն բարկութե. Եւ զողորմած դատաւորին յուզեցաք վրէժ առնուլ

անա

անաչառութեամբ յարարածոցս , մինչև հրաման տուեալ երկնային ծովուն՝ հեղուլ 'ի վ՟ր ցամաքի , և հաստատուն յատակք երկրիս ծակոտեալ՝ ընդդէմ զհակառակսն գործեցին։ Վ երկինք և ներքինք եղէն մեզ գործիք տանջանաց՝ առանց բարեխօսի վրէժ առնուլ յանցանացն մերոց։

Ապաքէն՝ արդարն Նոյ միայն գտաւ կատարեալ յազգի մարդկութ՟ես . որ ցածոյց զսրտմտութիւն բարկութ՟ե տէրունեան ցասմանն , և եղև սկիզբն առաջարկութ՟ե առ աճումն բազմութեան մարդկային ազգիս ։

Դարձեալ և Աբրահամ 'ի փորձութ՟ են իւրում գտաւ առաքինի . և զընկալեալ պարգևսն յա՟յ՝ ինքն ձեռօք փոխ անդրէն Նմին մատուցանէր ։ Վասն այսորիկ և յառակս ընկալաւ զնա ա՟ծ . զի 'ի նմա տպաւորեալ տեսանէր զաներևոյթ գալուստ որդւոյն ա՟յ . և զմեռանումն անմեռանելւոյն , և զզենումն անմահին , որ իւրով մահուամբն խափանեաց զիշխանութիւն մահու ։ Նա եթէ մահուամբ մահ մեռանի , մի՛ երկիցուք մահակից լինել Ք՟սի . զի ընդ որում մեք մեռանիմք , ընդ Նմին և կենդանանամք ։

Յիշեցէք առաքինիք զմեծն Մովսէս , որ մինչչև հասեալ էր յորինութեան հասակն՝ խորհուրդ մի նահատակութ՟են՝ 'ի տիս տղայութ՟են երևէր 'ի նմա . և տուն Թագաւորին եգիպտացւոց 'ի ծառայութ՟ի մտանէր նմա , և ակամայ դայեկութ՟բ սնուցանէր զնա ։

Նա 'ի ժամ փրկելոյ զժողովուրդն 'ի նեղութենէն՝ միջնորդ եղև երկնի և երկրի . միանգամայն և ա՟ծ անուանեցաւ 'ի վերայ ե-

գիպ

գլխաւորացն ։ Քանզի ուր դատս մը խոր-
հուրդն զօրացեալ , անձամբ իւրով առնոյր
վրէժ յեգիպտացւոցն ։ Իսկ ուր ածայլին յայտ-
նութիւնն 'ի վր լինէր , 'ի ձեռն գաւազանին
գործէր զմեծամեծ սքանչելիսն . և վս սուրբ
նախանձուն զոր ունէր , եհար զեգիպտացին և
ընդաւազեաց . վսյ մեծ անուն գնէր նմա , և
առաջնորդ ժողովրդեանն զնա կացուցանէր ։

Այլ բաղում այն է , որ հեզմամբ արեան
արդարացաւ , և անուանեցաւ մեծ քան զամ
մարգարէսն . ոչ միայն զարտաքին թշնամիսն կո-
տորելով , այլև զազգատոհմն իւր՝ որ փոխանա-
կեցին զած ընդ որթուն յանապատին ։ Այլ
եթէ նա 'ի հեռաւոր այնպիսի վրէժխնդիր էր
գալստեան որդւոյն այ , մեք որ ականատես ե-
ղաք և մեծապէս վայելեցաք յերկնաւոր պար-
գևս շնորհաց նր , ևս առաւել պարտիմք վը-
րէժխնդիր լինել մօտակայ Ճշմարտութես , որ
եդ մահուամբ զանձն իւր 'ի վերայ մեղաց մե-
րոց , և արդարացոյց զմեզ յանհնարին դատա-
պարտութէն ։ Դիցուք և մեք զանձինս մեր
մահուամբ 'ի վր անմահ զօրութեանն . զի մի՛
նուաղեալ քան զվրէժխնդիրսն գտանիցիմք ։

Յիշեցէք և զմեծ քահանայն Փենեհեզ ,
որ սպանմամբ եբարձ զպղծութին 'ի ժամ պա-
տերազմին . և ազգէ յազգ երդմամբ հաստա-
տեաց զքահանայութին ։

Ո՛ւ մոռանայք և զսուրբ մարգարէն Եղիա՝
որ ոչ կարէր հանդարտել հայել 'ի կռապաշտու-
թիւնն աքայաբու . և արդար նախանձուն իւ-
րով զութն հարիւրսն ինքեան ձեռօք կոտո-
րեաց . և զերկու յիսունսն անշէջ հրոյն մա-
տու

տուցանէր լուցկիս . և զա̃ծային վրէժն խնդ-րելով , անըմբռնելի ահագին կառօք յերկրէ յերկինս վերացաւ :

Դուք ևս մեծի մասին վիճակի հասեալ էք . զի ոչ ևս կառք առաքին ձեզ 'ի վերա-ցումն , այլ ինքնին տէրն կառաց և երիվարաց՝ հզօր զօրութբ̃ և սրբովք հրեշտակօք ընդ յա-ռաջ եկեալ ձեզ՝ իւրաքանչիւր Թևս բու-սուցանէ , զի նո̃ ուղեկիցք և նմին քաղաքա-կիցք լինիցիք :

Եւ արդ՝ զի՞նչ ևս երկրորդեցից առաջի ձերոյ քաջ նահատակութեդ̃ . զի քան զիս տեղեակ և հմուտ էք սուրբ կտակարանացն : Դաւիթ 'ի մանկութեան ժամանակին քարի՛ կործանեաց զմեծ բլուրն մսեղէն , և ոչի՛նչ զանգիտեաց յահագին սորա հսկայէն: Յրոնեաց զպունդս այլազգեացն , և ապրեցոյց զզօրսն իւր 'ի մահուանէ՝ և զժողովուրդն 'ի գերութենէ : Եղև անդրանիկ Թագաւորացն իսրայելի , և անուանեցաւ հայր որդւոյն այ̃ : Նա անուա-նեցաւ առ 'ի պէտս ժամանակին, և դուք ճըշ-մարիտ ծնունդք սբ̃ հոգւոյն՝ որդիք էք այ̃ , և ժառանգակիցք քս̃ի : Մի՛ ոք զձեր բաժինն 'ի ձէնջ հատանիցէ , և զձեզ օտարս և խորթս արարեալ տարաբաժին հանիցէ :

Յիշեցէք զամենայն զօրավարսն պառաջինսն իսրայելի . զՅեսուն , զԳեդէոնն , զԵփթայեն , և զայլսն զամենեսեան որ ճշմարիտ հաւատովք էին , հարին կոտորեցին զզօրսն հեթանոսաց , և սրբեցին զերկիրն 'ի պիղծ կռապաշտութենէն : Եւ վասն հաստատուն արդարագործութեանն՝ որ ոչի՛նչ երկմտեցին 'ի խորհուրդս իւրեանց ,

արե

արեգական և լուսնին առանց ախանձայց լուսոյ, և կատարեցին զբան հրամանի նր̃ ․ Ծով և գետք ճանապարհ հորդեցին առաջի նր̃ ըստ ոչ սովորութե̃, և բարձրացեալ պարիսպք քաղաքին երիքովի՝ ձայնիւ լոկով անկեալ կործանեցան ։ Նաև այլքն ամենայն՝ որ ըստ հաւատոյ քաջութի̃ կատարեցին 'ի դարս իւրաքանչիւր, զովեցան 'ի մարդկանէ և արդարացան յա̃յ ։ Ապաքէն նոյն տէր է 'ի սկզբանէ մինչև ցայսօր և առ յապա և յաւիտենից յաւիտեան, և անդր քան զա̃մ յաւիտեանս ։ Ո՛չ նորոգի, զի ոչ հնանայ ․ ոչ մանկանայ, զի ոչ ծերանայ․ ոչ փոփոխի անյեղուկ բնութիւն ա̃յ, ո̃պ և ինքն ասէր բերանով ս̃ր մարգարէիցն ․ Ես եմ, Ես եմ, նոյն եմ 'ի սկզբանէ մինչև յաւիտեան․ ոչ տամ զփառս իմ այլում, և ոչ զքաջութիւնս իմ դրօշելոց ․ զայս գիտելով եղբարք մի՛ թուլութբ̃ լքանիցիք, այլ պնդութեամբ սրտիւ և հաստատուն հաւատովք կամակոր յուձակեսցուք 'ի վերայ թշնամեացն, որ յարուցեալ գան 'ի վերայ մեր ։ Ո՛եր յոյժ մեզ կրկին երևի, եթէ մեռանիմք՝ կեամք ․ և եթէ մեռուցանեմք՝ մեզ նոյն կեանք առաջի կայ ։

Յիշեսցո՛ւք զբանն առաքելոյ որ ասէ, թէ փոփոխանակ ուրախութե̃ն՝ որ նմա առաջի կայր, յանձն էառ զհամբերութի̃ մահու և խաչի ․ վասն այսորիկ ա̃ծ զնա առաւել բարձրացոյց, և ետ նմա անուն՝ որ 'ի վեր է քան զա̃մ անուն ․ զի յանուանն յ̃սի ք̃սի ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց ։ Նաև քանզի որ ճշմարտութբ̃ միացեալ է ընդ սիրոյն ք̃սի, հոգւոյ աչօքն տեսանէ զաներևոյթ

յատակ լուսոյն Ճառագայթից խնամոյն արեգա-կանն, որ յամ ժամ և յամ օր գեր ՚ի վերոյ ծագեալ երևի ամենեցուն, և պարզատեսիլ և պարզաՀայեաց անաղօտ յստակութբ ձգտեցու-ցանէ զՀայեցուածս. և Թափանցիկ եղեալ է երկնից՝ յանմատոյց տեսիլն մերձեցուցանէ. և կորովութբ կշռէ զերկրպագութիւն զերից Հաւա-ուածոյն միաւոր զօրութեն.

Նուարդ՝ որ ընդ այս տարաՃանան առանախս եղեալ բիւրն, և բարձրութբ յաքրանիման Հա-սեալ, և զամենայն մեծութիւնն բովանդակ տեսեալ, նա միայն է որ ժառանգէ զանանց ու-րախութիւն և զանսպառական մխիթարութիւնն. Մի՛ տեսցէք իմ պատմականք՝ յետ յոյժ ՚ի բարձունս վերանալոյ, այլեւ յերկիր ան-կեալ Թաւալեցինք. այլ զանգի առեալ անդ-րէն ՚ի բարձրութեն Հաստատեսցուք.

Ասէպէտե Հայեսցուք ՚ի ստորին կողմն երկ-րիս, տեսանեմք զնա լի՛ ամենայն աղականու-Թեամբ և անօր պղծութբք. Բանզի զի՛նչ աղէտք տարակուսի են որ ոչ գործին յերկրա-յինս. անառակեր Թշնամութիւնք աղքատաց, անԹիւ չարչարանքն նոցուն. աղցաւոր ծան-րութիւնք Հարկահանաց. զզուանք կախանք ՚ի բռնաւոր ընկերակցաց. քաղց և ծարաւ ըն կարօտութեան բնութեանս. սառնամանիք ձմե-րայնոյ, և խորշակք ամառայնոյ. Հիւանդու-թիւնք տարաժամք և ախտք մաՀաբերք Հանա-պազ տանջեն զմարդիկ. Երկիւղք արտաքնոց և աՀք ներքնոց՝ անդադար ՚ի վր Հասանեն.

Յանկարծ մաՀու յառաջքան զժամանակն, և ոչ գտանեն. և բազումք են որ փորեն և խնդ-րեն

րեն, և խնդալից լինին յորժամ գտանեն։ Իսկ որ Թուին մեզ եթէ յաջողեալք իցեն 'ի մեծութի, և փափկանան ուրախութբ 'ի պակասելի կեանս, մեծամտեալ հպարտանան 'ի յանցաւոր մասունս աշխարհիս, սոքա են որ կուրացեալ են 'ի ճշմարիտ կենացն։ Իսկ արդ՝ զի՞նչ այն չարիք իցեն, որ 'ի նմա ոչ գործիցին։ Ընդ մեծութի խառնեալ է յափշտակութիւն ընչից աղքատաց. ընդ նմ ամուսնութի՝ գէջ պղծութի, յորս վայելեն ընտրութբ. նոցուն երկրպագութիս իւրեանց մատուցանեն մոլորեալքն 'ի ճշմարիտ կենացն։ Ո՛չ ապա ամ աշխարհս արարչին բոլորեցուն է գոյացութի. և զոր նոքայն պաշտեն և պատուեն, ապաքէն 'ի ամին նիւթոյ է մասն։ Իսկ արդ՝ մասունքն մասանցն կան 'ի ծառայութի. զի եթէ մի մասն աշխարհիս ապականացու է, հարկ է թէ՝ և այլ մասունքն ը նմին ապականին։ Նաև 'ի մասանց անտի պարզ է թէ ընտրութիք երևեսցին։

Իսկ արդ՝ որ լոյս է, յայտնի է ամենեցուն և որ գիտեն իմանալ, նա է ընտիր 'ի մասանցն. ապա եթէ այդ այդպէս է՝ քան զամենայն պաշտամունս հեթանոսաց որում երկիր պագանեն, երկրպագուքն են առաւելեալք քան զանբան տարերսն, որոց չարաչարն կան 'ի ծառայութե. և զՏն ած որ 'ի մարդ կերպարանեաց, արարածոց տանին յերկրպագութի. որոց մեղաց չիք քաւութի յարդար ատենին։

Արդ՝ անդր 'ի բաց Թողցուք զխաւարային խորհուրդս մոլորելոցն, եղկելիս և ողորմելիս քան զամ մարդիկ՝ զնս համարեսցուք. մանաւանդ զի կամօք են կուրացեալ և ոչ 'ի հարկէ,

ո՛չ երբէք գտանեն զճանապարհն ճշմարտութե՛. Նա մեր բացահայտեաց աչօք տեսեալ զլոյսն երկնաւոր, մի՛ պատահեսցէ մեզ խաւարն արտաքին. զի դուք էիք ՛ի խաւարին, և եկն առ նա լոյս ճշմարիտ, կուրացեալք վրիպեցան ՛ի կենաց. Իսկ որք ընկալայքդ, հաւատովք որդիք էք և ո՛չ օտարախորթք. սիրելիք և ո՛չ թշնամիք. բաժանորդք և ժառանգորդք վերին իմանալի քաղաքին.

Նոյն է առաջնորդն փրկութե՛ մերոյ. սա քաջութեամբ նահատակեցաւ, և զնոյն ուսոյց ամ նիզակակից գործակցաց իւրոց առաքելոց. Յորում և դուք էք այսօր կրկին երանեալք. օրհնեալք հաւատովք ընդդէմ աներևոյթ թըշնամեացն, պատենազէն զրահիւքդ ընդդէմ ընկերակից սատանայական գործոցն. Եւ եթէ այսպէս և եթէ այնպէս, զերկուսեան կողմանս ՛ի պարտութի մատնէք. Որպէս և տէրն ինքն իւր արար աշխարհի. Խնուեցաւ թէ մեռաւ, այլ նա յայնժամ տարաւ զկատարեալ նահատակութիւնն. զախոյեանն ընկէց. զպատերազմն եհար. զթշնամիսն ցրուեաց. զաւարն ժողովեաց. զգերիսն դարձոյց. զպարգևսն բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց ՛ի ձեռն իւրաքանչիւր առաքինութե.

Գիտէք դուք ամենեքեան. յառաջ ժամանակաւ հաւատալ ձեր ՛ի գործ պատերազմի, թէպէտև էր ձեր սովորութիւն՝ քահանայից հնազանդել ՛ի մէջ բանակիս, ՛ի ժամ ճակատուցն յանձնեալ ձեզ ՛ի նոցանէ աղօթիւք, յամուր տեղւոջ ուրեք թողուիք զնս. Իսկ այսօր եպիսկոպոսք և երիցունք և սարկաւա-

գունք

գունք, սաղմոսերգողք և գրակարդացք՝ իւրաքանչիւր կարգաւ կանոնաւն իբրև վառեալք զինու և պատրաստեալք 'ի պատերազմ, կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զթշնամին ճշմարտութեան ։

Եւ եթէ մեռանել ևս հասցէ 'ի նոցանէ, սակայն և յայնժամ ոչ են զանգիտելոց ․ քանզի լաւագոյն զմեռանելն կամին, քան զմեռուցանելն ․ որպէս զի կրկին աչս ստացեալ ունին, հաւատոյ աչօք զքարկոծանս մարգարէիցն տեսանեն ․ և մարմնոց աչօքս զքաջութիւն ձերոյ նահատակութեան ։

Մանաւանդ եթէ 'ի ձեզ զերկոսեանն իսկ տեսանեմք ․ քանզի և դուք իսկ տեսանէք ըզչարչարանս սուրբ առաքելոցն, և զսպանումն ամենայն սուրբ մարտիրոսացն ․ որոց մահուամբն հաստատեցաւ սուրբ եկեղեցի ․ և հեղումն արեանն իւրեանց՝ եղև 'ի պարծանս վերնոց և ներքնոց ։ Եւ արդ՝ մինչև 'ի գալուստն երկրորդ՝ նոյն նահատակութիւն կատարի չարչարանօք ։

Այս վայր խօսեցաւ 'ի գիշերին յայնմիկ սուրբ երէցն Ղևոնդ ․ և փառաւորելով կատարեաց զամէնն ասելով ։ Եւ ուղղելով սեղանն՝ զամենասուրբ խորհուրդն կատարեցին ․ ուղղեցին և աւազան, և եթէ գոյր ոք երեխայ 'ի բազմութեան զօրուն, զգիշերն ամենայն մկրտեցին ․ և ընդ առաւօտն սուրբ օրինացն հաղորդեցան ․ և այնպէս լուսազգեստք եղեն, որպէս 'ի տէրունեան մեծի սուրբ զատկին ։ Եւ մեծաւ զուարթութեամբ և յոյժ խնդութեամբ աղաղակեաց ամենայն բազմութեան զօրացն և ասէ ․ հաւասարեսցի՝ մահս մեր՝ մահու արդարոցն ․ և հեղումն

զումն արեան մերոյ ընդ արեան սբ՟ մարտիրոսացն . և հաճեսցի ա՟ծ կամաւոր պատարագաւս, և մի տացէ զեկեղեցի իւր ՚ի ձեռս հեթանոսաց ։

## ԳԼ. Օ.

Մեծարեալ՝ ներքին անգամ ընդդէմ նոր հայոց պատերազման՝ թագաւորին պարսից ։

Յետ այսորիկ՝ իբրև ետես զօրավարն պարսից գնդին, եթէ հատան պատգամաւորքն ՚ի միջոյ խաբել զն՟ս, և բարձաւ յոյս ակնկալութեան իւրոյ՝ ցրուեալ զն՟ս յանկարծ միաբանութենէն . յայնժամ յառաջ կոչէր զանօրէնն վասակ և զամենայն ուրացեալ իշխանսն՝ որ էին ընդ նմա յաշխարհէն հայոց . հարցանէր զնոսա և ուսանէր ՚ի նոցանէ զհնարագիտութիւն յաղթութեանն ։

Եւ իբրև ուսեալ տեղեկացաւ զառն առն իւրաքանչիւր զքաջութիւն, կոչէր և զբազում ՚ի զօրագլխացն՝ որ էին ընդ իւրով ձեռամբ . և հրամայէր ածել զառաջեաւ զերամակս փղացն . և ՚ի գունդս գունդս բաժանէր զգազանսն . առ մի մի փիղ՝ երեք հազար սպառազէնս . թող զայլ զօրսն ամ՟ ։ Խօսէր ընդ մեծամեծսն արքունի հրամանաւ և ասէր . յիշեցէք այր իւրաքանչիւր զպատուէր մեծ թագաւորին, և դիք առաջի զանուն քաջութեան, ընտրեցէք զմահ՝ քան զկեանս վատութեան ։

Ար

Մի՛ մոռանայք զխուղն և զպսակն և զուռն և զառատաձեռն պարգևսն, որ շնորհեցաւ և շնորհի ձեզ յարքունուստ : Տեարք էք իւրաքանչիւր գաւառաց, և ունիք իշխանութիւն բազում . դուք ձեզէն գիտէք զքաջութի աշխարհին հայոց, և զառն առն իւրաքանչիւր նահատակութի արութեն . գուցէ ձեր 'ի պարտութի մատնեալ, կենդանւոյն վրիպիցէք 'ի մեծ կենացն՝ զոր ունիցիք :

Յիշեցէք զկին և զորդիս ձեր . յիշեցէ՛ք զսիրելի բարեկամս ձեր . գուցէ՛ ոտնհար լինիցիք յարտաքին թշնամեացն, և ողբալիցէք ներքին սիրելեաց : Նաև յուշ ևս առնէր նց զբազում ընկերակիցս փախուցեալս . որք թէպետև 'ի պատերազմէն ապրեցան, սրով ընկալան զվճիռ մահու իւրեանց . ուստերք և դստերք և ամ ընտանիք իւրեանց յանաշխարհիկս գերեցան, և ամ հայրենի գաւառքն հատան 'ի նոցանէ :

Զայս ասէր և առաւել քան զայնս՝ սաստկացուցանէր զհրամանն արքունի : Կարգէր կազմէր զզօրսն ամ . և տարածանէր երկայնէր զճակատն յերկայնութե մեծի դաշտին . և իւրաքանչիւր գազանացն յաջմէ և յահեկէ զերեք հազար սպառազէնս պատրաստէր . և զընտիր ընտիր նահատակացն շուրջ զիւրեաւ գումարէր . և այսպէս ամրացուցանէր զգունդն մատեան՝ իբրև զաշտարակ մի հզօր, և կամ իբրև զբերդ մի անմատոյց . նշանս բաշխէր, դրօշս արձակէր, և 'ի ձայն փողոյ պատրաստ հրամայէր լինել :

Իսկ զգունդն զապարհայիկ և զկուշտաց և

զհնոց եւ զգեղջոց , եւ զայլ եւս ընտիր ընտիր մարգրիտս զորոն ’ի մի վայր ժողովէր , եւ հրաման պատուիրանի տայր ընդ ամէն կողմանէ իւրոյ գնդին՝ պատրաստ լինել ընդդէմ հայոց զօրավարին : Իսկ այրն Վարդան յառաջ մատուցեալ եւ զաւրավարին հարցանէր . եւ միաբան ամենուն խրատուք զզօրագլուխսն կարգէր :

Զգունդն առաջին՝ տայր ’ի ձեռն իշխանին արծրունեաց , եւ նիզակակից նմին զմեծ իշխանն մոկաց . եւ զայլ ամ նախարարեանն համահարզ երկոցունց՝ եւ զամ բազմութի գնդին՝ թեւս աստի եւ անտի կազմէր նոցա :

Եւ զգունդն երկրորդ՝ տայր ’ի ձեռն Խորենայ խորխոռունւոյ , եւ նիզակակից նմա ընծայ լինէր Ներսեհ քաջբերունի :

Եւ զգունդն երրորդ՝ մատուցանէր ’ի ձեռն Թաթուլայ վանանդացւոյ , եւ նիզակակից նմա հրամայէր զՏաճատ գնթունի . եւ զբազում ’ի քաջ արանց աստի եւ անտի թեւս նց :

Յանձն իւր առնոյր զգունդն չորրորդ , եւ նիզակակից իւր՝ զքաջն Արշաւիր եւ զհարազատ եղբայրն իւր զՀամազասպեանն : Կարգէր եւ կազմէր զճակատն յորդորելով ընդ ամ երեսս դաշտին , դէմ յանդիման արեւաց գնդին առ ափին տղմուտ գետոյն :

Եւ իբրեւ այսպէս պատրաստեցան երկոքեան կողմանքն , սաստկութբ եւ մեծաւ բարկութբ զայրանային , եւ գազանացեալ զօրութեամբ միբեարս յարձակէին , եւ ամբոխ աղաղակին յերկոցունց կողմանցն՝ իբրեւ ’ի մէջ ամպոց շփոթելոց ձայթմունս գործէր . եւ հնչումն ձայնիցն՝ զքարանձաւս լերանցն շարժէր . ’Ի բազմութե

տաղաւարոտիցն և 'ի փայլուն պատենաղէն վառելոց՝ իբրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին։ Նոյն և 'ի բազում շողալ սուսերացն և 'ի ճօճել բազմախուռն նիզակացն՝ իբրև յերկնուստ ահագին հրձգութիւք եռային։

Բանզի ո՞վ իսկ է բաւական տալ զմեծ տագնապ ահաւոր ձայնիցն։ Որպէս զի կռփէինք վահանաւորացն և ճայթմունք լորից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին։ Անդ էր տեսանել շատ մեծի տագնապին, և զաղէտս անբաւ տարակուսանացն երկոցունց կողմանց, առ 'ի յանդուգն յարձակմանէն զմիմեանս բաղխելով։

Բանզի թանձրամիտքն յիմարէին, և վատասիրտքն լքանէին. քաջքն խիզախէին, և նահատակքն գոչէին. և խումբ արարեալ ամ̃ բազմութեան, զգետն 'ի մէջ փակէին. և զանգիտեալ գունդն պարսից 'ի դժուարութենէ գետոյն, զտեղեաւն զեռալ սկսան։

Իսկ գունդն հայոց՝ հասեալ անցանէին, ձի 'ի վեր առեալ յարձակէին մեծաւ զօրութ̃բ. սաստկապէս բաղխեալ զմիմեանս յերկոցունց կողմանցն, բազում վիրաւորք յերկիր անկեալ դիաթաւալ խաղային։

Յայնմ մեծի տագնապի 'ի վեր հայեցեալ քաջն Վարդան, տեսանէր զընտիր ընտիր քաջ նահատակացն պարսից զօրուն, զի զձախակողմն շարժեցին զհայոց գնդին. մեծաւ ուժով յարձակէր 'ի տեղին, և զաջ թևն գնդին պարսից բեկեալ արկանէր զգազանօքն. և շրջան առեալ կոտորէր մինչև 'ի նոյն տեղի. և այնպէս շատ տագնապի 'ի վերայ հասուցանէր, մինչև

գուն

գունդն մատեան քակտեալ բաժանեցան 'ի մե-
ծամուր պատրաստութեն :

Պերուս քաջ քաջ 'ի փախուստ դառնայցէն, այս դետակն 'ի վեր ամբառնայր մուշկաննիւսալաուրտ , զոմանս քակեալ տեսանէր 'ի գնդէն Հայոց , և զկնի մնացեալ՝ 'ի հովիտս լերանցն : Վասն որոյ և զաղաղակ բարձեալ քաջալերէր շուրջ զիւրեաւ զզօրսն արեաց , որք զտեղի առեալ կացին ընդդէմ գնդին վարդանայ :

Եւ անդէն 'ի տեղւոջն երկոքին կողմանքն զպարտութիւն խոստովանէին , և առ 'ի յոյժ թանձրանալ դիականցն՝ իբրև զքարակոյտս դեր-կաց երևէին : Զայն իբրև ետես մուշկաննիւսալաուրտ , մնայր գազանացն արտաշրի , որ նստէր 'ի բարձր դիտանոցին իբրև յամուր քաղաքի . և'ի ձայն մեծ գալարափողոցն զիւր գունդն ստիպէր . և յառաջամարտիկ զօրօքն՝ զնա 'ի մէջ փակէր :

Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն՝ ոչ սակաւ նախճիրս գործէր 'ի տեղւոջն , յորում տեղւոջ և ինքն արժանի եղև առնուլ զկատարեալ նահատակութեն : Եւ յերկարել գործոյ պատերազմին օրն տարաժամէր , և մօտ առ երեկս կարճատէր բազմաց օրհասք մահու : Մանաւանդ 'ի թանձրութե անկեալ դիականցն մօտ առ մօտ խտացեալ իբրև զխայտահարս մայրաւորաց :

Ընդ էր տեսանել զանկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց . վասն այնորիկ և ոչ կարէին իսկ կալ ձիաւորքն 'ի վր̃ ոտ̃ մարմնոց երանեցելոյն . և սաստիկ խուճապ տագնապի էր կողմանցն երկոցունց անկելոց . Եւ որք մնա-

 ցեալքն

ցեալքն էին, վատնեալք և ցրուեալք լինէին ՚ի լեառնադաշտս ամուր ձորոյն։

Նա յորժամ պատահէին միմեանց, դարձեալ միւսանգամ զմիմեանս սատակէին. և մինչև ցմուտս արեգականն՝ անդադար լինէր գործ դառնութեան։ Նա քանզի գարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն՝ դառնային ՚ի յորդահոսանս արեանց բազմաց։

Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զեազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր և աչքն դալարէին լալ զմնչիւն խոցելոցն. ըզմռնչիւն բեկելոցն. զթաւալգլոր խաղալ վիրաւորելոցն. զորտաթափումն անարի արանցն. զճչիւն կանացեացն. զողբս ՚ի վերայ սիրելեացն. զաշխարանս մերձաւորացն. զվայաւաղ բարեկամացն։ Քանզի ոչ եթէ կողմ էր որ յաղթեաց, և կողմ էր որ պարտեցաւ. այլ քաջք ընդ քաջս ելեալ, երկոքեան կողմանքն ՚ի պարտութիւն մատնեցան։

Բայց քանզի անկեալ էր զօրավարն Հայոց ՚ի մեծ պատերազմին, ոչ ոք գոյր այնուհետև ՚ի միջի գլխաւոր, յոր յեցեալ ժողովէին զունդք մնացելոցն։ Թէպէտև բազում այն էր՝ որ ապրեցանն, քան որ եթէ մեռանն. սակայն ցանեալ ցրուեցան և հասեալ անկանէին ՚ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին. և բռնանային ՚ի վերայ բազում գաւառաց և բերդից, զոր և ոչ առնուլ իսկ ոք կարէր։

Եւ այս են անուանք զօրու նահատակացն՝ որ անդէն 'ի տեղւոջն կոտորեցան ։

Յազգէն Մամիկոնէից քաջն Վարդան հարիւր երեսուն և երեք արամբք։ Յազգէն Խորխոռունեաց Խորէնն կորովի ինն և տասն արամբք։ Յազգէն Պալունեաց արին Արտակ յիսուն և եօթն արամբք ։ Յազգէն Գնթունեաց զարմանալին Տաճատ ինն և տասն արամբք ։ Յազգէն Դիմաքսենից իմաստունն Համայեակ քսան և երկու արամբք ։ Յազգէն Քաջբերունեաց հրաշակերտն Ներսեհ եօթն արամբք ։ Յազգէն Գնունեաց մանուկն Վահան երեք արամբք ։ Յազգէն Ընծայնոց արիարն Արսէն եօթն արամբք ։ Յազգէն Սրուանձտայ յառաջադէմն Գարեգին երկու հարազատօքն՝ ութ և տասն արամբք ։

Այս երկերիւր ութսուն և եօթն նահատակք ընդ ինն մեծամեծ նախարարսն՝ որ անդէն 'ի տեղւոջն կատարեցան. և յարքունի տանէ, և 'ի տանէն Արծրունեաց՝ և յիւրաքանչիւր այլոց նախարարաց տանէն. Թող զայս երկերիւր ութսուն և եօթնս, այլ և եօթն հարիւր և քառասուն այր. որք զանուանս իւրաքանչիւր 'ի դպրութի կենաց գրեցին 'ի նմին աւուր 'ի մեծ պատերազմին, և միահամուռ լինին ամէն հազար երեսուն և վեց ։

Իսկ 'ի կողմանէ ուրացելոցն՝ անկանէր յայնմ աւուր երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորք այր. ինն այր 'ի նոցանէ 'ի մեծամեծ պատուաւորացն էր. վասն որոյ և կարի յոյժ 'ի խոր

խոր խոցեցաւ Մուշկան Նիւսալաւուրտ։ Մանա-ւանդ երբեւ ետես զանհնարին հարուածն եօթ-նապատիկ զիւրոյ գնդին քան զհայոցն, բեկաւ անկաւ զօրութի ուժոյն իւրոյ․ և ոչ հան-դարտէր կալ 'ի վ̄ր խորհրդոց մտացն․ քանզի ոչ ոք կարծէր պատերազմին կատարեցաւ։

Մանաւանդ երբեւ հայէր տեսանէր զբազ-մութիւն անկելոց իւրոյ կողմանն, և թիւ հա-մարոյ եւս առնէր, երբեւ այնչափ յոլով գտանէր զիւր անկեալն քան զհայոց գնդին, եւս ա-ռաւել վասն երեւելի արանցն՝ զոր յախանէ և յանուանէ գիտէր թագաւորն, 'ի մեծ տագնա-պի լինէր այն յանձն իւր։ Արդարութեամբ զերան դրել և ցուցանել՝ 'ի մեծ թագաւորէն երկնչէր։ Պարծեալ և թագուցանել եւս ոչ կարէր․ քանզի ոչ այնպիսի մեծ կոյս ծած-կէր։

Նա մինչդեռ յայսմ մտաց խորհրդի էր յանձն իւր և նեղէր 'ի միտս իւր, ուրացեալն վա-սակ՝ որ զանձն իւր 'ի մէջ գազանացն թագու-ցեալ ապրեցոյց, մխիթար մատուցանէր մտացն լքելոյ, և ուսուցանէր նմա հնարս նենգութե՝ թէ ո՞րպ կարասցէ մարտնչել ընդ ամուրան խա-բէութեամբ։

Նրդմունս կնքէր արքունի հրամանաւ՝ վկա-յութեամբ անձին իւրոյ, և խաբեբայ երե-ցամբքն՝ որ ընդ նմա էին, պատգամաւորս ա-ռաքէր զնա և երեւեցուցանէր զթողութի ա-պստամբութեն՝ առ իշխանութիւն եկեղեցւոյ շնորհել անդրէն, և զամ կարգս անդրէն յար-մարել ըստ առաջին օրինութեն։ Նենգաւոր հրաման թագաւորին հաստատութեամբ էր

տուեալ, վ՟ս զի յոյժ բեկաւ զօրութի՟ն ն՟ր, ոչ զի երկրորդին կողմանքն ն՟ր հարան. սակայն զօրքն Հայոց վ՟ս նենգութե՟ն Վասակայ՝ որ բազում անգամ հասեալ էին ՚ի վերայ ասութե՟ նորա. վ՟ս այնորիկ և Հրամանի թագաւորին ոչ կարէին հաւատալ վաղվաղակի.

## ԳԼ՟. Լ՟.

Եօթներորդ յեղանակ՝ կարգադրի դարձեալ տառապինութեանն Հայոց, և չարագոյն եւս երևի անօրէնութի՟ն Վասակայ:

Արդ՝ դարձեալ յայնժամ ուրացեալն Վասակ դրդեաց զՄուշկաննիւսալաւուրտ և զն՟մ աւագանին արեաց. առեալ զզօրսն հասանէր ՚ի վ՟ր ամրին՝ յոր անկեալ էին գունդ մի ՚ի զօրացն Հայոց հանդերձ ս՟բ քահանայիւքն, և մարտ եդեալ կռուէին շուրջ զբերդաւն:

Իբրև ոչինչ կարացին առնել ն՟ց, դարձեալ յերդմունս ապաստան եղեալ, զի ուխտիւ իջուսցեն զն՟ս՝ առանց դաւ ինչ գործելոյ: Նա երկիցս անգամ ետուն տանել զաւետարանն, թէպէտև քահանայքն յանձն առնուին զիջանելն կալ առաջի, բազումք ՚ի զօրականացն ոչ կարէին հաւատալ սուտ ուխտին Վասակայ. քանզի սկսաւ երթալ Մուշկաննիւսալաւուրտ զհետ չար խրատուն Վասակայ:

Մի ոմն ՚ի քաջ զօրականէն Հայոց՝ որ անկեալ էր ՚ի բերդն փախստեամբ՝ Բակ անուն,

և

ելեալ 'ի պարիսպն , Թշնամանս դնէր անօրինին և ցուցանէր առաջի պարսից զօրագլխին զամենայն չարիսն՝ զոր անցուցեալ էր նր ընդ աշխարհն հայոց ։ Որոց՝ բազում վկայութեամբ լուեալ , արդարացուցանէին զամբաստանութիւնն . ոչ միայն 'ի հայոց կողմանէն , այլ եւ առաւել զօրքն պարսից ։

Սոյն այս այր՝ 'ի նմին գիշերի եօթն հարիւր արամբ ել գնաց 'ի բերդէ անտի . և ոչ կարացին ձեռն արկանել 'ի նա ։ Իսկ որ 'ի ներքս յամրին մնացին , թէպէտև գիտէին ճշմարտիւ զխաբեբայ երդմունս նր , ոչ ունէին համբար 'ի ներքս , իբրև ոչ կամաւ իջեալ կացին առաջի , հրամայեաց սպանանել 'ի նոցանէ երկերիւր և երեքտասան այր ։

Ողորմեցին ամենեքեան և ասեն . գոհանամք զքէն տէր ած մեր , որ մինչդեռ չէն են եկեղեցիք , և անքակ տաճարք վկայից , և միաբան ոք ուխտ եկեղեցւոյ առաքինացեալ , որժամի արարեր զմեզ կցորդ երկնաւորի ։ Հաստատեցի մահս մեր ընդ մահ քաջ նահատակացն . և խառնեցի արիւնս մեր ը արիւն անկեալ վիրաւորելոցն . և հաճեցի տէր կամաւոր ընդ եկեղեցիս իւր՝ բազմութբ կամաւոր զոհարակացս , որ ելանեն 'ի վր սբյ սեղանոյս ։

Զայս ասելով կատարեցան 'ի տեղւոջն երկերիւրքն և երեքտասանքն ։ Իսկ ոմն քահանայքն որ անդ դիպեցան 'ի յաւուրսն , երանելիքս այս Յովսէփ և Ղևոնդ բազում ընկերակցօքն իւրեանց մատուցին և նոքա զպարանոցս իւրեանց՝ առաջի որոյ դահճապետին ,

ասե

տանելով զնոյն բանս՝ զոր խօսեցան երկերիւրքն և երեքտասանքն ։

Քանզի ոչ եթէ անկարութի ինչ էր երանելեացն լոտ մարմնաւոր կենացս, այլ իմաստութեամբ հնարս խնդրէին լինել փոխանակ ամենայն աշխարհի շինութե ։ Վասն որոյ և բողոք 'ի դուռն կարդային, և զամենայն ամբաստանութիւնն արկանէին զանօրէնն վասակաւ ։

Զայս իբրև լուաւ մուշկաննիւսալաւուրտ, ոչ իշխեաց ձեռն արկանել մահուամբ 'ի նս, այլ զՅովսէփ և զՂևոնդ գան հարեալ՝ հրամայեցին պահել զգուշութե ։ քանզի բողոք 'ի դուռն կարդային ։ Իսկ զայլ քահանայսն արձակեցին յիւրաքանչիւր տեղիս, հրաման տուեալ վս խաղաղութեան և շինութեան աշխարհի ։

Այլ մարդիկն հայոց՝ որ հասեալ էին 'ի վր յեղյեղուկ հրամանաց Թագաւորին, և ուրացեալ չարիմացն վասակայ, ոչի՛նչ հաւատային սուտ Թողութեն ։ այլ քաջալերէին զմիմեանս և ասէին, զի՞ պիտոյ է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխարհիս ։ և կամ ընդէ՞ր տեսանեմք զարև յետ մերոց սիրելեացն ։

Զի եթէ քաջ նահատակքն մեր անկան 'ի մեծ պատերազմին, և բազում վիրաւորք տապալեցան յարիւն ապաժոյժ 'ի մէջ դաշտին, և ամենեցուն մարմինքն եղեն գէշ Թռչնոց և կերակուր գազանաց ։ և պատուական նախարարքն մեր հասին յանարգութի Թշուառութե, եթին զիւրաքանչիւր իշխանութի և են 'ի հալածանս նեղութեան, և ամ փափկութի հայոց եհաս

եհաս 'ի վիճակս վտանգի և յանհնարին ապակա-
նութիւն, ոչ անուամբ խաբեբայ հրամանացդ։

Թողին այնուհետև իւրաքանչիւր զգիւղս և զաւանս և զագարակս, եկին հարուստք յառագաստաց և փեսայք 'ի սենեկաց, անկան ծերք յաթոռոց և տղայք 'ի գրկաց, երթային երիտասարդք և կուսանք և ամենայն բազմութի արանց և կանանց, հասեալ ունէին զամուրս անապատին և զանխսաբ տեղիս բազում լերանց։

Եւ համարէին զգազանաբար բնակութին ածպաշտութե 'ի քարանձաւս կեալ, քան ուրացութե փափկանալ յիւրաքանչիւր շինուածս։ Ոմանց տունձելոյ համբերէին խստութեա կերակրոյն. և ոչ կրէին զսովորական խորտիկսն, համարեալ էին նոցա դարափորքն իբրև զպարկս բարձր շինուածոց. և գետնանկողինքն իբրև զնկարեալ պատշգամբս։ Աղմուք էին մրմունջք երգոց, և ընթերցուածք սբ գրոց կատարեալ ուրախութիւնք։

Ամենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր. նոյն ինքն քահանայ. մարմինք իւրաքանչիւր սբ սեղան. և ոգիք նոցունց՝ պատարագ ընդունելի. քանզի ոչ ոք 'ի նոցանէ ողբայր յուսահատութեամբ՝ զանկեալսն 'ի սրոյ. և ոչ ոք հեծեծելով հառաչէր 'ի վերայ մերձաւոր սիրելեաց իւրոց։ Խնդութե ընկալան զյափշտակութի ընչից բազմաց, և ոչ կրէին ամենեւին՝ թէ եղեալ իցեն նց ստացուածք։

Համբերութե ձգնէին. և մեծաւ առաքինութեամբ տանէին զքաղ նահատակութիւնն։ Զի եթէ ոչ բացաւ աչօք տեսանէին զյոյսն խնդալից, և ոչ կարէին խոկ գործել զայնպիսի մեծ

մեծ տուպքինութ՟ի · քանզի բազումք ՚ի յազգէ մեծ նախարարացն էին, եղբարք և որդիք և դստերք հանդերձ ա՟մ սիրելեօքն իւրեանց՝ ՚ի մէջ ամրական վայրենեացն ։ Ոմանք յայսկոյս յերկիրն խաղտեաց · և այլք բազումք ՚ի կող֊մանս հարաւոյ յանմատոյց ամուրսն ամրեաց · և կէսքն ՚ի Թանձրախիտ մայրիսն արձախայ · և այլ ոմանք ոմանք անդէն ՚ի միջոցի աշխարհին բռնացան ՚ի ձ՟ռ բազում ամրոցացն · և ա՟մքն մե֊ծաւ համբերութ՟բ տանէին զբազում նեղու֊թիւնսն վ՟ս յուսոյն ա՟յ · զայս միայն խնդրէին յ՟այ, մի՛ տեսանել ն՟ց զաւեր սուրբ եկեղե֊ցեացն ։

Այլ որպէս ցուցաք բազում անգամ զամ֊բարշտին չարութ՟ի, յորդորէր և ստիպէր զզօրսն պարսից ՚ի մտաւոր կողմանց աշխարհին, զի հրամանաւ արքունի զօր եկեսցէ յօգնականու֊թիւն ն՟ց ։ Եւ հասեալ բազում այրուձի, յա֊ւելոյր ՚ի թի՟ւ անկելոցն և լինէր գունդ բազ֊մութեան իբրև զառաջինն · և յառաջ խաղա֊ցին ՚ի միջոց աշխարհին՝ մարտ եդեալ կռուէին ընդ մեծ ամուրս կապուտ լերինն ։

Իսկ որք ՚ի ներքս էին, քաջութ՟բ մարտու֊ցեալ հարկանէին զբազումս ՚ի գնդէն պարսից· և զմնացեալսն փախստական ՚ի բանակն արկա֊նէին ։ Իսկ ն՟ց դարձեալ յողոքանս մատուցեալ, նուաճել խաբէութ՟բ կամէին ։ Իբրև ո՛չ ոք հաւատաց իջանել առ ն՟ս, զի մի՛ մատնեսցին չա֊րաչար ՚ի ձեռս թշնամեացն, սակայն վ՟ս երդ֊մանցն հարկ եղև քահանայիցն իջանել առ ն՟ս ։

Որում անուն էր Արշէն, խօսէր ը՟ն՟ս յա֊ղերս ընդանու՟է, և ցուցանէր զանիշխան փախուստ

անմեղացն ։ Արկանէր գութ առաջի ուրացեալն վաստակոյ, և պաղատելով յիշեցուցանէր նմա զառաջին կարգ ուխտին քրիստոնէութե՛, զի թերևս սակաւիկ մի քաղցրացի յանհնարին դառնութենէն ։ Այլ նա ոչ՛ինչ լուաւ և անսաց բազում բանից նր ․ կապեաց և խաղացոյց զերանելին, և որք ընդ նմա իջեալ էին ։

Մանաւանդ իբրև ետես եթէ երթայ զօրավարն զհետ խրատու կամաց նր, սկսաւ այնուհետև ՚ի բազում տեղիս արձակել զասպատակաւորսն ․ և զոր արտաքոյ քան զամուրսն գտանէին զբազմութի մարդկան՝ ՚ի գերութի վարեցին, և զամբար ՚ի ձեռն առեալ՝ հրձիգ առնէին զբազում տեղիս ։

Իսկ որք էին յամուրսն ամրեաց, իբրև լուան զայս ամ չարիս՝ զոր գործեցին զօրքն արքունի, ոչ՛ինչ շահ օգտի համարէին զկալն ՚ի մէջ ամրականացն ։ Քաջութե եղեալ յարձակեցան օգնականութե ամրականացն ․ և հասեալ ՚ի մօտաւոր աշխարհն պարսից, յանխնայ կոտորելով նախճիրս արեան գործէին, և զմնացեալսն գերի առեալ տանէին ․ և անդրէն յամուրսն անկանէին, և զշինուածս աշխարհին՝ զամբար ՚ի ձեռն առեալ հրոյ ճարակ տային ։

Դարձեալ և որք էին ՚ի լերինս խաղտեաց, իբրև տեսին թէ յանդգնաբար զօրք պարսկաց յաներկիւղս իջանեն յամուրս աշխարհին հայոց, յարձակեցան և նոքա մեծաւ զօրութե ՚ի ձորագաւառն տայոց, և գտին անդ գունդ բազում ՚ի զօրացն արքունի՝ որ գերի առնուլ կամէին զամրականս աշխարհին ։

Դարձեալ և կարծէին նս եթէ գանձ նա-

խաբարացն անդ իցեն, վասն այնորիկ և յան-
խնայ յուղեն զվայրսն. Նաև տեսին ես անդ
՚ի գիւղս երկուս՝ զի զեկեղեցիսն այրեցեալ էին,
առաւել մ՟ այնր ՚ի նախանձ բարկութե ըն-
դեցան. յարձակեցան հարան ՚ի դիմի մեծանց,
և կամակարութը յաղթեալ բեկին արկին զզօ-
րութի գնդին պարսից. և կոտորեցին զբազում
՚ի նոցանէ. և զմնացեալսն փախստական հանին
յաշխարհէն.

Իսկ յայնժամ յանդուգն յարձակմանէն միայն
երանելին Հմայեակ եղբայր սպարապետին հայոց՝
յանխնայ քաջութեամբ մարտուցեալ կատարե-
ցաւ նահատակութը ՚ի մ՟ջ ս՟ր ուխտին միա-
բանութեան. և այլքն ն՟մ ողջանդամ ապրեալ,
երթային զհետ փախստականացն. Իսկ իբրև
այս այսպէս կատարեցաւ, դադարեցին զօրք
թագաւորին խառնամուխ լինել յամ տեղիս
անխտրութեամբ. և ևս առաւել ձեռնապահ
լինել եկեղեցեացն.

Դարձեալ միանգամ անդրէն հարցանել
սկսան յարքունիս. Նաև որ յարձախամեալքն
անկեալք էին փախստականք, ոչ ինչ լռեալ դա-
դարեցին խաղաղութը. այլ հանապազ յղէին
յաշխարհն հայոց, շարժէին և յորդորէին
զգունդն հայոց. և յիշեցուցանէին զուխտն՝
զոր եդեալ էր ընդ հայս և անստոյգ երդմամբ
հաստատեալ. Հաճոյ թուեցաւ բազմաց ՚ի նո-
ցանէ լինել զրանան քաղաքութեամբ. Նաև
մեծագոյնի ևս լինէին նոյ, եթէ ՚ի կողմն ընդդէ
մ՟ եկիր պատրաստութը.

Իսկ իբրև յառաջնումն ինչ մ՟ հնարէին,
զմիաբանս հաւանեցուցեալ՝ գունդ բազում
գու-

գումարէին, և անդէն յարձակեալ հասանէին 'ի սահմանս տէրութեան պարսից. և զբազում գաւառս հարեալ՝ բազմագոյն ևս գերի առեալ տանէին յաշխարհն իւրեանց. և Թագաւորին յայտնի ցուցանէին զմիաբանութիւն՝ զոր ունէին ընդ գնդին հայոց. /

Իսկ իբրև այս ամ̃ ազդումն հասանէր առ զօրավարն պարսից, սաստկեալ զայրանայր և մեծ բարկութի̃ կուտէր 'ի վերայ անօրէնն վասակայ. իբրու թէ նա իցէ սկիզբն և առաջնորդ ամ̃ չարեացն որ գործեցան. Եւ անդէն չու արարեալ խաղայր գնայր հասանէր յաշխարհն պարսից. Գրէր և ցուցանէր յարքունիս զամենայն ստուգութի̃, և զնոցա գործոյն արկանէր զուրացելոյն.

Իբրև լուաւ Թագաւորն զամենայն աւեր աշխարհին, և ստուգեաց զիրս մեծի պատերազմին. բեկանէր անկանէր 'ի մեծ խռովութիւն, և լռեալ դադարէր 'ի հանապազորդ և 'ի խաւարեայ խորհրդոյն. Յուզէր և քննէր ըզ վրիպումն անհանճար գործոյն, և կամէր տեսանել աւելով, ո՞ ոք իցէ որ զիս ճշմարտութի̃ 'ի վերայ իրացդ հասուցէ. Իսկ որ գիտակին էր անօրէն գործոյն, անդէն 'ի դրանն արքունի նոյն հազարապետն միհներսեհ, յառաջ մատուցեալ առ Թագաւորն. զայդ ես ասեմ քեզ արքայ քաջ, եթէ կամիս ստուգութի̃ լսել զարդարն, որք գլխաւորք են քրիստոնէից 'ի հայս՝ տուր կոչել. և դու յօժարութի̃ և ասեն քեզ զամ̃ արդարութի̃.

Յայնժամ զմի ոմն յաւագ նախարարացն ատրորմիզդ անուն, որոյ իշխանութիւնն իսկ

խառն

խառն էր ընդ հայոց աշխարհին, և գործակից էր զօրավարին 'ի նմին պատերազմի. գրէր և յանձն առնէր նմա զաշխարհն հայոց մարզպանութեամբ։ Այս մուշկաննիւսալաւուրտ հանդերձ ամ միացեալ զօրուն՝ գումարէր յաշխարհն աղուանից և լփնաց և ճղբաց և հեճմատակաց և 'ի թմախարաց և խիբխովան, և յամ ամրականս՝ զոր աւերեալ էր գնդին հոնաց վս ուխտին հայոց. որք և յոյժ իսկ տրտմեալ էր թագաւորն, ոչ միայն ընդ աւեր աշխարհին և ընդ անկանել զօրացն, այլ ևս առաւել ընդ աւերել պահակին, զոր 'ի բազում ժամանակաց հազիւ ուրեմն կարացին շինել. և յայնմ ժամանակի առաւել քանդեցաւ, որում չէր իսկ անկարութի շինութե։ Իսկ զվասակ հանդերձ գլխաւոր քրիստոնէիւքն՝ հրամայեաց 'ի դուռն ածել։

Արդ՝ եկն եհաս մարզպանն ատրորմիզդ յաշխարհն հայոց՝ սիրով և խաղաղութ հրամանաւ արքունի, կոչեաց առ ինքն զՍահակ եպիսկոպոսն րշտունեաց՝ ուսանել 'ի նմանէ զկրացն ամբաստանութի։ Բայց նա թէպէտև աւերեալ էր տաճարն մի և բազում չարչարանօք հարեալ էր զպաշտօնեայս կրակին, ո՛չինչ զանգիտեաց գալ յատեան հրապարակին։

Գտանեալ և 'ի տանէն արծրունեաց բարեպաշտ երէց մի Մուշէ անուն՝ որ առաջնորդէր արծրունեաց աշխարհին, աւերեալ էր և նա զկրակատուն մի, և կապանօք բազում չարչարանս անցուցեալ էր ընդ մոգսն. և սա ո՛չինչ զանգիտեաց, այլ կամաւ եկն և յանդիման եղև մարզպանին.

Նա

Երկու եւս այլ քահանայք երանելիք՝ որոց անուանք են Սամուէլ և Աբրահամ, քանդեալ էր և սոցա զատրուշանն յարտաշատ, և յառաջագոյն ըմբռնեալք էին ՚ի կապանս յուրացեալն վասակայ . ածին և զնս առ առաքինի ընկերսն :

Եւ ժողովեցին եւս ՚ի նոյն տեղի զմեծն Յովսէփ և զՂեւոնդ և զՔաջաջ և զԱրշէն : Իսկ մարզպանն իբրև ուսաւ և տեղեկացաւ յամենեցունց, գրեաց և եցոյց յարքունիս զամ ճշմարտութի, որպ զիարդ լուաւ ՚ի բերանոյ նց : Բայց վասակ՝ թէպէտև յառաջագոյն հասեալ էր ՚ի դուռն, ըստ կամաց իւրոց զամենայն այլ ընդ այլոյ եղծեալ պատմէր ստութի . սակայն ՚ի միտս թագաւորին ոչ կարէր զանձն արդարացուցանել : Պատասխանի արար նմա և ասէ, յորժամ քրիստոնեայքն եւս եկեսցեն, հասարակաց լուայց յատենին :

Իսկ զոր քահանայսն՝ վն զի կապանօք տանէին, յետ երկուց ամաց և քան աւուր հասանէին ՚ի ձմերոցն արքունի . իբրև լուաւ մեծ հազարապետն եթէ ածին զնս ՚ի քաղաքն, ինքն իսկ ականատես լինէր նց : Բայց թէպէտև տեղեկութի լսէր ՚ի նոցանէ զամ, ոչ կարէր ձեռն արկանել և չարչարել զնս . քանզի բազումք ՚ի նախարարացն հայոց դեռևս և եւս բռնացեալ ունէին զամուրս աշխարհին, և դեռևս մարզպանն յերկիւղի էր . վն և զգուշութեամբ հրամայէր պահել զնս, և զաշխարհն հրամայէր սիրով նուաճել . վն և ինքն իսկ շրջէր և ժողովէր և շինէր ուխտիւ հաստատութեամբ, և եպիսկոպոսացն հրաման տայր ունել զիւրաքանչիւր իշխանութի . և ըստ ա֊

ռա

ռաջին սովորութեան պաշտել յայտնութ̃ք, և համարձակութ̃ք եւս գալ 'ի հրապարակ. նաև ընծայից և պատարագաց արժանի առնէր թո-ղուլ զառաջեաւ ։

Իսկ քանզի բազում գաւառս առեալ և ա-ւերեալ էր զօրականին, թողուլ հրամայէր զհարկս աշխարհին. և զայրուձին եւս զարքունի թեթևացոյց առ ժամանակ մի ։ Իսկ միայնակեացք որ ելեալ և կորուսեալ էին, հրամայէր գալ և ունել զիւրաքանչիւր տեղիս. և զնոյն կարգս ա̃ծպաշտութեան ոչ զեղծ և ունէին յառաջ ժամանակաւ առ Նախնեօքն, նոյնպէս և այժմ կալցին ասէ ։ Իսկ եթէ ոք 'ի հեռի աշխարհ ուրեք գնացեալ իցէ, իմ իշխանութիւն է յար-քունուստ ասէ մարզպանն, եթէ յաշխարհաց իցէ, եթէ 'ի շինականաց, եթէ յեկեղեցւոյ. զինչ կեանս և թողեալ իցէ, եկեսցեն և կալցին զիւրաքանչիւր սպասս ։

Հրովմանս կնքէր և առաքէր 'ի կողմանս կող-մանս. որ և բազում խոյ եկին և ժողովեցան և կալան զիւրաքանչիւր կալուածս ։ Նաև որ մեծն է քան զա̃մ, որ 'ի բռնութէ̃ ոք ակամայ զմոգութիւն կալեալ էր, հրովարտակ առաքէր յարքունուստ անդրէն ունել զքրիստոնէու-թիւնն ։

Իսկ յանդիման խօսէր թագաւորն՝ որք էին 'ի դրանն արքունի, եթէ որք ոչ սիրով ունիցին զդենմազդեզն, այնպիսեացն և ա̃ծքն են ցա-սուցեալ. և ես զինչ եմ հարկանել. և այսօր միայն հրաման տամ ամենեցուն 'ի կամս մար-դոյն թողեալ լոս իւրաքանչիւր մտաց. ոչ զինչ կամի պաշտել, պաշտեսցէ. ա̃ծքն իմ ծա-

ռայք

ռայք են․ Զայս ասէր և գրով հրաման տայր ամ աշխարհի ։

Իբրև զայս լուան և տեսին բազումք՝ որ էին ցանեալք և ցրուեալք 'ի հեռաւոր տեղիս, գային և ունէին զիւրաքանչիւր տունս ։ Իսկ նախարարքն՝ որ էին յամուրս աշխարհին և կամ 'ի հեռի օտարութե, իբրև տեսին զշինութիւն երկրին, մանաւանդ զեկեղեցեացն հաստատութի, քաջալերեցան համարձակեցան և նոքա յանդիման լինել արքային ։ Ան որոց և պատգամաւորս յղեցին առ մարզպան աշխարհին, զի 'ի դուռն ցուցցէ զբանս նախարարացն ։ Իսկ նա փաղփաղուկ յարքունուստ գիր ողոքանաց և ուխտ հաստատութեան տայր տանել առ նոսա ։

Բայց նոքա թէպէտև գիտէին զշահութիւն տէրութեն թէ սուտ էին յամի, կամեցան չարչարակից լինել սբցն․ զի եթէ մահ ևս առաջի կայցէ, ոչ՛ինչ զանգիտեցին երկիւղի ։ Եւ զայս լուեալ թագաւորն՝ ոչ կապանօք, այլ արձակ ուխտիւք և արձակ ձեռօք հրամայէր առ ինքն կոչել․ ածին փաղփաղուկ զկին և զորդիս և զինչս իւրաքանչիւր, ետուն 'ի ձեռս մարզպանին, և ինքեանք փութապէս գնացին 'ի ձմերոցն արքունի ։

Եւ մինչդեռ անդէն 'ի ձմերոցի էր թագաւորն, ատեան հարցափորձի 'ի մէջ նց հրամայէր առնել․ և նստաւ հազարապետն զի լուիցէ երկոցունց կողմանցն ։

Եւ իբրև յերկարեցաւ ամբաստանութիւնն զաւուրս բազումս, պարտաւորեցաւ կողմն ուրացելոցն․ քանզի ցուցանէին զթուղթսն՝ զոր

որ

տուեալ էր վասակայ և ամենեցուն որ ընդ նմա էին, զի մուրհանք իցեն ընդ նմա յուխտ ապստամբութեան: Թուղթ մի ՚ի վրաց աշխարհն, թուղթ մի յաղուանից աշխարհն. նոյնպէս և թուղթ մի յաղձնիս, և հրովարտակ մի առ թագաւորն յունաց, և թուղթ մի առ մեծ սպարապետն անտիոք: Եւ ՚ի բոլորեսին յայն թղթսն վաւերական մատանին վասակայ եդեալ էր:

Նոյնպէս խառն էր նա և ՚ի մահ մոգուցն ՚ի զարհուրանի: Եւ զբազում բերդս զոր հանին ՚ի պարսկաց, յայտ առնէին զնր թուղթս և զհրամանս. քանզի նա էր մարզպան ՚ի ժամանակին: Որպէս և հրեշտակութք իսկ զոր յղեալ էր նր առ յոյնս նախարար մի, որում անուն էր ատոմ յազգէն գնունեաց:

Սա մատուցեալ յանդիմանէր զնա առաջի մեծ ատենին հրովարտակաւն իսկ՝ զոր տուեալն էր նր իւրով մատանեաւ: Նաև ՚ի մէջ իսկ բերէր զամբաստանութի նր մուշկաննիւսալաւուրտ. և յայտ առնէր պատերազմակից ընկերօքն իւրովք, որ յետ վճարելոյ պատերազմին բազում արիւնս ետ հեղուլ վասակ: Որպէս սուտ երդմամբ խաբէր և խլուցանէր յամրոցաց անտի: Իր՝ զոր կոտորէր, և էր՝ զոր գերի վարէր զծառայս և զաղախնեայս արքունի: Եւ ՚ի վր այսր ամի փոխան և գող եւ գտանէր հարկի աշխարհին արեաց, որ յարքունիսն երթայր:

Նաև յուրացեալ ընկերաց նորա՝ բազումք էին որ յայտ արարին զչարիս նր, զոր գործեալ էր ընդ աշխարհն հայոց: Եւ ՚ի մնացեալ



մո

մոգուցն և փշտիպանացն, որ 'ի կապանս ապ-
րեալք էին, և ապա ածին յարքունիս. հարցին
և ցնոսա վասն նր̅ և ասեն, դուք ի՞նչ տե-
ղեակ էք վասն չարութե̅ դորա: Ետուն պա-
տասխանի և ասեն. ամ̅ անցք չարչարանաց որ
անցին ը̅ մեզ, և բազում հարուածքն որ եղեն
'ի զօրսն արքունի, և աւեր և գերութի̅ աշ-
խարհին հայոց, և կորուստ հարկացն արքունի,
սկիզբն և առաջնորդ չարեաց՝ այրդ այդ եղև:

Եւ մինչդեռ այս ամ̅ ամբաստանութիւն ըղ
նմանէ էր զայնչափ բազում աւուրս, յառաջ
մատեան և իւր ազգականքն, որ և ս յառա-
ջագոյն դատախազ լեալ էին զնմանէ արքայի.
սկսան և կարգաւ ցուցանել և յայտ առնել.
ո̅պ զի բարեկամացեալ էր նր̅ ընդ հեռանայ
հոնի՝ միաբանութե̅ բաղաստական արքայի 'ի ժա-
մանակին զի կոտորեաց հեռանն այն զզօրսն պար-
սից յաղուանս. և ասպատակաւ եհաս յերկիրն
յունաց և բազում գերի և աւար խաղացոյց
'ի հոռոմոց և'ի հայոց, 'ի վրաց և յաղուանից:
Որպէս զի 'ի վր̅ եհաս խորհրդոյն ինքն թա-
գաւորն, և սպան զբաղաստական արքայ:

Եւ վասակ՝ մարզպան էր հայոց 'ի ժամանա-
կին. և թշնամեացն արքունի խորհրդակից
գտաւ: Ցուցին և յայտ արարին ազգականք
նր̅, ո̅պ հմուտ և տեղեակ իսկ էին ամ̅ չար
խորհրդոցն նր̅. զամ̅ ցուցանէին և յայտ առ-
նէին առաջի թագաւորին. և զայլ ևս բազ-
մագոյն խարդախութիւն՝ որ ստութե̅ վարէր
զկեանս իւր. ոչ միայն առ ընկերս, այլ և առ
թագաւորն ինքնին գլխովին. զի ոչ երբեք
արդարութե̅ վարեալ էր 'ի մանկութենէ:

Յայնմ ժամանակի հրաման ետ հազարապետն և ասէ, ածէք այսր և՛ի կապելոցն որ են 'ի բանտի անդ ։ Լուծին և ածին յերանելեացն զՍահակ եպիսկոպոս Ռշտունեաց, և զսուրբն Յովսէփ և զՂևոնդ երէց ։

Եւ իբրև մերկացան ա̃մ բանք ատենին առաջի նց̃, ետ պատասխանի Սահակ եպիսկոպոսն և ասէ ․ որ յայտնի ուրացեալ են 'ի ճշմարիտն ա̃ծ, ո՛չ գիտեն զի՛նչ գործեն և զի՛նչ խօսին ․ քանզի խաւարային են խորհուրդք նոցա ։ Օտարերս պաշտեն սուտ պաշտամանօք, և ընդ ընկերս մոլանեն յուխտ ստութեան ․ և են նոքա դարանք սատանայի, զի նոքօք կատարէ զդառնութիւն կամաց իւրոց ․ ո̃պ երևի իսկ 'ի դոյն յայդ վասակ ։

Քանզի մինչ ունէր զանուն քրիստոնէութեանն, վերին երեսօքն կարծէր ծածկել և թաքուցանել զա̃մ չարութի̃ն իւր առաջի ձերոյ անգէտ տէրութե̃դ ․ և զա̃մ նենգութի̃ն իւր՝ քրիստոնէութե̃ն ծածկէր ։ Ուստի և ձեր իսկ կարծեցաւ՝ մեծապէս պատուեցէք զդա առաւել քան զարժանն իւր ․ հաւատացէք դմա զաշխարհն վրաց, հարցէք ցաշխարհն՝ եթէ զո՛հ իցեն զդմանէ ։ Եւ տուք դմա զտէրութի̃ն սիւնեաց, լուարո՛ւք յազգականաց անտի դորա՝ զի՛նչ պատմեն զդմանէ ։

Արարէք զդա մարզպան հայոց, զոր նախնեացն ձերոց մեծաւ աշխատութ̃բ դտեալ էր, դա 'ի միում ամի կորոյս զերկիրն ա̃մ ․ տեսե̃ր՝ իբրև բարձաւ 'ի դմանէ պատուական անունն ա̃յ՝ զոր ունէր ստութ̃բ, մերկ երևեցաւ ա̃մ չարագործութի̃ դորա ։ Զի եթէ առ ա̃ծն իւր սուտ

սուտ գտաւ , առ ո՛ ոք 'ի մահկանացուաց աստի՞ դա արդար գտցի ։ Արդ՝ ամենայն ամբաստանութիւն որ այժմ յայտնի եղև զդմանէ , ո՞չ ահա յառաջագոյն լուեալ էր ձեր ․ բայց յո՛ր դէմս ծածկեցէքն , դուք ձեզէն քաջ գիտէք ․ և ինձ այսպէս թուի , եթէ սուտ յուսով դա զմեզ խնդացոյց ․ այլ ո՛չ դուք և ո՛չ նա և որ զկնի ձեր գալոցն է , զայն 'ի մեզ ո՛չ կարէ տեսանել ։ Արդ՝ արարէք որպէս և կամիք ․ ցմեզ զի՞ հարցանէք ։

Զարմացաւ մեծ հազարապետն ընդ միտս իւր , և 'ի խորհուրդս իւր քննէր զամենայն բանս ատենին ․ քանզի հասեալ էր 'ի վերայ՝ եթէ յիրաւի դատապարտեցաւ այրն այն ըստ արժանի գործոց իւրոց ։ Եմուտ և եցոյց զամենայն բանս ատենին յարքունիսն ։

Եւ իբրև լուաւ Թագաւորն և ստուգեաց 'ի հազարապետէն զանձն պարտաւորութիւն , բարկացաւ յոյժ և 'ի խոր խոցեցաւ ․ բայց երկայնմտութեամբ կամեցաւ հատուցանել նմա մեծ անարգութիւն ։ Լուռ եկաց աւուրս երկոտասան մինչև 'ի գլուխ չոգաւ փութին ամբաստանութեան ։ Եւ եղև յաւուր միում մեծի՝ զամենայն երևելի պատուականսն հրամայէր յընթրիս կոչել ։ Կոչեցին և զուրացեալն ․ և նա ըստ առաջին կարգի օրինացն արքունի՝ արկանէր զպատուական հանդերձն զոր ունէր 'ի Թագաւորէն ։

Կապէր զպատիւ վարսին ․ և զխոյրն ոսկեղէն դնէր 'ի վերայ ․ և զկամանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբ պատուականօք ընդ մէջ իւր ածէր ․ և զգինդսն

յա

յականջս և զգումարտակն 'ի պարանոցին . և զասպարեան զթիկամբքն . և զա̃մ օրէն պատուոյն զանձամբ արկեալ, երթայր յարքունիս . չքեղ և երևելի քան զամենեսեան երևէր ամենայն բազմութեան :

Իսկ նախարարքն' որ կամօք իւրեանց չոքան 'ի Հայոց, անձամբ տուեալ զանձինս 'ի փորձութի . և ո̃րքն' որ յառաջագոյն հասեալ էին և կայանոք ունէին զա̃մն առ դրանն արքունի, իբրև տեսին զնա զարդարեալ և չքեղացեալ և բազմամբոխ գնդաւ գայր յարքունիս, 'ի միտ իւրեանց սկսան այպանել զնա և ասել, ո̃վ անմիտ վաճառական' զանմահ և զանանց պատիւն ետուր, և զանցաւորդ գնեցեր . զոր և զայդ ևս ընդ մոտ աւուրս կորուսանելոց ես : Ահա և նստաւ 'ի ներքին դահլիճն, ուր էր հրապարակ մեծամեծացն :

Արդ' եկն եւ սենեկապանն յարքունուստ, հարցանէր զնա և ասէր, արքայ յղեաց առ քեզ . յումմէ՞ գտեալ է քո զայդ ա̃մ պատուական պատիւդ . ասա ինձ վաղվաղակի մի̃ ո̃ր արդար վաստակոց : Նա յուշ առնէր նմա զա̃մ բանս տանէրին, յորում դատապարտեցաւ նա . և զոր ոչ ևս անդ խօսեցան, զայն յայտնէր նմա : Զի ոչ ըստ կարգի ունէր նա զտէրութիւն աշխարհին Սիւնեաց, այլ նենգութ̃բ և քսութեամբ եւ ապաստանել զհօր եղբօրն իւր զՎաղինակ, և յինքն տարաւ զտէրութին իբրև ըզ քրտինկար յարքունիս :

Նաև այլ ևս բազում բանիւք դատապարտեցին զնա . որում և ա̃մ աւագանին' վկայ գային : Մարզպանձեցաւ ամենեքին և չգտաւ բան

ձրշ

ճշմարիտ 'ի բերան նորա ։ Եւ իբրև կրկնեցին եւ երեքկնեցին ցուցանելով 'ի ներքս յարքունիս, հաստատ վճիռ մահու 'ի վր՟ նր՟ ։ Եկին եւ դահճապետն, եւ առաջի ամ՟ մեծամեծացն մերկացոյց 'ի նմանէ վաղվաղակի զպատուի՟ն արքունի, եւ զգեցոյց նմա հանդերձ մահապարտի ։ Կապեցին զոտս եւ զձեռս, եւ կանացաբար նստուցին 'ի ձի մատակի՝ տարան ետուն յայն զինդան, ուր կային մահապարտքն ։

Իսկ նախարարքն հայոց եւ ամ՟ եպիսկոպոսքն հանդերձ երիցամբքն՝ թէպէտեւ էին 'ի մեծ պատուհասի, ոչի՟նչ յիշէին զնեղութիւնն՝ որ անցեալ էր ընդ նս՟, եւ կամ որ այլ եւս ակնկալութիւն էր գալ 'ի վր՟ . այլ զարմացեալ էին ընդ մեծ յայտնութիւն, որ եղեւ յայս ։

Մխիթարէին զմիմեանս եւ ասէին, քաջալերս պատերազմեցայք, առաւել եւս համբերութբ՟ ճգնեսցուք ։ Լուեալ է մեր 'ի նր՟ հարցն մերոց, եթէ գլուխ ամ՟ առաքինութե՟ համբերութիւն է . եւ իմաստութի՟ երկնաւոր՝ կատարեալ ամբարշտութի՟ . եւ զայս ոչ ոք կարէ գտանել առանց չարչարանաց ։

Իսկ չարչարանքն յորժամ ընդերկարեսցին 'ի վր՟, յայնժամ բազմանայ վարձ հատուցման պարգեւին ։ Ապա եթէ այդ այդպէս է, զայս միայն աղաչեսցուք զած՟, զի համբերել կարասցուք ամ՟ փորձութեց՟ . եւ տէր ինքնին առասցէ հնարս մերում փրկութե՟ ։

Լուեալ է մեր զդատաստան քաւաստան զինուորացն քի՟, որք էին 'ի հարուածս տանջանացն ։ Մինչ 'ի նոցանէ փութացաւ վրիպեաց 'ի սուրբ պսակէն . իսկ երեսուն եւ ինն

համ

համբերութ̄ք կատարեցան և հասին այնմ աւուրց , որում ցանկացեալն էին ։

Իսկ մեր ընկերակիցն՝ աւանիկ որ յառաջագոյն որոշեցաւ 'ի մէնջ , ահա եղև գործակից սատանայի ։ Մինչդեռ ոգին 'ի մարմնի է , ընկալաւ զառհաւատչեայ գեհենին տանջանաց . որ ոչ միայն սրբոց է ողբալի , այլև ա̄մ գազանաբարոյ մարդկան ։ Զայս տեսին և բազում արտասուս 'ի վերայ կորուսելոյն հեղուին ։ Նաանդէն երգս հոգևորս 'ի բերան առեալ ասէին . բարի է յուսալ 'ի տէր , քան յուսալ 'ի մարդիկ . բարի է յուսալ 'ի տէր , քան յուսալ յիշխանս ։ Ամենայն ազինք շրջեցան զինև , և անուամբ տեառն յաղթեցի նց̄ ։ Քաջալերէին զմիմեանս և ասէին , զայս գիտելով եղբարք՝ մի՛ երկիցուք յանա̄ծ ազգէն հեթանոսաց , որ քան զմեղուս վատթարագոյն ևս են 'ի զայրանալն իւրեանց . զի և նց̄ ցասումն 'ի սատակումն անձանց իւրեանց լինի . այլ մեք զանուն տեառն կարդասցուք և վանեսցուք զամենեսեան ։

Իսկ ուրացեալն փասակ հայէր 'ի միաբանութիւն ո̄ր կապելոյն , որք մեծաւ խնդութ̄ք ընդունէին զչարչարանս , և զուարթագոյն և պայծառք երևէին ո̄ք յառաջ յարքունիսն ։ Հայէր և կարօտէր , և ոչ ոք խառնեաց զնա 'ի նոսա . այլ ուրոյն նովին կապանօք պահէին , և օր ըստ օրէ բերէին և իբրև գէշ ընկենուին 'ի մեծ հրապարակին ։ Զալէին և սպանէին , և տեսիլ ա̄մ կարաւանին զնա առնէին . կողոպտեցին հանին , և ոչ թողին զոր ընդ իւրն ունէր ։ Մինչև ձաղեցին աղքատութեանն ,

մինչև

մինչև հաց մուրանային և բերէին նմա ծառայքն իւր ։

Եւ այնպէս սաստիկ արկին զպարտս հարկաց աշխարհին ՚ի վ՟ր տան ն՟ր, մինչև զհարց, և զհաւուց, և զեւր արարս, և զզարդ կանանց ևս եդ ՚ի վ՟ր, և ետ և տուժեցաւ, և ո՛չ կարաց հատուցանել զպարտսն արքունի ։ Եւ այն տեղիս հասուցին, մինչև հարցանել նմա եթէ կայցէ՞ ինչ գանձ ՚ի գերեզմանս նախնեացն մերոց ։ Եւ եթէ գտեալ էր ն՟ր հանէր և տայր ընդ իւրն և ընտանեացն տուգանս․ որպէս զի բազում մարդիկ իսկ չոգան ՚ի տուժին ։

Եւ իբրև այսպէս յա՟մ կողմանց հարեալ վատթարեցաւ, և չարաչար տանջեցաւ, անկաւ յախտս դժնդակս․ և անդէն ՚ի կապանս ջեռաւոր ն՟ր, և հարան և տրորեցան գոգք ն՟ր, և քամեալ մզեցաւ թանձրամութ՟ի ն՟ր ։ Ուռացին որդունք ընդ աչս ն՟ր, և ՚ի վայր սորեցին ընդ ունկունս ն՟ր ։ Խլացան լսելիք ն՟ր․ և ծակոտեցան չարաչար՝ շրթունք նորա ։ Լուծան ջիլք բազկաց ն՟ր․ և յետս կոյս կորացան կրունկք ոտից ն՟ր ։ Ուղխեաց ՚ի նմանէ հոտ մահու, և փախստական եղեն ՚ի նմանէ ձեռնասուն ծառայքն ն՟ր ։ Լեզուն միայն կայր կենդանի ՚ի բերան ն՟ր, և ո՛չ գտաւ խոստովանութիւն ՚ի շրթունս ն՟ր ։ Ճաշակեաց զմահ հեղձամղձուկ, և էջ ՚ի դժոխս անհնարին դառնութ՟ե ։ Ոտնհարէին նմա ա՟մ սիրելիք ն՟ր, և ո՛չ յագեցան սաստիկ հարուածովքն՝ ա՟մ թշնամիք ն՟ր ։ Եւ այն՝ որ կամէր թագաւոր լինել մեզ՝ աշխարհին հայոց, ո՛չ երևեցաւ տեղի գերեզմանի նորա․ քանզի իբրև զշուն մեռաւ, և իբրև զէշ քար-

շէ

շեցաւ ։ Ո՛չ յիշեցաւ անուն նր̃ 'ի մէջ սրբոց․ և ո՛չ մատուեաւ յիշատակ նր̃ առաջի սր̃ սեղանոյն յեկեղեցւոջ ։ Ո՛չ ի՛նչ եթող զչարիս զոր ո՛չ գործեաց 'ի կեանս իւր ․ և ո՛չ ի՛նչ մնաց 'ի մեծամեծ չարեաց որ ո՛չ անցին ընդ նա 'ի մահուան նր̃ ։

Գրեցաւ յիշատակարանս այս վս̃ նր̃ , առ 'ի կշտամբումն յանդիմանութե̃ մեղաց նր̃ , զի ա̃մ որ զայս լուեալ դիտասցէ , նզովս 'ի հեռ արկցէ , և մի՛ լիցի ցանկացօղ գործոց նր̃ ։

## ԳԼ․ Ը․

Սրտառոյ եօթն յեղանակին առնելոյն՝ դարձեալ վասն նորին պատերազմի և չարչարանաց ո̃ր հանդիպեցան ։

Սորա՝ 'ի վեշտասաներորդի ամի տէրութեան նորին թագաւորի , դարձեալ անդրէն խաղայր գնայր յաշխարհն քուշանաց մեծաւ սրտմտութե̃ 'ի գործ պատերազմի ․ և գնացեալ 'ի վրկանէ և ելեալ յապար աշխարհ ։ Նովին կապանօք զնախարարսն և զքահանայսն հրամայեաց պահել 'ի դղեկ քաղաքին 'ի Նիւշապուհ․ և յերանելին կապելոցն երկուս ընդ իւր խաղացոյց ։ Ահ արկանէր ա̃մ քրիստոնէութե̃ն՝ ը̃ որ անցանէր ։

Իբրև զայն տեսանէր հոն մի , որ էր յազգէ թագաւորացն 'ի խայլանդրաց աշխարհէն , Բէլ անուն ․ և 'ի ծածուկ խոնարհէր առ քրիստոնեայս՝ և սիրով յօժարութե̃ ուսանէր 'ի նո-

ցանէ զճշմարտութ՟ին . և կամօք իւրովք նուաձեալ էր ընդ թագաւորին իշխանութ՟ն . և կարի՛ յոյժ դառնանայր 'ի միտս իւր՝ յորժամ տեսանէր չարչարեալ զք՟եան: Եւ իբրև այլ ոչի՛նչ էր ձեռնհաս , փոխատական անկանէր առ արքայն քուշանաց . երթայր և պատմէր նմա զամենայն անցս չարչարանաց , զոր անցոյց թագաւորն ընդ աշխարհն հայոց: Տեղեակ ևս առնէր զնա վասն խորամանկութեան պահակին հոնաց: Յուցանէր և զերկպառակութ՟ի զօրացն , որ բազում ազգք բաժանեցան 'ի սիրոյ թագաւորին: Ազդէր նմա և զտրտունջ արեաց աշխարհին:

Զայս իբրև լսէր թագաւորն քուշանաց, ոչի՛նչ երկմտութ՟բ թերանայր յառնելն . և ոչ կարծիք լրտեսի անկանէին 'ի միտս նր: Քանզի սակաւ մի յառաջագոյն լուեալ էր և նր . գաղձեալ իբրև ստուգեաց 'ի բերոյն զայն ևս՝ եթէ խաղացեալ գայ 'ի վր աշխարհին քուշանաց , փութացաւ վաղվաղակի , զօր ժողովէր գունդ կազմէր , ելանէր նմա ընդ յառաջ հզօր ձեռամբ: Զի թէպէտև ոչ կարէր յանդիման տալ պատերազմ ընդդէմ նր , վերջի թևոյն անկեալ՝ բազում հարուածս հասուցանէր 'ի վր զօրացն արքունի . և այնպէս նեղեալ շտապէր: Զի անձուկ լաշկարաւ վատախտարակ արարեալ , այսրէն դարձուցանէր . և ինքն տապակաւ զհետ մտեալ , աւերէր զբազում գաւառս արքունի , և ինքն ողջանդամ անդրէն յերկիր իւր դառնայր:

Եւ իբրև ետես թագաւորն թէ անարգեցաւ և վատթարութ՟բ դարձաւ 'ի պատերազ-

մեն, զինչ առ փոքր մի 'ի հպարտութենէ. և գի-
տակց թէ յերկպառակութէ զօրացն եղեն հա-
րեքն ամ։ Նա առ մղձկել սրտին՝ չգիտէր թէ
յո թափեսցէ զթոյնս դառնութեն։ Իսկ մեծ
հազարապետն՝ յոյժ էր յերկիւղի. քանզի ինքն
էր պատճառ ամ չարեացն։ Այսպէս բանս 'ի
բերան դնել մոգպետին և մոգացն. որք մա-
տուցեալ յանդիման՝ ասէին ցթագաւորն, ար-
քայ քաջ. մեք 'ի դենէ գիտեմք, զի ոչ ոք 'ի
մարդկանէ կարէ կալ առաջի քոյ մեծի զօ-
րութեդ. այլ վն քրիստոնէիցն՝ որ են ընդ-
դէմ օրինաց մերոց, բարկացեալ են մեզ ածքն.
զի մինչև ցայսօր կենդանի պահեցեր զնս։
Նա յիշեցուցանէին նմա՝ թէ ո՞չ նոքա 'ի
բանտի անդ անիծանէին զքեզ։ Նա բազում
այլևս հայհոյութիւս խօսէին զնցն. զորհանա-
պազ զնս յաչաց հանէին, և զմիտս թագաւո-
րին ածէին 'ի ցասումն բարկութե, մինչև փու-
թացաւ վաղվաղակի հեղուլ զարիւն անմեղացն։
Նա հրաման վն երկուցն՝ որ անդէն 'ի կարա-
ւանին առ ինքն էին Սամուէլ և Աբրահամ,
զի գաղտ կորուսցեն զնս։
Իսկ որք էին 'ի դղեկ քաղաքին, հեռի է-
ին 'ի կարաւանէն իբրև օթիւք հնգետասան.
հրամայեաց ամբարտակապետին՝ որում անուն
էր դենշապուհ, զի յառաջ քան զնա երթիցէ
'ի քաղաքն, և չարաչար տանջանօք իշխեսցէ
դատել և հարցանել և սրով վախճանել։ Նա և
զնս մոգպետին յառաջագոյն յանձն արարեալ
էր. որ բազում անգամ քան զհրամանն ար-
քունի աւելի չարչարեալ էր. Քանզի իշխան
դենպետ էր ամ աշխարհին, և առաւել ջեր-
մա

մագոյն էր ՚ի մոգութեն՝ քան զբազում գի-
տունս, եւ տեղեակս զրադեշական օրինացն ։

Նաեւ զոր մեծ պարծանս համարէին ըստ
իւրեանց մոլորութեն կարգի, համակդեն ա-
նուն էր ։ Գիտէր եւ զամ պարտքաշն . ու-
սեալ էր եւ զբոզպայիտն . ունէր եւ զպահլա-
ւիկն, եւ զպարսկադենն ։ Քանզի այս հինգ
կեշտք են՝ որ գրեալ ունին զամ օրէնս մոգու-
թեանն ։ Բայց արտաքոյ սոցա՝ է եւ միւս եւս
այլ վեցերորդ, զոր պետմոգն ասեն ։ Թուէր
ինն անձինն՝ եթէ կատարեալ իցէ ամ գիտու-
թեամբ . եւ հայէր ընդ երանելիսն՝ եթէ առ
տգիտութե մոլորեալ են ՚ի մեծ գիտութէս
մերմէ ։ Եդ սնոտի կարծիս ՚ի մտի, եւ անդա-
դար լինէր ՚ի չարչարել զնոսա, զի թերեւս առ
՚ի չժուժել մարմնոցն նեղութեց՝ լուայց ինչ
՚ի նոցանէ բանս ողոքանաց ։

Այլ զատ որոշեաց ՚ի նախարարացն զքահա-
նայսն, եւ հեռացոյց ՚ի նոցանէ բացագոյն, եւ
էարկ զնս ՚ի ներքնատուն մի գէճ խաւար-
չուտին ։ Եւ հրամայէր վեց առն երկու քաշկէնս
ժամէ ՚ի ժամ, եւ դորակ եւ կէս ջուր . եւ ա-
մենեւին ոչ թողոյր զոք մօտ երթալ ՚ի դուրս
բանտին ։

Եւ իբրեւ աւուրս քառասուն այնու նե-
ղութեամբ նեղէր զնս, եւ ոչ լուաւ ՚ի նոցանէ
բան թուլութե, այլ ինն էած զմտաւ՝ եթէ
ոք յիւրոց ծառայիցն գաղտ եգիտ ինչ ՚ի նո-
ցանէ, եւ ծածուկ տայցէ նոցա կերակուր . եր-
թեալ ինքնին կնքէր զերդ եւ զդուրս բանտին .
եւ զկարգեալ ռոճիկն տայր ցիւր հաւատարիմն՝
տանել նց ։ Արար զայս աւուրս հնդետասան ։

Սա

Սակայն և այնպէս երանելիքն՝ ոչի՛նչ շտապեալ տագնապեցան. այլ մեծաւ համբերութեամբ տանէին զճգնութիւն, և անդադար սաղմոսիւք կային 'ի հանապազորդ պաշտաման. և 'ի կատարել աղօթիցն՝ զուարթագին գոհանալով՝ սակաւիկ մի հանգչէին 'ի գետնախշտի անկողինսն.

Իսկ պահապանքն որ 'ի վերայ կապելոցն կային, յոյժ էին զարմացեալք ընդ անհիւանդութիւն առողջութեան նոցա, իբրև լսէին զանդադար հընչումն ձայնիցն. Վասն այնորիկ պատմեցին յականջս մոգպետին և ասեն, ո՛չ են արքն այն լոկ՝ առանց մեծի զօրութեան. զի եթէ պղնձի մարմին ունէին նոքա, արդ լուծեալ էր 'ի գեձ խանաւոյ անտի.

Բազում ժամանակք են մեր՝ զի յանձն է մեզ պահպանութիւն բանտիս, ո՛չ յիշեցաք եթէ 'ի կապելոց ոք՝ ամսօրեայ ժամանակ մի կեցեալ է 'ի տանդ յայդմիկ.

Արդ՝ մեք ասեմք քեզ, եթէ առեր հրաման վերայ մահու նոցա, և սպանանես՝ դու գիտես. ապա եթէ պահել յանձն արարաւ քեզ և ո՛չ դատել զնոսա, չարաչար վտանգ է կապելոցն. Նաև մեք զահի հարեալ եմք և յոյժ երկնչիմք, յորժամ տեսանեմք զայնպիսի անհնարին նեղութիս.

Իբրև լուաւ զայս մոգպետն, յարուցեալ ինքնին երթայր 'ի մէջ գիշերի յերդ բանտին, և հայեցեալ 'ի ներքս ընդ մութ գիշերոյն՝ այն ինչ լինէր նոցա 'ի պաշտամանէն հանգչել. և տեսանէր զանձն իւրաքանչիւր կապելոցն՝ իբրև զկանթեղ անշիջանելի վառեալ բորբոքէր. Զահի մեծի հարաւ և ասէ ընդ միտս իւր. զի՛նչ իցեն այս մեծ սքանչելիքս. աստուածքն մեր ուրեմն ե-

կեալ

կեալ իջեալ են 'ի բանսս , և նշ̃ փառաւորու-
թեանն լուցեալ բորբոքի ։ Եւ եթէ նոքա 'ի
սոսա ոչ մերձենան , մարդոյ լոկոյ անհնարին է
զայսպիսի պայծառութի̃ լուսոյ զգենուլ ։

Իմ այսպէս լուեալ էր վասն կեշտիս այսո-
րիկ , եթէ առ յոյժ յիմարութե̃ մոլորեալ են ,
և ստութեամբ կերպարանիւն յաչս տգէտ մարդ-
կան ։ Թերևս այս տեսիլ՝ այնպէս ինչ երևե-
ցաւ ինձ ։ և ոչ կարէր համօրէն կալ 'ի վերայ
իրացն երևման ։

Եւ մինչդեռ նա յայսր 'ի մտաց խորհրդի
էր , դարձեալ որ̃քն յիւրաքանչիւր խոշտեաց
կանգնեցան և կացին 'ի սովորական պաշտամանն ։
Յայնժամ ճշմարտեալ գիտաց մոգպետն , եթէ
ոչ այլ ընդ այլոյ տեսանէր՝ որ երևեցաւն նմա,
այլ 'ի նոցունց յանձանց փայլէր լուսաւորու-
թիւնն ։

Յայժամ կրկին անգամ զահի՝ հարաւ և
ասէ ։ ո՛ւմ 'ի կապելոցն եղև այսպիսի յայտ-
նութիւն , ես և ոչ զմի զոք ոչ գիտեմ , և
ոչ լուեալ է իմ 'ի հարցն առաջնոցն ։ Եւ
քանզի անհնարին շարժեցաւ 'ի մեծ սքանչե-
լեացն , և դողային ի̃մ մարմինքն , և թմբրեալ
կիսամեռ լինէր 'ի վ̃ր տանեացն մինչև ցառա-
ւօտն ։ և ընդ ծագել լուսոյն՝ իբրև զբազմօ-
րեայ հիւանդ՝ յարուցեալ երթայր 'ի վանս
իւր ։ և այլ ոչ ումեք իշխեաց ամենևին պատ-
մել զոր ետեսն ։ Կոչեաց առ իւր զպահա-
պանսն և ասէ ցն̃ս ։ երթա՛յք հանէք զկապեալսն
'ի վերնատունն մի ցամաքագոյն , և անդ պահե-
ցէ՛ք զն̃ս զգուշութ̃բ ոշ̃ և տայցէքն ։

Մ՝ի ոմ̃ն 'ի դահճաց անտի իբրև լուա-

զհրա

զհրամանս մոգպետին, փութով ընթացեալ եր-թայր իբրեւ մեծ իմն աւետիս տանէր նոցա: Հրամայեաց ձեզ ասէ ելանել 'ի ցամաք վեր-նատուն մի. արի՛ք վաղվաղակի եւ մի՛ հեղգայք· քանզի եւ մեք իսկ պաղատեցաք վասն ձերոյ տա-ռապանացդ:

Իսկ սուրբն Յովսէփ հեզաբար սկսաւ խօսել ընդ դահճին եւ ասէ. երթ ասա դու ցյիմար առաջնորդն ձեր. չե՞ լուեալ քո վասն հան-դերձեալ դատաստանն տեառն մերոյ, եւ կամ վս՟ հրաշալեաց շինուածոցն՝ որք մեզ կան պահին 'ի սկզբանէ պատրաստութե՟ն. վասն որոյ եւ դիւ-րաւ համբերեմք մեծի նեղութեանս առ սէր այնր յուսոյ՝ զոր ակնունիմք: Դու բարւոք արարեր՝ զի արգահատեցեր մեծի նեղութե՟ս մարմնոյ. այլ ոչի՛նչ եմք ձանձրացեալ իբրեւ զանօ՟թ ոք, որ չե՛ք ինչ այլ յոյս 'ի մտի նր՟, քան որ երեւին. այլ մեք առ սէր քս՟ին մերոյ ընդ այս յոյժ եմք խնդացեալ. եւ կատարեալ պարգեւս զաս իսկ համարիմք, զի ժամանակեան վշտօքս՝ զանժամանակեան երանութիւն ժա-ռանգեսցուք:

Եթէ շինուածոց իցեմք ցանկացեալ, ու-նիմք շինուածս յերկինս առանց մարմնաւոր ձեռագործի, որ ոչի՛նչ երեւին ձեր արքունիքդ առ նոքօք: Այնպէս եւ հանդերձից եւ փառաց եւ անախտ կերակրոց. զոր եթէ կամիցի ոք ա-սել ձեզ, չհանդարտէ լսել ձեր տկարութի՟դ. վս՟ զի հնութեան կուրութե՟ն ոչ տեսանէք եւ ոչ լսէք եւ ոչ իմանայք, յայն աղագս զմեզ զուր եւ անիրաւ առանց յանցանաց անողորմ դատիք:

Այլ

Այլ՝ մեր Թագաւորն առատ է և բարե-
րար, և բաց է դուռն արքայութե՟ նր՟. եթէ
ոք կամի դիմել, դիմեսցէ համարձակ. ՚ի դար-
ձելոց յապաշխարութի՟, չնախանձի և ոչ ընդ-
ումեք։ Բայց վասն դիւրութեան՝ զոր դու
հրամայեցեր մեզ առնել, եր մեզ իշխանու-
թիւն անդրէն յաշխարհին մերում՝ հանկանել
մեզ ՚ի ձեռս Թագաւորիդ. ով և այլքն որ
ապրեցան յայսպիսի փորձանաց։

Այլ որպէս կամիք և յօժարութի՟ եկայք
իբրև գիտացաք զկեղծս վտանգիս, ոչինչ զան-
գիտեցաք յայսպիսի ճգանց. այնպէս կամիմք՝
զի և այլ ևս ծանրացուսցես ՚ի վր՟ մեր, մինչև
քո չարութի՟ կամացդ յագեսցի ՚ի մեզ։ Ո՛ւր է
եթէ ած՟ն մեր՝ որ արարիչ է երկնի և երկրի և
ամ՟ երևելեաց և աներևութից. և առ սէր
իւրոյ բարերարութե՟ն խոնարհեցաւ առ ազգս
մարդկան, և զգեցաւ մարմին չարչարելի, և
անց ընդ ամ՟ հանդէս առաքինութե՟, և կատա-
րեաց զամ՟ գործս անմեղութե՟ ՚ի կամս իւր,
մատնեցաւ ՚ի ձեռս խաչահանուացն, մահու մե-
ռաւ և եդաւ ՚ի գերեզմանի, և զօրութեամբ
ած՟ութեան իւրոյ յարուցեալ երևեցաւ աշա-
կերտացն իւրոց և այլոց բազմաց, վերացաւ
առ հայր յերկինս և նստաւ ընդ աջմէ հայրենի
աթոռոյն, և շնորհեաց մեզ զօրութի՟ երկնա-
ւոր, զի ըստ նր՟ անմահ բնութե՟ն՝ և մեք մե-
ռեալ մահկանացու մարմնովս կարիցեմք չարչա-
րանօք լինել անմահ ած՟ութե՟ն, և նա ոչ ևս
իբրև զմահկանացուս համարի զմեր մահն, այլ
իբրև անմահից հատուցանէ մեզ զվարձս վաս-
տակոց մերոց. արդ փոքր համարիմք մեք զչար-
չա

չարանս զայս առնէր փոխարինելին՝ զոր էառն առ ազգս մարդկան ․

Իբրև լուաւ զայս ամ բանս մոգպետն 'ի դաշնաւորեան ամաց , խռովեցաւ պղտորեցաւ 'ի միտս իւր և հատաւ քուն յաչաց նր զբազում գիշերս ․ Իսկ յաւուր միոջ յերեկուն պահուն՝ յարուցեալ երթայր առ նա միայնիկ մենիկ , և ոչ զոք առնոյր ընդ իւր 'ի սպասաւորացն ․ Եւ իբրև եհաս 'ի դուռն տանն , հայեր ընդ ծակ մի 'ի ներքս՝ և տեսանէր լուսաւորեալ տեղեանն ․ բայց նոքա 'ի քուն կային խաղաղիկ ․ Հեզաբար կարդաց յանուանէ զեպիսկոպոսն ․ զի քաջ իսկ գիտէր պարսկերէն ․ Եկն 'ի դուռն և հարցանէր , ո՞վ ես դու ․ Եւ ինքնին իսկ եմ ասէ մոգպետն , կամիմ 'ի ներքս մտանել և տեսանել զձեզ ․ Եւ իբրև եմուտ 'ի մէջ նոցա, ոչ ևս երևէր նմա նշանն այլ ․ պատմեաց նոցա զերկիցս երևումն սքանչելեացն ․

Եւ պատասխանի Պետրոս երէց և ասէ , Ած որ ասաց 'ի խաւարի լոյս ծագել , որ և ծագեաց և լուսաւորեաց զաներևոյթ արարածս , նոյն զօրութբ և այսօր ծագեաց 'ի խաւար մտաց քոց ․ և բացան կուրացեալ աչք հոգւոյդ և տեսեր զանշիջանելի լոյս շնորհացն այ ․ Փութա՛ մի՛ հեղգար , գուցէ դարձեալ կուրացեալ ընդ խաւար գնայցես ․

Եւ զայս իբրև ասաց , յառն կացին ամենեքեան ասելով 'ի սաղմոսէն 'ի քառասուներկուերորդէ ․ Առաքեա՛ տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո , զի նոքա առաջնորդեսցեն և ածցեն 'ի լեառն սբ և 'ի յարկս քո ․ Արդարև ճշմարիտ տէ՛ր առաջնորդեցեր և ածեր զմե-

լորեալս զայս յանանց ուրախութիւն և յան-
մերժելի հանգիստ։ Ո՜հ նմանեալ է օրս այս
ո՛ր չարչարանացն քոց․ ո՛վ այրեցուցեր զմահա-
պարտ աւազակին յերկրորդ մահուանէն, և նո-
րա բացեր զաղխեալ դրունս ադենայ, այս-
պէս զանէր և զայս կորուսեալ․ որ էր պատ-
ճառ մահու բազմաց, արարեր զսա պատճառս
կենաց անձին իւրում և մեզ․ Գոհանամք զքէն
Տ՛ծ․ գոհանամք և ձայնակից լինիմք ո՛ր մար-
գարէին․ Մի՛ մեզ տէ՛ր մի՛ մեզ, այլ անուան
քում տուր զփառս վ՛ն ողորմութե՛ և ճշմար-
տութեան քո․ մի՛ երբեք ասասցեն ՚ի հեթա-
նոսս թէ ո՞ւր է ա՛ծ ն՛ց․ Որպէս և այսօր իսկ
յայտնի եղև զօրութի՛ քո մեծ՝ ՚ի մէջ ապարու-
սան և խաւարապատեալ ազգիս․

Իսկ որ ձրին եդիր զա՛ծատուր շնորհն, սխա-
և նա առանձին առել․ տէր լոյս իմ և կեանք
իմ, ես յումմէ՞ երկեայց․ տէր ապաւէն կե-
նաց իմոց, ես յումմէ՞ դողացայց․ Քանզի գի-
տեմ ճշմարտիւ եթէ բազում են այսուհետև
թշնամիք իմ, և կամին մերձենալ և ուտել ըզ-
մարմինս իմ․ այլ դու տէ՛ր ա՛ծ, որ եկիր վ՛ն
ամենեցուն կենաց, զի դարձցին և կեցցեն ա-
ռաջի քոյոյ մարդասիրութեդ․ մի՛ որոշեր զիս
՚ի ո՛չ գառանցս՝ յորս խառնեցայ, զի մի՛ լոտ
քո փարախդ արտաքս ելեալ, չար գազանն բե-
կանիցէ զիս․

Մի՛ հայիր տէ՛ր ՚ի բազմամեղս անօրէնու-
թիւնս իմ, զի մի՛ մոլորեալ ՚ի ճշմարիտ կենացդ՝
զբազումս անդրէն ՚ի կորուստ աշակերտեցեմ․
այլ որոց եղէ պատճառ մահու, նոցին եղէց
պատճառ կենաց․ Սատանայ՝ որ ինև խրախա-
ցեալ

ցեալ պարծէր 'ի մէջ մեծի կորստականացս, ինև կորացեալ ամաչեալցն 'ի մէջ իւրոց աշակերտացն. և իբրև զայս ասացին, նմին իսկ ետուն կատարել զաղօթսն. և դադարեցին նովաւ հանդերձ մինչև 'ի պահն երրորդ: Եւ այնպէս խաղաղեալ կային 'ի քուն մինչև 'ի ժամ առաւօտուն:

Իսկ նոր յառն կացեալ և'ի քուն ոչ մտեալ· այլ զձեռս 'ի վեր ամբարձեալ՝ կայր յաղօթս: Եւ մինչդեռ ընդ երդն պշուցեալ հայէր յերկինս, յանկարծակի տուննն լի՛ եղև լուսով. և երևեցան նմա սանդուղք լուսեղէնք, որ կանգնեալ էր յերկրէ յերկինս, և գունդք գունդք զօրաց ելանէին 'ի վեր. և էր ամենեցուն տեսիլն նոր և չքնաղ, ահաւոր և սքանչելի իբրև զտեսիլ հրեշտակաց:

Ունէր ևս զթիւ համարոյն 'ի միտս իւր զիւրաքանչիւր գնդիցն՝ զոր տեսանէր: Առ՝ ուր զհազարի. էր՝ ուր զերեսուն և զերից. էր՝ ուր զերկերիւրոց և զերեք տասանից: Եւ այնպէս մօտագոյն մերձենայր, մինչ ճանաչել նմա զերիսն 'ի նոցանէ զվարդան և զարտակ և զխորէնն. և ունէին ինն պսակ 'ի ձեռին. խօսէին ընդ միմեանս և ասէին, ահա՛ եկն եհաս ժամ՝ զի և սոքա խառնեսցին 'ի գունդս մեր: Քանզի և մեք սոցա իսկ ինմայք, և զառհաւատչեայ պատիւ սոցա բերաք: Եւ որում ոչ ևս ինմայք, եկն երևեցաւ և խառնեցաւ և եղև իբրև զմի 'ի զինուորաց քոյ:

Այս երիցս անգամ երևեցաւ չքնաղ տեսիլս՝ տանն եկանելոյ. Զարթոյց զպետն 'ի քնոյ անտի, և պատմեաց նմա զամ տեսիլն կարգաւ.

դաւ։ Իսկ նոքա յորուցեալ՝ կային յաղօթս և ասէին. տէ՛ր տէր մեր զի՞ սքանչելի անուն քո յամ երկրի։ Համբարձաւ մեծ վայելչութիւն քո՝ ՚ի վերոյ քան զերկինս. ՚ի բերանոյ մանկանց տղայոց ստնդիեցաց հաստատեցեր զօրհնութի. զի եղծցի թշնամին և հակառակորդն։ Ո ի ո՛չ եւս պատուհետև է ասել, թէ տեսից զերկինս զգործս մատանց քոց, այլ զի տեսից զքեզ տէր երկնի և երկրի. ո՛վ երևեցար իսկ այսօր ՚ի ձեռն մբ զօրականացն քոց՝ հեռաւոր օտարիս, որ անցեալ էր ըստ ակնկալութիւն կենաց իւրոց։ Ո՛հ դու տէր ողորմութեամբ քով պսակեցեր զսիրելիս քո. և գթութբ քով եկեր ՚ի խնդիր կորուսելոյս. դարձուցեր և խառնեցեր ՚ի դաս մբց քոց։ Ոչ միայն ետես սա զերկինս զգործս մատանց քոց, այլ ետես զերկինս և զբնակիչս նր։

Եւ մինչդեռ է յերկրիս, խառնեցաւ ՚ի բիւրաւոր բանակս հրեշտակաց քոց։ Ետես և զհոգիս արդարոց կատարելոց. ետես և զնմանութի փառաց աներևոյթ պատրաստութեցն. ետես և ՚ի ձեռըն նոցա զանշուշտ ռաբունեան պսակն, որ հանդերձեալ պահի ՚ի ձեռս ճարտարապետին։ Երանի՛ սմա վասն մբ տեսլեանս. և երանի՛ մեզ վս սորա մերձաւորութես առ մեզ։ Քանզի հաստատեալ գիտացաք սմա եթէ՝ որում այսպիսի սքանչելիք յայտնին, մեծ մասն ընկալաւ սա յանսպառ քոց բարութեանցդ։

Անսպառ են պարգևքն քո. և առանց խնդրելոյ տաս ո՛ւմ և կամիս՝ քոյով յորդ և աննախանձ առատութեամբդ։ Եւ եթէ որ ո՛չ

խնդ

խնդրէն, չարգելուս 'ի նոցանէ. բայց մեզ տէր զգուսն ողորմութե, որ 'ի մանկուէ մերմէ ցանկացեալ եմք բարեմասնութե սրց քոց. զնորագիւտ դաստակերտս քո բարեխօս առնեմք վ՟ս անձանց մերոց, մի' ընկղմեսցի նաւ հաւատոց մերոց 'ի մէջ ալէկոծեալ մեղաց ծովուս:

Նա այսպէս կատարելով յերկար զաղօթսն, յորդ եւ առատ արտասուս հեղուլին 'ի վ՟ր անձանց իւրեանց: Պութս ողբանաց արկանէին առաջի բարերարին, զի լուելի լիցի ձայն պաղատանաց նց եւ հաստատուն կայցէն 'ի վիշտս ձգանցն, զի մի' զրկեսցին 'ի ցանկալի պսակացն՝ զոր ունէին սրքն 'ի ձեռս իւրեանց: Որպէս ազդեցաւ նց 'ի հոգւոյն սրյ, զի մերձեալ էր ժամանակ կոչման նց, ոչ զի երթիցեն եւ աներկիւղ դադարեսցին 'ի կասկածելի անկալութէն, որում համբերէին բազում տառապանօք, զի առհաւատչէիւ փոքու՝ հասցեն երկնաւոր մեծութէն, որում եւ 'ի վաղնջուց իսկ էին ցանկացեալք:

Նա քանզի ինքն մոգպետն իշխան էր աշխարհին, նմա յանձն արարեալ էր զկապեալս քաղաքին. վ՟ս այնորիկ եւ համարձակութեամբ ընդ առաւօտն հանեալ տանէր զկապեալսն յապարանս իւր. լո՛ւանայր եւ սրբէր զնս 'ի չարչարանաց բանտին. առնոյր զջուր լո՛ւացմանն սրցն՝ եւ արկանէր զիւրով մարմնովն:

Ուղղէր 'ի տան իւրում աւազան, եւ ընդունէր 'ի նոցանէ զնր մկրտութին: Հաղորդէր 'ի կենդանի մարմնն եւ 'ի քաւիչ արեան տեառն մերոյ յսի քսի: Բարձր բարբառով աղաղակէր եւ ասէր. մկրտութիւնս այս՝ լիցի ինձ 'ի

լո՛ւս

լուացուիմ մեղաց իմոց, 'ի ծնունդ նորոգութեան վերստին 'ի հոգւոյն սրբոյ. եւ ճաշակուիմ անմահ խորհրդոյս՝ 'ի ժառանգութիւն երկնաւոր որդեգրութեան: Դնէր առաջի նոցա եւ ըստ մարմնոյ կերակրոց սեղան. եւ մխիթարութեան բաժակ մատուցանէր նոցա. եւ միաբանէր ընդ նոսա 'ի հացին օրհնութեան:

Այլ թեպէտեւ ինքն եհաս յերկնաւոր բարիսն, եւ աներկիւղ էր 'ի մարդկան հարուածոց, սակայն վասն ընտանեացն՝ ունէր կասկած յոյժ, զի մի՛ իբրու փաստակուրք մատնիցին յերս արքունի: Վասն այնորիկ 'ի ծածուկ կոչէր եւ 'ի գիշերի զնախարարսն, որ 'ի նմին քաղաքի էին 'ի կապանս, եւ առնէր ծախս մեծամեծս: Նա եւ էին ամենքն 'ի մեծի խնդութեան վասն նոր սքանչելեացն՝ որ երեւեցաւ նոցա: Զիշէին ամենեքին եթէ վիշտք անցեալ էր ընդ նոսա: Բայց 'ի ժամ բազմականացն կարծիք իմն եղեն 'ի միտս սրբոցն վասն երիցու միոյ, որ էր ընդ նոսա 'ի սուրբ կապանսն. զի 'ի մէջ շինական մարդկան կեցեալ էր, եւ տգիտագոյն եւս էր 'ի գրոց մխիթարութենէ, նմա հրամայեցին ունել զգլուխ բազմականին:

Նա պատասխանի երանելւոյն եւ ասէ. զի՞նչ է այդ զոր դուքդ գործէք, եւ կամ յինէն զի՞ թագուցանէք զծածուկս խորհրդոցդ. ես քան զկրսերս ձեր խոնարհագոյն եմ, եւ քան զես փոքունս յաշակերտացն ձերոց տկարագոյն եմ. զի՞ արդ կարացից այդմ տանել: Այս իսկ մեծ էր ինձ, զի սուրբ կապանացդ ձերոց հաղորդեալ եմ. եւ այսօր եթէ որ արժանի համարիք զիս ձերում սեղանոյդ, կալջիք դուք զիւրաքան-

չիւր

չէր տեղիս բազմականիդ, և հրամայեցէք ինձ զիմ տեղին. Եւ բռնադատեաց զիս եպիսկոպոսն տմ̅ որց միաբանութե̅ն, և'ի վերայ քան զամենեսեան բազմեցուցին զիս.

Եւ իբրև բոլորեցաւ ախումբ բազմականին, և հաղորդեցան տեարքն 'ի կերակուրն զուարթութեամբ, յառն եկաց տէ̅ն Յովսէփ և սկըսաւ զուրախութե̅ նուագն մատուցանել և ասել այսպէս. Ուրախ լերուք տեարքն 'ի քս̅. քանզի վաղեմն յայս ժամ եկէ, զի աչս մառացեալ էր մեր զժմ̅ նեղութիւն և զչարչարանս զոր կրեցաք. Եւ փոխանակ սակս աշխատութե̅ս մեր' զոր կրեցաքն, բազմապատիկ հանգիստ ընդունելոց եմք. Եւ փոխանակ խաւարային արգելանի բանտին' մտանելոց եմք յերկնային քաղաքն լուսաւոր, որոյ քաղաքի քաղաքապետն ինքն քս̅ է. հանգստապետ' յըրում աշխարհի նախ ինքն առաքինացաւ, առնելով զնշան յաղթութե̅ն. Եւ այսօր նոյն տր է որ յաջողէ մեզ զնոյն նշան ընդունելով 'ի փրկութի անձանց և 'ի պարծանս մեծափառ տր̅ եկեղեցւոյ.

Եւ զոր օրինակ տեսէք դուք զեղբայրս զայս գլուխ բազմականիս մերոյ, սոյնպէս նախ սա ընդունելոց է վաղեմի զպսակն' 'ի ձեռն կատարման մերոյ. զի ահաւասիկ եկն եհաս մերձեցաւ մեզ թշնամին կենաց մերոց, և պսակիչ տր̅ չարչարանաց ծառայից քս̅ի.

Զայս իբրև ասաց, լուաւ 'ի նմանէ բանս պնդութեան. որով յոյժ մխիթարեցան ամենեքեան. Դ տր̅ աղօթից ձերոց այսպէս արասցէ ինձ քս̅. և կատարեսցէ զելս վախճանի իմոյ

յաշ

յաշխարհէս՝ ըստ բանի քում։ Ահա ընդ ա-
ւետդ քո՝ աղաւնին եղև հոգւոյ իմոյ. և յի-
շեցի ես զմարդասիրութիւն քո, որոյ և գա-
լուստն իսկ նր՟ յաշխարհս՝ վ՟ մեր մեղաւորացս
եղև։

Գթացի՛ մի՛ ով և յաւազակն ՚ի ժամ
խաչին։ Որպէս նման զգրաւն փակեալ դը-
րախտին եբաց, և յառաջիկայ լինել կարա-
պետ այնոցիկ՝ որ մտդբեն ՚ի նոյն տեղի դառ-
նալոց էին յուրախութի՟, արարեր և զիս այ-
սօր տէր քո՟ սպասաւոր մեծաշուք զնուիրդ ձե-
րոյ. աւանիկ վ՟ միոյ մեղաւորի՝ որ դառնայ
յապաշխարութի՟, անխախտան լինի ուրախու-
թիւն յերկինս. ով զի գիտեն իսկ զկամս ած՟
իւրեանց։ Քանզի վ՟ միոյ կորուսելոյ եկն ՚ի
խնդրել, վ՟ այնորիկ և նոքա խնդալից լինին
վ՟ միոյ դարձելոյն յապաշխարութի՟։ Որպէս
վ՟ իմ իսկ եկեալ էր մեծ զօրավարն հայոց՝ բա-
զում որ՟ ընկերակցօքն իւրովք. զպսակն փառն
ձեր բերեալ էր, այլ զուրախութե՟ աւետիսն՝
հասարակաց տայր։ Իսկ առաւել ես ընդ իս
էին զարմացեալ, զի ոչ ճանաչէին զիս ՚ի
կեանս իւրեանց. ահա ՚ի որ՟ մահն իւրեանց՝
կամին զի և ես մասն ընկալայց ընդ երանե-
լիսն։

Ողջէմ զձեզ տէրք իմ և հարք. աղօթս
արարէք ՚ի վ՟ անարժանութեաս իմոյ, զի արժա-
նի եղէց մեծի աւետեացն հասանել, որ ՚ի
յանուստ բերանոց ձերոց՝ բարբառեցաւ ՚ի
լսելիս իմ։

Արդ՝ փութամ տեսանել զօրն, և յաւուր
անդ զժամն եկեալ հասեալ ՚ի վ՟ մեր։ Իսկ
Երբ

ե՞րբ իցէ զի ելից 'ի թանձրադանդաղ ձանձ-
րալի մարմնոյս ։ Ե՞րբ իցէ զի տեսից զքեզ տ՟ր
ք՟ս ։ Ե՞րբ իցէ զի աներկիւղ ելից 'ի մահ-
ուանէ ։ Ե՞րբ իցէ զի տգիտութիւս իմ հասցէ
'ի կատարեալ գիտութիւն ։ Օգնեա ինձ տէր
օգնեա ինձ, և կարկառեա զամենազօր աջդ յօգ-
նականութիւն ։ զի խոստման բանիցս իմոց՝ և
գործքն արդեամբ կատարեսցին 'ի վ՟ր մեր ։ և
փառաւոր լիցի յիս 'ի մեղաւորս անուն տեառն
մերոյ յ՟սի ք՟սի ։

Զայս իբրև ասաց երանելին, յոտն կա-
ցին 'ի բազմականացն և գոհանային ասելով ։
փա՛ռք քեզ տէր փառք քեզ Թագաւոր փա-
ռաց, որ ետուր մեզ կերակուր ուրախութեան,
լցո՛ զմեզ հոգեւոր սիրով ։ զի գտցուք առա-
ջի քո հաճոյք, և մի՛ ամաչեսցուք ։ զի դու հա-
տուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր ։

'Ի նմին ժամու եղև խորհուրդ մեծ 'ի մէջ
ն՟ց ։ եթէ զի՞նչ օրինակաւ կարասցեն այրե-
ցուցանել զմնացեալսն, զի մի՛ լուեալ յար-
քունիս՝ իբրև զհուր բորբոքեսցի բարկութի
'ի վ՟ր մնացելոցն ։ իբրև ոչի՛նչ կարացին 'ի ժա-
մուն վճարել, միաբանութ՟բ աղօթս արարեալ՝
յ՟ած ապաստան առնէին զկեանս առնն հաւա-
տացելոյ ։ Իսկ նախարարքն հրաժարեցին 'ի
նոց՟ն ։ յորդառատ արտասուօք և ողբալից ու-
րախութ՟բ՝ անկեալ յոտս ն՟ց աղաչէին մեծա-
պաղատանօք՝ յանձն առնել զն՟ո հոգւոյն ն՟ր,
զի մի՛ որ 'ի մէնջ ասեն, թողացեալ և ելեալ
արտաքս 'ի հաւատոյ միաբանութենէս, կերակուր
լիցի չարաբարոյ գազանին ։

Իսկ երանելիքն միաբան քաջալերէին զնոսա
և

և աստէն․ զօրացարո՛ւք ե՛ղբարք ՚ի տէր, և մխի-
թարեցարո՛ւք ՚ի մարդասիրութե՟ն նո՟յ, որ ո՛չ
թողու զձեզ որբս․ և ո՛չ ՚ի բացեայ առնէ
զողորմութիւն իւր ՚ի մէնջ հաւատովք ՚ի ք՟ս,
բազում բարեխօսիւք՝ զոր ունիմք առ նմա, ո՛չ
շիջանի փառունն կանթեղաց ձերոց, և ո՛չ ուրախ
լինի խաւարասէր թշնամին կենաց ձերոց։ Ա՛․ մե-
նոյն տէրն է որ զօրացոյց զառաջինն նահա-
տակսն, խառնելով զն՟ս ՚ի գունդս հրեշտա-
կաց իւրոց։ ՙՆոցունց մ՟ր ոգիքն և դասք ար-
դարոցն՝ հասանեն ձեզ յօգնականութի համ-
բերութեան․ զի ընդ նոսին՝ նոցունց պսա-
կացն արժանի լինիք։

Զայս խօսէին ընդ ն՟ս, և զգիշերն ա՟մ՝
սաղմոսիւք ՚ի գլուխ տանէին․ իսկ ՚ի ժամ ա-
ռաւօտուն ասէին ա՟մքն, ծագեա՛ տէր զողոր-
մութի՟ս քո, որք ճանաչեն զքեզ․ զարդարու-
թիւնս քո, որք ուղիղ են սրտիւք։ Մի՛ ե-
կեսցէ ՚ի վ՟ր մեր ոտն ամբարտաւանից․ և ձեռք
մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ։ Անդ անկ-
ցին ամենեքեան՝ որ գործեն զանօրէնութի․
մերժեցին և այլ մի՛ կարասցեն հաստատիլ։

Նա անդէն փաղփաղակի հասին դահիճքն ՚ի
դուռն բանտին, մտին ՚ի ներքս և տեսին որ
յառաջ մրգպետն էր, և նմա իսկ յանձն ա-
րարեալ էր պահել զն՟ս, նստէր ՚ի մէջ ն՟ց և
լսէր ն՟ց․ նաև քաջալերէր զն՟ս եւս չերկնչել
՚ի մահուանէ։ Իբրև տեսին զմեծ սքանչելիսն
դահիճքն, յոյժ զարմացան ընդ իրսն, այլ
ոչի՛նչ իշխեցին հարցանել ցնա․ բայց չոքան
և պատմեցին դենշապհոյ, որում յանձն արա-
րեալ էր զչարչարանս մ՟րցն։

Իսկ նա իբրեւ լուաւ 'ի դահճացն արքունի, զահի մեծի հարաւ 'ի միտս իւր, եթէ գուցէ և ինքն անձամբ 'ի ներքս լինիցի։ Քանզի ծանօթագոյն էր տանն, հրամայեաց հանել 'ի բանտէ անտի զամենայն կապանօք, և հեռացուցանել 'ի քաղաքէ անտի երկոտասան պարսիկ հրամանաւ. և 'ի ծածուկ խօսէր ընդ մոգպետին՝ եթէ զի՞նչ պատճառք իցեն կապանացն նորա։

Նա պատասխանի այրն և ասէ. մի՛ խօսիր ընդ իս 'ի ծածուկ, և մի՛ լսեր զխորհուրդս լուսոյ՝ 'ի մէջ խաւարի. զի բաց են աչք իմ։ Արդ՝ քանզի տեսի զլոյսն երկնաւոր. եթէ կամիս լինել խորհրդակից կենաց, հա՛րց ցիս յանդիմանն հրապարակաւ, և պատմեմ քեզ զոր տեսի զմեծամեծս յոյժ։

Նա իբրեւ լուաւ 'ի նմանէ զամենայն, և ստուգեաց նա վասն իւրոյ միաբանութեան՝ եթէ ոչ քակի 'ի մերոցն հաւանութենէ. ոչ իշխեաց ձեռն արկանել 'ի նա, թէպէտև ունէր հրաման յարքունուստ. այլ փութացաւ և ինքն երթալ պատմել թագաւորին 'ի ծածուկ զամենայն, որպէս զիարդ լուաւ 'ի նմանէ։ Նա պատասխանի թագաւորն և ասէ ցդենշապուհ. մի՛ ոք ամենեւին լուիցէ զայդ 'ի քէն. մանաւանդ վասն տեսլեանն մեծի, որ երեւեալ է նմա. զի մի՛ ոգէս մարդիկ՝ երկմտեալ բաժանեսցին 'ի մեր հաստատուն օրինացս։

Մինչ մեք զայս կամէաք հնազանդել՝ թերեւս զդիս դոցեն. իբրեւ նոցա ոչի՛նչ կարացաք առնել, մեր որ վարդապետք օրինացդ էին, զի՞նչ նոցա մոլորութեան խառնեցան։ Նաև այն՝ նա չար է մեզ քան զամենայն, զի ոչ եթէ այր

դուղ

գուզնաքեայ ոք խոտորեցաւ ՚ի նց օրէնսն . այլ այլ մի համակրեն երևելի ըստ ամ վերին աշխարհս : Եթէ փայլկարիմք ըստ նմա, նա տեղեկագոյն է քան զամ փորձագէտս աշխարհիս, գոյցէ ՚ի հիմանէ խարխալեալ աւերէ զօրէնս մեր : Եւ եթէ գտանիմք զնա ըստ այլ հրագործան, նաև այնպէս հռչակեալ ելանէ համբաւ քրիստոնէութեն նր, և մեծ անարգանք զկնի դենիս ձգին : Եւ եթէ սրով ևս վախճանեսցի, բազում են քրիստոնեայք ՚ի կարաւանիս՝ ըստ ամ երկիր ցանեալ ցրուեն զոսկերս նր : Աակաւիկ ի՞նչ էին մեզ անարգանք առ ամ մարդիկ՝ ուր մեծարեալ պատուէին ակերբդ նածարացւոց : Իսկ եթէ ՚ի մոգացդ և ՚ի մոգպետացդ զնոյն պատիւ կրեսցեն, մեք մեզոյն լինիմք քակիչ օրինաց մերոց :

Այլ այժմ իմ երդումն տուեալ քեզ յանմահ դիսն, նախ զդառնացեալ ծերն կոչեմ առաջի քո . եթէ հաւանեսցի սիրով և զղջացեալ ապաշխարեսցէ զկախարդութի նց, մեծարեսջի՛ր զնա պատուով ըստ առաջին կարգին, և որք մի՛ գիտասցէ զթշնամանս նր : Ապա թէ ոչ հաւանի և ոչ կամի անսալ բանից քոց, յարուսջի՛ր ՚ի վր նր բազում ամբաստանութի յաշխարհէ անտի, զի վնասակար գտցի յարքունի իրս : Եւ աշխարհաւ փութասջի՛ր ՚ի վերայ յարուսջի՛ր և չկօթակ արասջի՛ր յայնկոյս քան զկուրան և զմակուրան . և անդ ընկեցեալ զնա ՚ի վիրապ մի, և ընկալցի զմահ թշուառութեան : Եւ պայլակտենան՝ փութանակի կարճեա՛ ՚ի կենաց աշխարհիս . զի մի՛ դղրդեսցեն զօրէնս աշխարհիս մերոյ : Ո՜ է թէ զճարտար մոգպետն

այն

այնպէս երագ աշակերտեցին , որպէս մարդիկ զիա̃րդ կարասցեն կալ առաջի ն̃ր պատիր խաբէութեանն ։

Որդ՝ եւ նստաւ դենշապուհ արտաքոյ բանակին յատենի , ուր ասացաք , հեռի երկոտասան հրահասաւ ․ հարցանէր ցմոգպետն և ասէր , իշխանութիւն առի վասն քո՛ ոչ միայն քննիւք հարցանել , այլ եւ̃ հարուածովք տանջանաց ։ Մինչև ձեռնարկեալ իմ 'ի քեզ , ընկա՛լ զմեծարանս և արհամարհեա՛ զանարգանս , և խնայեա՛ 'ի պատուական ալևոյդ ։ Թո՛ղ անդր 'ի բաց զքրիստոնէութիւն՝ զոր ոչ ունէիր 'ի բնէ․ և դարձի՛ր անդրէն 'ի մոգութիւն , ուր զի վարդապետ իսկ էիր բազմաց ․

Նա պատասխանի երանելին և ասէ ․ աղաչեմ զքեզ՝ որ յառաջ իբրև զհարազատ եղբայր համարեալ էիր յաչս իմ , և այսօր թշնամի կատարեալ ․ մի՛ ըստ առաջին սիրոյն գթար դու յիս , այլ կատարեա՛ 'ի վ̃ր իմ զկամս չարութե̃ թագաւորին ձերոյ ․ և ուր առեր իշխանութիւն 'ի վ̃ր իմ՝ դատեա՛ զիս ։

Յայնմ ժամանակի իբրև ետես դենշապուհ եթէ առ ոչինչ զսպառնալիսն արքունի համարեցաւ , և ոչ ողոքանացն երեւս ինչ առար , և քան 'ի ծածուկ՝ յայտնի ևս կամէր եթէ խօսեսցի , կատարեաց 'ի վ̃ր ն̃ր ըստ հրամանին արքունի ։ Նա զաղտագողեցի ընկեցաւ 'ի հեռաւոր օտարութիւն ․ ուր զխարդ և ուսաւ 'ի վարդապետէն և արար ։ Նա հրամայեաց ևս դենշապհոյ երկու ընկերակիցս օգնականս յաւագ գործակալաց զչինխկանն՝ որ էր մարզպետ արքունի ․ և զմովան անդերձապետ 'ի ձեռանէ

մով

մոլեգնութեան մոլեգնողի ։

Արդ՝ երեքեան սոքա իւրաքանչիւր ստա-ւորոք՝ առին զնոսան յանապատէ , և փոխեցան նոյնչափ ևս հեռագոյն ՚ի միւս ևս դժնդակ տեղի ՚ի նմին գիշերի ։ Այլ զոք ՚ի կարաւանէն անդր ոչ թողին տեսանել , ոչ ՚ի հայոց և ոչ յայլ քրիստոնէից և ոչ ընաւ յարտաքին հե-թանոսաց ։ Այլ սպասաւորքն որ էին ՚ի կապե-լոցն , անդէն ՚ի քաղաքին հրամայեցին պահել զգուշութեամբ · զի զհետս նոցա մի՛ ոք գիտասցէ , ընդ որ տանիցին ՚ի մահուն տեղի , մի՛ նոքա և մի՛ ամենևին ոք ՚ի մարդկանէ ։

Բայց այր մի խուժիկ ՚ի զօրացն արքունի՝ որ ՚ի ծածուկ ունէր զքրիստոնէութիւն , և վիճա-կեալ էր ՚ի դասս դահճացն և կայր ՚ի սպասու-օրապահացն՝ հանդերձ գործակալ տանջանաւորա-նօքն , եկն եմուտ ՚ի գիշերին և խառնեցաւ ՚ի դասս նախարարացն ։ Առաջին դասն ՚ի միջնոյն կարծէր զնա , և միջինն երրորդին , և երեքեան ՚ի միմեանց համարէին , և ոչ ոք ՚ի նոցանէ եհարց թէ դու ո՞վ ես ընդ մեզ · ոչ ՚ի տերանցն և ոչ ՚ի սպասաւորացն ։

Իբրև հասին ՚ի տեղի անապատին՝ որ ամե-նևին անբոյս էր ՚ի դալարաբեր բանջարոց · և այնպէս առապար դժնեայ էր , զի և ոչ նստե-լոյ անգամ տեղի անդ գոյր նոցա · Իջին հեծեա-գոյն նախարարքն երեքեան , և հրամայեցին դահ-ճացն իւրեանց կապել զոտս և զձեռս նոցա ։ Այլ արկին պարանս երկայնս զոտից նոցա , և եր-կու երկու լծեցան և առին ՚ի քարշ · և այն-պէս ձգեցին ձողքեցին ընդ առապար տեղիսն քարշելով , զի ամենևին խայծ ոչ գոյր ՚ի մար-

մինս

մինս երանելեացն , և ապա լուծին և ածին 'ի մի տեղի ։

Թուէր ինձ նշ՟ այսպէս . եթէ կակղեցուք զխստութի՟ նոցա , և հնազանդեցուցուք զբիրտ ապստամբութի՟ն . և արդ՝ զի՞նչ և խօսիմք , անսայցեն բանից մերոց և առնիցեն զկամս Թագաւորին , և ապրեալ լիցին յանհնարին տանջանացն . և զայն ո՛չ կարացին քաջ իմանալ՝ եթէ իբրև զքաջ զինուորս վառեցին զնս՟ . և'ի հրահանգս կրթութե՟ վարժեցին զնոսա . և իբրև զգազանս վայրենիս արիւնախանձս ուսուցին զնոսա ։

Իսկ եթէ ունէին ինչ սակաւիկ մի կասկած յառաջագոյն , հայեցեալ նշ՟ 'ի չարաչար վէրս մարմնոց իւրեանց , զառաջին երկիւղն 'ի բաց մերժեցին ։ Սկսան իբրև արբեալք անզգայք, զմխեալք ելանել 'ի բանից պատասխանիս , և փութային իբրև ծարաւիք , թէ ո՞ վաղ զիւր արիւնն հեղցէ յերկիր ։

Իսկ մինչդեռ յայսմ պատրաստութեան էին ն՟քն , խօսել սկսաւ դենշապուհ և ասէ , արքայ յղեաց զիս առ ձեզ . ամ՟ աւեր աշխարհին հայոց ասէ և կոտորուածք զօրացն որ հասին 'ի վր՟ , 'ի ձէնջ եղեն վնասքն ամ՟ . և բազում նախարարք՝ որ այժմ կան կապանօք չարչարեալ , վս՟ ձերոյ յամառութե՟դ եղև այդ ամ՟ ։ Այլ և արդ եթէ կամիք ինձ լսել , ասեմ ձեզ . ո՟պ ամ՟ չարչարանաց մահուն պատճառք եղէք , այսօր լերուք պատճառք անձանց ձերոց ։

Իսկ նախարարքն որ կան 'ի կապանս , 'ի ձեռս ձեր է իշխանութի՟ արձակել զնոսա , և աւեր աշխարհին ձերոյ՝ ձեզ լինի . և բազումք որ

վա

փարեալ են 'ի գերութի, դառնան անդրէն ։ Ահա դուք աչօք ձերովք տեսէք այսօր, զորպիսի այր տոհմիկ՝ զոր Թագաւորն ինքնին յականէ յանուանէ ճանաչէր վս մեծի գիտութե օրինաց մերոց, և կատարեալ էր յամ դենիս, և մեծամեծացաւ ամի սիրելի, և գրեթէ բոլոր աշխարհս կախեալ էր զնմանէ. և վս զի անարգեաց զդենիմազդեն և պատրեցաւ 'ի ձեր տխմար գիտութիւն, ոչի՛նչ անխայեաց Թագաւորն 'ի մեծ պատիւ նր. Այլ իբրև զգերի մի զանաշխարհիկ՝ չկօթակ արարի զնա այնչափ յօտարութի հեռաւոր. զի ընդ երթալն իւր ոչ ժամանէ 'ի տեղի պատուհասին իւրոյ։ Արդ՝ եթէ 'ի բուն դայեկութիս վս պատուականաց օրինացն ոչ խնայեաց 'ի նա, որչափ ևս 'ի ձեզ յօտարաշխարհիկս, որ մահապարտ իսկ էք ձերո արքունի ։ Իսկ չէ՛ք ինչ այլ ձեզ հնարք կենաց, բայց եթէ երկիրպագանիցէք արեգական. և կատարէք զկամս Թագաւորին, ոպ և ուսոյցն զմեզ մեծն զրադեշն ։ Իսկ եթէ զայդ առնէք, ոչ միայն արձակիք 'ի կապանաց և ապրիք 'ի մահուանէ, այլև մեծամեծ պարգևօք յուզարկիք յաշխարհն ձեր ։

Յառաջ մատեաւ Ղևոնդ երէց և կացոյց Թարգման զՍահակ եպիսկոպոս։ Ո՛ մարդ լուիցուք առ երկդիմի հրամանացդ քոց. աւա՛ զերկրպագութիւն ետուր նախ՝ արեգականն, և զկատարումն երկրպագութե՝ 'ի կամս Թագաւորին ձգեցեր ։ Մեծարեցեր զարեգակն՝ յառաջ ձայնելով զանուն նորա, և մեծացուցեր զԹագաւորն՝ աւելի քան զարեգակն. յայս արարեր՝ եթէ առանց կամաց իւրոց սպասաւորէ

ւորէ արարածոցս արեգակն ։ Իսկ Թագաւորդ ՚ի կամս ազատութե՟ իւրոյ՝ զոր կամի աստուածացուցանէ , և զոր կամի ծառայեցուցանէ , և ինքն ՚ի ճշմարտութե՟ն վ՟ր չև է հասեալ ։ Ո՞վ խօսիր ընդ մեզ իբրև ընդ տղայս ․ զի հասակաւ կատարեալ եմք , և գիտութ՟բ ո՛չ եմք անտեղեակ ։ Ուստի սկսար դու , անտի տաց քեզ պատասխանի ։

Ապաքէն զմեզ եդիր պատճառս աւերածոյ աշխարհին մերոյ , և հարուածոց զօրացն արքունի ․ մեզ մեր օրէնքն այդպէս ո՛չ ուսուցանեն ․ այլ յոյժ պատուէլ հրամայեն զերկրաւոր Թագաւորս , և սիրել զնս՟ յա՟մ զօրութենէ մերմէ ․ ո՛չ իբրև զմարդ ոք դուզնաքեայ ՚ի մարդկանէ , այլ իբրև ա՟յ ճշմարտի կալ ՚ի ծառայութե՟ ։ Եւ եթէ զրկիմք ինչ ՚ի նոցանէ , փոխանակ ընդ երկրաւորիս , զերկնիցն խոստացաւ մեզ զարքայութի՟ ։ Եւ ո՛չ միայն զարբանեկութի՟ հպատակութե՟ պարտիմք հարկանել նց՟ , այլև մահուամբ չափ զանձինս ՚ի վ՟ր դնել սիրոյ Թագաւորին ։ Եւ ո՟պ յերկրիս չունիմք իշխանութի՟ փոխանակել զնա ը՟ այլում տեառն , սոյնպէս և յերկինս չունիմք իշխանութի՟ փոխանակել զճշմարիտ ա՟ծն մեր՝ ը՟ այլում ․ որ չի՛ք այլ ա՟ծ բաց ՚ի նմանէ ։

Բայց զայս ասեմ քեզ , որում սակաւիկ մի տեղեկագոյն ես ։ Ո՞վ ՚ի քաջ զօրականէ մտանիցէ ՚ի պատերազմ յետոյ , և եթէ զայն արասցէ , ո՛չ քաջ անուանի նա , այլ յոյժ վատ ։ Եւ կամ ո՞ յիմաստուն վաճառականաց՝ զպատուական մարգարիտն փոխանակիցէ ընդ Թրաշայն ․ բայց եթէ յիմարեալ իցէ ագիտութ՟բ ,

 ո՟պ

ով և ձեր մոլորութե առաջնորդք ։ Միայն գտեր զմեզ ՚ի բազում առաքինեացն մերոց, և կամիս գողութբ աւերել զամուրս խորհրդոց մերոց ։ Չեմք մեք միայն՝ ով և դուդ կարծես ։ Չիք տեղի ունայն՝ ուր ոչ իցէ Թագաւորն մեր Քս ։ Բայց միայն այնոքիկ են Թափուր ՚ի Նմանէ, որ իբրև զքեզ և զչարադև իշխանն քո, որք ուրացեալ էք ՚ի Նմանէ ։

Զի եթէ զինուորք աշխարհին մերոյ՝ որ աշակերտեալ էին մեզ ՚ի Քս, առ ոտն հարին զպահագին հրամանս Թագաւորին ձերոյ, և ըզ մեծամեծ պարգևս նր առ ոչինչ համարեցան, և զհայրենի տէրութիւնն ՚ի բաց կողոպտեցին. չխնայեցին ՚ի կին և յորդիս և ՚ի գանձս մարմ-նաւոր կենաց աշխարհիս . նաև ոչ զարիւնն ի-րեանց ածին ինչ զմտաւ վասն սիրոյն Քի ։

Իսկ զերկրպագուս արեգականդ՝ որ ձեր վարդապետքն էին, չարաչար հարուածովք ա-տակեցին զնս, և մեծամեծ չարիս հասուցին ՚ի վր զօրաց ձերոց, և բազումք ՚ի նոցանէ ան-կանէին ՚ի նմին պատերազմի, և այլքն մատնե-ցան ՚ի պէս պէս փորձութիս, և կէսքն անկան ՚ի հեռաւոր օտարութիւն, և ևս բազմադիմք վարեցան ՚ի գերութիս . և ամքն նոքա յառաջե-ցին քան զմեզ յարքայութին այ, խառնեցան ՚ի գունդ վերին հրեշտակացն, և ցնծան ՚ի պատ-րաստեալ ուրախութին . յոր հասեալ խառնեցաւ երանելի այրն, զորմէ դու ասես չկօթակ ա-րարի ։ Երանի՛ ասեմ նմա, և երկրին՝ ընդ որ նա անցանիցէ . և տեղեացն՝ ուր փախձանիցէ նա ։ Ոչ միայն զարքունեօքն ձերովք անցանէ պատուականութբ, այլև զերկնից լուսաւորօքդ,



որում

որում դուքդ երկիրպագանէք .

Ի պատասխանի մոգան հանդերձապետն և ասէ . ածք բարերար են և երկայնամտութք լուանան ընդ ազգի մարդկան , զի գիտասցեն և ծանիցեն զերբանց փոքրկութիւն և զնոյն մեծութիւնն , և փայլեսցեն ՚ի պարզես աշխարհի՝ զոր ստեղծեալ է մեծութիւն ՚ի ձեռս թագաւորի . և՚ի բերանոյ նոյն ելանէ հրաման կենաց և մահու . Իսկ ձեզ ոչ է այդպէս իշխանութի ընդդիմանալ կամաց նոցա , այլ առնուլ յանձն զերկրպագութի արեգական , որ ճառագայթիւքն իւրովք լուսաւորէ զտիեզերս ամ , և ջերմութեամբն իւրով հասուցանէ կերակուր՝ մարդկան և անասնոց .

Իսկ մի՛ հասարակաբաշխ ատատութեն և անուշա մատակարարութեն՝ անուանեցաւ Միհր ած , զի չէք ՚ի նմա ստութի և նենգութի . վասն որոյ և մեք երկայնամիտ լինիմք ՚ի վերայ տգիտութեդ ձերոյ . Բանզի չեմք մարդասէրք իբրև զգազանս շաղաղակերս և արիւնարբուս . Խնայեցէք յանձինս ձեր . և մի՛ խառնէք զձեզ ակամայ յարիւնս ձեր . Թողէք անդր զառաջին յանցանս ձեր . և զառաջիկայ իրաց ուղղեցէք . զի և այլոյն մի՛ ձեր լիցի ազատութի ՚ի մեծ թագաւորէն .

Ի պատասխանի Սահակ եպիսկոպոսն առ մոգս և ասէ . իբրև ուսեալ և յայտ խրատեալ՝ զգեղեցիկ հոգ յանձին ունիս շինութե աշխարհի և փառաց թագաւորին , բայց տգիտաբար ուսուցանես կարծի՛ յայտ , զի ածս բազումս խառնախօսիս . և զմի կամս ոչ առնես ամենեցուն . Եթէ մի հւքն առ միմեանս մարդացեալ

ցեալ են, մեք խոնարհագոյնք քան զնա՝ զեփրդ-
կարգացուք հաւանել բանից քոց։ Մ՝ խալանեմ
զջուր և զկրակ, զի ուսցուք ՚ի նոցանէ զխաղա-
ղութիւն։ Այժմ զարեգակն ՚ի տուն՝ որպէս և
զկրակ. և եթէ նմա ոչ մարթի գալ, զի մի՛ աշ-
խարհ ՚ի խաւար մնացէ. յղեա զդա առ նա՝
զի ուսցի ՚ի նմանէ զանկարօտութիւն։ Եթէ մի
է բնութիւն ամոց քոց, հաստարեացն առ
միմեանս զուգութի, լիցի անկերակուր կրակ
իբրև զարեգակն. և մի՛ խափանեսցին ծառայքն
աղբիւրի ՚ի ծախս ուձկաց սորա։

Արդ՝ միևդ անյագ ուտէ, և հանապազ մե-
ռանի. և մինն որ չուտէ, առանց օգոյ նմա-
զի լոյս ճառագայթից իւրոց։ Յորոնոյ ՚ի
ձմերայնի, և տառացանէ զնա դալարագոյն խո-
տոցն. տօթանոյ յամարայնի, և հրակեզ առնէ
զնա կենդանիս։ Եւ որ ինքն յար ՚ի փոփոխ-
ման կայ, ոչ կարէ հաստատուն կեանս ումեք
շնորհել։ Եւ քեզ ոչ կարեմք մեղադիր լինել,
որոյ ոչ է ուսեալ զմեծ թագաւորն, պատճա-
ռացն մատուցանէ զերկրպագութիւն։ Իսկ
եթէ որք զայս ՚ի հմուտ դիտացն արասցէ, փոխ-
փոխակի մահ ՚ի վերայ հրամայեն.

Նայել վե՛րա արեգական՝ եթէ կամեսցիս ու-
սանել, զհիմարութեան առացից քեզ։ Մնան է նա
աշխարհիս արարածոց. ՚ի բազում մասանց մի
մասն որոշեալ է։ Այսքն ՚ի վերոյ են քան զնա,
և կէսքն ՚ի ներքոյ նր։ Ահա է նա առանձին
որ յառաջ լուսով, այլ ՚ի ձեռն օգոյ՝ հրամա-
նաւ նոյ տարածանէ զճառագայթս իւր, և հրա-
մաւն մասամբ ջեռուցանէ զնա դոյացեալս ՚ի
ներքոյ իւրոյ կայանին. իսկ վերինք ոչինչ մասն

ու-

ունին 'ի նոյն ճառագայթիցն . քանզի իբրև յամառն արկեալ է զլոյսն 'ի գունդ նոյն , և'ի փայլկցս հեղու բերանացեալ՝ 'ի պէտս ներքնոցս վայելչութեան :

Եւ զոր օրինակ նաւ մի թռուցեալ 'ի վեր ծովային ջուրցն բազմութե , անգիտութեամբն գնայ զուղևորութիւն 'ի ձեռն հմուտ ճարտար նաւապետին : Այսպէս արեգակն 'ի ձեռն կառաւարին իւրոյ՝ ունի զփոփոխումն շրջանին իւրոյ տարևոր ժամանակին : Եւ որպէս այլ մասունք աշխարհիս հաստատեալ են վասն մեր կենաց , և զնա իբրև զմի յայլոց մասանցն տուեալ է մեզ յառաջնորդութի լուսոյ , որպէս զլուսին և զաստեղս և զօդս յարածուփս , և զամպս անձրևաբերս :

Սոյնպէս և յերկրիս մասանց , զծով և ըզգետս և զաղբիւրս և զամ պիտանացու ջուրս. նոյնպէս և զցամաքայինս՝ ամ պիտոյիւք իւրովք . և զմի ոք 'ի նոցանէ չէ արժան ած անուանել : Եւ եթէ ժպրհեցի ոք առնել , զանձն ագխտաբար կորուսանէ . և ած անուանեն մեծարելով զնս , նոքա ոչինչ օգտեցան : Մի՛ իսկ իշխանութե՝ երկու թագաւորք ոչ լինին : Եւ թէ մարդ քեզ զայդ յանձն ոչ առնու , քանի՞ ևս հեռի է առ 'ի յայ բնութէն . այդպիսի կարգ շփոթեալ է :

Արդ՝ եթէ կամիս ուսանել զճշմարիտն , քաղցրացո զդատողութիւն սրտիդ , և բաց զաչս մտացդ . և մի՛ յարթնութե՝ կուրութե ընդ խաւար գնար : Որ անկեալդ ես 'ի խորխորատ , և զամենն կամիս առ քեզ ձգել : Եւ եթէ քոյքն գնան զկնի մոլար վարդապետութեդ , որ ոչ

տե

տեսանեն և ո՛չ իմանան , մի՛ զմեզ կարծեր դոյն օրինակ . քանզի բաց են աչք մտաց մերոց և սրատեսիլ եմք ։ Մարմնոյս աչօք զարարածս տեսանեմք , և իմանամք զնա յայլմէ արարեալ . և ամենեքեան ընդ ապականութե՟ ։ Իսկ արարիչն ամ՟ցուն՝ աներևոյթ է ՚ի մարմնաւոր աչաց . այլ մտաց իմանի զօրութի՟ նր՟ ։ Եւ վ՟ս զի ետես զմեզ ՚ի մեծ տգիտութե՟ . ողորմեցաւ մերում անուսումնութե՟ս ։

Յորում և մեք իբրև զձեզ երբեմն զերևելիս կարծէաք արարիչ , և գործէաք զա՟մ անառակութի՟ն ։ Վ՟ս այնորիկ առ սէր իւր՝ եկն մարմնացաւ ՚ի մարդկանէ , և ուսոյց մեզ զաներևոյթ ա՟ծութի՟ն իւր ։ Այն՝ զի բարձրաձայն զինքն ՚ի խաչն կախաղանին . և զի մարդիկ զհետ լուսաւորացդ մոլորեալ էին , մերկեաց յարեգակնէ զլոյս ճառագայթիցն իւրոց , զի եղիցի խաւար սպառաւոր մարդկութե՟ն նր՟ . զի որ իբրև զձեզ անարժանք իցեն , մի՛ տեսցեն զկեանս իւրեանց , այլ ՚ի մեծի անարգութեան եղիցին ։

Որպէս և այսօր որ ո՛չ խոստովանի զխաչելեալն ա՟ծ , նոյն խաւար մածեալ է զոգւով և զմարմնով նր՟ ։ Որպէս և դու իսկ այսօր ՚ի նմին խաւարի կաս , և դեռևս զմեզ չարչարես ։ Մեք պատրաստ եմք ըստ օրինակի տն՟ մերոյ . որ՟ զիարդ և կամիս , կատարեա՛ զկամս դառնութե՟ քո ։

Յայնժամ իբրև հայեցաւ ՚ի նս՟ անօրէնն Դենշապուհ , և ետես ՚ի մեծի ուրախութեան զուարթագին զա՟մն , գիտաց եթէ ոչի՛նչ գնան առ նոսա բանք սպառնալեացն և ողոքանացն ։

Հրա

Հրամայեաց զմի ոմն 'ի կրօնաւորագունիցն յա-
ռաջ մատուցանել՝ երէց մի Մ․ ողջէն անուն, վն
որոյ յառաջ կասկած իսկ եղև մրցն։ Սպանեցին
զոտսն՝ և մեծաւ ուժով պնդեցին զձեռսն՝
մինչև ձարձատիւն հատաւ ամ ջղացն։ Եւ
այնպէս կայր ցմեծ ժամս յանհնարին պրկոցսն։

Եդեալ մրն զձեռան իւր և ասէ․ ահա՛ շըր-
ջեցան զինև շունք բազումք․ և ժողովք չա-
րաց պաշարեցին զիս։ Ծակեցին զձեռս և զոտս
իմ․ և փոխանակ բերանոյ իմոյ աղաղակեցին
ամ ոսկերք իմ։ Ա՛ռ իմն տէր և լո՛ւր ձայնի
իմում, և ընկա՛լ զոգի իմ 'ի ժողով մր զօրա-
կանին քո, որ երևեցան 'ի նորակերտ դաս-
տակերտին քո։ Եւ որ կրսեր էի յամենն, ողոր-
մութի քո գԹացեալ՝ յառաջացոյց զիս։ Եւ
զայս իբրև ասաց, ո՛չ ևս կարէր բանալ զբե-
րանն յանհնարին պրկոցացն գելարանին։

Եւ անդէն դահճիքն վաղվաղակի հրաման
առեալ յերից նախարարացն՝ սրով հատանել
զպարանոց երանելւոյն։ Եւ ընկեցին զմարմինն
'ի խորխորատ մի ցամաք։ Եւ անդէն 'ի տե-
ղւոջն սկսաւ խօսել դենշապուհ ընդ եպիսկո-
պոսին և ասէ․ յորժամ եկի ես յաշխարհն հա-
յոց, տարի մի և վեց ամիս՝ եհաս ինձ շրջել անդ։
Ո՛չ լուեալ ես ամենևին եթէ բան մի տրտունջ
յումեքէ լուա՛յ վն քո․ սոյնմս և առաւել ես վն
յովսեփայ․ զի դա իսկ էր իշխան ամ քրիստոնէ-
իցն, և հաւատարիմ յամ իւրս արքունի։

Նաև որ մարզպան աշխարհին լեալ էր յա-
ռաջ քան զիմ երԹալն, մեծապէս գո՛հ էր զա-
նէս զայսմանէ։ Եւ ես ինձէն իսկ աչօք իմովք
տեսանէի, զի իբրև հայր հաւատաւորն էր հա-
մա

մարեալ ամ՟ աշխարհին, և անաչառութ՟ սիրեք զմեծամեծս և զփոքունս: Որդ՝ փոխանակ է ձեր՝ ես աղաչեմ զձեզ. խնայեցէք 'ի պատուական անձինս ձեր, և մի՛ մատնէք 'ի մահ չարչարանաց ըստ առաջնոյն կարգի, որք տեսնէք աչօք ձերովք: Քանզի եթէ 'ի դոյն միտս յամառութ՟ կայք, և իմ եղեալ է 'ի մտի խնամով բազում չարչարանօք կարծել զձեզ 'ի կենաց ձերոց:

Այլ գիտեմ ես՝ որ 'ի հրապուրս առնդ այդորիկ եղեալ էք դուք. քանզի ինքն ախտացեալ է մարմնով, և ձեռնարկութ՟ բժշկաց չիք գտեալ առողջութի, և հիւանդոտ կենօք ձանձրացեալ է, փափագէ 'ի մահ քան 'ի կեանս:

Նա պատասխանի առ այս ն՟ն Յովսէփ և ասէ. զովութին զոր ետուր նախ եպիսկոպոսիդ՝ և ապա ինձ, յիրաւի՛ արարեր. ըստ կարգի պատուէցեր վ՟ն ալեացդ. այդպէս իսկ արժան է: Այլ ճշմարիտ ծառայից ա՟յ՝ ո՛չ է օրէն դիմադարձ լինել երկրաւոր իշխանաց, և ո՛չ զոք 'ի ժողովրդոց տրտունջ առնել վասն մարմնաւոր զօշաքաղութե: Այլ ցածութ՟ և հեզութ՟ ուսուցանել զպատուիրանս ա՟յ, և անխարդախ իմաստութ՟ խաղաղասէր լինել առ ամենեսին. և անաչառ վարդապետութ՟ առ մի տէրն արարածոց առաջնորդել բոլորեցուն:

Այլ վասն առնս այսորիկ հրապուրանաց՝ զոր ասացեր, և զայդ ո՛չ ստեցեր, այլ կարի՛ զճշմարիտն ասացեր. զի ո՛չ իբրև զօտար ոք հրապուրէ զմեզ, և ո՛չ իբրև զպատրող ոք խաբեբայ մոլորեցուցանէ. այլ յոյժ սիրէ զմեզ:

Քանզի մի է մայր մեր եկեղեցի՝ որ երկ-

նեացն

նեացն զմեզ · և մի է հայրն մեր հոգին ու՟՝ որ ծնաւն զմեզ ։ Օխորդ համահարք միոյ մօր որդիք՝ երկպառակք լեցին և ոչ միաբանք ։ Որ քեզ թուին թէ հրապոյրք իցեն, մեր ՚ի տունէ և ՚ի գիշերի դոյն խորհուրդ է, զի անքակ ու-նիցիմք զկենաց միաբանութիւն ։ Իսկ եթէ սա ձանձրացեալ իցէ ելանել յախտալից մարմնոյս, տաւել եւս մեք ամքն · զի չիք ոք ամենեւին՝ որ ունիցի զմարմին առանց ցաւոց չարչարա-նաց ։

Ետ պատասխանի Դենշապուհ և ասէ · զայդ ոչ գիտէք, որչափ երկայնամիտ լինիմ ես ՚ի վ՟ր ձեր · այս ոչ հրամանաւ արքունի է այսչափ երկայնութեան լինել ընդ ձեզ պայքա-րաւ ։ Այլ կամիմ քաղցրութեամբ թողացուցի ձեզ, զի չեմ իբրև զձեզ անագորոյն · զի անձանց ատելի էք և այլոց թշնամի ։ Իմ զի աղ և հաց կերեալ է յաշխարհին ձերում, գութ և սէր ունիմ առ աշխարհն ։

Ետ պատասխանի Ղևոնդ երէց և ասէ · որ առ արտաքինս գութ և սէր ունի, զպատուի-րանս ա՟յ կատարէ · այլ պարտի և յիւր ոգիսն խնայել, զի չեմք անձանց տեարք · այլ է որ համարս խնդրէ ՚ի մէնջ և վ՟ն արտաքնոց և վ՟ն ներքնոց ։ Այլ զոր ասացերդ, եթէ յինէն անսամ ձեզ և ոչ է հրամանաւ թագաւորին ։

Եթէ դուք սովոր էք անցանել զհրամանաւ թագաւորին ձերոյ, զայդ բարւոք առնէք · զի աւերիչ աշխարհի է, և սատակիչ անմեղ մարդ-կան · բարեկամ սատանայի, և թշնամի ա՟յ ։ Այլ մեք ոչ կարեմք անցանել զհրամանաւ մերոյ թա-գաւորին, և ոչ զանանց կեանս մեր փոխանա-

կեալ կարեմք ընդ ապականացու պատրանս աշ-խարհիս. Այլ վասն իմ՝ զի տայցեր չցաւեալ զառողջութիւն ՚ի բժշկաց, սիրէ զմահ քան ըզ-կեանս. այլ բանք ոչ այնոցիկ են՝ որ տեսանեն զմահ չարչարանս աշխարհիս. Ազէ՛ ցածո՛ ըզ-քեզ սակաւիկ մի ՚ի զայրագին սրտմտութենդ, և ե՛կ զհետ ճշմարիտ բանից իմոց, և հայեա՛ կարգաւ ընդ իրս աշխարհիս.

Ո՞ որ ՚ի մահկանացուացս ունիցի կեանս ան-տրտումս, ոչ ապա լի՛ են ամ՟ ախտիւք. է՛ որ ներքոյ՝ և է՛ որ արտաքոյ. ցուրտ և տօթ, քաղց և ծարաւ, և ամ՟ աղքատութիւնք կարօ-տութեանց. Արտաքոյ՝ անիրաւութիւն, յափշտա-կութիւն, գէջ պղծութիւն անառակ յարձակ-մանէ. Ներքոյ՝ ամբարշտութիւն, ուրացութիւն, ագահութիւն, անդարձ մոլորութիւն ՚ի կամաւոր ազատութենէն. Բայց դու որ զբժիշկս խո-տեալ անարգեցեր, թէ չէ՞ք իմ ՚ի նոցանէ գտեալ զառողջութիւն. չէ՞ն ինչ զորմանք, վ՟ն զի մարդիկ են նոքա.

Ի՛ցու՝ որում գոյցէն հնարս առողջու-թեան, և է՛ որ ապաստանիցէ ՚ի հնարից նոցա. Վ՟ն զի ամենեքեան եմք մահկանացու, այն՝ որ բժշկեն և որ բժշկին.

Այլ երանի՛ թէ՝ և դուք ըստ բժշկական արուեստին բերէիք զնմանութիւն, զի ոչ փոքր է ճշմարտութիւն նոյն բժշկութեան. Քանզի յոր-ժամ տեսանեն նոքա զոք հիւանդացեալ, ոչ յապաղեն երթալ առ նմա. այլ փութացեալ հնարին մատուցանել զառողջութիւն.

Մանաւանդ՝ եթէ յարքունիս մի ոք ՚ի սի-րելեաց թագաւորին ախտանայցէ, և հասեալ ՚ի

 մեծ

մեծ հրապարակին՝ տեսանիցէ զբազմութիւն պաշտօնաւորացն և զառողջութի գեղեցիկ երիտասարդացն . և ևս մատուցեալ 'ի սրահն արքունի՝ և անդ տեսանիցէ զամ զսպասաւորացն ըզչքնաղ և զսքանչելի տեսիլն , ոչի՛նչ զարմանայր ընդ հրաշակերտ տեսիլն : Նաև եթէ գտանոյք ականակապուք իցեն և համակ ոսկեղէնք՝ յորոյ վերայ հիւանդն անկեալ դնիցի , չէ՛ ինչ նմա փոյթ զայնմ ամէ :

Այլ 'ի բաց հրամայէ առնուլ զոսկեհուռ վերարկուն , և ձեռն 'ի ներքս տարեալ զննէ զամ մարմինն , եթէ ջե՞րմ իցէ բնութիւն . և եթէ սիրտն 'ի տեղւոջն հանդա՞րտ կայցէ . և կամ եթէ լեարդն կակո՞ւղ իցէ . և եթէ շարք երակացն յարմա՞ր իցեն . և ըստ նմին զդարման բժշկութեան առնիցէ , շնորհելով նմա զառողջութիւն :

Իսկ արդ՝ եթէ մարդկային բժշկութիւն՝ այդպիսի գիտէ քամահել զամենայնիւ , և միայն զիւր արուեստն յառաջ մատուցեալ՝ ըզգործն կատարէ . որչափ ևս առաւել ձեզ արժան էր՝ որ զբոլոր աշխարհս ունիք յիշխանութեան , մեծ հոգ յանձին տանել . նախ զհոգիս բժշկել յամենայն ախտից մոլորութեց աշխարհիս , և մարմնով կային իսկ ձեզ ամքն 'ի ծառայութի :

Արդ՝ այժմ զի դուք տգիտացարուք , և զանմահ հոգիսդ՝ մահկանացու արարէք յանշէջ հուր գեհենին . մարմնովդ՝ եթէ կամիք և եթէ ոչ կամիք , ախտացեալ էք յախտաւորութի անառողջութե , և զմեզ նախատէք մարմնոց ցաւովք , որ ոչ 'ի կամս մերոյ ազատութե է . այլ

որ

որպէս և գիտեցաւ 'ի բնութենէս մարմնոյ իւրաքանչիւր մարդոյ . և Քս Ած ճշմարիտ կենդանի և կենդանարար՝ 'ի կամս իւրոց բարերարութեան եղև բժիշկ հոգւոց և մարմնոց, և նա ինքն 'ի ցաւս չարչարանաց իւրոց բժշկեաց զամենայն ազգս մարդկան . Արդ եւս խանդաղատագոյն գթացեալ՝ վասն ծննդեանց ծնելոյ զմեզ յառողջութի անցաւս և անմեղս, և 'ի ծածուկ հարուածոց զհետն ծակառածս վիշապին ողջացոյց, և արար զմեզ անախտս և անարատս հոգւով և մարմնով . զի եղեալք բանակակիցք հրեշտակաց և զօրք երկնաւոր թագաւորին մերոյ .

Արդ քո զայս ոչ գիտացեալ և ոչ վայելեալ յանսպառական պարգևացն այ, և ոչ կամիս առնել ես 'ի մէնջ, այլև զմեզ ես վրիպեցուցանել կամիս, որում չէք հնար և մի՛ լեալ . այլև ոչ կարես առնել ինձ . Այժմ վն ինչ ախտալից մարմնոյս առաջեմ ձեզ կարճառօտ .

Խնդրեմ և աղաչեմ եմ յորժամ անուանեմ զմարմինս չարչարեալ . գիտեմ զի զօրանայ մեր առողջութիւն հոգւոյս ինձ . Մանաւանդ զի առնիմ զառաքեալն զմեծ վարդապետն հեթանոսաց, որ 'ի ցաւս մարմնոյ անձին մխիթարէր . և 'ի կոփումն սատանայական՝ մարմնոյ պարծէր և ասէր . զի եթէ տնկակիցք եղաք նմանութեան մահու նր, որպէս և առաւել լիցուք հաղորդ յարութե նր .

Այժմ դու՝ որ ունիս իշխանութի 'ի վերայ մեր, դադարեա՛ զմեզ բարեկամաց չարութե քո Չեմք ինչ զանգիտելոց յահագին սպառնալեացդ քոց, և ոչ երկիցուք 'ի դառն մահուանէդ՝

նէդ՝ զոր ածելոց ես ՚ի վ՟ր մեր .

Յայնժամ մեկուսացոյց սակաւիկ մի զերանելիսն ՚ի միմեանց , եւ միայն ասէ ցծ՟ր եպիսկոպոսն . գոհութիւն զոր ետու քեզ յառաջ , ոչ խնացար զպատիւ անձին քո . մերժեցուցանեմ քեզ զշնորհսն զոր գործեցեր դու , զի անձամբ զանձն քո արարցես մահապարտ . Արդարեւ դու աւերեցեր զատրուշանսն յռշտունիս , եւ կամ զկրակն դու սպաներ . նաեւ ոչ լռեալ եւ ստուգեցի , եթէ եւ զմոգսն դու չարչարեցեր , եւ զպաս պաշտամանն դու տարար .

Արդ՝ եթէ արդարեւ դու արեր , պատմեա՛ ինձ . Նա պատասխանի ետ եւ ասէ . արդ կամիս ուսանել զայդ յինէն , եթէ յառաջագոյն գիտեիր . Դենշապուհ ասէ . ոչ է համբաւն , եւ ոչ է ճշմարտութիւն . Եպիսկոպոսն ասէ . ոչ կարծես՝ ասա ինձ . Դենշապուհ ասէ . իմ լուեալ էր՝ եթէ զա՟մ ՚ի յռշտունիս դու արարեր . Եպիսկոպոսն ասէ . եւ զի այդպէս հաւաստեաւ հասեր ՚ի վ՟ր , կրկին զի՞ հարցանես . Դենշապուհ ասէ . զճշմարիտն ՚ի քէն կամիմ ուսանել . Եպիսկոպոսն ասէ . ոչ զօգուտն կենաց քոց կամիս ուսանել յինէն , այլ արեանս խնում ցանկան միտք քո . Դենշապուհ ասէ . չէ՛մ արիւնախանձ , այլ վրէժխնդիր եմ ա՟ծոցն անարգութե՟ն . Եպիսկոպոսն ասէ . զտարերս համրս՝ ա՟ծ անուանես , եւ զմարդիկ պատկերակից քո՝ խողխողել կամիս . տալոց ես հատուցանելոց ես վրէժ Թագաւորաւն քով յանկաշառ ատենին ա՟յ . Եւ զոր քո չար կամեցկամին , զայդ ես ասեմ քեզ . զատունն արդարեւ ես աւերեցի . եւ զմոգսն ես չարչարեցի

դա

գանձին · և զկեանս պղծութեանն որ 'ի տանն էր, 'ի ծովն ընկեցի · այլ զկրակ ո՞ կարէ սպանանել ։

Քանզի ամենիմաստ արարիչն արարածոց հող խնամոց յառաջագոյն տարեալ՝ անմահս հաստատեաց զբնութիւն չորից նիւթոցս ։ Աղէ՛ սպան դու զօդ՝ եթէ կարես · և կամ ապականեա՛ զհող, զի մի՛ բուսուսցէ զբուսոյսս · փողոտեա՛ զգետ, զի մեռցի ։ Եթէ զայդ երեքեան կարես առնել, ապա և զկրակ կարես սպանանել ։

Ապա եթէ ճարտարապետն մեր միաբանեաց զչորից տարերցդ զանքակութի, և ահա գտանի բնութի հրոյ 'ի քարինս և յերկաթս և յամենայն տարերս զննելիս · ընդէ՞ր ստութեամբ զրպարտես զիս, եթէ դու զկրակ սպաներ ։ Աղէ՛ դու սպան զջերմութի արեգական, զի ունի նա մասն հրոյ · և կամ տուր հրաման, զի մի՛ թափեսցի հուր յերկաթոյ ։ Մեռանի այն՝ որ ծնցէ և շարժի և գնայ, ուտէ ըմպէ ։ Ե՞րբ տեսեր դու զկրակ գնայուն կամ խօսուն կամ գիտուն ։

Արդ՝ զոր կենդանի չէ՛ քո տեսեալ, մեռեալ խոստովանիս ։ Քանզի անթողլի է ամբարշտութիդ ձեր քան զամ հեթանոսաց, որ գիտնագոյն են քան զձեզ · թէպէտև 'ի ճշմարտէն այ մոլորեալ են, զանխօս տարերս ած խոստովանին ։ Արդ եթէ դու անգիտութե կորնչելի ասես զբնութի հրոյ, ո՛չ առնուն քեզ յանձն արարածքս · քանզի խառն է դա յամենայնս ։

Գենշապուհ ասէ · ոչի՛նչ մտանեմ ես 'ի պայքար քննութե ընդ քեզ վս բնութե արա-

րա

րածոցս · այլ խոստովանեա՛ ինձ եթէ դու ան-ցուցեր զկրակն եթէ ոչ ։ Պատասխանի ետ երանելին և ասէ · որովհետև ոչ կամեցար ա-շակերտ լինել ճշմարտութեան , ասացից զկամս հօրն քո սատանայի ։

Այս ինձէն իսկ մտի 'ի կրակատունն ձեր , և տեսի զի կային պաշտօնեայք ամբարշտութեան՝ սնոտի կարծեացն ձերոց , և կրակարանն լի հը-րով՝ առաջի նոցա բորբոքեալ այրէր ։ Հարցի ցնոսա բանիւք և ոչ գանիւ , եթէ զի՞նչ համա-րիք 'ի միտս ձեր զկրակ պաշտամանս այսորիկ ։ Նոքա պատասխանի և ասեն · մեք ինչ ոչ գիտեմք , բայց այսչափ իմանամք՝ զի սովորու-թիւն է նախնեաց , և հրաման բուռն թագա-ւորին ։

Ասեմ դարձեալ ցնոսա · զի՞նչ իմանայք ըզ բնութիւն կրակիդ , արարի՞չ կարծէք եթէ ա-րարած ։ Ասեն ամենքն միաբան · մեք արարիչ զդա ոչ գիտեմք , նաև ոչ հանգուցիչ աշխատե-լոց · ձեռք մեր փապարեալ են 'ի կացնի , և ողունք մեր տեռեալ են 'ի փայտակրի · աչք մեր գիջացեալ են արտասուօք 'ի կծուութենէ ծխոյ դորա , և երեսք մեր մրոտեալ են 'ի խոնա-ւութենէ թանձրութեան նորին ծխոյ ։ Եթէ շատ մատուցանեմք նմա զկերակուրն , յոյժ քաղց-նու · և եթէ բնաւ չտամք՝ բնաւ անցանէ և սպառի · և եթէ մօտ երթամք և երկիրպա-գանեմք , կիզու զմեզ · և եթէ ոչ երթամք մօտ , ամենեւին մոխիր դառնայ ։ Մեր այդպէս հասեալ է 'ի վերայ բնութեան դորա ։ Ասեմ դար-ձեալ ցնոսա · իսկ եթէ լուեալ է ձեր , որ ու-սուցեալ է ձեզ զայդպիսի մոլորութիւն · ետուն

պա

պատասխանի և տեսն ․ զի՞ ՚ի լսելոյ հարցմանս զմեզ , այլ հայեցոյց ընդ առաջնկոյ նա ․ Ծե-նողքն մեր տգեղք մնայ միայն են կարա-ցեալք ․ այլ Թագաւորն մեր՝ մարմնոյ միով ա-կանէն կոյր է , այլ հոգւոյն ընաւ չէ՛ք նոյ աչք ․

Մի այնպիսի և ես երբեմն լուեալ զայս ՚ի մե-ծացն , յոյժ սքանչացայ ․ զի տգիտութիւն զոր-ծոյն խոստացան ․ Ամենեքին մի չարչարեցի զնո-զանիս , և հնգանց նոկ եսա զկրակն ՚ի ջուրն ընկենուլ ․ և այսպէս տացի ․ ձեզ՝ որ զերկինս և զերկիր ոչ տեսէք , կարիցեն ՚ի նեղոց ել-նել ․ և տալ զնոցա ՚ի բաց արձակեցի ․

Զայս իմ երբեմն լուաւ դենչապուհ ՚ի բե-րանոյ մը եպիսկոպոսին , անհնարին զահի հա-րաւ ՚ի Թշնամանաց Թագաւորին , և յանարգա-նաց դենին ․ Մի և երկեաւ նոկ մատուցա-նել զնա ՚ի ատենական հարուածոյ , եթէ զուցէ այլ ևս մեծ անարգանս զԹագաւորէն տայցէ տալ յատենին ․ Իսկ ՚ի նա ձգեցին կործեր Թշնամանացն , զի երկայնմտութիւ պայքարեցաւ ընդ նմա ․

Իսկ քանզի տեսեր ընդ մէջ ածեալ դեն-շապուհ նստեր յատենին՝ աչս արկանելով ո՛րգն , գործեաց երբեմն զատուած զպարագին , և հանեալ զատեանն զատեանսար յարձակեցաւ ՚ի վր ե-րանելւոյն , և եհար զեպիսկոպոսին զոչ ատն և Թիկանցն հեա զձեռն ՚ի վայր ընկեց ․ Իսկ նր յաղթեալ կոչնն յերկիր անկեալ՝ գործեալ անդրէն պատասխանէր , առնելով զոչ ձեռն ՚ի վեր Աստուծոյ մեծամայն և ասէ ․ ընկալ տէր զխոստովան պատասխանս , որ խօսէն զիս քեզ

մա

մատուցի բոլորովին · և խառնեամ զիս 'ի դասուն-
նդ զինուորացն քոց · Պարծեալ քաջալերեր
զընկերակիցսն և ասէր · հայրս սուրբինք՝ ե-
հաս ժամ պսակման մերոյ · խնդրէք զայս մարմ-
նոյդ վայր մի, և այժմ տեսանէք զլոյսն մեր
քն · Եւ թաւալեալ ընդ արիւն անձին իւ-
րոյ՝ ասէր · օրհնեցից զքեզ յամ ժամ, հանա-
պազ օրհնութի նր 'ի բերան իմ · 'ի տէր պար-
ծեսցի անձն իմ, լուիցեն հեզք և ուրախ ե-
ղիցին · Եւ ասելով զաղմոս զայս՝ կատարեր
մինչև ցայս տեղի · բազում նեղութիւնք են ար-
դարոց, յամէ փրկէ զնս տէր, և պահէ զամե-
նայն ոսկերս նց ·

Եւ մինչդեռ կայր յաժի մարմնոյն ասպ-
ափկ մի, երով աչօք իւր հայեցեալ տեսանէր ·
որ եկեալ իջանէր յերկնից դասուք բազում
հրեշտակաց, և մեջ պսակ 'ի ձեռին հրեշտակա-
պետին · Պարծեալ և ասէր եւս բարբառ 'ի
վերայ · քաջալերացուցանք սիրելիք իմ, զի
ահա մարմնոյս զվշտալից զկեանդ, և հասէք
երանելի պսակացդ, զոր ձեռով ճգնութեանդ
կազմեցիք · Նոքա դէք մարտնչիւր զլու-
սիւթ պսակաւորն՝ որ 'ի ձեռն զգոյել հե-
թեցա · իւր հաստատութի զգոյգ՝ յանե-
նայն ձեռացն քոն կազմեցաւ, զոր եւ 'ի սպա-
սաւորաց այսի իւր ընկալեալ՝ ընդ ստեփաննո-
սի լինիք պսակակից ·

Նա և զայն եւս քաջալեր տեսանէր, զի
դեռևս շողոյն սուրն 'ի վեր պարանոցի երանե-
լւոյն · Ո՛վ իրրև եւեսս տղն Պետրոս՝ եթէ
ես եւ զմի մի կոտին հարցանել և դատել, այլ
միանգամայն հրաման եղև մահու, ասէ ցերա-
նե

նելին Յովսէփ. մանի՛ր յառաջեւսա՛ց դու ընդ-դէմ սոցին, քանզի դու տարիձանաւ 'ի վե՛ր ես քան զնոսին.

Եւ զայս իբրեւ ասաց, կարգեցան կացին մի ըստ միոջէ. եւ առ ձեռս տաղնապին տոխակե-լոյ դաշձաց, միանգամայն հատին եւ ընկեցին զպարանոցս երանելեացն՝ առաջի նորա եպիսկոպո-սին. Եւ նա ընդ համել օդոցն՝ աղաղակեաց եւ ասէ. տէ՛ր յս ընկա՛լ զհոգիս մեր ամենեցուն, եւ խառնեա՛ զմեզ 'ի դասն սրբելեացն քոց. Եւ միանգամայն կատարեցան ամենքն 'ի նմին տե-ղւոջ. Եւ եթէ զմնդպետան եւ՝ որ հաւատոց 'ի քս, կամեցեալ 'ի համար արկանել ընդ նս, թուով եօթն են. Թող զերկուսն եւ՝ որ 'ի վաս-պետան կատարեցան. եւ միւս եպիսկոպոսն Թա-թիկ անուն յաւարեաստանի.

Բայց անդէն 'ի տեղւոջն վկայքն՝ որոց ան-ուանքն այսոքիկ. Սահակ եպիսկոպոս Ռշտու-նեաց. Յովսէփ 'ի Վայոց ձորոյ 'ի գեղջէ Հողոց-մանց. Ղեւոնդ երէց 'ի Վանանդայ 'ի գեղջէ Իջեւանից. Մուշէ երէց յաղբակոյ. Արշէն երէց 'ի Բագրեւանդայ 'ի գեղջէ յեղեգեկէ. Քաջաջ սարկաւագ՝ ռստի եպիսկոպոսին էր, Ռշտունեաց. Իսկ երանելին Ղեւոնդ 'ի Նախ-ջաւան քաղաքէ. Սամուէլ երէց յայրարատոյ 'ի գեղջէ յարածոյ. Աբրահամ սարկաւագ 'ի նմին գեղջէ.

Արդ՝ զմեց ո՞րքս զայսոսիկ յանապատին՝ որ կատարեցին, Դենշապուհ եւ մոգպետն եւ Ջնիկան եւ մակպետն անդէն 'ի տեղւոջն պահապանս ընդ-րեցին յիւրաքանչիւր ազատաց, եւ պահել հրամայեցին զմարմինս երանելեացն ցաւուրս



տասն

տան և կամ ես աւելի , մինչև կարաւանն ողջունի անցցէ գնասցէ . Ո՛չ է մի՛ ամեն համակրենքն ելեալ բառնայցեն զամենայն գոյս, և բաշխեալ առնիցեն ընդ իւր աշխարհս , յոր մարդիկ եւ առաւել յորդորեալ՝ մղորիցեն զինի նածարեցաց ապանդին .

Իսկ խուժիկն՝ զոր յառաջագոյն ասացաք , զինս համդերձ մեւոյ անդէն ընդ պահապանսն երրև զմի ՚ի նոցանէ . Նա ևս խմառաւթը և կատարեալ յիշեալն զխաւթեն . ապաւեր և գետակն անէր , եթէ որով որինակա հնարս գոյէ զաղման ՚ի նոցանէ զամենայն ինչն .

Երրև աւուրք երեք անցանէին ՚ի վերայ , որհաւիրք մեծ անկանէին ՚ի վերայ ամենայն , և երրև թմբրեալք և կխամեալք անպարեք անկեալ գնէին զերկս աւուրն . Իսկ ՚ի չորրորդումն աւուր՝ երկուքն ՚ի պահապանացն չարաչար ըմպեցան ՚ի գինւէ . գրգռեալ զհասարակ գիշերաւ չար՝ ձայնք աշեալք՝ հնչիւն և թնդիւնք և սասանմունք ՚ի ներքուստ երրև զդղրդումն զեմսարումն՝ երկերն զօրայ ՚ի ներքոյ նոցա . Այս չափինդք առանեալ փայլատակումն որոտկէին չարաչար զնոցա . և զմեղուան զբոլորանն կանգնեալ անասանէին , և զնոյն բանս առնէին աշաւրիս բարբառէին ՚ի լսելիս նոցա . Մինչև խուժադեղ նոցա ընդ մեխանս , գնալ զերեարս ասասեյէին . Այս պատճառս տարթոյեալք և ցնոր-բեալք , մինչև այր զընկերի փախուստ չգիտէր ընդ որ երթայր . Այս ելեալ պատմէին մեծա-պարծանացն զամենայն անդս չարաչարանացն՝ զոր կրեցին նոքա . Ի խաչհաւրդ մարին նախա-րարքն երկրեան , ակամա զարմանալով ցմեծամեծ-աւել

տեսել . զի՞նչ գործեցաք , զի՞նչ արարաք մս՛ անքննին աւանդոյն քրիստոնէից : Քանզի մինչ-դեռ կենդանի են , զարմանալի՛ են կեանք նո-րեանց . ընչասէրք են իբրև զանկարօտս . որկրամոլք են իբրև զանմարմինս . ամաչաք են իբրև զարդարադատս . աներկիւղք են իբրև զանմահս . Իսկ եթէ զայն ամ տեսեմք իբրև զոգիոց իբրև զյանդգնելոց , նոյ զայն զի՞ առնիցեմք . զի ամ ցաւոք 'ի կարաւանի սաս՛ նոքօք տառապանան .

Իսկ կամ որ մեծ է քան զայդ ամ , ո՞չ ու-րուք դի կանգնեալ երեւեցաւ կենդանեաց , կամ բարբառ բանից որ լուաւ 'ի նմանէ . զի սոս չեն մեր առասաւորք . մեր մեզէն նոյ հա-նեալ է 'ի մ̃ր ատաջորդութեան սոցա . Իսկ եթէ կամեցեալ էր դոցա կամաւոր նոյն ազատութ̃ն 'ի ներքս խառնել , ասկա մի անհարկեին քրիս-տոնէից 'ի կարաւանիս , զկշիռ իւրաքանչիւր մա-մնոց նոյ սակի առնուլին .

Պարծեալ և արդ որ 'ի դի՛ե չարչարե-ցան . զի յայլ ժամս ցաւոք չէին , մեք դի-տեմք . յայտ է թէ այսօր նշան մեծ երեւեցաւ . և եթէ լուռ լինիմք այսպէս , մեզ և անձանց մերոց կամակած նոյ է . և եթէ տանիմք զդատ առաջի թագաւորին , լսելով նորա 'ի դոցանէ զայդ ամ մեծամեծ արանչելիս , դուցէ և օ-րինացս մերոց քակտումն լինի հաւանիցէ .

Իսկ պատասխանի մոգպետն և ասէ ցն̃տ . ո՞չ գիտ ասրինկան արարին 'ի մ̃ր ձեր երկիցուն . զի՞ այդչափ ներդեալ տարդնապիք յանձինս ձեր , դուք զգործն ձեր կատարեցէք , և զհրաման արքունի 'ի դլուխ տարջիք . Արդ՝ եթէ բանքդ այդ-

յայտ

յայտնեցին , և հարցափորձ լեցին առաջի ար-
քային , այդ խնդիր՝ մեր մոգաց է . դուք ան-
հոգ լերուք և մի՛ ինչ զմտաւ ածէք ։ Այլ եթէ
զարհուրեցայք ինչ յոգիս ձեր , վաղագոյն ա-
ռաւօտուցն ՚ի դարիթիւն եկայք , զի վաղիւ-
անդր մոլորեալն մոլորեալ ռամն աղդէ , և նոյն
հանձնեալ հաւանեցուցանէ զմիտս ձեր ։

Իսկ խուժիկն իբրև լուաւ զայս ամ , և
գիտաց եթէ փոյթ ինչ ոչ է նմա յայնմհետէ
զմեր սպանելոցն , փութացաւ վաղվաղակի եառ
տասն այր՝ զորոց զգլխի գիտէր քրիստոնէու-
թեանն , և հասեալ ՚ի տեղին՝ չէին եգիտ զա-
մենեսեան ։ Այլ քանզի կասկած ունէր տակա-
ւին ՚ի նոցունց ՚ի դահճացն , դարձեալ փոխե-
ցին անտի զմարմինն յայլ տեղիս բացագոյն՝ իբ-
րև երկու հրահասօք ։

Այլ իբրև յանհոգս եղեն . սրբեցին կազմե-
ցին զսկերս երանելեացն , բերին ՚ի բանակն
և ունէին ՚ի ծածուկ . և առ սակաւ սակաւ
յայտնեցին , նախ՝ զօրականին Հայոց , և ապա
բազում քրիստոնէից՝ որ էին ՚ի կարաւանին ,
և զառաջին պտուղ ընծային մատուցանէին կա-
պեալ նախարարացն . և անդէն վաղվաղակի ար-
ձակեցան նոքա ՚ի կապանացն իւրեանց , և ապա-
նալեք մահուանն անցին զնոքօք ։

Այլ հրովարտակք Թողութեան առաքեցան
յաշխարհն Հայոց ։ Այս երանելի խուժիկս՝ որ
արժանի եղև ՚ի ծածուկ սպասաւոր լինել սրբոցն ,
որ ինչ ՚ի մահուանէն և այր ասացաւ դատակ-
նիք վճռիս այսորիկ , նա երկրորդեաց մեզ զամ
կարգաւ ։ Այլ զչարաչար քարշումն , և զհարց և
փորձ դատաւորացն , և զիւրաքանչիւր անձանց

որը

որոցն պատասխանիս , և զկատարումն մահուան նոցա , և զահագին արհաւիրսն՝ որ 'ի վերայ պահապանացն անկան , և զհեծեծումն քննման նախարարացն երեցուն . զամփոփումն ոսկերաց նոցա՝ ոչ խառն 'ի խուռն 'ի մի վայր ժողովելով , այլ զմի մի 'ի նոցանէ ուրոյն ուրոյն 'ի վերայ տապանս ժողովեալ էր , և զանուանս իւրաքանչիւր ուսեալ և 'ի վերայ տապանացն նշանակեալ էր : Եւ զկապանան երկաթիս ընդ իւրաքանչիւր ոսկերսն եդեալ էր , քանզի դահճացն 'ի բաց ընկեցեալ էր . որպէս և զհանդերձսն զիւրաքանչիւր տապանի նշանակեալ էր :

Եւ կատարեցան սոքա վեցեքեան՝ որք և ցանկալի մահուամբն իւրեանց , որ օր քսան և հինգ էր հրոտից ամսոյ , 'ի մեծ անապատին յապար աշխարհի , 'ի սահմանս նիւշապուհ քաղաքի :

Պատմեալ վասն խոստովանող աշակերտաց նոցին .

Իսկ աշակերտք երանելեացն 'ի կապանս կալեալ 'ի ներքս 'ի քաղաքին . եկն դահճապետ մի արքունի , և եհան զնոսա 'ի քաղաքէ անտի արտաքս : Եհան 'ի նմին քաղաքէ ասորի քրիստոնեայս արս հինգ . քանզի և նոքա 'ի կապանս էին վասն անուանն քրիստոսի .

Եհարց ցնոսա բանիւք , և ոչ հաւանեցան երկիրպագանել արեգական , այլ և՛ս առաւել 'ի նոյն միտս պնդեցան . չարչարեաց զնոսա գանիւ , կտրեաց զնոցա զունչս և զականջս , և ետ տանել յաստրեստան , զի կացցեն 'ի մշակութե արքունի : Եւ նոքա երթային մեծաւ զօրութեամբ , իբրև այն թէ մեծ պարգևս գտեալ

'ի

'ի Թագաւորէն ։

Որդ՝ եկն դարձեալ նոյն դահճապետ առ աշակերտս սրբ. սպանելոյն . ընտրեաց 'ի նոցանէ երկու՝ որ համեստագոյնքն էին , առեալ մեկուսի յայլոց և ասէ ցնս . զի՞նչ անուանք են ձեր ։ Պատասխանի ետ մինն և ասէ , առ 'ի ծնողաց ինձ Յոբէն , և դմա Աբրահամ . իսկ ըստ շնորհատուր կարգին՝ ծառայք քնի եմք , և աշակերտք երանելւոյն՝ զոր սպանէք ։ Դա պատասխանի դահճապետն և ասէ ցնս . իսկ արդ՝ զի՞նչ գործ է ձեր , կամ ընդ ո՞յր իսկ ածեալ է զձեզ այսր ։ Պատասխանի ետ առ այս սրբն Աբրահամ և ասէ . զայդ 'ի փորձապետացն մերոց արժան էր ուսանել ձեզ , զի ո՛չ դուզնաքեայ ոք էին նոքա ։ Սմա ուսեալ ընտացուածս հայրենիս ըստ արժան բաւականին , ըստ նմին և աշակերտս ։ Էր՝ որ իբրև զմեզ , և էր՝ որ լաւագոյն քան զմեզ . որոց սնուցեալ և ուսուցեալ էր , ընդ նմա եմք եկեալ ։ Քանզի և պատուէր իսկ ունիմք յածատուր օրինացն մերոց՝ սիրել զնս իբրև զմր ծնողս , և սպաս տանել նց իբրև հոգևոր տերանց ։

Յաւեալ դահճապետն և ասէ . իբրև զանխրատ և զաներկիւղ ստամբակս խօսիս . մինչդեռ 'ի խաղաղութե և յաշխարհի էիք , բարիոք էր . յորժամ դրուահ եղեն նոքա մերս արքունիս , և մահապարտ գտան ըստ գործոց իրեանց , ձեզ չէր արժան ամենևին մօտ երթալ առ նս ։

Ո՞չ տեսանէք 'ի մեծ կարաւանիս . յորժամ ոք 'ի սպասաւորացն 'ի դիպահոշ արքունի լեցի , ազգ. հանդերձ ազանի և զատեալ և որոշեալ՝ 'ի

բա

բացեալ նաւի միայնիկ , և ամենեւին հուպ ոք
ոչ իշխէ երթալ առ նմա ։

Իսկ դու այդպէս իբրև զանյանցի աշակերտ՝
պարծանօք խօսիս ։ Պատասխանի ետ առ այս
Խորէն և ասէ ․ ոչ ձեր կարգդ անիրաւ է , և
ոչ մերս ստութիւն ։ Նախարարն յանցաւոր ուս-
ոյ զպարգևն գտեալ էր , այնպէս պարտ էր
նմա հպատակ լինել ․ զի 'ի պատուոյն վերայ , և
այլ ևս պարգևս մեծամեծս 'ի նմանէ գտանէր ։
Որդ՝ փոխանակ զի զայն ոչ արար , ձախողակի
յետս ընդդիմքն պատահեաց նմա ։ Իսկ մեր
վարդապետքն եթէ առ Աստուած յանցուցեալ էին ,
և կամ առ թագաւորն մեղուցեալ ինչ էին ,
նոյն օրինակ և մեք առ նմա առնէաք ․ ոչ յաշ-
խարհի մօտ երթայաք , և ոչ 'ի տար աշխարհ
այր՝ զհետ նոցա գնայաք ։ Որդ՝ քանզի առ եր-
կրքեան կողմանն՝ արդարութիւն կեցեալ էն , և
դուք՝ զուր տարապարտուց սպանանէք զնոսա , մեք
այժմ ևս առաւել սպասաւոր եմք մեք ոսկե-
րաց նոցա ։

Դահճապետն ասէ ․ ես յառաջագոյն իսկ
ասացի եթէ կարի՛ ստամբակ ոմն ես դու , ահա՛
ցայտ եղև առաջիկ՝ եթէ յամենայն մասս նոցա
խառն էք դուք ։ Աբրահամ ասէ , յո՞ր մասս ․
դահճապետն ասէ , առաջին 'ի մահ մողոցն ,
և ապա՛ յայլն ամենայն ։ Աբրահամ ասէ ․
այդ ոչ միայն 'ի մեզ է , այլ ընդ կարգի և ձե-
րոց օրինացն ․ և թագաւորք հրաման տան ձեզ ,
և դուք 'ի ձեռն ձերոց սպասաւորացդ գոր-
ծեցէք ։

Դահճապետն ասէ ․ 'ի Միհր աստուածն երդուեալ
եմ՝ խստագոյն ևս խօսիս քան զվարդապետսն

քո

քո․ յայտ է թէ՝ և մխտակալութիւնք ես էք դուք․ Ա՛րդ ոչ է հնար ապրել ձեզ ՚ի մահուանէ․ բայց եթէ երկիրպագանէք արեգական, և կատարիցէք զկամս օրինաց մերոց․

Խորէն ասէ․ ցայժմ իբրև զմարդ չարախօսէիր, և արդ իբրև զշուն անպիտան ընդվայր հաչես․ Եթէ գոյր արեգականն ականջ, դու տայիր նմա թշնամանս դնել․ Ա՛րդ՝ նա բնութիւն անզգա՛յ է, և դու չարութիւն անզգայագոյն ես քան զնա․ Ե՞րբ տեսեր զմեզ պակասագոյն քան զհարսն մեր․ Մե՛ք բանիւք զխորհս առնուլ կամիր զմեր․ այլ հանդէ՛ս արա քում չարութեանդ և մերում բարութեանս, և ամաչեցեալ դառնի հայրն քո սատանայ, ոչ միայն ՚ի մէնջ՝ որ կատարելագոյնք եմք, այլև որ կարի՛ փոքրիկն թուի՛ցի քեզ, նա դիցէ վէրս սաստիկս յոգի և ՚ի մարմին քո․

Զայս իբրև լուաւ դահճապետն, որոմնեալ բարկացաւ ՚ի վր նց, եւ քարշել չարագոյն քան զաւազակսն․ և այնչափ սաստիկ քարշեցին, մինչև կարծիք եղեն եթէ մեռան․ Իսկ իբրև ժամ երեք ՚ի վր անձին, դարձեալ խօսել սկսան երկոքեանն և ասեն․ փոքր համարիմք զանարգանս զայս, և առ ոչի՛նչ զցաւս մարմնոյս առ մեծ սէրն այ, որով կատարեցան հարքն մեր հոգևորք․ Հարա՛ մի՛ դելոր և մի՛ դադարեր․ այլ զոր ինչ առ նոսայն արարեր, զնոյն և առ մեզ կատարեա՛․ եթէ չարագոյն թուի՛ն քեզ գործք նոցա, կրկի՛ն և զմերս համարեսջիր․ զի նոքա բանիւք հրամայէին, և մեք գործովք զարդիւնսն կատարեմք․

Յայնժամ ևս առաւել զայրագնեցաւ ՚ի վր

նոցա , և հրամայեաց զմահու դատ հարկանել . Եւ առ մի մի 'ի նոցանէ վեց վեց այր փոխե-ցաւ 'ի դահճացն. Եւ մինչդեռ կիսամեռք յեր-կիր անկեալ դնէին , հրամայեաց զերկոսեան ա-կանջսն նոցա կտրել . Եւ այնպէս բերեցին՝ որ թէ չիցէ լեալ 'ի տեղւոջն .

Զարթեան իբրև 'ի քնոյ 'ի սաստիկ հար-ուածոյն , սկսան պաղատանս մատուցանել և ասեն . աղաչեմք զքեզ քոյ զինուոր թագա-ւորիդ , կամ կատարեա զմեզ իբրև զհարսն մեր՝ մահուամբ , և կամ արա զպատուհասդ ըստ օ-րինակի վերջնոյս . Զի ահա լսելիք մեր ա-ռողջացան զանախտաւորութիւն երկնաւոր . իսկ հատանելիք մեր դեռևս ստէն 'ի տեղւոջս կան յանցս չարչարանաց . մի՛ կիսապարգև առներ զմեզ յերկնից բարութէն .

Արբեցեր զմարմինս մեր քարշելով , և զլսե-լիս մեր կտրելով , որպէս և զհատանելիս մեր հատանելով . քանզի որչափ ողջս առնես ըզ-մեզ երկրաւորաւս , զեղեցկագոյնս առնես երկ-նաւորաւն .

Ետ պատասխանի դահճապետն հեզութե՛ և ասէ . թէ և այլ յաւելում ես նոցա կալով առ ձեզ , կարծեմ թէ և աշակերտէք զիս 'ի ձեր յամառութիւն . Զի ահա արդ և զխորհուրդս արքունի 'ի վեր հանեմ ձեզ . ցայդ վայր եղև հրաման պատուհասիդ ձերոյ , և 'ի վր դորին պա-տուհասի երթալ ձեզ յաորեստան , և լինել ձեզ մշակ յարքունիս . զի որ 'ի ձեզ հայեսցի, մի՛ 'ի դմին յամառութե պնդեսցի ընդդէմ հրամանաց թագաւորին .

Ասեն ցնա երանելիքն . դու զմեր երկիրս

կիսագործ թողեր , մեք յարքունի երկիրն՝ կես մարմնով մերով ոչ վտանգիմք ։ Ո՛, այս իբրև լուաւ [illegible] դաշնակապետն՝ աղաչեաց զզինուորսն՝ որ տանէին զնս , և ասէ ․ միայն տուր դուք առէք գնացէք , և հասեալ յասորեստան՝ ուր կամ իւրեանց , և շրջեցին ։

Ա՛յս են խոստովանողքն հայոց կատարեալք՝ որ զնեղութի և զչարչարանս խնդութբ ընկալան յանձինս իւրեանց ։ Եւ վս զի փրկեցին ՚ի սր մահուանէն , սգով և տրտմութեամբ երթային զերկայնութի ճանապարհին ։ Ո՛չ ծանր թուէին նց կապանք ձեռացն և ոտիցն իւրեանց , եթէ ընդէ՞ր չեղաք արժանի հաւասարել ընդ քաջ նահատակսն ։

Եւ իբրև տարան հասուցին զնս յերկիրն բաբելացւոց ՚ի գաւառ մի՝ զոր շահուլն անուանեն , թէպէտև էին յարքունի պատուհասի ․ սակայն յոյժ և գաղտ մեծապէս ընկալեալ եղեն ՚ի բնակչաց աշխարհին ։ Այլ երանելիքն և յայն յոյժ տրտում էին իբրև այն , եթէ սակաւ վտանգեցաք , և մեծապէս հանգչիմք ․ և հանապազ ՚ի նմին զղջման կային ։

Եւ անդէն թևակոխէին տեսանել զսր կապանս նախարարացն , և լինել սպասաւոր պիտոյից նց ։ Իմացուցին զայս մեծամեծաց աշխարհին՝ որք էին ՚ի նմին սր ուխտի քրիստոնէութեն , և հաւանեալ ամցուն մեծամեծաց և փոքունց՝ ապա տանել զամ երկրին , զի հաճոյ թուեցի ամցուն ՚ի ձեռն մարմնաւոր պիտոյիցն կցորդ լինել սր կապելոցն ՚ի հեռաւոր օտարութեն ։

Եւ այսպէս՝ ամ յամէ ժողովէին ընդ իւ֊

րա

րաքանչիւր կարի մարդկանն , ոմն սակաւ և ոմն շատ . որ զի՛նչ և ՚ի ձեռս պատրաստ լինէր , եթէ դրամոց և եթէ դահեկանաց , ժողովէին՝ կազմէին՝ տային յերանելւոյն՝ տանել նմա : Եւ այսպէս յորդանեկութեան կային , մինչև տասն ամն լցաւ ապաստաւորութեան :

Եւ վասն զի յոյժ խստագոյնս պահէին ՚ի ջեր-մք աշխարհին , և անդադար էին ՚ի ճանապար-հորդութեան ընդ նոյն շահուղ , ընդ մեշուր և ընդ քաղկար և ընդ ամ սարեստան և խու-ժաստան , սաստիկ տապով հարեալ ՚ի խորշակէ՝ մեռանէր սրբն Սորէն , և աւանդեալ լինէր ՚ի բնակչաց աշխարհին ընդ սուրբ վկայսն :

Իսկ երանելին Աբրահամ կայր ՚ի նմին ա-ռաքինութեան անդադար , և զամ տարս հաւա-տացելոցն՝ շիջէր ժողովէր և տանէր ՚ի մեծ հե-ռաստանն , և ինքն մատակարարէր ըստ իւրա-քանչիւր կարօտութեան :

Եւ այնպէս յերկարեցաւ մինչև յերկոտա-սաներորդ ամ պատժաւորացն , մինչև աղաչել զնա միաբան ամենցուն , զի հաւանեսցի երթալ յաշխարհն հայոց . զի ՚ի մտանելն նորա անդ նոքա, ՚ի նմա տեսցեն զքաջ նահատակսն՝ որ կատարե-ցան սրով . ՚ի նմա տեսցեն և զսուրբ կապանս չար-չարանացն :

Եւ յորժամ մարտիրոսք և խոստովանողք և կապեալք նովաւ տեսանին , նովաւ օրհնի աշխարհն ամենայն : ‘Նովաւ օրհնին տղայք նոքա յաճումն : ‘Նովաւ զգաստանան երիտասարդք նոքա ՚ի սրբութեան : ‘Նովաւ համեստանան ծերք նոքա յիմաստութեան : ‘Նովաւ ուսանին իշխանք նոքա զմարդասիրութեան : ‘Նովաւ գութ անկանի

յամ

յայ ՚ի սիրտ Թագաւորին շինել և խաղաղութիւն տանել բոլոր աշխարհին ։ Նովաւ եկեղեցիքն մեր պարծին իբրև կատարեալ և քաջ զինուորակցաւ ։ Նովաւ վկայարանքն զարդարին. նովաւ և վկայքն ցնծացեալ բերկրին ։ Սովաւ և դաշտն աւարայրի պայծառացեալ ծաղկալից լինի . ոչ յանձրևաբեր ամպոց , այլ ՚ի սբ և յարիւնաբուղխ վիրաց , ցանեալք և ցըրուեալք սպիտակութի սբ ոսկերացն ։

Յորժամ կոխեսցեն ամենավստահ ոտք սբ խոստովանողին զլայնատարած տեղիսն պատերազմին , Թէպէտև երկեր ըստ բնութե՝ յորժամ կենդանի մարտիրոս ընդ նա շրջէցի , կենդանի առ կենդանիս երթեալ , ամ աշխարհին կրկին լիցի ուրախութի ։

Պվիտեմք ասեն՝ յորժամ տեսցեն զսա միայնակեացք աշխարհին հայոց , սովաւ յիշեսցեն զհոգևոր գունդն պատերազմողաց՝ որ փոխանակ մեր ասեն ետուն զանձինս իւրեանց ՚ի մահ , և հեղին զարիւնս իւրեանց ՚ի հաշտութիւն՝ պատարագ այ ։ Սովաւ յիշեն զնա քահանայքն՝ որք խողխողեցան յօտարութես , և ցածուցին զսրտմտութի բարկութե Թագաւորին ։ Սովաւ Թերևս և զմեր կապանս յիշեսցեն , և աղօթս անելով խնդրեսցեն յայ , զի դերեդարձ լիցի մեզ անդրէն ՚ի հայրենի երկիրն մեր ։ Քանզի յոյժ անձկացեալ եմք , ոչ միայն ըստ մարմնոյ կարօտութե , այլ՝ ևս առաւել տեսանել զսբ եկեղեցին մեր և զսրբասէր պաշտմունսն մեր , զոր ՚ի նմա կարգեալ հաստատեցաք ։ Նա եթէ մերովս յաջողեսցէ մեզ ած՝ երթալ և լնուլ զկարօտութի մնացելոցն

լոցն ։ Գիտեմք զի և մեզ բանայ ած զդուռն ողորմութե խորոյ ընդ նոյն Ճանապարհ երթալ՝ ընդ որ ոտք նրյս կարապետեն ։

Զայս խորհուրդ խորհելով ածաշնորհ նախարարացն , մեծաւ Թախանձանօք ածին ըզ խոստովանողն ՚ի հաւանութի ։ Իսկ վն զի ոչ էր սովորութի երբէք մերս՝ բարուցն ընդդէմ դառնալ , բստ առաջին սովորութեն և յայսմ վայրի փութացաւ վաղվաղակի կատարել զհրամանն զմիաբան հաւանելոցն յամայնին առաքինութին . եկն եմուտ յաշխարհն հայոց մեծաց ։

Փութացան և ելին ընդ առաջ նր վաղվաղակի որք և կանայք մեծամեծք և փոքունք և ամ բազմութի ազատաց և շինականաց . անկանէին առաջի , փարէին զոտիւք և զձեռօք նրյն և ոտէին . օրհնեալ է տէր ած ՚ի բարձունս՝ որ առաքեաց մեզ զհրեշտակ իւր յերկնից՝ բերել մեզ զաւետիս յորութե , զի լինիցիմք ժառանգ արքայութե ։ Զի ահա ՚ի քեզ կերպարանեալ տեսանեմք զամն զհրաժարեալսն՝ յուսով յորութե , և զկապեալսն՝ ակնկալութե արձակելով ։ ՚Ի քեզ տեսանեմք և զաշխարհին շինութի խաղաղութե ։ Դու եկեղեցիքն մեր ցնծացեալ բերկրեսցին , և նր վկայքս մեր՝ անդադար լիցին մեզ ՚ի բարեխօսութիւն առ ած ։

Օրհնեմ զմեզ տր հայր մեր . դու ես բերան հանդուցելոցն . խօսեաց ընդ մեզ յայտնի օրհնութե , զի յոգիս մեր լուիցուք ՚ի ծածուկ զօրհնութիս նցն ։ Հորդեցեր մեզ Ճանապարհ , և այնոցիկ՝ որ անձկացեալ են դալ

յեր

յերկիր իւրեանց, խնդրեմ յՔէն՝ զի առէպ ե-
կեացեն զհետ սուրբ կարապետիդ ։

Եւ որպէս հորդեցեր զարգելեալ ճանապարհ երկնի, բաց և յերկինս զդուռն աղօթից մե-րոց, զի և մեր մեղաւորացս մտցեն պաղատանք առաջի Այ 'ի բարեխօսութիւն նոցունց կապելոցն։ Եւ մինչդեռ եմք յեղանելի մարմինս՝ տուր տե-սաք զքո զերանելի սրբութիդ, տեսցուք և զսիրելի անձկալեան մեր՝ որ 'ի բազում ժամա-նակաց հարեալ և պաշարեալ եմք 'ի հոգի և 'ի մարմինս մեր ։ Արդ՝ հաւատամք 'ի յանուստ կոյսն մեր, զի ոչ լցեալ կատարեցաւ 'ի քեզ մեծ տեսիլս 'ի սուրբ սէր քո, այնպէս և ընդ-մօտոյ ունիմք տեսանել զճշմարիտ վկայն Քի՝ որ հանապազ խանդակաթ եմք 'ի տեսիլս երկ-նաւոր գեղոյ նց ։

Բայց երանելի խոստովանողն՝ Թէոպէտե այս-պէս սիրով ընկալեալ եղև յամ աշխարհէն, ոչ ինչ կամեցաւ ամենեւին մերձենալ առ ոք ըստ մարմնոյ կարօտութե ։ Այլ ընտրեաց իւր տե-ղի մի զատ յամ բազմամբոխ ժողովրդոց ։ և առաքինի եղբարբք երկու՝ կատարեաց զկեանս իւր մեծաւ ճգնութբ ։

Ո՛վ որ եթէ կամեսցի ոք 'ի գիր կարգ արկա-նել, դժուարաւ կարասցէ ասել զփառս սուրբ առաքինութե նր ։ Ո՛վ ի եթէ զգօնութին ա-սիցես, իբրև զկանթեղ անշէջ կայր զամ գի-շերս ։ Եւ եթէ զանխառապետութի կերակրոցն, համարեա՛ց եթէ զանկերակուր իմն հրեշտակաց բերեր զնմանութի ։ Եւ եթէ զհեզութի ցածու-թե՛ն կամիս ասել, ո՛չ գոյ 'ի կենդանեացս կարէ-ցես գտանել նման նմա ։ Եւ եթէ զանընչաւորու-

թիւնն

Թիւնն կամիցիս ասել, դարձեալ զոր օրինակ՝ ոչ պատրի մեռեալ 'ի կարասւոյ, զնոյն օրինակ ճշմարտութիւն եւ առ երանելին իմաստասէր։

Անպաճոյճ ձայնիւ հանապազորդեալ էր 'ի պաշտամանն, եւ անհատ աղօթիւք միշտ ընդ Աստուծոյ 'ի բարձունս խօսէր։ Աղ եղեւ նա անհամելոց. եւ խթան ընդոստուցիչ ամենայն հեղգացելոց։ Դարմանեցաւ նովաւ ագահութիւն. եւ կարի յոյժ ամաչեաց նովաւ որկորատութիւնն շուայտութեան։ Առողջութիւն եղեւ նա աշխարհիս հայոց. եւ բազում վիրաւորք 'ի ծածուկ նովաւ գտին զառողջութիւն։ Եղեւ նա վարդապետ կատարեալ՝ վարդապետաց իւրոց. եւ որք հայր խրատտու՝ հարանց իւրոց։ Ի լուր համբաւոյ նորա՝ իմաստնացան տգէտք. եւ 'ի տեսիլ մերձաւորութեան նորա՝ զգաստացան լկտիք։

Բնակեալ էր ընդ մարմնոյ 'ի նեղ խցկան. եւ ահ սրբութեան նորա՝ անկեալ էր զհեռաւորօք եւ զմերձաւորօք։ Զարհուրեցան դեւք եւ փախեան 'ի նմանէ։ Հրեշտակք եւ բնակեալ էին շուրջ զնովաւ։ Յոյժ երանի ետուն վասն նորա աշխարհիս հայոց. եւ բազում բարբարոսք փութացան տեսանել զնա մարմնով։ Սիրելի եղեւ նա սիրելեաց Աստուծոյ. եւ զբազումս 'ի թշնամեացն ճշմարտութեան՝ ած 'ի հաւանութիւն սուրբ սիրով։ Անկիզն արար առաքինութիւն անդըստին 'ի տղայ տիոց իւրոց. եւ նովին առաքինութեամբ կատարեցաւ 'ի վախճան կենաց իւրոց։ Որպէս ոչ խառնեցաւ 'ի կարգ սուրբ ամուսնութեան աշխարհիս, այսպէս չեմուտ ընդ մարմնաւոր պիտոյիւք ամենայն ապականացու իրաց աշխարհիս։ Եւ եթէ պարտ է ասել, որպէս

փո

փոխանակեաց զպէտս մարմնոյ՝ ընդ պիտանացու հոգևորացն, այսպէս փոխադրեալ եղև յերկրէ յերկինս առ քս̃ ա̃ծ. և նմա փառք յաւիտեանս. Ամէն.

Անուանք նախարարացն, որք կամօք և յօժարութբ̃ վս̃ սիրոյն քի̃՝ եդաւն զանձինս ՚ի կոտորածս արքունի.

Յազգէն սիւնեաց՝ երկու եղբարք, Բաբկէն և Բակուր։ Յազգէն արծրունեաց՝ Ներշապուհ և Շաւասպ և Շնդրին և Մեհրուժան և Պարգև և Տաճատ։ Յազգէն մամիկոնէից՝ Համազասպեան և Համազասպ և Արտաւազդ և Մուշեղ։ Յազգէն կամսարականացն՝ Արշաւիր և Թաթ և Վարձ. Ներսեհ և Աշոտ։ Յազգէն ամատունեաց՝ Վահան և Առնակ և Առանձար։ Յազգէն գնունեաց՝ Ատոմ։ Յազգէն դիմաքսենից՝ Թաթուլ և Սատու, երկու այլ ևս ընկերօք։ Յազգէն անձևացեաց՝ Շմաւոն և Ջուրէն և Առաւան։ Յազգէն առաւեղենից՝ Փափակ և Վարազդէն և Գաղ։ Յարծրունեաց տոհմէն՝ Վահապրամ։ ՚Ի տոհմէն մանդակունեաց՝ Սահակ և Փարսման։ Յազգէն տաշրունեաց՝ Վրէն։ Յռոփսենեան տոհմէն՝ Բաբիկ և Յոհան։

Այս երեսուն և հինգ արք, են որ յաւագ նախարարացն, և են որ ՚ի կրսերագունիցն։ Սակայն ամենեքեան ըստ մարմնոյ են արհաւունք. իսկ ըստ հոգևոր առաքինութե̃ն՝ ամենեքեան երկնաքաղաքացիք։ Եւ բազում ևս այլ ազատ մարդիկ, են որ յարքունի տանէ, և են որ ՚ի

տանէ նախարարացն , նոցուն իսկ նիզակակիցք և մարտակիցք քաջ նահատակացն ։ Եւ ամքն որք՝ կամօք մատնեցան 'ի ձեռն կապանս չարչարանացն վասն քրի ։

Այլ մեք այժմ ոչ ընդ այս եմք զարմացեալ միայն , զի կամօք չոքան մտին 'ի մեծ փորձութիւն , այլ՝ առաւել ընդ այն եմք սքանչացեալ, զի մարդիկ փափուկք՝ իբրև զնս ընդարձակասուն բնակիչք ձիւնեղէն լերանց , եղեն բնակիչք խորշակահար դաշտաց ։ Եւ որ զօրէն նախարարացն ազատորերոյ շրջէին 'ի մէջ ծաղկաբեր լերանցն , ընկեցան 'ի բոցակէզ աշխարհն արևելից՝ կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք ։ Հաց նեղութե , և ջուր կարօտանաց ։ Խաւարարգել 'ի տան , և անլոյս 'ի գիշերի ։ Անվերարկուք և անանկողինք՝ գազանաբար գետնախշտիք լինէին զինն ամ և զվեց ամիս ։ Եւ այնպէս մեծաւ խնդութբ տանէին զնեղութիւնն , զի ամենևին ոչ ոք տրտունջ հայհոյութեան 'ի բերանոց նց լուաւ ․ այլ յորդառատ գոհութի , ըստ նմանութե բարեկեցիկ մարդկան՝ որ են յածպաշտութե ։

Եւ մինչդեռ էին յայնպիսի նեղութեան , կարծիք եղեն 'ի միտս թագաւորին , եթէ առյոյժ վշտին ձանձրացեալ են դառնութե կենօքն իւրեանց ։ Յղեաց առ նս զմեծ հազարապետն և ասէ ․ գոնեա՛ յայտնեցէք զզջացարուք յանձինս ձեր , և մի՛ կայք 'ի նոյն միտս յամառութե ։ Պագէք երկիր արեգական , և արձակիք 'ի չարաչար կապանացդ ․ և ունիք անդրէն իւրաքանչիւր ոք զհայրենիս և զկեանս ձեր ։

Ետուն պատասխանի երանելիքն և ասեն. առ փո՞րձ ինչ եկեալ հարցանես զմեզ, եթէ արդարև թագաւորն յղեաց զքեզ: Երդուանց հաղորդակցեան և ասէ. չէ՞ք այդր բնաւ բան աւելի կամ պակաս՝ որ ո՛չ ելեալ է ՚ի բերանոյ նր. Ասեն ցնա սուրբքն. որք միանգամ աշակերտեալ են Քրիստոսութեն, ո՛չ երբէք փոփոխին ՚ի նմանէ, այլ որ ենն ՚ի նոյն կան. Ա՛ն թէ յայնժամ առ չխնամալ ինչ պնդեցաք, և այսօր նեղութիս ինչ իմաստնացոյց զմեզ. այլ ո՛չ է այնպէս. այլ զղջումն մտաց մերոց այս է, եթէ ընդէ՞ր ընդ առաջինն չկատարեցաք զկեանս մեր. Բայց արդ՝ աղաչեմք զքեզ, և քե՝ ըզ թագաւորն ձեր, մի՛ այլ վասն այդպիսի իրաց ինչ հարցանէք զմեզ. այլ զի՞նչ եդեալ է ՚ի մտի ձերում վասն մեր, կատարեցէ՛ք.

Իբրև լուա՛ւ զայս մեծ հազարապետն, յոյժ գովեաց ՚ի միտս իւր զպնդութի հաստատութենոցա. Եւ յայնմհետէ սկսաւ արկանել սէր ը-նս իբրև ընդ սիրելիս իւր. Եւ բազում բանիւք ողոքանօք ածէր զթագաւորն ՚ի հաւանութիւն, զի թողութի արասցէ նց ՚ի կապանաց իւրեանց. Զի թէպէտև փոխեցաւ նա ՚ի գործոց հազարապետութեանն արքունի, և ՚ի բազում իրս գտաւ վնասակար. Իսկ յանձն իւր կրէր զաւեր աշխարհին Հայոց. վնյ և մեծաւ անարգանօք յուղարկեցաւ ՚ի տուն իւր. Այսպէս զկապելոցն ո՛չ երբէք չարախօս կամէր լինել մինչև ցօր վախճանի կենաց իւրոց.

Իսկ յերանելեացն բազումք ՚ի նոցանէ՝ որ մանկագոյնքն էին, ուսան զդպրութի հայրենի աշխարհին իւրեանց. և եղև նց այն՝ կերա-

կուր

կուր հոգևոր, որով զանձինս քաջալերէին և զընկերսն մխիթարէին ։ Նա այնպէս զմայլեցան ՚ի միտս և յոգիս իւրեանց, զի և որ ծերացեալքն էին ՚ի նոցանէ, փափկացան մատաղացան մանկացան ։ Զի թէպէտև ժամանակն դպրութեան անցեալ էր, սակայն բազում սաղմոս ՚ի բերան առեալ՝ հոգևոր երգակից լինէին մատաղերամ բազմութեան մանկտւոյն ։

Նա այնպէս բազմացուցանէին զպաշտօն սրբութեանն, մինչև ոմանց ՚ի դառն դահճացն՝ մեծապէս քաղցրութիւն անկանէր ընդ լսելիս նոցա. և որչափ ևս ՚ի ձեռս իւրեանց էր, արտաքոյ արքունի հրամանին՝ դիւրութիւն առնէին նոցա, և սէր խնամոց ունէին առ ամենեսեան ։

Նա բազում անգամ զմարմնաւոր պէտս նց̄ հոգային նոքա։ Մանաւանդ զի նշանք ևս բժշկութեան յոյժ յաջողեալ լինէր ՚ի ձեռս նոցա. որպ̄ զի բազումք ՚ի դիւահարաց՝ սրբեցան ՚ի նմին քաղաքի, ուր կապեալքն կային ։ Իբրև ոչ կայր առ նմ̄ քահանայ, դիմէին առ նոսա հիւանդք և ախտաժետք քաղաքին, և ընդունէին ՚ի նոցանէ զիւրաքանչիւր ցաւոց զառողջութիւն ։

Նա և որ մեծ իշխանն է աշխարհին, զոր և շղոմշապուհն անուանէին, և նմա իսկ յանձն էին նմ̄ պատժաւորքն. մեծապէս գութ սիրոյ էարկ առ նմին. զծերս ՚ի նոցանէ առ հայրս ունէր, և զմանկագոյնսն ՚ի նոցանէ իբրև զսիրելի որդիս գգուէր ։ Բազում անգամ գրեաց և եցոյց յարքունիս զվիշտս նեղութե̄ կապելոցն. և զառն առն իւրաքանչիւր զչարս ազնուականու

նութեան նց ցուցանէր առաջի մեծամեծացն. Տառապէր և ջանայր ազգի ազգի հնարիւք, մինչև բազում բարեխօսութբ ածէին 'ի հաւանութի զԹագաւորն.

Հրամայեաց լուծանել զկապանս նոցա, և բառնալ 'ի նոցանէ զսուգ պատուհասին, և ագուցանել նց հանդերձ՝ զօրէն նախարարութեանն. Ապրդեաց նց ռոճիկ, և զպատրաստութիւն սպառազինութեն՝ հրամայեաց յարքունուստ տալ. Գրեաց և յանձն արար մեծ սպարապետին, զի ընդ զօրս արքունի երթիցեն 'ի գործ պատերազմի.

Եւ իբրև այս այսպէս կարգեցաւ և կազմեցաւ նոր հրաման Թագաւորին, 'ի բազում տեղիս՝ ուր և հասին, առաւելեալ գտան 'ի գործ արութե, մինչև գովութե հրովարտակս վն նց 'ի դուռն տային. Որպէս զի քաղցրացաւ իսկ միտ Թագաւորին, հրամայեաց զամենեսեան ածել զառաջեաւ. Եկին և յանդիման եղեն յադենի արքայից արքայի. ետես զնոսա զուարթութբ, և խօսեցաւ ընդ նոսա բանիւք խաղաղութբ, և խոստացաւ տալ նոցա զիւրաքանչիւր իշխանութի ըստ կարգի հայրենի պատուոյն, և արձակել զնոսա յաշխարհն օրինօք քրիստոնէութեն՝ յորոյ վերայ և մեծապէս էին չարչարեալ.

Եւ մինչդեռ անդէն մեծաւ խնդութեամբ շրջէին 'ի կարաւանին առաջի Թագաւորին, 'ի նմին ժամանակի հասանէր վախճան կենաց Թագաւորին՝ յինն և տասներորդ ամի Թագաւորութեան նր. և ընդ հակառակ ելեալ երկուորդիք նր 'ի վր տէրութեն՝ կռուէին. Սասա-

կա

կանայք գործ դաւանութե պատերազմին զեր-կուս ամս ։

Եւ մինչդեռ նոքա յայնմ խռովութե էին, ապստամբեաց և աղուանից արքայ ։ Վասն զի քեռորդի էր նր̃ · և ընդ կորդի հայրենի հաւատոյն՝ քրիստոնեայ էր յառաջ, և յազկերտ արքայից արքայ՝ բռնի մոգ արար ։ Եւ նորա գտեալ ժամանակ անձին պարապոյ, հորդեցաւ զանձն 'ի մահ դնել ։ Եւ համարեցաւ մեռանել 'ի պատերազմի, քան ուրացութ̃ առնել զթագաւորութիւն ։ Ս̃ այր ա̃մ՝ յապաղումն եղև արձակելոյն նր̃ յաշխարհն ։

Իսկ կրտսեր որդւոյն յազկերտի դպեալն առհամ անուն 'ի միհրան տոհմէն, Թէպէտև ետես զզունդն արեաց ընդ երկուս բաժանեալ · սակայն կիսովն գազանաբար յարձակեցաւ 'ի վ̃ր երեց որդւոյ Թագաւորին, եհար սատակեաց զզունդն, և ձերբակալ արարեալ զորդի Թագաւորին՝ անդէն 'ի տեղւոջն հրամայէր սպանանել ։ Եւ զմնացեալ զօրսն ածէր հաւանեցուցանէր և առնէր միաբանութ̃ ը̃մ արեաց գնդին, և Թագաւորեցուցանէր զիւր սանն՝ որում անուն էր պերոզ · զի Թէպէտև արեաց աշխարհին առնէր մեծապէս խաղաղութիւն, սակայն աղուանից արքայ ոչ կամէր նուաճիլ ը̃ նր̃ ծառայութ̃ ։ Ն̃ մ̃ հրամայեաց արգելուլ անդրէն ընդ դուռն պահ՝ զպահակն ճորայ յարևելս, և անցոյց յայսկոյս զզօրսն մազքթաց ։

Սխաբանեաց և զմետասան Թագաւորս ըզլեռնորդեայն, և ընդդէմ եկաց պատերազմաւ արեաց գնդին · և բազում ժամս արար

զ·

զօրացն արքունի։ Թէպէտեւ երկիցս եւ երիցս եւտուն հրովարտակս աղաչանաց, ոչինչ կարացին առնել զայն ՚ի հաւանութի՟. այլ դրով եւ պատգամաւ յանդիմանէր զն՟ս վ՟ս զուր աւերածոյ աշխարհին Հայոց։ Յիշեցուցանէր նոցա եւ զմահ նախարարացն, եւ զչարչարանս կապելոցն։ Ի վ՟ր այնչափ սիրոյ եւ վաստակոց՝ փոխանակ կեանս առնելոյ եւ պարգեւս շնորհելոյ՝ զարեւ հատէք ասէ։ Լա՛ւ լիցի ինձ ասէ զն՟ց ճանապարհն եւ զչարչարանսն յանձն առնուլ, քան թողուլ զքրիստոնէութի՟։

Իսկ իբրեւ տեսին՝ եթէ ոչ բռնութեամբ եւ ոչ սիրով կարացին առնել ՚ի հաւանութի՟, գանձս սաստիկ եւտուն տանել յաշխարհն Խաղանդրաց։ Բացին եւ զդրունս Ալանաց, եւ հանին զունդս բազումս ՚ի Հոնաց, եւ կռուեցան տարի մի ընդ Աղուանից արքային։ Թէպէտ եւ թօթափեցան եւ ցրուեցան զօրքն իւր ՚ի նմանէ, սակայն զնա ոչ կարացին հնազանդեցուցանել։ Բայց հարուածք եւս մեծամեծք հասին ՚ի վ՟ր նոցա. էր՝ որ կռուով, եւ էր՝ որ սովով չարաչար։ Իսկ յայնչափ ժամանակս ընդ յերկարել պատերազմացն՝ մեծ կէս աշխարհին աւերեցաւ, այլ ոչ ոք ՚ի նոցանէ երկմտեալ բաժանեցաւ։

Յղեաց առ նա դարձեալ թագաւորն պարսից Պերոզ. զմայրդ իմ ասէ եւ զքեռորդիդ ՚ի բա՛ց տուր առնել, զի ՚ի բնէ մոգք էին, եւ դու քրիստոնեայ արարեր։ Իսկ աշխարհդ քո՝ քեզ լիցի։ Նա կ պահանջելի այն ոչ ՚ի տէրութե՟ն վ՟ր կռուէր, այլ յա՟ծպաշտութե՟ն։ Զմայրն եւ զկինն ես տանել, եւ զաշխարհն բովանդակ ՚ի բաց եթող, եւ ինքն զաւետարանն առ եւ յաշխարհէն

հէն

հէն 'ի բաց կամէր գնալ։ Զայս իբրև լուաւ Թագաւորն, կարի զեղջապաշաւ անկաւ 'ի միտս նոր. և զամ վնաս իւրոցն՝ զհայրն իւրով արկանէր։ Անուաւ երդմամբ կնքէր և տայր տանել առ նա, եթէ յաշխարհէդ միայն մի՛ գնար, և զինչ ասեսդ առնեմ։ Խնդրեաց զմանկութեան սեպհականն՝ զոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա 'ի տղայութեն հազար երդ։ Առ զայն 'ի Թագաւորէն, և նստաւ 'ի նմա միայնակեցօք համդերձ։ Եւ այնպէս հանապազորդեաց զինքն յածային պաշտամանն, զի և չյիշէր ամենևին թէ Թագաւոր լեալ էր յառաջ։

Եւ այս ամ երկար խռովութիք՝ որ եղեն մինչև 'ի հինգերորդ ամն պերոզի արքայից արքայի, պատճառք եղեն չարձակելոյ նախարարացն հայոց. այլ՝ առձկաւ և 'ի տաճար մտանել յարքունիսն մեծապէս առաւօտացոյց քան զամ սովորութին։ Եւ 'ի նմին հինգերորդ ամին՝ զբազմաց նշ զկեանս անդրէն շնորհեաց, և այլոցն առ յոյս խոստացաւ յամն վեցերորդ՝ միանգամայն արձակել զամենեսեան կենօք և պատուով։ Եւ քանի անմահ Թագաւորին փառք յաւիտեանս. Ամէն։

Բայց 'ի տեղի այսր ինչ՝ տարածեալ ինչ գտու գետի.

Իսկ կանայք երանելեացն և առաքինի կապելոցն և անկելոցն 'ի պատերազմի՝ ընդ ամ աշխարհն հայոց՝ համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բազումք այն են՝ զոր ոչ գիտեմ, քան եթէ գիտիցեմ։ Զէ հինգ հարիւրով

հաւի

չափ միայն՝ զոր յականէ յանուանէ ճանաչեմ · ո՛չ որ միայն աւագագոյնքն էին, այլեւ զբազումս ՚ի կրտսերագունից անտի ։ Ամենեքեան միահամուռ զերկնային նախանձ բերելով, ոչի՛նչ ընդհատ երեւեցան յայնցանէ՝ որ ո՛չ ճաշակեցին զաշխարհ ։ Քանզի եթէ աւագագոյնք էին եւ եթէ մանկագոյնք, զմի առաքինութի հաւատոց զգեցան ։

Ոչի՛նչ յիշեցին ամենեւին զանուն փափկութեան մայրենի ազատութեն · այլ իբրեւ մարդք՝ որ վշտամբերք լեալ իցեն անդստին ՚ի շինական սովորութեցն, տանջելով վարեալ ըզ կեանս աշխարհիս · անդրագոյնք եւս քան զնս, յանձն առին զհամբերութի վշտաց ։ Ո՛չ միայն յոգւոյն մխիթարեալ կային առ աներեւոյթ զօրութիւն յուսոյն յաւիտենից, այլեւ մարմնոյ նեղութեք՝ առաւել եւս բարձին զբեռն ծանրութեան ։ Ո՛չ ի թեպէտեւ ունէին զիւրաքանչիւր ձեռնասուն սպասաւորս, ոչի՛նչ երեւէր ՚ի նս՝ եթէ ո՛ր տիկինն իցէ եւ կամ ո՛ր նաժիշտ ։ Ա՝ի հանդերձ էր հասարակաց · եւ միապէս գեղնախշունք երկոքեանն ։ Ո՛չ ումեք ոք անկողնարկ լինէր · քանզի չճանաչէին իսկ զխաւեղէնս ընտրել ՚ի միմեանց, վասն միագոյն սեւութեան մարմնի բարձիցն ։ Ո՛չ գոյր նոցա խախամոքք անուշարարք առանձինն · եւ ո՛չ հացարարք որոշեալք ՚ի պէտս սպասու ըստ ազատաց կարգի · Այլ հասարակաց էր շաբաթամուտն ըստ կարգի միայնակեցաց՝ որ յանապատս բնակեալ են ։

Ո՛չ ոք ումեք ջուր ՚ի ձեռս արկանէր · եւ ո՛չ կրտսերքն՝ աւագաց դաստառակս մատուցա-

ներին։ Զանկաւ օծեան ՚ի ձեռս փափկասուն կա-
նանց․ և ո՛չ մատուցաւ եւղ ՚ի զուարթութիւն
խրախութեան։ Զեդան առաջի նոցա մբ սկտեղք·
և ո՛չ անկան բաժակակալք յուրախութիւն։ Զե-
կաց ուրուք նուիրակ նոցա առ դուրս․ և ո՛չ կո-
չեցան պատուականք յարանց՝ ՚ի տաճարս նոցա։
Զմիջեցան նոցա եթէ գուցէ ոք ամենեւին ՚ի
դայեկանունդ բնակաց, և կամ բնաւ ՚ի սի-
րելի հարազատաց։

Փոշոտեցան ծխոտեցան սրահակք և սրսկա-
պանք նորեկ հարսանց․ և սարդխոստայնք ձգե-
ցան ՚ի սենեակս առագաստաց նոցա։ Կործա-
նեցան բարձրագահք տաճարաց նոցա․ և խան-
գարեցան սպասք երախանաց նոցա։ Անկան
կործանեցան ապարանք նոցա․ և տապալեալ ա-
ւերեցան ամուրք ապաստանի նոցա։ Զօրացան
ազազեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա․ և
տաշտախիլ եղեն որթք գինեբեր այգեաց նոցա։
Անձք իւրեանց տեսին զյափշտակութիւն արարոց
իւրեանց․ և ականջօք իւրեանց լուան զվիշտս
չարչարանաց սիրելեաց իւրեանց։ Աչան գանձք
իւրեանց յարքունիս․ և ո՛չ մնացին ամենեւին
զարդք երեսաց իւրեանց։

Տիկնայք փափկասունք հայոց աշխարհին՝ որ
զրդեալք և զգուշեալք էին յիւրաքանչիւր
պատուանս և ՚ի գահաւորակս, համապազ բոկ
և հետի երթային ՚ի տուն աղօթից՝ անձանձրոյթ
խնդրել ուխտիւք, զի համբերել կարասցեն
մեծի նեղութեան։ Որ ՚ի մանկութէ իւրեանց
սնեալ էին ուղղովք զուարակաց և ամձովք է-
րէոց, խոտաբուտ կենօք իբրև զվայրենիս ըն-
դունէին զվերակուրան մեծաւ խնդութեամբ․ և

ոչ միշէին ստանձնէին զամբարտական փափկութիւն. Սնուցեալ ներքին մարթք մարմնոյ նց. վասն զի ցերեկ արեւակէզք էին, եւ զամ գիշերն գետնաբեկք. Սովորք էին մշտնջենաւորք՝ մտանել ՚ի բերանս նոցա, եւ մխիթարութիւնք կատարեալ՝ ընթերցուածք մարգարէից. Միաբանեցին երկու երկու իբրեւ ամոլք հաւանք եւ հաւատարք՝ ուղիղ տանելով զակոսն յարքայութեան, զի առանց վրիպելոյ հասցեն ՚ի նաւահանգիստն խաղաղութեան.

Ստացան զկանոնցն սկզբութիւն. եւ եղեն սուրք սրայրինք ՚ի հոգեւոր պատերազմին. Սորա եղեալ կռուեցան ընդ մեղսն կարեւորահարքն եւ կորեցին եւ ընկեցին զմահաբեր արմատս նորա. Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեան, եւ նոր սիրով լուացին զկապուտակ ներկուածս նախանձուն. Հատին զարմատս ագահութեան. եւ չորացան պտուղք մահաբեր ատոց նոցա. Խոնարհութեամբ կործեցին զամբարտաւանութիւն. եւ նովին խոնարհութեամբ հատին երկնաւոր բարձրութե. Աղօթիւք բացին զփակեալ դրունս երկնից. եւ նոր խնդրուածովք իջուցին զհրեշտակս ՚ի փրկութիւն. Լուան աւետիս ՚ի հեռաստանէ. եւ փառաւորեցին զնա ՚ի բարձունս.

Այնք՝ որ ՚ի նմա էին, եղեն վերստին հարստունք առաքինութեան. եւ բարձին յանձանց զնախանձս ատելութեան. Իսկ կանայք կապելոցն՝ կամաւ կապեցին զմարմնաւոր ցանկութիւն, եւ եղեն կցորդ չարչարանաց նոր կապելոցն. ՚Ի կեանս իւրեանց նմանեցին քոյր նահատակացն մահուանն. Այլ ՚ի հեռաստանէ եղեն վարդապետք

մեզ

մխիթարիչք բանտարգելելոցն. Ստամիք իւ-
րեանց փաստակեցին և կերակրեցան. և զկար-
գեալ ռոճիկս նոցա յարքունուստ ամ յամէ թո-
շակ տանէին և տային տանել նոցա ՚ի մխիթարու-
թիւն. Նորին ծնողանց նմանեցին, որ եր-
գոյն քաղցրութբ՝ առանց կերակրմանց կեան
և կենդանիք են՝ միայն զօդն ծծելով, զան-
մարմնոցն բերեն զնմանութի.

Զբազում ձմերանցն հալեցին զսառնամա-
նիսն, եհաս գարունն՝ և եկին նորեկ ծիծ-
ռունք, տեսին և խնդացին կենդանաւոր մար-
դիկ, և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձ-
կալին իւրեանց. Ոսպիկք գարնանային ծաղ-
կեցան, և նոքա ոչ մերձեցին զպսակաւէր զամուսինս
իւրեանց. և աչք իւրեանց կարօտացան տեսանել
զցանկալի դէմ երեսաց նոցա. Սպառեցան բա-
րակք որսականք, և խցեալ կուրացան արշա-
ւանք որսորդաց. Ընտրողք մերժատակեցան նո-
քա, և ոչ մի տօնք տարեկանաց ածին զնոսա ՚ի
հեռաստանէ. ՚Ի ճաշատեղս նոցա հայեցան և
արտասուեցին. և յամ աւեանս մերձեցին զան-
ունս նոցա. Ընդ գումարձան կանգնեալ էին յա-
նուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանա-
կեալ ՚ի նոսա.

Այս իբրև այնպէս յամ կողմանց ալեկոծ-
լինէին միտք նոցա, մինչ կասեալ թուլացան
յերկնաւոր առաքինութէն. Արօտքնոցն ե-
րևէին իբրև ալիք ագուոք և չարչարեալք,
և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթա-
րեալք երկնաւոր սիրով. Ո՛չ են աւելորդեցին
հարցանել զեկեալ ոք ՚ի հեռաստանէ, թէ ե՞րբ
լինիցի մեզ տեսանել զերկիրն մեր.

Ա.Մ

Այլ այն էին խնդիրք աղօթից նոցա առ Ած, եթէ որպէս սկսան քաջութբ, ՚ի նմին կատարեսցեն ըն՛ երկնաւոր սիրովն.

Եւ մեք եւ նոքա առ հասարակ ժառանգեսցուք զքաղցրագոյն բարեաց. եւ օրհնութիւն եւ փառս հանցուք Հօր եւ որդւոյ եւ Հոգւոյն ո՛յ յանէտս յաւիտեանս յաւիտենից. Ամէն.

# ՎԵՐՋ.

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

Խօսք յաղագս պատմողին Գրոց Եղիշէի . Հանեալ
՚ի պատմութենէ Թովմայի Վարդապետի եւ պատմչի տանն
Արծրունեաց ։

Բայց երբեւ եղեւ մեծ պատերազմն որ ընդ
Վարդանայ ընդ Մշկանին եւ ընդ զօրսն Պարսից՝
յաւարայրեան դաշտին յարտազական գաւա-
ռին , եւ անդ յամս խորախուսեալ էր ամենայն
զօրացն Հայոց՝ կատարեցան ՚ի Քս . եւ անդ Վա-
հան Արծրունի հայակալ եւ ականաւոր քաջա-
մարտութբ՝ ընդ որոյն Վարդանայ ճակատ առ
ճակատ վառեալ զպատերազմն՝ երբեւ հար է
եղեգն ձեմելով ՚ի մէջ քաջ ախոյեանցն պար-
սից ։

Եւ երբեւ ռազմն երկոցունց կողմանցն խառ-
նեցաւ , եւ ձախակողմեան թեւն Հայոց պարտեալ
ելաւ , եւ ուրեմն Վարդանայ մտադրեալ զեր-
կայն՝ ՚ի փախուստ զախոյեանն Պարսից դար-
ձուցեալ , եւ զկողմն իւրոյ ձեռինն գնդին զօրա-
ցուցեալ , անդ Վահան Արծրունի ընդ մի-
ջեալ զգունդն Պարսից՝ դարձուցանէ ընդ-
դէմ Վարդանայ . եւ անյապաղ մինչ այս
մինչ այն՝ նոցա հարեալ ընկեցեալ ՚ի զօրացն
Պարսից գունդ մի հարուստ՝ առք երբեւ հա-
րիւր եւ քառասուն , ՚ի վեր կառուցեալ զայն
որոյն Վարդանայ , տեսանէ զանօրէնն Վասակ
Սիւնեաց տէրն , եւ զհետ նորա աճապարեալ՝ ար-
կա

քանզի զնա յանկարծակի զենեալ փողան 'ի մէջ փողոցն . և քաջն Վարդան արծրունի ընդ նմա նիզակակցեալ , մեռանէին քաջքն և ընտրեալքն մեծ-նահատակքն Վարդան և Վահան . և զկենայիցն անուն ժամանակեալ՝ կատարեցան 'ի քն ատը-գունդն հայոց՝ վեց հարիւր իննսուն և վեց ո-գիր . Այս պատմի այս 'ի համառօտութեան Աբ-րահամու խոստովանողի .

Բայց թէ էր աղագաւ պատմութիւն վկայու-թեանն Վահանայ ոչ է գրեալ 'ի գիրս Եղի-շէի պատմագրի , տարակուսս առանց երկմտա-նալոյ ցուցանել քան զառանձնաւոր քաջա-մարտութեանն .

## Վասն արենահեղին Բարծումայի .

Ընդ ժամանակս պերոզի արքայից արքայի էր ոմն յաշակերտացն նեստորի բարծումայ ա-նուն , որ ունէր զաթոռ եպիսկոպոսութեան զօ-րագոյն զնեստորական հերձուածոյն բուռն հարեալ , և քսութբ զնախարարացն հայոց առ պերոզ վարեալ՝ բազում օձիւս արիւնահե-ղութեան գործեաց .

'Ի ժամանակին յայնմիկ էր հախացեալ պան-ծալի աթոռակալութբ սրբյն Գրիգորի՝ տէր Քրիստոսափոր հայոց կաթողիկոս . Գրէ առ կողմանս սարեստանի՝ զգուշացուցանելով չխառ-նիլ ընդ նեստորականսն . Նոյն գրէ առ որս 'ի խուժաստանին էին ժողովուրդ ուղղափա-ռացն . գարշեալ գրէ և առ 'ի կողմանս դեր-ջանու , և խաղտամորոյ բնակիչսն , և առ աշ-խարհական մեծարս , և առ եպիսկոպոսունս . զո-

րոց

րոյ Թուղթն խոտոր պատրանօք 'ի բանն ուսեալ Բարսումայ, և եւս տանել առ արքայ Պէրոզ՝ և ասէր, թէ զայս ամենայն զոր գրէ Կաթուղիկոսն Հայոց, է առ ապստամբութիւն խորհել առ 'ի քէն. և զնախարարս Հայոց 'ի յունաց Թագաւորին խորհի ձգել հնազանդութիւն. արդ՝ տեսանել պարտ է վ̅ս այդր.

Այս նենգն Բարսումայ 'ի չքմեղս լինելով եկն 'ի Հայս՝ յԱրզնարզեն և յաշխարհն մոկաց, զի և անդ զնեստորական աղանդոցն սերմանեսցէ սերմանս. և ս̅րբոյ վարդապետին մերոյ Եղիշէի որ յայնմ ժամանակի 'ի մոկաց աշխարհին բնակեալ էր, եկեալ առ նա Բարսումայ՝ խնդրեալ զպատմագրական գիրսն Հայոց՝ զոր գրեալ էր հրամանաւ ս̅րբոյն Սահակայ. և նորա կատարեալ զխնդրելին.

'Ի նմին ժամու զգացեալ վասն նորա մեծի իշխանին Արծրունեաց Ներշապհոյ, որ յայնժամ 'ի տանուտեացն ամրանայր բերդի, յղէ առ նա եղանել գնալ 'ի սահմանացն այնոցիկ, ոչ ինչ ձեռնամուխ լինելով 'ի նա վասն կարկածանաց պարսից արքային. միայն սպառնական խոստունութեան յղէ առ նա պատգամս. Նորա դժուարեալ ընդ հասանել պատգամին՝ առ զայրացուկս պատգամին բարկութե՝ քինահարութի վրէժխնդրութե արարեալ, 'ի բաց եհան 'ի գրոց պատմութե որ ինչ վ̅ս տանն Արծրունեաց էր գործոց հանդամանք, և որ ինչ օրինակ մարտիրոսութեան Սահակայ Արծրունւոյ.

Իսկ վարդապետն Եղիշէյ էր 'ի ժամանակին յայնմիկ բնակեալ 'ի գաւառին Ռշտունեաց 'ի ծովեզերին. յորում տեղւոջ և հանգեաւ իսկ 'ի

՚ի ք՟ս յ՟ս տէ՟ն մ՟ր Ամէն ։

Իսկ ՚ի դառնալ գրոցն յաշխարհն մեկաց՝ ուրինչ ումեք փոյթ եղև վասն այնր լինելոյ, կարծեալ՝ վարդապետօքն զայս այսպէս կանոնեալ . զոր ցուցանեմ յայլում տեղւոջ, և զոր ինչ արար արքայն պարսից ընդ տունն արծրունեաց ՚ի սադրելոյ բարսումայի ամբարշտի ։

# ՑԱՆԿ ԳՐՈՑՍ.

Աբրահամ աշակերտ մը քահանայիցն՝ որ կայր ՚ի կապանս ՚ի Նիւշապուհ քաղաքի, հանեալ լինի արտաքս ՚ի քաղաքէն. 191: բանք նորա առ դահճապետն. 193: մահուչափ չարչարի. 194: բրի ականջ նորա. 195: տարադրի յասորեստան. 196: զամս բազումս սպասաւորէ մը նախարարացն, զդահեկանս ՚ի մեծամեծաց աշխարհին տանելով առ նոսա թղթակ ՚ի խուժաստան. 197: աղաչանօք նախարարացն երթայ յաշխարհն հայոց՝ պատմել զմարտիրոսական մահն քահանայից, և զմը կապանս նախարարաց ՚ի մխիթարութի հաւատացելոց. 199: ընաշխարհիկ քաղաքավարութի նր. 200 և 201:

Առանձար ամատունի հարկանէ զասպատակն պարսից. 108:

Ատոմ գնունի դեսպանութբ առաքի յաշխարհն յունաց խնդրել զօգնութի ընդդէմ պարսից. 73:

Ատրորմիզդ նախարար պարսից՝ կարգի մարզպան հայոց. 134: տայ ազատութի ամենեցուն համարձակ պաշտել զքրիստոնէութի. և արքունի հրովարտակաւ թողու դառնալ անդրէն ՚ի մոգութէ ՚ի հաւատս քն. 136:

Արշաւիր արշարունի՝ ՚ի պատերազմին որ եղև յաշխարհն աղուանից՝ սատակէ զվուրկէն քաջ զեղբայր թագաւորին լփնաց. 79:

Արշէն երէց՝ կալեալ կապի ՚ի վասակայ. 131: տանջի և կատարի սրով. 176:

Գարեգին պատանի նախարար Հայոց՝ խոստո-վանի զՔն առաջի յազկերտի, չարչարի զամս երկու, դատապարտի 'ի մահ. 17.

Գուշնասպուհ պարսիկ՝ գայ յորդորմամբ յաշ-խարհն Հայոց, բռնաւորութբ արկանէ խռովու-թիւն 'ի մէջ նախարարաց և ամ տանուտերաց. կացուցանէ հազարապետ զպարսիկ իշխան, և դատաւոր զմոգպետ, և զեկեղեցականս ար-կանէ ընդ հարկաւ. 25. առաքի 'ի Նիւշա-պուհ չարչարել և սպանանել զՔրիստոնեայս. 148. դառնայ առ յազկերտ, և պատմէ նմա զհաւատալն մոգպետին. 164. տարագրէ զմոգպետն յատրուշանն՝ մեռանիլ 'ի վերայ. 166. հանել զաւուրս քրիստոնեայս 'ի յանապատն Նիւշապուհ քաղաքի, յորդորէ դառնալ 'ի մոգութի, և ապրել 'ի մահուանէ. 168. բանք նորա առ սուրբն յովսէփ կաթուղիկոս. 178. բանք նորա առ սրն սահակ եպիսկոպոս ռշտու-նեաց. 176 և 182 և 183. հարկանէ սրով զսրն սահակ եպիսկոպոս, և սպանանէ. 185.

Թէոդոս կայսր՝ առաքէ զանատօլ սպարապետ արեւելից ընդ առաջ յազկերտի, և խօսի ընդ նմա 'ի խաղաղութի. և զպարսիկ քրիստոնեայս տայ 'ի ձեռս նր. 10. կամի օգնել Հայոց և մեռանի. 75.

Խորէն աշակերտ սբ քահանայից՝ հանեալ լինի արտաքս 'ի Նիւշապուհ քաղաքէ 'ի ձեռն դահ-ճապետին. 191. բանք նորա առ դահճապետն. 192 և 194. մահուչափ չարչարի. 194. բրի ականջ նր. 195. տարագրի յատրուշան. 196. զամս բազումս երթեւեկէ 'ի խուժաստան՝ տա-նելով դահեկանս 'ի մեծամեծաց աշխարհին

առ

առ սր̄ նախարարան Թոշակ․ հարեալ տապով խորշակին՝ մեռանի․ 197։

Խուժիկն երանելի՝ ժողովէ ՚ի ծածուկ զմարմինս սր̄ քահանայից՝ որք կատարեցան յանապատին ապար աշխարհի, և բերեալ ընծայէ նախ սր̄ նախարարացն, և ապա այլոց քրիստոնէից․ 190։

Հմայեակ Մամիկոնեան՝ եղբայր մեծին Վարդանայ՝ կոտորեալ զաստապատական պարսից, կատարի վկայական մահուամբ․ 132։

Հոնք՝ վն̄ դաշանցն զոր եդեալ էին ընդ հայոց, յարձակին ՚ի սահմանս պարսից, և գերեն ըզ բազումս․ 133։

Ղևոնդ երէց՝ բազմութե̄ հաւատացելոց հարկանէ և վանէ զմոգսն և զմոգպետսն, որք կամէին քակել զդրունս եկեղեցւոյն․ 59։ յորդորէ զզօրսն հայոց յա̄ծաշունչ տառից՝ քաջութե̄ մարտնչել վասն հաւատոց․ 110։ կապեալ տանջի յանապատին ապար աշխարհի․ 167։ բանք նր̄ առ դենշապուհ․ 169, և 178։ կատարի սրով․ 187։

Մարկիանոս՝ թագաւորէ փոխանակ Թէոդոսի, և դեսպան առաքեալ առ յազկերտ արքայ պարսից՝ ձեռնթափ լինի յօգնականութե̄ հայոց․ 75։

Միհրներսեհ մեծ հազարապետ՝ առաքէ զնամակ պարսկադեն կրօնից ՚ի հայս․ 26։ բազմութե̄ զօրաց գայ ՚ի սահմանս հայոց․ 91։ մեծամեծ խոստմամբ հրապուրէ զանօրէնն վասակ քակել զուխտ միաբանութեան հայոց․ 93։ կարգէ զօրագլուխս զմուշկաննիւսալաւուրտ, և դառնայ առ թագաւորն․ 100։ լսէ յատենի զչար ուրացելոյն վասակայ․ 137։

առա

տուրքն ՚ի Թագաւորէն առ Նախարարսն , որք էին ՚ի կապանս ՚ի Նիւշապուհ քաղաքի , յոր-դորել զնս դառնալ ՚ի կրօնս մոգութե . 203 . գովէ ընդ միտս իւր զհաստատութի նոցա ՚ի հաւատս , և ողոքէ զԹագաւորն Թողութիւն տանել նց և արձակել . 204 .

Մոգպետան Ապար աշխարհէն քաղցեալ և ծարա-ւով նեղէ ՚ի կապանս Նիւշապուհ քաղաքի զնք քահանայս . 149 . տեսանէ զլոյս սքան-չելի ՚ի մէջ բանտին բորբոքեալ . 150 . զար-հուրեալ անկանի կիսամեռ , և հանէ զկա-պեալսն ՚ի վերնատուն մի . 151 . կրկին անգամ տեսանէ զնոյն սքանչելի լոյսն , և մնեալ ՚ի բանտն՝ խօսի ընդ նս կապեալսն . 154 . տե-սանէ ՚ի տեսլեան սանդուղ լուսեղէն , և զնահատակսն որք կատարեցան վկայական մահ-ուամբ . 156 . հանէ զկապեալ քահանայսն , և տանի յապարանս իւր , ընդունի զնս մկրտու-թիւնն , և հաղորդի նս մարմնոյ և արեանն քի . 158 . ածէ ՚ի ծածուկ զնս Նախարարսն՝ որք էին ՚ի կապանս ՚ի քաղաքի անդ , և առնէ կցորդս ուրախութե . 159 . մտանէ ՚ի կա-պանս ընդ նս քահանայսն ՚ի բանտի . 163 . յոր-դորի ՚ի Դենշապհոյ դառնալ անդրէն ՚ի մո-գութի , և վարել զիշխանութի իւր . 164 . գաղտնի տարագրեալ յասպարեստան , մեռանի յանծանօթ ինչ տեղի . 166 .

Մոգք՝ յորդորեն զՅազկերտ արքայ դարձուցա-նել զքրիստոնեայս յօրէնս մոգութե . 22 . առաքին յարքայէ ՚ի Հայս . 52 . մոգական պիղծ ուսմունք . 53 և 54 . մտանեն յաշխարհն Աղ-ուանից , և զբազումս դարձուցանեն ՚ի մո-

գու

գութիւն · 72 ։ հինգ ազգ անկրօն կրօնից նոցա · 149 ։

Մուշէ երէց յաղբակոյ՝ կատարի սրով · 187 ։

Մուշկաննիւսալաւուրտ՝ կարգի զօրավար բա-նակին պարսից, և պատրաստի 'ի պատերազմ · 118 ։ բանք քաջալերութե՟ նր՟ · 119 ։ հան-դամանք պատերազմին · 122 և 123 ։ դառնայ յաշ-խարհն պարսից · 133 ։ ամբաստանէ զվասակայ յատենի · 138 ։

Յազկերտ արքայ պարսից՝ հարկանէ զաշխարհն հոռոմոց · 10 ։ զբազում քրիստոնեայս՝ որք էին ընդ իշխանութբ՟ իւրով, դարձուցանէ 'ի մոգութի՟, և զայլ բազումս տանջէ, սպա-նանէ, և 'ի յափշտակութիւն մատնէ զինչս նոցա · 11 ։ պատերազմաւ նեղէ զթագաւորն հոնաց, և աւերէ զգաւառս նր՟ · 15 ։ արկանէ երկպառակութի՟ 'ի մէջ իշխանաց քրիստոնէից, եւ առաւել 'ի մէջ հայոց · 19 ։ պատրէ զո-մանս պարգևօք, և զոմանս իշխանութբ՟, և հրապուրէ յօրէնս մոգութեան · 20 և 21 ։ փախուցանէ պատերազմաւ զթագաւորն քու-շանաց, առնու զբազում բերդս նր՟, և զա-ւառ և զգերի · 21 ։ զայրուձին հայոց, վրաց, և աղուանից, և այլոց ազգաց քրիստոնէից՝ արգելու յամուր և յանել պահակն ձորայ, և չարչարանօք և տանջանօք ստիպէ յուրա-ցութի՟ · 22 ։ զչորս աւագ նախարարսն տան-ջէ · և զայլսն յորդորէ ուտել զզոհեալ, և չարչարէ զնս՟ · 23 և 25 ։ հրովարտակաւ առ-ինքն կոչէ զգլխաւոր նախարարս աշխարհին հայոց · 43 ։ երդնու մատնել զնս՟ 'ի տանջանս, եթէ ոչ երկիրպագանիցեն արեգական · 45 ։

սպառ

տգաւոնոյ երդմամբ՝ զնախարարսն աշխարհին
տարագրել 'ի սագաստան , աւերել զհայաս_
տան , քանդել զեկեղեցիս , և զընդդիմակացն
սպանանել · 49 · առաքէ յաշխարհն հայոց
զնդս և զնդպետս՝ դարձուցանել զհայս , ըղ_
վերս , և զաղուանս , և զայլ ազինս քրիստո_
նէից յօրէնս մոգութե · 52 · ակամայ խոստո_
վանի զճշմարտութիւն հաւատոյն քնի · 86 ·
հրովարտակ առաքէ ընդ ամ երկիր զկապեալ
քրիստոնեայս արձակել , և զյափշտակեալ ինչս
և զժառանգութիս առ նս դարձուցանել · և
համարձակ ունել զքրիստոնէութիւն · 88 · դես_
պան առաքէ առ մարկիանոս կայսր , և խնա_
ցեալ զմիտս նր թէ ոչ օգնէ հայոց , դար_
ձեալ առիպէ զքրիստոնեայս յուրացութի · 89 ·
հրամայէ միհրներսեհի զօրք դիմել 'ի հայս ·
91 · լսէ զաւեր աշխարհին հայոց և զիւր
պատերազմին , և աւրջանայ · 133 · գրով հրա_
մանն տայ համարձակ պաշտել զքրիստոնէու_
թիւն · 136 · դարձեալ դնէ 'ի վերայ քու_
շանաց , յաղթահարի և դառնայ յետս · 146
և 147 · հրովարտակ թողութեան առաքէ
յաշխարհն հայոց · 190 · հանէ զնախարարսն 'ի
կապանաց , և առաքէ 'ի պատերազմ · 206 ·
խոստանայ արձակել զնս յաշխարհն հայոց օ_
րինօք քրիստոնէութե , տալով իւրաքանչիւ_
րոց զիշխանութիս իւրեանց , և մեռանի · 206 ·
Յովսէփ կաթուղիկոս՝ կալեալ գանահեծ լինի
127 և 128 · առաքի կապանօք 'ի դուռն · 135 ·
տանջի յանապատն ապար աշխարհի · 167 · բանք
նորա առ դենշապուհ · 177 · կատարի մարտի_
րոսական մահուամբ · 187 ·

Ն

Նախարարքն ուխտապահք՝ նշանագործ սքան-
չելեօք բժշկեն զհիւանդս ’ի բանակին պար-
սից. 19: միաբան մերժեն զհրամանն յազ-
կերտի՝ որ ստիպէր յուրացութիւն. 22: հար-
ցին վասն քրիստոսի. 23: ջանուն յանձն պաշ-
տել զարեգակն. 47: ’ի վերին երեսս ցու-
ցանեն կատարել զհրաման արքային վասն ա-
պատութե աշխարհին հայոց. 51: բազմութբ
մոգուց գան ’ի հայաստան. 52: հարկանեն
զմոգսն, և ձերբակալ առնեն զուրացեալսն
վասակ. 68: առնուն զամուր տեղիսն՝ զորս
յափշտակեալ էին պարսիկք. 70: կիզուն զկրա-
կատունսն, և որբեն զպղծութիւնս, և նշանաւ
խաչին առանց գործոյ պատերազմին կործա-
նեն զպարիսպս երկուց բերդից. 71: անուանք
նախարարացն՝ որք կատարեցան ’ի մեծ պատե-
րազմին. 124: անուանք նախարարաց՝ որք
վասն սիրոյն քրիստոսի կամաւ ետուն զանձինս ’ի
կապանս. 202: անտանելի նեղութիւք նոցա ’ի
բանտի զինն ամ և զվեց ամիս. 203: հրամա-
նաւ թագաւորին յորդորին ’ի միհրներսեհէ
պաշտել զարեգակն, և արձակիլ ’ի հայրենիս.
203: անդրդուելի հաստատութի նոցա ’ի հա-
ւատս. 204: ածպաշտութի նոցա, և յաջող-
ուածք բժշկութե դիւահարաց և ախտաժե-
տաց ’ի ձեռս նոցա. 205: արձակին ’ի կապանաց,
երթան ’ի պատերազմ, բարեհամբաւին քա-
ջութբ, ածին զառաջեաւ յազկերտի, ըն-
դունին զխոստումն նորա իւրաքանչիւր ըստ հայ-
րենի պատուոյն՝ արձակիլ ’ի հայաստան օրինօք
քրիստոնէութեան. 206: չնաշխարհիկ վարք
կանանց երանելի կապելոցն, և անկելոցն ’ի

պա

պատերազմի ․ 210 ։
Վասակ միհրներսեհի գրեալ և տարեալ յաշ-
խարհն Հայոց թելադրութեամբ մոգուց ․ 26 ։
որ պատմէ զաստուածեղեալ ծնունդն որմզդի
և արհմնոյ ․ 27 ․ ամբաստանէ զուսուցիչս և զըն
վարդապետութիւս քրիստոնէից ․ 28 ։
Վասակ պատասխանւոյ եկեղեցւոյն Հայոց առ
միհրներսեհ հաւր ցուցանէ ճշմարտութիւն հաւատոյն
քսի, և ստութի զրադաշտական կրօնին պարսից ․ 30 ։
Վասակ Հայոց առ Թէոդոս կայսր 'ի խնդրել
զօգնութի ընդդէմ պարսից ․ 73 ։
Շաւարշապուհ իշխան պարսից մարդասիրութե
վարի ընդ երանելի նախարարսն, և զբոլ ա-
զգէ զայկերս ազատել զնս 'ի կապանաց ․ 205 ։
Պահապան զինեալ որք էր մարմնոյ քահանայից՝ հա-
րեալ 'ի դիւէ փախչին 'ի քաղաքն նիւշապուհ ․ 188 ։
Պերոզ կրտսեր որդի յազկերտի թագաւորէ 'ի
վերայ պարսից փոխանակ հօր իւրոյ ․ 207 ։
Վահան եպիսկոպոս աշտունեաց կոչի 'ի դուռն
արքունի ․ 135 ․ ամբաստանէ զվասակայ յա-
տենի ․ 140 ․ կապեալ տանջի յանապատին ապար
աշխարհին ․ 167 ․ բանք նորա առ մոգպետն հան-
դերձապետ ․ 172 ․ բանք նորա առ դենշապուհ ․
183 և 184 ․ կատարի սրով 'ի դենշապհոյ ․ 185 ․
Վասակ սիւնի մարզպան Հայոց հանէ 'ի հաւա-
տոց զոմանս 'ի նախարարաց ․ 65 ․ ձերբակալ
լինի յուխտապահ նախարարաց, և սուտ երդ-
մամբ ազատի ․ 68 ․ նենգաւոր հնարիւք երկ
փեղկէ զզօրսն Հայոց ․ 77 ․ յայտնի յետս կա-
ցեալ յուխտէն քրիստոնէութեան, աւերէ
զբազում տեղիս, և քանդէ զեկեղեցիս ․ 81
և 82 ․ յուրացութի որսանէ զբազում նա-


խա

խարար, և զաշխարհն սնանեաց զխաղլին. և խանգարէ զուխտ միաբանութե̄ հայոց. 95 և 98. բաժանէ զկէս 'ի միաբանութենէ հայոց. 96. պատրէ զպարզամիտսն 'ի ձեռն սուտ երեցանց. 97. փակէ զպահակն ճորայ, զի մի՛ հոնք ձեռնտու լիցին հայոց. 97. յուսադրէ զմուշկաննիխոսրաւուրն, և ուսուցանէ նենգութեամբ տիրել ամրոցաց. 125. սուտ երդմամբ առեալ զԵրդն, կոտորէ զամբոխանն. 127. գրէ առ պարսիկս, և ածէ զօր բազում. 130. գերի վարէ զբազմութի̄ մարդկան, և զբազում ոսկիս հրձիգ առնէ. 131. կոչի 'ի դուռն արքունի. 134. պարտաւորի յատենի. 137. յանցանք նր̄. 138 և 139. դատապարտեալ 'ի մահ, կապեալ ոտիւք և ձեռօք դնի 'ի զընդան. 143. մեծամեծ տառապանք տան նր̄, և դժնդակ սատակումն նր̄. 145.

Վարդան մամիկոնեան՝ սպարապետ հայոց՝ պատերազմի ընդ պարսից յաղագս աշխարհին, և յաղթէ. 79. կոտորէ զնոսա, առնու զպահակն հոնաց 'ի ձեռաց պարսից. 80. մտանէ յուխտ դաշանց ընդ հոնաց. 81. լինեալ զանօրէնութեն վասակայ դառնայ 'ի հայս. 82. ուխտապահ նախարարօք և վաթսուն և վեց հազար զօրօք երթայ 'ի պատերազմ. 102. բանք քաջալերութե̄ նորա. 103. կարգ դնէ զօրաց իւրոց. 120. պատերազմին ահագին և մեծամեծ քաջութիւնք նորա. 121. վկայական մահ նորա. 122.

Ռաջաջ սարկաւագ աշակերտ տր̄. քահանայից՝ կատարի սրով յանապատի ապար աշխարհին. 187.

## Բացատրութիւն անուանց և դժուարիմաց բառից այսր մատենի ։

Ամբարտակապետ · անուանս ամբարտակի՝ կազմի 'ի բառից ամբ, պետ, և նշանակէ զբարձրաբերձ շինուածս, որք յամայն կոյս պտտաքս ելեալ են յերկիր · որպիսի են բրգունք, աշտարակք, ամրոցք, և այլն · ուստի ամբարտակապետն նշանակէ պետ ամրոցի ։ ռմկ. Խալէ դիզտարի ։ Երես 148 ։

Ամիճ · նոյն է ըստ բառիս ամիկ, և նշանակէ արու ուլ տարեւոր ։ ռմկ. Չէփիճ ։ Երես 211 ։

Այլակդեն · օտարահաւատ ։ Երես 165 ։

Անզգայ · այս նշանակէ առանց զգայութեանց, կամ գաղտնի, կամ յանկարծ ։ ռմկ. Ղաֆիլ, կամ Հիւշսըզ ։ Երես 53 ։

Անյանց · անմեղ, անպարտ ։ ռմկ. Խաթասըզ ։ Երես 193 ։

Արիք · է անուն հռչակաւոր ազգի՝ որ պարսկական ձայնիւ կոչի Իրաք, որ առ նոյն է նաև անուն մասնաւոր ինչ գաւառի · բնակութիւն նոցա է յաշխարհն Իրանու, որ 'ի մեզ կոչի արեաց աշխարհ · և պարունակէ զգաւառն Իրաք՝ առանձինն առեալ, և է երկիր ընդարձակ յարևելեան կողմն Թաւրէժու · և ունի մայրաքաղաք զՆիշապուր, որ 'ի մեզ կոչի Նիւշապուհ · պարունակէ և զգաւառ Փարս, որոյ մայրաքաղաքն է Շիրազ · և զՄազէնդէրան, ուր է Ատրպատական, որոյ մայրաքաղաքն է Թաւրէժ · և զԽորասան, որ է յարևելեան կողմն կասբից ծովուն, ուր է քաղաքն Թուս, որ այժմ կոչի Մէշհէտ · ուստի յանելն թրեայ և մնացեայ,

Իմա

իմանի արեաց ազգի, և այլոց ազգաց, քանզի նոցա որք են ընդ իշխանութեամբ արեաց: Երես 12:

Արեայց · տպելի էր արեաց: եր 30:

Արհազուն · կազմի ՚ի բառից ԱՐՀ և ԱԶՆ, և նշանակէ մեծազգի, կամ ազնուատոհմ ռմկ. ՊԷՅԶԱՏԷ: եր 202:

Արհմն · պարսկական ձայնիւ կոչի ԱՀԷՐՄԷՆ · բառ մոլար կարծեաց դիւցապաշտ մոգուց, էր սա չար արարիչ չարի: եր 27:

Բարակ · որսական շուն: ռմկ. ԶԱՂԱՐ: բառ այս և փոքր բառգիրքն գրեալ ԹԱԶԻ՝ ցուցանէ նշանակել շուն: եր 213:

Բողպայիտ · է մինն ՚ի հնից աղանդոց մոգական կրօնից · որ ՚ի հին բառարանի մերում գրի Բողդայիս, և մեկնի ԲՂԴՈՅ ԹԱՊՏԱՐՆ: եր 149:

Գետնաբնակ · գետնախշտի: ռմկ. ՉԸՐ ԳԷՕՆԻ ՀԻՐՕՅ ԴՕՒԶՕՂ: եր 212:

Գեշաքարշ · դի կամ մեռելոտի ընդ քարշս ածեալ: ռմկ. ԹՕՂԹԸՂՕԾ ԼԷՇ: եր 12:

Գումարտակ · սատ՝ ականակուռ քառամանեակ, ուր գումարեալ կան գոհարք: ռմկ. ԿԷՐՕՆՆԷՍ: եր 142:

Գրաւահ · է բառ պարսկական, և նշանակէ յանցաւոր, կամ մեղապարտ, կամ իխաստակար: ռմկ. ԽՕՏՕՀՕՒԸԼԸ: եր 192:

Գարնթու · կազմի ՚ի պարսկական բառից ԲԻՐԷ, քն օրէնք. և ԲՕՒ, որ է ծածկոյթ կամ յարկ. և նշանակէ օրինատուն. որով իմանի յարկն, ուր իշխանն մոգպետաց սովոր էր դատել և վճռել զիրս կրօնի: եր 190:

Գենիմաղդեն · է բառ պարսկական, որ ը հին

բա

բառարանի մերում Թարգմանի, ՀՈՌՈՄՈՅ ՀՈ-ՌՈՄ: եր 136:

Պռեհպետ. կուսակալ. սատ՝ Թագաւոր, կամ Իշխանակալ: եր 34:

Պռերանդերձապետ. կաղմի ՚ի բառից դեր, և հանդերձապետ, և նշանակի փոխանորդն վե-րակացուի պարանեցն արքունի: ռմկ. ՍԱՐԱՅ ՔԷՀԷԱՈՒԸ ՎԷՔԻԼԻ: եր 63:

Պռերբուկ. ճ դարավինուկ. նշանակէ ստորոտ ապառաժի, կամ քարաժայռի: եր 122:

Պռըղ. Թուլանալ, կամ դադարել, կամ զիջ անուլ: ռմկ. ԿԷՎՇԷՄԷՔ, կամ ԴՈՒՐՄԱՔ: եր 194:

Ռաղտեաց. տպելի էր խաղտեաց. իսկ խաղտիք է գաւառ մեծ՝ սահմանակից աշխարհին վրաց և պոնտոս ծովուն: ռմկ. ՃԱՆԻՔ ԹՕՓՐԱՂԸ: եր 97:

Ռրագայոս. որոյ յոյս և ակնակալութիւն է ու-նայն և սնոտի: եր 38:

Ռրահ. նոյն երևի ընդ պարսկական բառիս րահ, որ է ուղի կամ ճանապարհ. և ըստ այսմ՝ ե-րահ լինել, նշանակէ յուղարկել: ռմկ. ՃԱՄՔԱՅ ՏԸՐՎԻՒ: եր 86:

Ռրան և տանէրան. են բառ պարսկական. որք ըստ հին բառարանին մերոյ Թարգմանին, Ժ-ԾՈՐՈՅ և ԴՈՓՈՒՃՈՒՆ: եր 26:

Զանդիկ. ըստ հին բառարանին մերոյ Թարգ-մանի՝ ՈԴՈՍՍՈՍՈՐ. և է անուն յատուկ իմն կրօնի հրապաշտ մոգուց. և ըստ գրելոյ երա-նելւոյն Եղնակայ, մոգն և զանդիկն համակրօն են, զի երկոքին ևս են արևապաշտ և հրա-պաշտ. բայց միայն զի մոգն առ երևս կերպա-րանի առաքինի, այլ զանդիկն ամենայնիւ է զեղխ: եր 62:

Զրա

Զրադեշ . պարսկական հնչմամբ ճէշնի-ղի , կամ ճէրտուշ-ղի . ըստ հին բառարանի մերում թարգմանի , բուն բուն , կամ ջոկեր ու-խու . է անուն արքային բակտրիացւոց՝ որ բախարայու , որ եղև գլուխ և հեղինակ մոգական աղանդոյ հրապաշտից ։ եր 169 ։

Զրադեշական . այն ամ որ վերաբերի առաղանդն մոգական ։ եր 22 ։

Զրահել . զրահաւորել , կամ զինու վառել , կամ մարտնչել . աստ՝ դիմախօսել , կամ հակառակաբանել ։ եր 42 ։

Ընդածել . կազմի 'ի բառից ընդ , որ ենթ , և ածել , որ է ածուածն . և ըստ բառին՝ նշանակէ 'ի ներքս 'ի միտ ածեցուցանել . և ըստ իմաստին՝ քննել , կամ հետազօտել , կամ մտաբերել , կամ յիշատակել , կամ 'ի կարգս բանից յառաջ բերել ։ եր 18 .

Թերևս . է բառ նշանակող թերամտութեն , և վարանման . զի ցուցանէ ասել , իցէ թէ . կամ դուցէ ։ ռմկ . պէլքի ։ եր 27 ։

Թրաւշ . անարգ , կամ անպիտան ։ ռմկ . տոնղոհ . կամ տոպէր ։ քանզի և 'ի փոքր բառգիրքն՝ 'ի մեկնութեն բառիս թրաւշոն՝ որ է ածանցեալն սորին , նշանակի անարգ . ապա թէ ոչ՝ 'ի դէպ էր մեզ ասել , թէ բառս թրաւշ՝ նշանակէ ուրուն ։ ռմկ . պօնձօ-խ ։ եր 170 ։

Ինչ . (ընչի , ընչիւ , յընչէ) . գոյացութի ։ ռմկ . նէսնէ ։ եր 31 ։

Լաշկար . է բառ պարսկական , որ ըստ նոցա հնչի լէշքէր , և նշանակէ զօրք ։ ռմկ . ասքէր ։ իսկ հին բառգիրքն մեր զայս բառ՝ զինուորէ գրէ , ղօշ նոր . և մեկնէ , թօփար թէղի . և ըստ այսմ նշա-

նա

նուիրութեան տանել լինի և տատ, ուր տուի, ոնյուռ ըողնոր, և խմանի կերա՛, կամ նեղ անցք ընդրանց ։ տճկ․ յողու ։ եր 147 ։

Խաչանեան․ տոպելչէ էր խաչանեան ։ եր 51 ։

Խաչատամանի․ տառ նշանակէ պատրոզ, և է իբրև մնկանուն գրեաց ։ եր 47 ։

Խենդախեղ․ համարձակել, վստահանալ ։ տճկ, ճէ սուրէթ ըիւլ ։ եր 74 ։

Խոնսասատան․ է բառ պարսից, և նշանակէ բանակեալ․ տճկ․ օտաղու տեղ ։ և կամ հրապարակ կամ առեան, ուր բազմի խանն, կմ թագաւորն, և արքունի գործակալք՝ յորոշել զխնդիր ինչ կարևոր ։ տճկ․ տիվան ։ եր 42 ։

Խոնձանունք․ կազմի ՚ի պարսկական բառէս ճէնճ, որ նշանակէ գանձ․ և ըստ այսմ խոնձանունքն նշանակէ զարկեղս և զանօթս գանձուց ։ տճկ․ խազնէ ։ եր 23 ։

Ծուխք․ երևի լինել նոյնանշան ընդ բառիս ծխորք, եթէ չէ այլայլեալ ՚ի գրչաց․ և նշանակէ աղբ թռչնոց ։ եր 54 ։

Կեշտ․ է բառ պարսկական, և նշանակէ կրօնք ։ տճկ․ դին ։ եր 62 ։

Կողմնապահ․ տառ նշանակէ զգունդն քաջ զօրականաց, որ հսկէ յաջմէ և յահեկէ բանակին, և պաշտպանէ ՚ի թշնամեաց զկացմնաց զօրուն, կմ զպետնեալ զինուորսն, եթէ ՚ի չուելն, և եթէ ՚ի դադարելն ուրեք ։ եր 82 ։

Համակդեն․ է մինն ՚ի հինգ աղանդոց մոգական կրօնից․ որ ըստ բառին երևի նշանակել միահաւատ կամ համակրօն ։ իսկ հին բառգիրքն մեր թարգմանէ, տենտահարուտ, կամ եուչէյէ տաաալէ․ յայսմ աղանդոյ էր երանե

նելի մոգպետն, որ հաւատաց 'ի քս՟, և նահա-
տակեցաւ : եր 149 :

Համհաղար · է բառ ընկերական հայոց և պար-
սից, և նշանակէ խումբ հազարաւոր մարդկան,
կամ առաւար գունդ զօրաց : ռմկ · դէօշէ-ն ...
...էր : եր 99 :

Համհարզ · է բառ պարսկական, և թուի կազ-
մեալ 'ի մասնականէս հէմ, որ ընդ հայումս է
համ, այ՟ կից, և 'ի բառէս բուզ, այ՟ խորհուրդ ·
և նշանակէ համախոհ, կամ կամակից, կամ միա-
միտ : ռմկ · ... կամ ... : եր 79 :

Հարմատ · երևի փոխադրութե՟ն լինել տառի ձևա-
ցեալ 'ի պարսկական բառէս հէ-րմ-ուզ, որ է
անուն լուսնթագ մոլորակին, զոր պաշտէին
երբեմն ազգն · յայս միտ' առեալն 'ի հ..., նշա-
նակէ յառաջ եկեալ 'ի սերմանէ չղծոց, կամ
դիւցազն : Նոյն դարձեալ, հիւրմիւզդ' է ևս
անուն քաղաքի, որ առ եզերբ ովկիանու ·
մարթ է իմանալ, թէ առեալն 'ի հ..., յա-
ցանի լինել 'ի քաղաքէն հիւրմիւզդայ : եր 26 :

Հաւալոց · այ՟ հաւալից, կամ հաւանոց : ռմկ ·
...: եր 77 ·

Հրահաս · տպելի էր հրասահ : եր 190 :

Հրասահ · է չափ տարածութե՟ն, որ պարու-
նակէ երեք մղոնաչափ տեղի : եր 166

Հրոս · կազմի 'ի բառիցս հ..., և հ..., և ըստ
բառին նշանակէ զայն որ հասէ զհուր, կամ որ
հասի իբրև զհուր · իսկ ըստ իմաստին' նշանակէ
սաստ զբաջարշաւ զօրան, որք իբրև զհուր հո-
սին 'ի վր՟ թշնամեաց : եր 64 :

Պակիշ · 'ի հին բառարանի մերում մեկնի հո-
... · բայց երևի նշանակել պատկեր :
ռմկ

ռմկ․ ջորամփաղ, կամ գեբէրէշ․ եր 99․

Ղորկ․ է թեթևացեալ ՚ի բառէս ողորկ, և նշանակէ ողոք, կամ փաղաքշ, կամ կակուղ․ ռմկ․ եավաշ, կամ մուլայիմ․ եր 65․

Ճապուկ․ թեթևաթեք․ իսկ մանաւանդ որպէս ա-ռեալ առ՝ նշանակէ կիրճ, կամ անցք քա-րանձաւ լերանց, նեղ և մացառախիղ․ ռմկ․ պողազ․ եր 77․

Ճողրել․ հերձել, կամ պատառել․ ռմկ․ ճըղ-ըրթմագ․ եր 67․

Մաղել․ առ՝ նշանակէ մեղմել․ ռմկ․ գըլըջէ-ծընըլ․ եր 34․

Մեղոյն․ է ածանցեալ ՚ի գերանուանէս գը, և է նոյն ընդ մակբայիս գեղէն․ եր 165․

Միհր․ է բառ պարսկական, և թարգմանի ա-րեգական․ եր 26․

Մոգպետ․ տպելի էր մոգպետ․ որ գլուխ ա-տեղապետաց․ ռմկ․ գեշիշնէր պաշի․ մանաւան-դակէս՝ մոգպետ կոչէին գլխաւոր ուսուցիչք կամ քրմապետք կրակապաշտ աղանդոյն․ եր 26․

Մովպետան մովպետ․ ըստ պարսկականին հնչի մոպէդան մոպէդ, կամ մուպէդան մուպէդ․ ան-ուանքս մովպետ՝ նշանակէ գիտնականն մո-գուց․ իսկ մովպետան՝ է յոքնականն նորին․ և ըստ այսմ՝ մովպետան մովպետ՝ թարգմանի մոգպետաց մոգպետ․ կամ ըստ հին բառա-րանի մերում, էշխանաց էշխան․ եր 63․

Յաղածոյ․ տպելի էր յաղածոյ․ որ նշանակէ զոհեալ․ ռմկ․ խուրբան․ եր 66․

Նածարեցի․ նազովրեցի, որով կոչեցեալ լի-նէին քրիստոնեայք․ եր 28․

Նշխարկից․ տպելի էր նշխարակից․ որ նշանակէ

 օգ-

օգնական ։ ռմկ . եարտըմճը ։ եր 103 ։

Նորաձեւք . նոր զարգացեալք ։ ռմկ . մօտա ։ եր 38 ։

Շախուռայէտ . երեւի կազմիլ 'ի պարսկական բառիցս շահ, որ է արքայ . եւ խօր, որ ուտեստ . եւ ըստ այսմ շախուռայէտն նշանակէ զհամբարակապետն, կամ զվերակացուն արքունական ապարանից, կամ զշտեմարանապետն ։ ռմկ . տօպու էմինի, կամ վէքիլխարճ ։ եր 102 ։

Շանթել . ջեռանիլ իբրեւ երկաթ հրացեալ, կամ շառագունիլ իբրեւ շանթ . ասի լինին սաստիկ զայրացեալք ։ ռմկ . կըզըլ կօրլու ։ եր 19 ։

Շլօթակ, կամ շլաւթակ . վտարանդի, կամ տարաշխարհիկ ։ ռմկ . սէրսէրի ։ եր 165 ։

Որմիզդ . ըստ պարսկականին հնչի օրմիզտ, եւ ըստ հայոցս արամազդ . որ ըստ հին բառարանի մերում թարգմանի՝ ասրպանէկ, կամ հուրմուզ . ըստ դիւցապաշտից էր հայր արարիչ բարեաց ։ եր 26 ։

Պալհաւիկ . է մինն 'ի հինգ աղանդոց մոգական կրօնից . որոյ հեղինակն եղեալ է գլխաւորական ումն պալհաւ ։ եր 149 ։

Պահ դուռն . կոչի եւս դուռն ալանաց . եւ դուռն հոնաց . եւ դուռն ձորայ . եւ դուռն կասբից . է բերդ ամուր շինեալ 'ի կիրճն, ուր բազուկ կովկաս լերին հայի յեզր կասբից ծովուն ։ ռմկ . տէմիր խափու, կամ տէրպէնտ ։ եր 12 ։

Պայքար . տես փայկարել ։

Պատկանդարան . պատշաճաւոր պահարան նետից ։ ռմկ . օխ դօհէլու մնասիպ թէղ ։ եր 10 ։

Պատկամք . յօրինակին գրեալ էր պատկամ . եւ նշանակէ զահաձեւ տեղի 'ի սենեկին ։ ռմկ . շահնիշին ։ եւ կամ զարդարուն եւ պատուական

սենեակ ։ ռմկ․ տըվէր օտայ ։ Եր 129 ։

Պատմայել · հնարել , կամ կազմել , կամ յառաջ բերել , կամ խրախել , կամ առատելով ։ ռմկ․ փէյտահ ընէլ , կամ շարժընէլ ։ Եր 28 ։

Պարսապատեն · է մին ՚ի հինգ աղանդոց մոգական կրօնից , որոյ հետեւողքն եղեալ է ամ ՚ի գիտնականացն պարսից ։ Եր 149 ։

Պարտաքաշ , կամ ամպարտաքաշ · է մին ՚ի հինգ աղանդոց մոգական կրօնից · և որ ՚ի տպագրե ցելումս ըստ մերում օրինակի գնի շամ դար տըլ , ՚ի հին բառարանի մերում գրի ոմդար տըլ · և մեկնի՝ ջոհոկրօն , կամ լուսամիտ ։ Եր 149 ։

Պեսամնգ · է անուն վեցերորդ աղանդոյ հրա պաշտից՝ արտաքոյ հնդից մոգական կրօնից ։ Եր 146 ։

Պնդալ · փութալ , կամ արշաւանել ։ ռմկ․ ա ճէլէ , կամ չօլըխչօլ ։ Եր 12 ։

Պատկանէր · սիրող զպատկանելիսն իւր , կամ պատ կեալ սիրով , որք անլուծանելի կապեալ սիրով․ որպիսի են քրիստոնեայ ամուսինք ։ Եր 213 ։

Ռաբունեան · է ածանցեալ ՚ի պարսկական բա ռէս ռաբուն , որ ըստ նշ հնչի ռէպպուն · և նշանակէ առհաւատչեայ , ո՞ր այն դրամն , որ նախապէս տուեալ լինի ՚ի գնել զինչ վաճ հաւատարիմ առնելոյ զվաճառողն ։ ռմկ․ ջէյ ։ Նոյն ըստ այսմ ռաբունեան ասի այն , որ ան կատար և ըստ մասին տուեալ լինի յառաջա գոյն իբրև առհաւատչեայ , առ ՚ի տալ զկա տարեալն ՚ի նշանակեալ ժամանակի ։ Եր 157 ։

Ռամ · է բառ ընկերական հայոց և պարսից · և նշանակէ ռամ , կամ լեռլին , կամ յաձախա կի , կամ մանրամանաբար ։ ռմկ․ չօռն , կամ թեղ նէ

ներեղը. եր 190.

Սալար. դ՝ է սալար. է բառ պարսկական. և նշանակէ զօրագլուխ, կամ զօրապետ. տճկ. սէ-րասքէր, կամ պաշպուղ. եր 99.

Սախպաւ. փութանակի, կամ Հեպընթաց արշա-ւանօք. տճկ. ճաշնիճող. եր 21.

Սրահակ. սաս նշանակէ մարագոյր. տճկ. [illegible]-տէ. եր 211.

Սատախատարակ առնել. չարաչար խոցել և չխօթել, կամ վատթար չխօթութիւն այր զա-րանէ հօծել, կամ յաղթահարել. տճկ. [illegible] [illegible], կամ [illegible] իսկ հին բառգիրքն մեր մեկնէ՝ գարանամուտ լինելով ընդ կը-րունկն դարձուցանել և չխօթել. տճկ. [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible]-նել. եր 147.

Սպուրկ. է բառ պարսկական, որ բառ նը հնչի [illegible], և թարգմանի մեծ. տճկ. [illegible]. եր 26.

Սուամ. բառ պարսկականին [illegible]. է անուն մոլորակին՝ որ ՚ի մեզ կոչի հրատ. ուստի վա-մակաճն նշանակէ զայն՝ որ վերաբերի առ հր-րատն, և իմանի կրակն ատրուշանաց, զոր վա-ռէին հրապաշտք ՚ի պատիւ հրատին. եր 72.

Տաշտախիլ. խլեալ ՚ի դաշտէ. զի տաշտ և դաշտ է նոյն բառ. զոր և պարսիկք [illegible] կո-չեն. եր 211.

Փագամ. է բառ պարսկական. որ ՚ի հին բա-ռարանի մերում գրի [illegible]. և մեկնի՝ [illegible] [illegible]. տճկ. [illegible], կամ [illegible]. եր 54.

Փայկարել. արմատ բայիս է փայկար, որ բառ պարսկականին հնչի [illegible], այլ և ՚ի մեզ պայ-քար. և նշանակէ մարտ, կամ կռիւ. իսկ փայ

կա

կարիլ՝ ասա մասնաւոր առմամբ նշանակէ՝ բա-
նակութիւն լինել, կամ վիճել. ռմկ. մի-ճո-
տէլէ ընէլ։ եր 165։

Փակթուրակայ որդի. ՚ի հին բառարանի մե-
րում գրի, կոնդա-խոպոյ օղլը. և մեկնի՝
հի-ստն օղլը։ եր 69։

Փուրմիշ. է բառ պարսկական, որ ըստ նոցա
հնչի փի-րմիշ, և թարգմանի հարցումն, կամ
դատաստանական քննութիւն. իսկ ասո՝ գիր
ամբաստանութե՛. եր 165։

Քաշկեն. է բառ պարսից, որ ըստ նոց հնչի
քէշկեն. և նշանակէ գարեհաց. ռմկ. արփա
էքմէկի. եր 149։

Քումիզ. է բառ պարսկական. զորմէ ասի
՚ի հին բառարանի մերում, կոմըզն օշնան խօտ է,
շոր տյլ կէրք օճառ տեղն լուալեայ. ռմկ. չէօ-
ջէն. եր 54։

Քուշանք. է անուն ազգական ազգի, որ այժմ
կոչին մեծ թաթարք, կամ մուղալ թաթարք.
և է ազգ մեծ և երևելի, յորմէ ելին Ճինկիզ
խան, և հեղակկու խան, և լէնկ թէմուր։ եր 12։

Քրտիկար. կարծի ՚ի պարսկական բառէս կէրտ,
որ ընկերական է առ հայս և առ պարսիկս, և
նշանակէ կերտումն, որ շինութի. և ՚ի բա-
ռէս քէար, որ գործ. որ ՚ի մեղ իբրև մասնիկ
վարեալ՝ դնի կէր. և նոյնպէս նշանակէ գործ,
որպ աղօթիկեր, աղօթագործ. խոհակեր, խո-
հագործ, և այլն. և ըստ այսմ՝ քրտիկարն՝ նշա-
նակէ վաստակաւոր, կամ գործունեայ, կամ
շինարար. ռմկ. տշխատօղ, կամ էմէկ քէշօղ, կամ
շինօղ ընօղ. մարթ է ասել և, թէ կարծի
՚ի պարսկական բառէս կէրտ, որ է օգուտ կամ

շահ․ և ՟ ... այսմ նշանակէ շահարար։ ամի․ փո-
[illegible] [illegible]։ եր 142։

Բռունկար առնել․ է բառ պարսկական․ և մա-
նաւորաբար առեալ նշանակէ լռանալ ըզ-
որբանն․ զի այս բան, [illegible] [illegible] ոյժ
[illegible] [illegible], 'ի Հին բառարանի մե-
րում բացատրի այսպէս․ [illegible] 'ի [illegible]
[illegible] ոյժ [illegible] [illegible]։ եր 142։

Բօթեայք․ աստեղագէտք․ ասա նշանակէ զու-
սուցիչս մոգական աղանդոյն։ եր 21։

Օշնան․ ըստ պարսկականին [illegible]։ ամի․ [illegible]
[illegible]։ տես և՛ քումիզ։ եր 211։

Օրհասական․ ասա՛ հոգեվար [illegible] կամ որ մերձ
է 'ի մեռանիլ։ ամի․ [illegible] [illegible], կամ [illegible]
[illegible] [illegible]։ եր 11։

252